4162

491.99-8
Q-55

2010

91.99-8
Ջ-55

64/33-2

ՌՎԿԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՎ
ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅՏՐՈՒԱԾ Է ՈՐՊԷՍ ԴԱՍԱԳԻՐՔ

ՌԱԶՄԵՑԻՆ
ՀԱՅ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ
ՊԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ
ՏԻՐ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Դ. ՏԱՐԻ

Հուրոյն, փոխադրած յօդուածների եւ վիպակների արտատպութեան իրաւունքը վերապահուած է։

ԵՐՐՈՐԴ ՏԻՊ

2002

ԵՐԵՒԱՆ
Տպարան «ԼՈՅՍ», Բէհբուդեան փող. № 12
1917

5-4789-ա

42035.68

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Դասընկերն առաջին հրատարակութիւնից սկսած ձեռագրի գործածութեանն առանձին տեղ տուեց, հիմնուելով ներկայ էքսպերիմենտալ մանկաբժութեան պահանջների վրայ և առաջին անգամ Դասընկերն էր որ Ա, Գ և Դ տարիների մէջ ձեռագիրն առանձին բաժին յատկացրեց՝ յարմարեցնելով ծիս. դպրոցների պահանջներին։

Այս անգամ Դասընկերն առանձնապէս ուշք է դարձնում շարադրութեան նիւթերի վրայ. մի խնդիր, որը ոչ միայն մեզանում, այլ եւրոպան երկրներում բազմատեսակ քննադատութեան նիւթ է դարձել և մինչև օրս վերջնական լուծումն չէ ստացել։ Այս առթիւ առաջարկում են բազպիսի ձևեր, որոնցից, մեր կարծիքով, ամենապարզ տեսակները կարող համարուել մանկական նամակները եւ պարզ, ձեւափոխուող պատկերները։ Այդ հիմն վրայ, Գ և Դ տարիներում մենք դրել ենք ձեռագիր նամակների նըմուշներ, որտեղ աշակերտը պարզ կը նկատէ, որ նամակի նիւթ կարող է նել այն ամենը, ինչ առօրեայ կեանքում իր հետ պատահում է և ինչ որ ինքն իր մօտիկներին տեսնելիս պէտք է բանաւոր հաղորդէր։ Այստեղ աշակերտը ոչ յօդուածի բառերին և ոչ էլ ուսուցչի պահանջին գերի է դառում. նա ազատ է իրեն յայտնի բառերը, դարձուածքները գործածել, որոնց դդագրութեանը ծանօթ է։

Բնականաբար այս ձևն հեշտ է, ինքնուրոյն, աշակերտի համար հետաքրքիր, ուղղագրութեան և բովանդակութեան տեսակէտից արդիւնաւէտ։

Նման առաւելութիւններ ունեն նոյնպէս և այն պարզ պատկերներն, որոնց մէջ գործողութիւնները փոփոխելով՝ աշակերտին ազատ գիտողութեան, մտածողութեան և ստեղծագործութեան նիւթ են տալիս։

Այստեղ էլ աշակերտն իրեն ցանկացածի նման կ՚արտայայտէ, առանց բքի կամ ուսուցչի կաշկանդումների։ Այս տեսակ պարզ շարադրական վարժութիւններից յետոյ, նոր կարելի անցնել զուգընթացաբար շարադրութեան միւս տեսակներին—այն է, սովորած յօդուածի բովանդակութիւնը գրել անանապարհորդական զբօսանքները նկարագրել, ազատ շարադրել և այլն։

---

1. Աշակերտի յիշատակարանից

Ամառայ արձակուրդը վերջացաւ. այսօր սկսւում է դպրոցական նոր տարին։ Գրքերս պայուսակիս մէջ կապելով, ուրախ ուրախ դուրս եկայ դպրոց գնալու։ Հայրս երբ ինձ տեսաւ, կանչեց իւր մօտ և ասաց.—Սիրելի Հենրիկո, շատ լաւ ես անում, որ այդպէս զարթ դպրոց ես գնում. գնա, սիրելիս, գնա և մտածիր, որ այժմ ամենքն էլ ուսանում են։ Ամբողջ օրը չարաչար աշխատելուց յետոյ՝ բանւորներն երեկոյեան դպրոց են գնում։ Կանայք, չունեւոր ազանները ամբողջ շաբաթն աշխատելուց յետոյ՝ կիւրակի օրերը վարժարան են գնում. Զինւորներն իրենց վարժութիւններից տուն դառնալով՝ իսկոյն տետրակ ու գիրք են վերցնում։ Համբերն ու կոյրերը, մինչև անգամ բանտարկեալները, գրել կարդալ են սովորում։

Առաւօտեան դպրոց գնալիս մտածիր, որ այդ ժամին այս քաղաքում քեզ նման երեսուն հազար մանուկ է գնում ուսանելու։ Երևակայիր բոլոր երկրագնդիս անհամար երեխաներին, որոնք նոյն ժամին դպրոց են գնում։ Գնում են գիւղերի, մեծ ու փոքր քաղաքների ազանները ու աղջիկները։ Ամենքն էլ գրքերը բռնած, հազար տեսակ հագուստներով, տարբեր լեզուներով և բոլորն էլ գնում են սովորելու։ Այո, միլիոնաւոր մանուկներ շտապում են բան սովորել։ Սիրելի Հենրիկո, եթէ այս շարժումը դադարէր, մարդկութիւնը նորից բարբարոսութեան մէջ կ'ընկնէր։ Այս շարժումն է աշխարհիս յառաջադիմութիւնը, յոյսն ու փառքը։

Զօրացիր, անհուն բանակի փոքրիկ զինւոր։ Գրքերդ են քո զէնքերը, դասարանն է քո գունդը, պատերազմի դաշտն է ամբողջ աշխարհը և լուսաւորութիւնն է յաղթանակդ։ Ուրեմն մի վհատիր ու կորիճ կաց, իմ Հենրիկո։

Ա ա Բ բ Գ գ Դ դ Ե ե Զ զ Է է
Ը ը Թ թ Ժ ժ Ի ի Լ լ Խ խ Ծ ծ
Կ կ Հ հ Ձ ձ Ղ ղ Ճ ճ Մ մ Յ յ
Ն ն Շ շ Ո ո Չ չ Պ պ Ջ ջ Ռ ռ
Ս ս Վ վ Տ տ Ր ր Ց ց Ւ ւ Փ փ
Ք ք Օ օ Ֆ ֆ.

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ
ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ
ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք և օ ֆ

Անգրագիր

Բոլորն ինչպես չի՞ նախանձում՝
Եվ աղքատիս խրախն,
Միայն, գրագիր դուք պարոնիկ,
Նախանձում է՝ չէր բաղդին:
Ամբ, գրագրի գլուղուկ դրբիս,
Մի լաստիկ միայն ապրի՝

Ամեն մի բիրտ ինչ հիմակ բառը,
Մի գիրուկ պիտի գրի,
Եվ ինչ որ տակ տակ գրվի
Տակդրվի լա՜ռ, ջուրդ.

Որ գիրս կայծակիդ է.
Արագ թռչի գրելով.
Եվ անդրագիր, իմ անուն իմ...
Տակդրվի, պարոնիկ:
Ճուրդ, լուրդ գրի գրի,
Տակդրվի գորշ աշի.
Կամիս՝ գրի ազգիս նամակ,
Նրա նամակ ապրարի:
Եվ իմ նորան կը պարզրվի՝
Զարագրոշիկ, քիմարիկ
Կոպիրագիր՝ Ամբարանի իմ բոլորն ակրիկ...

Այ դու, ասա՛ իմ ծիրանակ թեթիկ,
Քիչ տիպ իմ կերակուր, քիչ սիրտ իմ-
Փոխարէնը թեթիկդ մի գրիչ տուր.
Աստուն դու ասա, տուր; խնդրում իմ,
Ինչ թղթիս վրայ թեր,
Ուր ամէնը գրագէտ իս... սովորդի՛ պարոնիկս

---

3. ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ինչու՞ են տեղափոխւում թռչունները։

Աշունը հասնելուն պէս թռչունների մէջ մի տեսակ իրարանցումն է նկատւում։

Ամառային զարճուքիւնների մէջ մենք բոլորովին չենք նկատում, թէ ինչպէս ուրախ թռչունները կամաց-կամաց դադարում են երգելուց։ Անտառները, մացառներն ու դաշտերը դեռ չեն դատարկւել, այնտեղ թէև թռչուններ շատ կան, բայց նրանք միայն ճուռղում, մոլորւածի նման դէս ու դէն են ընկնում, կարծես թէ երգելը մոռացել են։ Շատերը մինչև անդամ թաղ են կացել։

Մինչև այդ ժամանակ, դրանք իրանց գործը կատարեցին, ձագուկներ հանեցին և մեծացրին։ Այժմ էլ պէտք է փետուրներ փոխեն։ Փետուրները մաշւել են, հարկաւոր է հին զգեստը հանել և փոխարէնն նորը, աւելի տաքը հագնել։ Ահա դրանով են զբաղւում թռչունները ամառւայ կէսից սկսած։ Հնացած փետուրները մէկը

միւսի հետից թափւում են, թռչունները նիհարում են, դառնում ջղային և վախկոտ։ Նրանք թշնամիներից թաքնւում են, զզում են իրանց թուլութիւնը և նրանք շատ լաւ են հասկանում, որ ոչ միայն երգելը, այլև մի փոքրիկ ծպտունն անգամ կարող է իրանց մատնել, թշնամու ճանկը գցել։

Այսպէս, մի երկու-երեք շաբաթւայ ընթացքում թռչունները թափում են իրենց հին փետուրները և դրանց փոխարէն նորերով են ծածկւում։ Շատ թռչունների այդ նոր զգեստի գոյնը բոլորովին տարբերւում է գարնանայինից։ Գարնանային զգեստի գոյներն այնքան ճոխ են, որ մարդու աչքն են շլացնում, մինչդեռ աշնան համեստ հագուստը լինում է գունատ, մոխրագոյն։ Կան թռչուններ, որոնց փետուրներն առաջ սև են լինում, իսկ աշնանը դառնում են սպիտակ։

Ցայտնի է, որ աշնանը խոտերը դալկանում են, ծառերի տերևները դեղնում և թափւում են, անտառներն ու դաշտերը մերկանում են... Թշնամու սուր աչքերից որտեղ կարող է թաց կենալ մեր բազմերանգ թռչնակը։ Ուրեմն թռչունների աշնան հագուստը իր գոյնով որքան համեստ լինի՝ այնքան նա օգտակար է. նա որքան աւելի նմանի դեղին տերևին, դալկացած խոտին, գետնի գոյնին՝ այնքան աւելի ձեռնտու է թռչունի համար։ Ահա այդ է թռչունների գունափոխւելու պատճառը։ Աշնան հագուստով զգեստաւորւած թռչնիկներն աւելի աշխոյժ են և հոգատար։ Փետուր փոխելու ժամանակ նրանք ստատիկ թուլանում են. բայց երբ նորից փետրաւորւում են՝ այնուհետև նրանց ախորժակը բացւում է, կարծես ծանր հիւանդութիւնից նոր են առողջացել։

Կերակուր ձեռք բերելու համար թռչունները պէտք է շարունակ դէս ու դէն ընկնեն, իսկ խոտերի և տերևների մէջ ունեցած քներն էլ հետզհետէ կորցնում են, դրա համար պէտք է կրկնապատկեն իրանց աշխատանքը, որպէսզի նոր, ապահով քնակարան գտնեն։ Սակայն նրանց թշնամիներն էլ քնած չեն, նրանց ախորժակն էլ բացւել է և ամեն կերպ աշխատում են նրանց որսալ։

Գաշտանալու համար թռչուններն ուզեն չուզեն, պէտք է ընդհանուր այժով դիմադրեն. այդ պատճառով դարնանը ջոկ-ջոկ ապրող, նոյն իսկ միմեանց յետ կուող թռչուններն՝ աշնանը նորից հաշտուում, բարեկամանում են, մի տեղ են խմբուում և երամներ են կազմում։

Փոքրիկ երամին հետզհետէ միանում են երկրորդը, երրորդը չորրորդը, հինգերորդը և այլն... Նրանց վրայ նայելիս՝ մարդ զարմացած մտածում է, թէ որտեղից եկան։ Այս բազմաթիւ թռչուններն անտառների, դաշտերի, մարգագետինների վրայով անցնելիս այնպիսի կարգ ու կանոն են պահում, ինչպէս հմուտ զինուորները զօրախաղի ժամանակ։

Երբ թռչնիկն իր համար կերակուր է որոնում, նա չի տեսնում, թէ իր շուրջն ինչ է կատարուում և թռչնամին շատ հեշտութեամբ կարող է նրան որսալ։ Բայց երբ երկու, երեք կամ մի քանի թռչուններ միասին են լինում՝ այն ժամանակ նրանցից մի քանիսը կերակուր են որոնում, միւսները պահապան դառնում։ Այս կերպ աշխատանքն իրանց մէջ բաժանելով՝ նրանք կարողանում են վտանգից աւելի հեշտութեամբ ազատուել։ Սա փոխադարձ օգնութեան ամենահասարակ օրինակն է, որ պատահում է թէ թռչունների և թէ կենդանիների մէջ։

Ահա դրա համար են թռչուններն աշնանը միասին հաւաքուում։ Բացի դրանից, աշնանը պաշարը հետզհետէ սպառուում է, քաղցած թռչունների երամները կերակուր ճարելու համար առաւօտից մինչև երեկոյ շարունակ թափառում են այս ու այն կողմ։ Վերջապէս նրանք կարող էին սովամահ լինել, եթէ երկար սպառէին։ Բայց նրանք այդքան էլ անխելք չեն... Այդ սարսափելի վիճակին չհասնելու համար՝ օր առաջ թողնում են իրանց հայրենիքը և չուում են օտար երկիրներ։ Իւրաքանչիւր երամի մէջ կան մի քանի ծեր և փորձուած թռչուններ, որոնք շատ ու շատ անգամ չուել են ուրիշ տեղ ձմերելու համար։

Ահա, այդպիսիները դառնում են երամի առաջնորդը։

Նրանք ծանօթ ճանապարհներով տանում են երամը։ Նրանց հրամանով երամն երբեմն երբեմն կանգ է առնում մի տեղ կերակուր ճարելու, մի ուրիշ տեղ ջուր խմելու կամ դիշերելու։

Երբ առաջնորդը հոգնում է՝ նրան փոխարինում է միւսը, սրան էլ երրորդը և այլն։ Այսպէս են անում և իջևանած տեղերում, այսինքն երբ թռչունները կերակուր որոնելով են զբաղուած՝ առաջնորդները հերթապահ պահապանների դեր են կատարում։ Կան այնպիսի տեղեր, որտեղ թռչունները սիրում են մի քանի օր կանգ առնել, մինչև որ վատ եղանակը նրանց այդ տեղերից էլ հեռացնում է։ Սրա հակառակ կան այնպիսի տեղեր էլ, որտեղ երամն երբէք չի իջևանում։

Այս բանն ամէն մի որսորդի, ամէն մի թռչնորսի քաջ յայտնի է, իսկ բացատրել շատ հեշտ է։ Առաջնորդներն, առանց նախապէս տեղեակ լինելու՝ իրանց երամը չեն բերի այս կամ այն տեղում իջևանելու։ Նրանք մանկութիւնից սովորել են իրանց առաջնորդ հայրերից, թէ որ տեղն է օդատէտ, որը պաշարեղէնով առատ։ Եւ այդ տեղեկութիւններն անցնում են սերունդից սերունդ, ցեղից ցեղ։

Սիրելի Սրան!

Դու իրօրդ վարժուես նիրկարութիւնք
անպարկաս վիրաբերելիր դէպի մարդ:
Կարդուրիւնդ դանակի պէս սիրտս խո-
ցիր: Ապրիր առաջ մարդ ամբողջ
գիրքը անկողնիդ վրայ իսկնարեալ, ակամայ
էր գնա՞ ընդունելիանդ և արդարարդի
լայ էր լինում: Քու դու այժմ նրան
վերցնում ես-վերցնում ես մարդ:
Լսիր, որդիս, ու միրդ լաւ պահիր.
գայլ դու էլ դառն օրեր ունիս
բայց ամենադառն այն կը լինի, երբ մարդ
գեղեցիկն իզնիս: Ժանգիրար չկայ այն
մարդուն, որ յաւերժի է իր մօր սիրը:

Բոլոր վրդանդ, բոլոր աղաչանդ, բո-
լոր ակնածութիւնդ. զուր կանգնին:
Խիղճդ միայն նանգիրար չի գալ: Մայ
նրան, ով որնակորդ կանի մայրական աչ-
սերբ սէրը: Ես միայն սիրում եմ, որովհետ
եմ, դու ես կանիս յոյսը. ասկայ
լաւ է միայն մոռաց գրանիս, քան ապրարար:

Քո հայր

---

5. Աշնան երգերից

Խորը ձորակում, աշնան օրերին
Հալիս է տխուր լայը առուակի,
Անցնում է դաշտերն անապատային
Եւ անարձագանք մարում մեղմակի։

Նա հեկեկում է վաղանցուկ գարնան
Ոսկեղէն օրեր, շքեղ հրապոյր,
Նա հեկեկում է, թէ ինչպէս մեռան
Ծաղիկ ու կանաչ, սէր, հրճուանք և քոյր։

Ո՞ւր է այն օրը, երբ իր ափերին
Մեխակն ու շուշան գերդ անուշ քոյրեր,
Մէկ-մէկու փարած գուրգուրում էին
Ու շուրջը լցնում երկնային բոյրեր։

Ո՞ւր է այն օրը, երբ ճառագայթած
Ժպիտն էր ծաղկի ողջունում իրեն.
Եւ եղէգների խումբը գալարած
Ալիքներն էին փարում քնքշօրէն։

Այժմ էլ չկան... միայն իր դիմաց
Ժայռն է իր դաժան դէմքը խոժոռել,
Վայում է բուքը սարերն ընկած,
Շուրջն ամեն ինչ մարել է, մեռել...

---

6. Խելացի ագռաւը.

Ի՞նչ է անում ագռաւը. ձրչափ ջուր կայ ամանի մէջ. կարող է ագռաւը ջուր խմել։

Ի՞նչ է ուզում ագռաւն իր կուցով անել։

Այժմ ի՞նչ է ուզում ագռաւը։ Բոզացաւ ագռաւն ամանը վայր գցել։

Այժմ ի՞նչ է փորձում ագռաւը։

Կարող է ագռաւը ջուրը խմել։

Դիտել պատկերը, պատմել, ենթադրած դժուար բառերի ուղղագրութիւնը, բացատրել և գրել շարադրութիւն։

7. ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍԸ

Ցունիս ամսի մի գեղեցիկ առաւօտ էր։ Փոքրիկ հեծելազօր գունդը ուշադրութեամբ դիտելով ամայի ճանապարհը, հանդարտ առաջ էր գնում թշնամու դէմ։

Գնդի առաջից լաւ գնում էին սպան և յիսնապետը. նրանք շարունակ իրենց շուրջն էին նայում և ամէն րոպէ սպասում էին, որ ծառերի մէջ թաքնուած թշնամու առաջապահ զինուորներին կը տեսնեն։ Գունդը մօտեցաւ մի գեղջկի տան, որ սօսիներով պատած էր։ Դռան մօտ նստած էր տանտերկու տարեկան մի տղայ և փայտ էր տաշում։

Պատուհանի վրայ ծածանւում էր մի եռագոյն դրօշակ. նեբար ոչոք չկար. գիւղացիները դրօշակը կախել ու փախել էին։ Տղան գունդը տեսնելուն պէս՝ փայտը դէն ձգեց ու գլխարկը հանեց։

—Ի՞նչ ես անում այստեղ, հարցրեց սպան. ի՞նչու դու էլ ծնողներիդ հետ չես փախել։

—Ես ծնողներ չունեմ, պատասխանեց տղան. մնացել եմ պատերազմը տեսնելու։

—Աւստրիացիք անցան այստեղից։

—Ոչ, սա երեք օր է, որ չեն երևում։

Սպան մի փոքր սպասելուց յետոյ բարձրացաւ ցածր տանիքի վրայ. լաւ կը լինէր ծառի վրայ բարձրանալ, ասաց սպան, այստեղից հեռու նայել չի կարելի։

Սպան մէկ բարձր ծառին նայեց, մէկ զինուորներին և յետոյ յանկարծ տղային դարձաւ ու ասաց.

Ա՜յ տղայ, աչքերդ սուր են։

—Իմ աչքերը շատ հեռու են տեսնում։

—Կարող ես այս ծառի ամենաբարձր դագաթը բարձրանալ։

—Կէս րոպէում կը բարձրանամ։

—Կարող ես տեսածներդ ինձ պատմել. տես աւստրիացիք չե՞ն երևում, փոշու ամպեր, փայլատակող հրացաններ, ձուխ, ձիեր։

—Ի հարկէ կարող եմ։

—Ի՞նչ տամ քեզ դրա համար։

—Ինձ այդ բանի համար, կրկնեց տղան. ոչինչ, ի՞նչեր էք ասում. եթէ գերմանացոց համար լինէր, ինչ էլ տային չէի բարձրանալ, իսկ մերոնց համար...

—Որ այդպէս է՝ ուրեմն բարձրացիր։

Տղան կօշիկները հանեց ու գրկեց ծառի բունը։

—Սպասիր, գոչեց սպան, առ զգալով

Տղան զարմացաւ։

—Բան չկայ բարձրացիր... ասաց սպան։ Տղան կատուի պէս վեր մագլցեց։

—Իսկ դուք ձեր շուրջը նայեցէք, ասաց սպան զինուորներին։

Մի քանի րոպէից յետոյ տղան արդէն ծառի կատարին էր։

—Հեռու նայիր, կանչեց նրան սպան...

Աւելի լաւ տեսնելու համար, տղան աջ ձեռքը ճակատին դրաւ։

—Ի՞նչ ես տեսնում, հարցրեց սպան։

—Երկու ձիաւոր ճանապարհի վրայ։

—Այստեղից որչափ հեռու։

—Մի կէս մղոն։

—Շարժւում են։

—Ոչ, կանգնած են։

Էլ ի՞նչ կայ, հապա նայիր դէպի աջ։

Տղան նայեց.—Գերեզմանատան մօտ, ծառերի մէջ մի բան է փայլում... կարծեմ ուլաններ են։

—Մարդիկ տեսնում ես։

—Ոչ, երևի պահուռել են ցորենների մէջ։

Նոյն վայրկեանին մի գնդակ սուր շչելով բարձրացաւ և ընկաւ տան առաջը։

Իջիր, իջիր, գոչեցին սպան.—Նրանք քեզ նշմարել են.. էլ ոչինչ հարկաւոր չէ, իջիր..

—Ես չեմ վախենում, պատասխանեց տղան։

42035.68

Իջիր կրկնեց սպան.—էլ ինչ է երևում ձախ կողմից

—Ձախ կողմից։

—Այո, ձախից։

Տղան գլուխը դեպի ձախ դարձրեց... Մի ուրիշ սուր շաչիւն ևս աւելի մօտիկից ծակեց օդը։ Տղան սոսկաց։

—Իջիր, կրկնեց սպան հրամայաբար։

—Իսկոյն, իսկոյն, պատասխանեց տղան։ Ամպայն ծառն ինձ պաշտպանում է։ Ուզում էք իմանալ, թէ ձախ կողմում ինչ բան կայ։

—Այո ձախ կողմը, բայց իջիր, իջիր...

Ձախ կողմը, կանչեց տղան, մինչև գօտին գուբս կախելով տերևների միջից.—այնտեղ, մատուռի մօտ տեսնում եմ, կարծեմ այնտեղ...

Մի երրորդ սասաիկ շաչիւն...տղան սկսաւ ցած իջնել ու յանկարծ գլխիվայր ընկաւ։

—Անիծուին, տղաղակեց սպան, վրայ հասնելով։ Տղան ընկաւ մէջքի վրայ կրծքի ձախ կողմից արեան վտակ էր հոսում։ Յիսնապետն ու երկու զինուոր վայր թռան ձիերից. սպան տղայի շապիկը պատռեց, գնդակը մտել էր ձախ կողքը։

—Մեռած է։

—Կենդանի է, պատասխանեց յիսնապետը։

—Ափսոս, կարիճ տղայ, ասաց սպան։ Մինչդեռ նա թաշկինակով վերքն էր ուզում կապել, տղան աչքերը բաց արաւ, գլուխը ձգեց ու մեռաւ։

—Խեղճ տղայ, պատուական կարիճ տղայ, ասաց սպան։ Նա մօտեցաւ մանակին, հանեց պատուհանից եռագոյն դրօշակը ու փռեց մեռելի վրայ։

—Մարմնի յեռանից մարդ կուզարկենք, ասաց սպան, մեռաւ իբրև զինուոր, զինուորներն էլ կը թաղեն։ Նա համբուրեց փոքրիկի աչը և հեծնելու հրաման տուաւ։

Մի քանի ժամից յետոյ, սպանուած տղային զինուորական շքով պատուեցին։ Սպաներից մէկը ծաղիկներ քաղեց և սփռեց մեռելի վրայ։

Բոլոր զինուորներն էլ նոյնն արին։ Փոքրիկը ծաղիկներով ծածկուեցաւ։ Ամենքն էլ նրան ողջունում էին, Ֆռաս բարով ասում։

—Ապրիս, փոքրիկ։—Կեցցէս, քաջ պատանեակ։—Բարի՞ Ֆռաս խարտեաշ մանուկ։—Փառք և պարծանք, կարիճ տղայ—ամէն կողմից ասում էին։

Մի տղայ էլ իր քաջութեան մէդալը ձգեց մեռելի վրայ. միւսը համբուրեց նրան. իսկ ծաղիկները անվերջ թափւում էին նրա մերկ ոտքերի արիւնաթաթախ կրծքի և շիկահեր գլխի վրայ։ Իսկ ինքը նստում էր բարձր աթոռի մէջ, դրօշակի տակ, սպիտակ ու ժպտերես՝ կարծես թէ ողջոյնները լսելով երջանիկ էր, որ աւել էր իր կեանքը թանկագին հայրենիքի համար։

Ահա, մի փոքրիկ լիսի դարդ, կաս,
Օր ու արև չկրեանք.
Ցաւիս, մի կիսանքը աւուվ անցաւ,
Աղիսարիից բան չիմացանք։
Ժարուսար մարդիկ կուգին-իմանան
Աղիսարի ֆոխ սիղանից.
Մինի աղիսարի խոցը գոլորն Իւք,
Միկ փայ չկայ աղիսարիից։
Խիղճ աղիսարի եոգին դուրս գայ
Քարից, եոդից եաց խամէ,

Քիռով նայը նարպին գայ,
ժարուպն իլիէ, վայիէ։
Խիղճ աղխարը դաւը դապի,
Դիապարկ նարի... Էյ, ալխարն,
Էլ ինչն իա խարը թողնում
Քարի վրայ, խար-ալիսարն։

9. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԸ

Թագադրութեան նախընթաց երեկոյեան իշխաններն ու պալատականները բարի գիշեր ցանկանալով թագաժառանգին, գնացին թագադրութեան հանդէսի մասին խորհրդակցելու։

Նրանց գնալուց յետոյ երիտասարդ թագաժառանգը ազատ շունչ քաշեց, նստեց իր անկողնու վերայ և սկսեց մտածել։ Նա մտածում էր, թէ ինչպէս անսպասելի կերպով փոխուեց իր կեանքը. շատ չէր անցել այն օրից, երբ նա ոտաբոբիկ անտառում շրի ածելով գառներ էր արածեցնում. մտաբերեց այն օրը, երբ թագաւորի ծառաները անտառից պալատ բերին նրան. ծերունի թագաւորն իր մօտ կանչելով բոլոր իշխաններին ու պալատականներին յայտնեց, թէ սա է իմ հարազատ ժառանգը և սա պէտք է կառավարէ իմ երկիրը մահուանից յետոյ։ Վաղն իր թագադրութեան օրն է։ Հանդէսը պէտք է լինի շքեղ ու փառաւոր։ Երկրի ամենանշանաւոր և հարուստ վաճառականները գնացել էին զանազան երկրներ թագադրութեան հանդիսի համար թանկագին ակներ և կտորներ բերելու։

Մէկը գնացել էր Եգիպտոս զանազան թանկագին քարեր ձարելու. միւսը Պարսկաստան մետաքսէ և ոսկեթել կտորներ բերելու, երրորդը Հնդկաստան մարգարիտներ և փղոսկր առնելու։ Վաճառականներն արդէն վերադարձել էին և թագադրութեան հանդիսի համար ամեն ինչ պատրաստ էր։ Թագաժառանգն սկսեց մտածել իր շքեղ հագուստների մասին. նրա քունը չէր տանում. բաց արեց լուսամուտը, դուրս նայեց. խաղաղ, լուսնկայ գիշեր էր. աստղերը փայլում էին, պարտիզում տարածուել էր ծաղիկների քաղցր բուրմունքը և սոխակը այնպէս հրաշալի երգում էր, որ երիտասարդի սիրտը լցուեց թախիծով. նա վեր առաւ իր քնարը և սկսեց նուագել։ Մի քիչ յետոյ քունը տարաւ։ Զանգահարեց, ծառաները ներս մտան, հանեցին նրա շորերն ու կօշիկները, մարմինը վարդաջրով լուացին, բարձի վրա անուշահոտ ծաղիկներ շաղ տուին և խոնարհ գլուխ տալով, դուրս գնացին։

II.

Թագաժառանգը քնեց և երազ տեսաւ։

Նա տեսաւ, իբր ինքը գտնուում է մի ցածր ու խոնաւ սենեակում. փոքրիկ լուսամուտներից շատ քիչ լոյս է ներս ընկնում. չորս կողմից լսուում է բանտարկեալների մաքոկների չըխչըխկոցը։ Բոլորը թոյլ են ու գունատ. հիւանդոտ երեխաներն օգնում են մեծերին, բայց նրանց ձեռքերը հազիւ են հպատակւում. երեւում է, որ քաղցն ու յոգնածութիւնը նրանց թուլացրել է։ Սենեակի շուրջ նստած են կար անող կանայք։ Բոլորը լուռ են ու տխուր։ Սենեակի փչացած օդը սաստիկ ծանր է։ Թագաժառանգը հազիւ շունչ առնելով, մօտենում է բանտարկեալներից մէկին և հետաքրքրութեամբ նայում է նրա աշխատանքին։ Այդ բանը բանտարկեալին դուր չի գալիս, նա բարկացած հարցնում է։ Ի՞նչ ես ուզում, ինչու՞ ես ինձ վերայ այդպէս նայում. չլինի՞ թէ մեր տէրը քեզ լրտես է նշանակել։

—Ո՞վ է ձեր տէրը—հարցնում է թագաժառանգը։—

—Նա էլ ինձ նման մի մարդ է. գանազանութիւնը միայն նրանումն է, որ նա հագնուած շքեղ շորեր, միշտ կուշտ է, նոյն իսկ շատ ուտելուց հասատցել է, իսկ ես քաղցից մեռնում եմ, և մարմինս երևում է ցնցոտիների տակից։

Մթթէ դու այդ մարդու սարուկն ես, զարմացած հարցնում է թագաժառանգը, չէ՞ որ երկիրը ազատ է։

—Այո, երկիրն ազատ երկիր է, սարուկներ չկան, բայց մենք բանուորներս պէտք է աշխատենք, որ քաղցից չմեռնենք. և ուժից վեր աշխատելով հարուստների համար, մենք նրանցից այսպիսի չնչին վարձատրութիւն ենք ստանում, որ քաղցից, ցրտից և հոգնածութիւնից մեռնում ենք։

—Մթթէ բոլոր բանուորներն այդ դրութեան մէջ են։

—Այո, բոլորը, թէ երիտասարդները և թէ ծերերը, թէ ազամարդիկ թէ կանայք ու երեխաները։ Ոչ ոք մեր մասին հոգ չի տանում. մեր բնակարաններում տիրում է չքաւորութիւնն ու քաղցը, որոնք սոխպում են մեզ սատրանալ և մինչև անգամ զզուութիւն ու մարդասպանութիւն անել, ակամայ ոճրագործ դառնալ. Բայց այս ամենը քո ինչին է պէտք. ինչպէս երևում է դու մեզանից չես, դու հարուստ ես և կուշտ։ Բանուորն երեսը դարձրեց և սկսեց իր մաքուկը արագ արագ շարժել։

Երիտասարդ թագաժառանգը տեսաւ, որ նրա գործած կտորը ոսկէ թելերից է և հարցրեց.

—Այդ ինչ կտոր է, որ դու գործում ես։

—Այս կտորը թագաժառանգի ծիրանու համար է։ Թագաւորութեան հանդիսին նա պէտք է այս ծիրանին ձգէ իր ուսերին։

—Ինչպէս.. սարսափած գոչեց թագաժառանգը և զարթնեց։

Նա գլուխը բարձրացրեց, նայեց շուրջը. փառահեղ սենեակի բոց պատուհանից ներս էր նայում փայլուն լուսինը գիշերը խաղաղ էր, նա հանգստացաւ և քնեց։ Խոր քնի մէջ նա կրկին երազ տեսաւ։

Տեսաւ, որ ինքը գտնուում է մի մեծ նաւի վերայ։ Հարիւրից աւելի սարուկներ թիավարում են նաւը։ Նաւի տէրը գորգի վերայ նստած՝ հրամաններ էր արձակում իր նեգր ծառաներին։ Նեգրերը ահագին մարակները ձեռքերին կանգնած են և վայ այն սարուկին, որ յոգնածութիւնից մի բոպէ կանգ առնի թիավարելուց, իսկոյն նրա մերկ մէջքին իջնում է մարակի անխնայ հարուածը։ Սարուկները, որոնց մերկ մարմինը ծածկում է միայն մի փոքրիկ գոգնոց, կապուած են միմեանց հետ երկար երկաթեայ շղթաներով։ Մի քիչ յետոյ նաւը մօտենում է ափին։ Թիավարներից երեքն սկսում են չափել ծովի խորութիւնը։

Բայց այդ միջոցին ափին երևում են մի քանի արաբներ և սպառնալից բացականչութիւններ անելով սկսում են նաւի վերայ փոքրիկ, կարճ նիզակներ նետել։ Նաւի վերայից պատասխանում է տէրն իր նետ ու աղեղով։

Նետը խրուեց արաբների մէկի կուրծքը, նա վայր ընկաւ, միւսները փախան։ Նաւատիները խաբիսխ ձգեցին։

Տէրը մի ինչ որ բան շշնջաց, նեգրերն իսկոյն սարուկներից մէկի շղթաները բաց արին, քթածակերն ու ականջները մեղրամոմով փակեցին և մի մեծ ծանր քար մէջքից կապեցին։ Այդ միջոցին միւսները պարանից շինած սանդուխքը մի ծայրին ծանր գնդեր կապելով նետեցին ծովը, իսկ միւս ծայրը կապեցին նաւի երկաթէ օղակներից։ Տէրը հրամայեց սարուկին իջնել ծովի յատակը և այնտեղից ամենալաւ մարգարիտները դուրս բերել։ Սարուկը հագիւ հազ իջաւ սանդուխքներից և սուզուեց ջրի մէջ։ Անցաւ մի երկու բոպէ. սարուկը դուրս լողաց ջրից, ծանր շունչ քաշելով բռնեց սանդուխքից և վերև բարձրացաւ։ Աջ ձեռքում բռնած ունէր մի հրաշալի մարգարիտ։ Տէրն իսկոյն խլեց նրա ձեռքից մարգարիտը և նեգրերը կրկին ծովը նետեցին սարուկին։

Նա մի քանի անգամ այսպէս սուզուում էր ջրի տակ և ամեն անգամ մի քանի գեղեցիկ մարգարիտ էր դուրս բերում ու յանձնում տիրոջը։ Վերջին անգամ մարգարիտը տալով նա ձեռքերը վեր բարձրացրեց և նրան վերև քաշեցին։ Ուժասպառ ու գունատուած վայր ընկաւ խեղճը տախտակամածի վերայ. նրա քթից ու բերա-

նից արիւն հոսեց և նա մեռաւ... Նեգրները ծովը նետեցին դիակը, իսկ տէրը ուշադրութիւն անգամ չդարձրեց այդ բանի վերայ։ Նա ձեռքում բռնած ունէր ամենամեծ և ամենագեղեցիկ մարգարիտը. նա շշնջաց. «Սա կը լինի թագաւորի գայլոնի*) ամենալաւ զարդը»։ Այս խօսքերը կայծակի նման շանթահարեցին երիտասարդ թագաժառանգին, նա ճչաց և զարթնեց։

Լուսամուտից երևում էր նոր բացւող արշալոյսը. աստղերը կամաց կամաց անհետանում էին. նրա աչքերը նորից փակուեցին. նա քնեց և կրկին երազ տեսաւ։

Եւ ահա թէ ինչ. նա գնում էր հինաւուրց խիտ անտառով. ծառերից կախուած էին հրաշալի պտուղներ. գոյնզգոյն թռչունները ծառից ծառ թռչկոտելով խօսում էին միմեանց հետ, իսկ ներքևում սողում էին ոսկալի թունաւոր օձեր. տաք տիղմի մէջ հանգստանում էին ահագին կրիաներ, իսկ կապիկներն ու սիրամարգները նստած էին հաստ ծառերի ճիւղերին։ Երկար ժամանակ գնում էր նա անտառով և վերջապէս հասնում է ծայրին։ Այստեղ նրա առաջ բացւում է հեռուներ տեսարանը։

Բազմաթիւ մարդիկ փորում են գետի հունը. նրանցից ոմանք ափերի ժայռերն են ճաշում, ոմանք հաւաքում և ընտրում են աւազը։ Բոլոր բանւորներն զբաղուած են և առանց հանգստանալու աշխատում են։ Ճանճային թունաւոր օդը մէկիկ մէկիկ վայր է դնում ուժասպառ աշխատաւորներին. նրանց դիակների նեխուած օդը սպանում է միւսներին և այսպէս, կենդանի մարդկանց գլխի վերևը սաւառնում է մահը ու խլում նրանց շարքերից մէկ այս, մէկ այն ընկերին։ Բանւորների կէսից շատն արդէն մեռել էին, երբ յանկարծ փչեց ժանտախտը և ոչ մի մարդ չմնաց կենդանի։

Թագաժառանգը հեկեկալով աչքերը ծածկեց։

—Մի լար, այստեղ միշտ այսպէս է լինում, լսեց նա մի ձայն. ձեռքերը յետ տարաւ, աչքերը բացեց, յետ նայեց և տեսաւ մի սեւազգեստ մարդու։

*) Արքայական դաւազան

—Ովքեր են այս մեռելները, ինչ էին որոնում սրանք. հարցրեց թագաժառանգը։

—Դրանց վարձել է մի հարուստ վաճառական, որ երիտասարդ թագաւորի թագի համար թանկագին քարեր գտնեն, պատասխանեց մարդը։

—Ի՞նչ, թագաւորի, գունաւոր շշնջաց թագաժառանգը։

—Ահա, նայիր այս հայելուն և դու կը ճանաչես նրան։

Երիտասարդը նայեց հայելուն, տեսաւ ինքն իրան և սարսափած ճչաց... ու զարթնեց։

III

Արևի ճառագայթները ներս էին ընկել. պարտիզում ճրլլում էին թռչնիկները։

Թագաժառանգը զանգահարեց ներս եկան ծառաներն ու նրանց յետեից բոլոր պալատական իշխանները։ Ծառաները ներս բերին թագադրութեան հանդիսի համար պատրաստած շքեղ հագուստը ոսկեթել ծիրանին, մարգարիտներով զարդարած գայլոնը և ականակուռ թագը։

Երիտասարդ թագաւորը հիացած նայում էր այդ հրաշալի զարդարանքներին, բայց յիշելով իր երազն ասաց.

—Ես այդ շորերը չեմ հագնելու, տարէք այստեղից այդ շքեղ զարդերը։

Իշխանները կարծելով թէ կատակ է անում, ծիծաղեցին։ Բայց թագաժառանգը խիստ ձայնով ասաց

—Ես ձեզ հրամայում եմ տանել այդ բոլորը, ես չեմ հագնելու այդ հագուստը. թէև այսօր իմ թագադրութեան օրն է։ Ո՜հ, թէ դուք իմանայիք, թէ այդ ամենն ինչ գնով է ձեռք բերուած։ Ահա, այդ ծիրանին հիւսուած է տանջանքի ու սովի ճիրաններով. այդ հրաշալի գայլոնի և թագի վերայի թանկագին ակների ու մարգարիտների կրծքում թաղուած է մահը...

Եւ նա պատմեց իր երազները։

Լսելով նրա պատմութիւնը, իշխանները նայեցին միմեանց և շշնջացին—պարզ է, որ թագաւորը խելագարւել է։Մեր ինչ գործն է բանւորների կեանքի մասին մտածելը, մենք փող ենք տալիս,նրանք էլ աշխատում են...

Պալատի կառավարիչը առաջ եկաւ և ասաց.

—Տէր արքայ, մենք բոլորս խնդրում ենք չմտածել երազների մասին և հագնւել արքայավայել հագուստը. ապա թէ ոչ ժողովուրդը քեզ չի ճանաչի։

—Անկարելի է, որ ժողովուրդն առանց արքայական հագուստների ինձ արքայ չհամարէ, բացականչեց երիտասարդ թագաժառանգը։

—Այո, այո, ժողովուրդը քեզ չի ընդունի, կնկնեցին բոլոր պալատականները.

—Գուցէ դուք ճշմարիտ էք ասում, բայց և այնպէս, ես այդ ծիրանին իմ ուսերին չեմ ձգի, այդ թագը գլխիս չեմ դնի։Ինչ հագուստով որ այս պալատը մտել եմ, այնպէս էլ դուրս կը գամ։ Եւ հրամայեց բոլորին դուրս գալ սենեակից։

Իր մի հաւատարիմ ծառայի օգնութեամբ լողացաւ, հանեց արկղից իր սեփական կոշտ ու կոպիտ կաւից կարած շապիկը, ոչխարի մորթուց կարած վերարկուն, հագաւ այդ ամենը և ձեռքն առաւ իր հովւական ցուպը։

Ծառան ժպտալով ասաց։ Տէր իմ դու ծիրանի և գայիսոն ունես, պակասում է միայն թագը.

Թագաժառանգը դուրս եկաւ պատշգամբ, քաղեց մասրենու մի փշոտ ճիւղ, պսակ շինեց և դրեց գլխին։

—Սա կը լինի իմ թագն—ասաց նա կարուկ։

Այսպէս զարդարւած գնաց նա դահլիճ, ուր սպասում էին իշխանները ու բարձրաստիճան հիւրերը։Տեսնելով նրան, շատերը ծիծաղեցին, ոմանք կանչեցին.—Ժողովուրդը թագաւորի է սպասում, ոչ թէ մուրացկանի. ոմանք էլ բարկացած աղաղակում էին—Այդպէս թագաւոր մենք չենք ուզում, դա խայտառակում է ամբողջ

պետութիւնը։

Երիտասարդ թագաժառանգը լուռ անցաւ նրանց մօտից, իջաւ փողոց, նստեց ձին և գնաց դէպի տաճարը։

Ժողովուրդը չճանաչելով նրան ծիծաղում էր—տես, տես ասում էին մէկ մէկու, մեր թագաւորի ծաղրածուն գալիս է։

Թագաժառանգը կանգ առաւ և ասաց։

—Ոչ, սխալւում էք, ես ինքս ձեր թագաւորն եմ, լսեցէք ինձ, ես բան ունիմ ձեզ յայտնելու։

Եւ նա պատմեց իր երազները։

IV.

Ամբոխի միջից մի ծերունի առաջ եկաւ և տխուր ձայնով ասաց.

—Տէր արքայ, դու անկարող ես փոխել ներկայ օրէնքները։ Ճիշտ է, բանւորների համար մանուան չափ ծանր է անկուշտ ու խստասիրտ գրամատէրերի մօտ աշխատելը, բայց ներկայ կարգերը այնպէս են, որ եթէ այդ նոյն գրամատէրերի շռայլ պահանջները չլինեն, մենք չունեսոր աշխատաւորներս գործ չենք ունենալ և քաղցից կը մեռնենք։ Դու անզոր ես հրամայել նրանց փոխել իրենց վերաբերմունքը։ Ոչ, ոչ, մեր տանջանքների պատճառները շատ խորն են և շատ հեռու քեզանից, վերադարձիր պալատ և հագիր շքեղ հագուստդ։

—Բայց չէ՞ որ բոլոր մարդիկ եղբայրներ են։

—Այո, ասաց ծերունին, բայց հարուստներն ու աղքատները շատ ամբարիշտ եղբայրներ են։

Երիտասարդ թագաւորի աչքերը լցւեցին արտասունքով, բայց նա չվերադարձաւ, այլ շարունակեց ճանապարհը։

Մօտենալով տաճարին, ձիուց իջաւ և ուզում էր ներս մտնել, բայց զինւորները արգելեցին։

—Այս դռնով միայն թագաւորը կարող է մտնել։

—Ես եմ թագաւորը, բարկացած գոռաց նա զինւորների վերայ և ներս մտաւ։

Եպիսկոպոսը դիմաւորեց նրան և ասաց։ Ես չեմ կարող քեզ

օծել. դու հովիւ չես, այլ թագաւոր։

—Բայց միթէ թագաւորը պարտաւոր է հագնել այն շորերը, որոնք ձեռք են բերուած մարդկանց կեանքի գնով։

—Որդեակ իմ, ասաց եպիսկոպոսը, աշխարհիս օրէնքն այդպէս է, ուժեղը ճնշում է թոյլին, ունևորը —չունևորին...

—Ինչպէս... և դու այդ խօսքերն ասում ես այստեղ տաճարում, ուր սատանում է Քրիստոսի ոգին, որն ուսուցանում էր սիրել միմեանց ինչպէս եղբայրներ, այս ասելով, նա թողեց եպիսկոպոսին և բարձրացաւ սեղան։ Այդ միջոցին ներս խուժեցին իշխաններն ու սրերը բարձրացրած զօռացին.

—Ուր է նա. ուր է երազատեսը. ուր է մուրացկան թագաւորը.մենք նրան ցոյց կը տանք ..նա իրաւունք չունի թագաւորելու...

Երիտասարդ թագաւորն երեսը դարձրեց դէպի նրանց և տխուր նայեց ժողովրդին, որն իշխանների օրինակից վարակուելով ներս էր թափուել։ Տաճարի լուսամուտների գունաւոր ապակիներից արևի ճառագայթներն ընկնելով նրայ վրայ. այնպէս հրաշագեղ փայլ էին տալիս նրան, որ նրա հասարակ բրդեայ հագուստը փոխուել էր ոսկեթել ծիրանու, նրա հովուական ցուպը արքայական գայլոնի, իսկ փշեայ պսակն՝ ականակուռ թագի։

Ժողովուրդը ոգևորուած ծունկ չոքեց նրա առաջ.պալատականներն ու իշխաններն ամօթահարուած յետ քաշուեցին ու խոնարհ գլուխ տուին։ Եպիսկոպոսն մօտ եկաւ և բարձրաձայն ասաց.

—Ինքն Մարդասէր Քրիստոս օծեց քեզ։

Եւ երիտասարդ թագաւորն իջաւ սեղանից. նրա երեսը վայելում էր սիրոյ յաղթանակով։ Ժողովուրդը տեղի տուեց՝ և նա վերադարձաւ պալատ։

10. Հեզիկ կարկաչով

Հեզիկ կարկաչով վազում են ալիք,
Փարում, փայփայում ափերը կանաչ.
Ջրերի վրայ կախուած ուռենիք
Նոցա հետ խօսում են լալահառաչ։

«Մի վազէք, ալիք, կացէք կոհակներ.
Մի թողնէք չքնաղ այս վայրն հանգստեան
Եւ վայելեցէք քաղցրութեան ժամեր,
Մինչ ժպտում է ձեզ շողն արեգական։

«Ա՜խ, դուք չէք տեսնում, կ'ացնէնք այս բլուր—
Եւ կը պղտորի ձեր ջուրը վճիտ.
Այնտեղ այլ երկիր, այլ ափեր տխոր,
Այնտեղ կը զրկէ ձեզ արեան հովիտ։

«Այնտեղ հողն արիւն, արիւն են սարեր,
Ջինջ աղբիւրներն էլ կարել են արիւն.
Վտակը քերում արիւնոտ քարեր,
Թառամեցնում է ծաղկազարդ գարուն։

«Դողում է երկինք որի շաչիւնից,
Ո՜հ, մի հեռանայ, սիրուն գետ, մեզնից,
Մի վազէք, ալիք, կացէք կոհակներ»։

Բայց մոայլեցաւ երեսը գետին.
«Իմ քոյր, եղբայրն են այն ամն ու վտակ»
Փոչեց, զարկուեցաւ սարսած ափերին
Ու յառաջ անցաւ կոհակ առ կոհակ։

---

11. ՓՈՔՐԻԿ ՋԱՂԱՑԱՒՈՐԸ

I.

Զորում, բազմերանգ ծաղիկների, անուշահոտ խոտերի մէջ, երևում էր մի նեղլիկ տնակ. Աբրահամենց Ջրաղացն էր այդ սովորական անշուք Ջրաղացներից մէկը, որ գարուն, ամառ և աշուն աղում, հա աղում էր։ Այսպէս շատ երկար տարիներ...

Մի առաւօտ արևը նոր էր իր ոսկեգոյն ճառագայթները տարածել երկրի վրայ, երբ Ջաղացի բակը մտաւ տասնչորս տարեկան Գագիկը. նա ցորենով լիքը մի պարկ ուսին դրած բերել էր աղալու։ Քրտինքը կաթիլ-կաթիլ ծորում էր նրա ճակատից։ Նա շատ արագ էր եկել, քոյր Նուշիկն այդպէս էր պատուիրել. կարիքը մեծ էր, բեռը ծանր, Ջրաղացն էլ հեռու։ Գագիկն առանց ժամանակ կորցնելու ներս մտաւ Ջրաղաց, պարկը մի ապահով տեղ դրեց ու Ջաղացպանի ականջին մի ինչ որ բան փսփսաց։ Ջաղացպանը գլխով համաձայնութիւն աւեց, որ շուտով հերթ տայ։ Ջաղացաւորների ուշքը խլեց Գագիկը։ Նրա մերկ ոտները, ցնցոտիները, խոր ընկած աչքերն ու գունատած դէմքը՝ նրանց սիրտը ճմլեց։ Ջաղացպանը փոքրիկ տաշտի մէջ խմոր էր անում, նախաճաշի պատրաստութիւն էր տեսնում։

—Գագիկ, մատաղ, ասաց Ջաղացպանը բաղարջի փայտը քիչ է, գնա էս մօտիկ տեղից մի կապոց փայտ բեր։ Նա խօսքը դեռ չէր աւարտել, որ Գագիկը դուրս թռաւ և շատ կարճ միջոցում շալակով փայտ բերեց։

I.

Բաղարջները թխուեցին, թաժայ հացի անուշ հոտը բռնեց Ջրաղացը. Գագիկի ախորժակը խիստ զրգուեց, այդ օրը նա ոչինչ չէր կերել։ Քիչ յետոյ Ջաղացպանը և Ջաղացաւորները շուրջանակի բազմեցին սփռոցի առաջ, սկսեց նախաճաշը։ Գագիկը մի մեծ կտոր բաղարջ ստացաւ ու շտապ դուրս եկաւ Ջրաղացից։ Նա բաղարջի կտորը ծոցը դրած, աջ ձեռքն էլ վրան սեղմած թռչկոտելով վազեց դէպի գիւղ։

Նախաճաշը վերջացաւ, Գագիկի ապուռը պատրաստ էր, բայց ինքը չկար։ Ջաղացպանը մի քանի անգամ կանչեց, մի քանի անգամ ներս ու դուրս լաւ նայեց, բայց Գագիկը չկար ու չկար. այս բանը Երան և Ջաղացաւորներին անհանգստացրեց։ Քիչ յետոյ Գագիկը ուրախ ուրախ ներս մտաւ, ամենքը հանգստացան։

—Գագիկ, ուր էիր, ինչու առանց յայտնելու գնացիր, հարցրեց Ջաղացպանը։ Գագիկը մօտեցաւ Երան ու ականջին հազիւ լսելի ձայնով յայտնեց, որ գիւղից էր գալիս և իր բաժին բաղարջի կտորը հացրել է տուած Նուշիկին ու հիւանդ մօրը.

Գաղտնիքը բացուեց, Ջաղացպանն երկու սրտագին համբոյր գրոշմեց Գագիկի ճակատին, ապա մի մեծ կտոր բաղարջ տուեց ու ասաց.

—Կեր, մատաղ, կեր, անուշ լինի քեզ։ Ամենքը գովեցին փոքրիկ տղային, իսկ Գագիկի ուրախութիւնը կրկնապատկուեց։ Նա պարկն առաւ, մի քանի անգամ շնորհակալութիւն յայտնեց ու թռչելով գնաց։





Դիտեցէք իւրաքանչիւր պատկեր. ինչ են անում մանուկները. ձեր դիտածը պատմեցէք, գրէք յարմարաւոր վերնագիր, ապա գրեցէք։

13. Ինչ էին երգում լարերը...

Մարի լանջին, անտառով շրջապատուած հինաւուրց մի աւերակի մէջ բնակում էր մի մարդ։ Նա աշխարհիս ամենաբարի մարդն էր։ Լոյսը բացւում էր թէ չէ, նա վերցնում էր իր միակ ընկեր ջութակն ու իջնում սարից։ Իջնում էր ու ամբողջ օրը թափառում գիւղից գիւղ, քաղաքից քաղաք։ Ամեն տեղ նա մխիթարում էր վշտացածներին, բժշկում էր հիւանդներին և նւագում էր ամենքի համար։ Նա նւագում էր մեծ հրապարակներում բազմաթիւ մարդկանց առջև և երբ մարդիկ լսում էին նրա մեղմանոյշ նւագածութիւնը, ամենքը սիրոյ ու երջանկութեան մասին էին խօսում։ Եւ աշխարհիս ամենաբարի մարդն ամեն երեկոյ ինքնագոհ վերադառնում էր իր բնակարանը։

Մի անգամ ուշ գիշերով նա վերադառնում էր մօտակայ գիւղից։ Գիշերը մռայլ էր ու խաւարչանաչում ցուրտ էր ու քամի։ Նա ոչնչից չէր վախենում։ Նա իր սիրելի ջութակը սեղմել էր կոնատակին և առաջ էր գնում խիտ ծառերի շարքերով։ Քամին խաղում էր նրա գլխի ճերմակ ալիքների և երկայն միրուքի հետ։ Յանկարծ հեռից լսեցին գայլերի սարսափելի ոռնոցները։ Ծերունին հասկացաւ ամեն բան, սակայն նա չսարսեց։ Առաւ կոնատակից ջութակն ու նստեց մի կոճղի վրայ։ Շուտով խաւարի միջից կայծերի պէս պսպղացին գայլերի աչքերը, և մի փոքր անց նրանց առագին վոհմակը շրջապատեց մարդուն։ Մի բոպէ ևս և ահա գայլերը կը բզկտեն ծերուկի մարմինը, կը խլխլեն իրար ճանկերից, բայց յանկարծ հնչեց մի եղեմական մեղեդի և գազանները յետ-յետ գնացին, սստոստեցին

ծերունու շուրջը և գլուխները դրին առջևի թաթերի վրայ ու կրակոտ աչքերը յառեցին նաւագողին։ Քամին տարածում էր սքանչելի ձայները ծածան-ծածան դէպի հեռուները... Ի՞նչ էին երգում ծերուկի ջութակի լարերն, ո՞վ էր խօսում այնքան հզօր ու ազդու նրանց բեկբեկուն ելևէջներով, որ ոչ միայն սաստում էր մարդկանց, այլ և գիշատիչ գազաններին...

---

14. Հրաժեշտը

Մնաս բարով, իմ հայրենիք,
Իմ մանկութեան սուրբ օրրան,
Քեզ պաշտել եմ ես վառ սրտով
Ու կը պաշտեմ յաւիտեան։

Թէև բախտը խլում է ինձ
Նաիրական քո գրկից,
Բայց նա երբէք չնչելու չէ
Սուրբ անունդ իմ սրտից։

Ուր էլ լինեմ, ուր էլ ճամ,
Թէկուզ և կիրթ ազգի մէջ,
Սիրել եմ քեզ, և այդ սէրը
Կ՚ապրի անխախտ ու անշէջ։

Մնաս բարով, իմ հայրենիք,
Ինձ կեանք, արև պարգևող,
Մնաս բարով. մեռելն անգամ
Համբուրում եմ քո սուրբ հող...

Ֆնեղրակ

Որսից գոռն վիրագուռնալիս, Ֆանուպարեր վրայ
գիւղաց մի Ֆնեղրակի շաղ. Ցոռնս կամաց-կամաց
ծօրիւռում էր նրան. իրբ յանկարծ ծօրիկ
Ժաղրց կուրծքը ան մի պառաս Ֆնեղրակ
վայր նիրրիրով իրարի ոչխ ընկաս զան նիկ
դինի առաց։ Փիրուրիրը իրիրած, ապրանդակ
ու կրակ կիրրած - նա յուսահատ Ֆիր ապշակիրով
միմանի անպամ թուրի գորժից դէպի զան
բաց ու սրապամ բիրաբ։
Ժապա նիրրից դէպի իր շաղուկը, որ փրկէ
նրան. նա թևիրով սրապապարից նրան...
իսկ այդ բոպէին նրա ամբողջ փորքից մարմինն ան ու ապրապարից դողրամ էր։ Նրա
շայնը բրրաց էր. նա ոչ ժիրց ընկնում,

Նրա ղունդը կրթուում էր. նա իրեն զոհում էր։ Թեկ անապահով երեկ սէրդ է իրեւար նրա ապրիր իմ ղունդ, սակայն նա ղրիմնայա, ղկարողացաւ նպատակ մնալ թարգր, անվրանդ ծղան վրայ... Ոչիր, նրա կամքից ամէն զգաւորդ ոչիր, վայր ևէրդ նրան ապարդիր։

Ցուռա կանգ առաւ ու սկսէց իր-իրարդարդիր... Իրեւ, նա էլ, խորհրդանիշ ապդ ոչիր։

Է՛յ Ղան—հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մէջ։
Ձրերդ անուշ, հովերդ անուշ։
Մենակ բալէքդ արիւն ծովի մէջ։

Ռո հոգին մեռնեմ, անգին հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ,
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ։

Դիտիցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և դրեցէք։

Սիրելի ընկեր վարդան՝

Ահիսոն. շատ ասիսոն, որ Կիսանդուխտանդ պարտատուով չկարողացար դպրոց գալ: Այսօր շատ ուրախ անցա: Ուսուցիչը սովորեցրեց արցի և արցունքների երգը: Նա մեկ բաժանեց երեք խմբի: Առաջին սեղանի առաջին աշակերտ թադեոսին դարձրեց արց, երկրորդ, երրորդ աշակերտներին նրա շագիրը: Սրանք ծուխ անպատուոան են ասում, փաղց, խնշոր, ալոր և այլ պղտոզներ են խաղում, ուրում Երկրորդ, երրորդ սեղանի շորրորդ հինգերորդ վեցերորդ, եօթներորդ և ութներորդ աշակերտներից միմանցին դարձրեց գիշայիներ.

միմանցին երեխաներ: Սրանք երեսանները կախած, կողովները ձեռքերին գնում են ծուխ անպատուոան փանչ, խնշոր խաղալու: Ինքներս էլ գնեցինք փոքրիկ վարդին չարոսին. մեկը երեսանն ուսին դրած, միւսը կողովն ձեռքին բռնած, գիշայի-ների առաջից ու յետևից գնկգնկալով վազում էին: Արցունքները երբ մանուկներին գրանում են, իսկոյն թոշկոտում են նրանց ծոց. մանուկներն ամ, վայ կանչելով փախչում են: Գիշայիներից մեկը երեսանով, երկրորդը մանակով, երրորդ, չորրորդը բաներով նրանց փախցնում են: Այս բոլորն ընկերներս մեր առաջ ներկայացնում են,

իսկ մեկ երգում ու ծաի ինչ գալիս
մերոյ էլ նրանք ին երգում, մեկ ինչ
խաղում. Քարդանս, պերքէ քո ազի-
բով գրանիս, որ գրաժիրա լաւ հասկանաս։
Հայաբ ընկերներդ էկ դար յերեսին,
ամէն էլ դար բարևներ ին ուղարկում։
Քո ընկեր Թորգոմ։

---

19. ՄԵՐ ՊԱՏՄԱՀԱՅՐԸ

Աշնան փոթորկալի գիշերներից մեկն էր։ Կատաղի քամին պրտրտում էր շինականների գետնափոր խրճիթների վրայ և ցրիւ էր տալիս խոտերի դէզերը, որ կիտած էին կտուրների վրայ։ Երկինքն ամպած էր, խաւարը տիրում էր ամեն տեղ։ Շներն անգամ այդ գիշեր փախել, մտել էին իրենց ծակերը։

Ճաշն դատուի Մորնի գիւղի փոքրիկ խրճիթներից մեկում իւղային ճրագը դեռ մարած չէր։ Այդ գետնափոր ընակարանի խորշերից մեկում նստած էր մի ծերունի։ Քամին երբեմն ուժեղ հոսանքով ներս էր փչում երդից և ճրագի լոյսը ծածանելով, տալիս էր ծերունու ալեգարդ դէմքին խորհրդաւոր կերպարանք։ Նա միայնակ էր։ Նրա շուրջն անկանոն կերպով դրած էին գանագան հին գրքեր, յունարէն, պարսկերէն և աստրերէն լեզուով։ Նա այն աստիճան խորասուզած էր այդ հին մագաղաթների մէջ, որ ամենևին չէր նկատում, թէ ինչ է կատարւում դրսում։ Խրճիթն աւելի

գերեզմանի էր նման, դա կատարեալ որջ էր. ցերեկով անգամ մի բան տեսնելու համար հարկաւոր էր ճրագ վառել։ Օդը խեղդելու չափ ծանր էր. խոնաւութիւնը տիրում էր ամեն տեղ։ Որ կողմը շօշափում էիր, փուլ էր գալիս, հող էր թափւում. իսկ ծերունի աշխատաւորն ապրում էր այդ մռայլ գերեզմանի մէջ։ Այդ մթին գերեզմանի մէջ երջանիկ էր նա. այստեղ նրան չէին խանգարում, այստեղ նա մոռացած էր իր բազմաթիւ թշնամիներից. ագքատութիւնը, անօթութիւնը և տառապանքն անբաժան էին նրանից. անբաժան էին այն մագաղաթներն, որոնցով շրջապատել էր իրեն, որոնց մէջ գտնում էր իր սրտի միակ մխիթարութիւնը։

II.

Ծերունին Մովսէս Խորենացին էր։ Այդ խրճիթի տառապանքների մէջ գրեց նա իր հրաշալի հայոց պատմութիւնը։

Դրսում փոթորիկը չէր դադարել. ծերունին դեռ շարունակում էր պարապել։ Այդ միջոցին լսելի եղաւ խրճիթի դռան ձայնը։ Ցուշիկ քայլերով ներս մտաւ մի մանկահասակ աղջիկ։

—Ինչ կայ, Շուշանիկ։

—Եկայ քնելու, տեղդ շակելու, հայրիկ։

—Ես դեռ պիտի նստեմ, դու գնա, դուտակս։

Շուշանիկը ծերունու այրի մնացած քրոջ դուստրն էր։ Նոյն խրճիթի մէջն էր ապրում և նրա մայրն, որ բաժանում էր իր եղբօր դառն ագքատութիւնը։

Այդ միջոցին խրճիթի դուռը դրսից սկսեցին սաստիկ բաղխել։

—Երևի քամին է, ասաց ծերունին։

—Մ՛չ, քամին չէ, ասաց Շուշանիկը և դուրս վազեց.

Մի քանի րոպէից յետոյ Շուշանիկն ուրախութեամբ ներս մտաւ, ասելով.

—Յուսիկն է, հայրիկ։

Յուսիկը, զարմացած կերպով կրկնեց ծերունին. — ինչ կայ,

—Ինչու է եկել։

—Նա թրջված է, դրսում անձրև է եկել, մառաւ մօրս մօտ հագուստները չորացնելու, շուտով նա ձեզ մօտ կը գայ։

Յուսիկը մի երիտասարդ աբեղայ էր, Ս. Կարապետի վանքի միաբան և մանկութիւնից աշակերտած լինելով ծերունու մօտ, այնքան սիրում էր իր վարժապետին, որպէս իր հարազատ հօրը։

Երիտասարդ աբեղան ներս մտաւ նրա մօտ աշխարհական հագուստով։

—Այդ ինչ է նշանակում, բացականչեց ծերունին զարհուրելով։

—Ինչու ես կերպարանափոխ եղել. ո՞ր դժբաղդ պատահարը քեզ այստեղ բերեց։

—Հանգստացէք, հայրիկ, պատասխանեց երիտասարդ աբեղան մօտենալով և նրա օրհնութիւնն առնելով, չար ոչինչ չի պատահել, ես խսկոյն բոլորը կը պատմեմ։ Նրա խօսքերից երևաց, թէ հիւանդ եղբայր ունի մօտիկ գիւղում, վանահօրից թոյլտուութիւն խնդրելով, եկած էր եղբօրը տեսնելու և այդ դէպքից օգուտ քաղելով, մտածեց այցելել իր վարժապետին։ Իսկ գիշերով գալու և հագուստ փոխելու պատճառն այն էր, որ իրան վարժապետին յայտնի պէտք է լինի, որ նրա մօտ մտնողների վրայ միւս հոգևորականները կասկածանքով են նայում։ Նրա պատմութեան առաջին մասը բոլորովին շինծու էր. նա ուղիղ եկած էր ծերունու մօտ, բայց թէ ինչ նպատակով, զգուշութեամբ լռեց։

—Ծերունին փոքր ինչ հանգստացաւ։

—Այո՛, ինձ յայտնի է, ասաց նա մի առանձին դառնութեամբ, որ ինձ մօտ մտնողների վրայ կասկածանքով են նայում հայոց աբեղաները, ազանդաւոր են համարում...պատմեցէք, խօսքը փոխեց նա,ինչ նորութիւններ կան ձեր վանքում։

Երիտասարդը պատմեց զանազան վանական ինտրիգների, աբեղաների ծուլութեան մասին։ Ծերունին անհետաքրքրութեամբ լսում էր և շուրջը գտնուած գրքերը վերցնելով մի կողմն էր դնում, բայց մէկը, որ ինքն էր գրել, պահեց ձեռքում։ Երիտասարդին ծանօթ էր այդ գիրքը, նա հետաքրքրութեամբ հարցրեց։

—Դեռ չէք աւարտել, հայրիկ։

—Պատմութիւնն աւարտել եմ, այսօր գրեցի իմ ողբը, դա կը լինի իմ աշխատութեան վերջաբանը։

—Մինչև ո՞րտեղ հասցրիք պատմութիւնը։

—Մինչև Արշակունեաց թագաւորութեան և մեր Լուսաւորիչ հօր առնմի հայրապետական աթոռի անկումը։ Աւելի հեռուն գնալ չէի կարող, որ նկարագրէի մեր այժմեան կրօնի ամօթալի գործերը։ Դուք գիտէք,որ առանց դրան ես նրանք ոչքան կատաղած են իմ դէմ։

Երիտասարդն առաւ գիրքն և սկսեց թերթել։

—Այսքանն էլ բաւական է, ասաց նա մի առանձին զսպունակութեամբ։

—Ես ամփոփեցի այդտեղ մեր նախնիների գործերն իրենց լաւ և վատ կողմերով. նկարագրեցի զաւակների չարագործութիւնները և հայրենասէրների անձնազոհութիւնները։ Կ՚անցնեն խաւարի և ազգութեան զարերը, կը ծնի լուսաւոր ժամանակ իր նոր գաւակներով։ Նրանք կ՚սկսեն քննել հայրենի գործերը և անցեալի սխալներից օգտուելով, լաւ օրինակներից խրատուելով, կ՚ստեղծեն մի նոր կեանք։ Ես աշխատել եմ անմահացնել մեր հայրենիքի յիշատակարանները, որ դոքա չմեռնեն, չմոռացուեն ազգի կողմից։Ոչինչ գրութիւնն այնքան ցաւալի չէ, քան այն երբ մի ազգ չգիտէ իր նախնեաց պատմութիւնը։

—Դուք ձեր ընակարանը փոխելու դիտաւորութիւն չունէք, հայրիկ, ասաց նա, չկարողանալով այլևս համբերել։

—Ի՞նչ կայ, հարցրեց ծերունին անհանգստութեամբ։

—Ոչինչ... այնպէս...հարցնում եմ...

—Երևի այստեղից ևս կամենում են ինձ հալածել։

—Ոչ.. բայց...վատ չէր լինի՝ փոքր ինչ զգոյշ լինել։

—Ո՞րտեղ փոխեմ, ուր գնամ, պատասխանեց ծերունին դառնացած կերպով։ Կար ժամանակ, որ իմ ուժերը դեռ սպառած չէին, աչքերումս լոյս կար, ոտներումս զօրութիւն. թափառում էի մեր աշխարհի մի ծայրից միւսը, դիմանում էի քաղցի, ծարաւի և եղանակների խստութեան. իսկ այժմ ուր կարող եմ գնալ։ Իմ կեանքն

անցաւ ցաւերով և դառնութեամբ. իսկ այժմ թոյլ չեն տայ, որ գոնէ իմ ծերութեան վերջին օրերն անցկացնէի այս խոնաւ գերեզմանի մէջ։ Իմ կոիւը փառքի համար չէր, ես պատերազմում էի խաւարի, ապիտութեան և հայրենիքի դաւաճանների դէմ. ես յաղթեցայ, ես ընկայ և իմ կործանման մէջն է իմ փառքը։ Ամէն ինչ խլեցին ինձանից. մնաց մի գրիչ միայն, մինթէ այդ ևս պէտք է խլեն։

— Պէտք է զգուշանալ աւելի վատթարից... պատասխանեց երիտասարդ աբեղան։ Այդ խաւարասէրներն իրենց հալածութեան մէջ չափ չունեն։ Նոքա անդադար նորանոր ասիթներ են որոնում ձեզ հալածելու։

— Մտածում են իրենց վաղեմի սովորութեան համաձայն թունաւորել ինձ, հարցրեց ծերունին դառն արհամարհանքով։ Ես թոյնից չեմ վախենում։

— Նրանց դիտաւորութիւնն աւելի չար է...

— Ասացէք վերջապէս, մի տանջէք ինձ, ինչ են կամենում անել։

— Դոքա մտածում են յափշտակել ձեր բոլոր գրաւոր աշխատութիւնները և ոչնչացնել։ Նոքա մտածում են ոչնչացնել այդ պատմութիւնը, որ ձեր վերջին տարիների ծանր աշխատանքի արդասիքն է։ Եւ հէնց այդ ցաւալի լուրը ձեզ հասցնելու համար գաղտնի կերպով դուրս եկայ վանքից, շտապեցի ձեզ մօտ, որ նախազգուշացնեմ։

— Անիրաւնե՞ր... գոչեց ծերունին խորին վրդովմունքով։ Ես ամեն ցածութիւն կ'սպասէի նրանցից, բայց այդ երեւակայել անգամ չէի կարող. դա մի սարսափելի եղեռնագործութիւն է. սպանել պատմութիւնը... դա ամենամեծն է բոլոր յանցանքներից։ Այո՛, դա կը լինի ինձ համար մահացու հարուած։ Նա գլուխը քարշ ձգեց և ձեռքը տարաւ դէպի ճակատը։

— Դեռ ևս յուսահատելու չէ, դեռ շատ հնարներ կան ազատելու ձեր գրաւոր աշխատանքները, պատասխանեց երիտասարդ աբեղան։ Այդ պատմութիւնը դուք գրել էք Սահակ Բագրատունու խնդիրքով. դուք դիտաւորութիւն ունէք անձամբ տանել, նուիրել իշխանին։ Այդ

հասկացել են ձեր թշնամիները։ Նոքա պատրաստուել են կամ ձեր տան մէջ, կամ ճանապարհին կողոպտել ձեզ և յափշտակել այդ թանկագին գանձը։ Ժամանակ կորցնելու չէ։ Եթէ իմ բարի վարժապետը վստահութիւն ունի իր անձնուէր աշակերտի վրա, ես պատրաստ եմ հէնց այս գիշեր ճանապարհ ընկնել և տանել յանձնել իշխանին ձեր գիրքը։ Նրա ձեռքը հասնելուց յետոյ, ձեր աշխատութիւնը կ'ազատուի վտանգից։

Ծերունին գրկեց իր աշակերտին և օրհնելով նրան ասաց.

— Գովում եմ քո անձնուիրութիւնը և մխիթարւում եմ. եթէ քեզ նմանների թիւը շատ լինի, մեր յոյսերը պէտք է պսակուած համարել։ Մենք մեր գործը կատարեցինք. այսուհետև ձեզ է մնում մշակել, անուշանել նորարոյս ցանքը։ Օրհնում եմ քեզ։ Տար այդ գիրքը և յանձնիր իշխանին. նա միայն է, որ գիտէ գնահատել. նա միայն է, որ յարգում է իր նախնեաց յիշատակները։ Նա կը պահէ այդ գիրքը, որպէս մի սրբութիւն և կ'աւանդէ իր յաջորդներին։

Գիրքը դրուեցաւ կաշեայ պարկի մէջ. երիտասարդ աբեղան կապեց մէջքի վրայ, իսկ նրա վերայից հագաւ վերարկուն։ Յետոյ նա առաւ իր ճանապարհորդական ցուպը և համբուրելով ծերունու աջն, ուղի ընկաւ։

Դրսում դեռ փոթորիկը փոթորկում էր, անձրևը հեղեղի նման թափւում էր, բայց քաջասիրտ ուղեորը հաստատուն քայլերով դիմում էր դէպի Սահակ Բագրատունու ամրոցը, որ միքանի օրւայ ճանապարհով հեռու-հեռու էր Խորենացու գիւղից։

---

20. Երաշխիք

ՇԻԼԼԷՐԻ

Դաշոյնը պահած զգեստի տակին,
Դամօնը գնաց Դիոնիսի մօտ.
Բայց պահակները նրան բռնեցին,
Ու բռնակալը հարցրեց ցասկոտ.

—Ո՞ւմ էիր ուզում նուիրել մահին.
—Քեզ էի ուզում դժոխք ուղարկել.
—Այդ խաչի վրայ կարող ես քաւել։

Դամօնը ասաւ. «Պատրաստ եմ մեռնել,
Կեանքս ինձայել քեզ չեմ աղերսում։
Բայց, թէ կարող ես ինձ շնորհ անել,
Միայն երեք օր միջոց եմ ուզում,
Որ կարողանամ քոյրս պսակել.
Ա՛ռ բարեկամիս քեզ գրաւական,
Թէ որ չդառնամ, սպանիր նրան»։

Ու խարդախութեան ժպիտն երեսին,
Քիչ մտածելով, որոտաց արքան.
—Ես ականջ կ՚անեմ քո այդ աղերսին,
Միայն երեք օր ժամանակ կրտամ։
Բայց լաւ իմացիր թէ չգաս կրկին,
Նա քո փոխարէն խաչ կը բարձրանայ,
Դու այնուհետև ազատ ես, գնա...

Գնում է Դամօնն ընկերին յայտնում.
—Վարմանդիս համար, ասում է, արքան
Ինձ խաչի վրայ մահուան է մատնում,
Ասում է երեք օր ժամանակ կը տամ,
Որ ես պսակեմ քոյրս ու դառնամ.
Եկ, դու իմ տեղակ նրա մօտ մնա,
Մինչև որ կրկին ընկերդ դառնայ։

Ընկերը փարուեց Դամօնի վզին
Ու գնայ պարտա Դամօնը մնար —
Բարև է ասում ծեր Սիրակուզին,
Եւ ահա անցան օրերն արագ
Ու իր քրոջը յանձնելով փեսին՝

Դարձաւ Դամօնը, գնում էր յամառ
Ընկերի տեղակ մեռնելու համար։

Յանկարծ փոթորիկ... յորդ անձրև տեղաց,
Թափում են սարից վտակներ մութ,
Սև հեղեղներն են գոռում կատաղած,
Ահա նրա դէմ գետը հոսանուտ.
Եւ ալիքներն եռած փրփրած
Սւժով քանդեցին կամուրջն ամուր
Եւ առան տարան ո՞վ գիտէ թէ ո՞ւր...

Զուր է Դամօնը գետի եզերքին
Փնտում ու գալիս ու հեռուն նայում,
Զուր է օգնութիւն կանչում ազատագին,
Ոչ ազատարար նաւ է երևում,
Ոչ էլ առագաստ նրա աչքերին...
Ու նա մոլորուած շրջում է լացով,
Փետը բարձրանում ու դառնում է ծով։

Եւ նա յուսահատ չորեց ազթօքի,
Ասուած է կանչում երեր տագնապով.
«Օ՛ Զեւս, հանդարտիր գայրոյթն ալիքի,
Ժամանակն անցաւ, կէս օր է շուտով.
Բանակալի գէմ ես խոստում արի,
Օ, թէ ուշանամ, ընկերս անմեղ
Իզուր կ՚մեռնի խաչ հանած իմ տեղ։

Բայց զուր է՝ տարերքը գոռում է նորից,
Կոհակը հրում փրփրած կոհակին,
Ժամն է սլանում ժամի եռակից,
Ահից թև առաւ Դամօնի հոգին,
Նա ջուրը նետուեց բարձր եզերքից

Ուզում է հասնել ցանկալի ափին,
Պատռելով գետի հոսանքն ուժգին։

Դուրս եկաւ ափը.. ու գոհանալով
Փրկող Աստծուն, գնաց իր ճամփան.
Մթին անտառից ահեղ խմբակով
Աւազակները նրա դէմ եկան,
Աչքերը վառում մահու կրակով,
Ու սպառնալով շարժումով լախտի,
Փակում են ճամփան միակ ճամփորդի։

—Ի՞նչ էք կամենում, ես չունեմ գանձեր,
Աստ. Դամօնը ահից գունատուած.
Ինձ լոկ մի տխուր կեանք է մնացել,
Այն էլ արքայի համար է պահուած.
Ու մէկի ձեռից սուրը խլելով
Նա շողացրեց.—երեքը մեռան,
Մնացածները փախուստի դառան։

Ու արեգակը շողերն այրող
Ճամփորդի վրայ թափում է վերից,
Նա կանգ է առնում յոգնած—անկարող.
«Դու ինձ փրկեցիր կատաղած ջրից,
«Դու ազատեցիր ձեռքերից խեղդող,
«Հիմա էլ, օ՜ Զեւս, ոյժ տուր թևերիս,
Որ գնամ փրկեմ աղնիւ ընկերիս...

Եւ ահա այնտեղ, մօտիկ ժայռի տակ
Զնգում է անուշ մի մեղմ կարկաչիւն,
Նա մօտ է գնում, լսում է անյագ,
Աղբիւրն է տեսնում արծաթանչիւն,
Որ ցոլացնում է ջուրը սառնորակ։

Ու նա ընկնելով արծաթ աղբիւրի
Կատարում է սրտի ծարաւը խորին...

Ծաղկած մարգերում ծառերը կանաչ
Փռում են գետնին հովաշունչ ստուեր,
Ու նայում է նա. իրենց առաջ
Գնում են երկու ճանապարհորդներ.
«Օ՜, հիմա նրան բարձրացնում են խաչ,
խօսում են նրանք, Դամօն շանթուած
Վազում է առաջ հասնելու նրանց։

Նա վշտանում է, մաշւում է ցաւով,
Երկիւղը նրան տալիս է թևեր.
Ու Սիրակուզան ոսկեղէն փայլով
Աշտարակները բարձրացնում է վեր.
Եւ Ֆիլօստրատն արագ քայլերով,
—Նրա տան խելօք, անձնուէր ծառան
Դիմաւորում է ասելով նրան.

—Եա գտա՛, գնա՛, արդէն ուշացար,
Այժմ մտածիր միայն քո մասին,
Քո բարեկամը սպասեց երկար,
Սպասեց մինչև վարկեանը վերջին
Ու խաչ բարձրացաւ. և դո՜ւ, դու չեկար...
Զուր բռնակալը ծաղրում է նրա
Բարեկամական հաւատի վրայ։

—Ոչ, թէ իզուր է այլևս գնալ,
Թէ ճիշտ միջոցին չեմ վերադարձել,
Դանէ կը գնամ մահով միանալ,
Որ բռնակալը չուզենայ կարծել,
Թէ ես կարող եմ ուխտս մոռանալ.

Թող Դիոնիսը ինձ էլ մահուն տայ,
Միայն թէ անկեղծ ուխտին հաւատայ։

Ու արևմուտին նա մտաւ քաղաք,
Կանգնած է խաչը հրապարակում,
Ամբոխը շուրջը կազմել բոլորակ,
Ընկերին դէպի խաչն են բարձրացնում.
Նա պատռում է ամբոխը արագ.
—Դահիճ, ինձ խաչիր, ես նա եմ, որին
Գրաւական էր նա թագաւորին։

Նայում է ապուշ ամբոխը նրանց,
Նրանք մէկ մէկու համբոյր են տալիս.
Ու բոլորն այնտեղ սիրտները լցած՝
Ընկերների հետ խնդում են, լալիս։
Ու լուրը գոռոզ արքային գնաց.
Նրա սիրտը քար փափկում է, հալչում,
Նա ընկերներին պալատ է կանչում։

Նայում է արքան հիացքով խորին
Ու տխուր ասում. «Ձերն է յաղթանակ,
Ես հաւատում եմ ուխտի խօսքերին,
Դուք սիրաս լցրիք մի անուշ կրակ.
Թող ես էլ լինեմ ձեզ հետ մտերիմ,
Ինձ էլ ձեր երրորդ ընկերն արէք,
Դուք երկուս էիք, թող լինինք երեք...։

«Ցնա՛, իմ որդիակ, աշխարհս անցիր,
Ամանաքի անուն մի-մի դու սրտայիր»։
Ու գնաց որդին, շատ երկրներ թափեց,
Մի-մի նպատակներ, մի-մի գանձ ժողովեց,
Ու դարձաւ նորից, ասաց պարծանքով.
Հա՛յր իմ, այժմ մի-մի լի՛մ քո կարծիքով։
«Չէ, չէ, թէև դու բոլորայի ես զարդ
Քայլ էլ լի՛մ ասել, տակաւին մի-մի մարդ»։
Ամառով, աղօրիով մրաւ անապատ,
Քուրջ հագաւ մարմնուն, երազներ գործեց շատ
Ու դարձաւ նորից, ասաց պարծանքով.
—Հա՛յր իմ, այժմ մի-մի լի՛մ քո կարծիքով։
Ողջմայ դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես էլ տակաւին լի՛մ ասել մի-մի մարդ։



Դեպի դրսը և դրսից։



Դեպի ներսը, պատմելը։

23. ՎԻԼՀԵԼՄ ՏԵԼԼ

I.

Եւրոպայում Ալպեան ձիւնապատ լեռների դալարագեղ հովիտներում, հին դարերից մինչև այսօր ապրում է մի ազատասէր ժողովուրդ՝ գիւղացիները կամ հելուետները։

Մեզնից եօթհարիւր տարի առաջ, նրանց հայրենիքը կազմուած էր երեք գիւղախմբից, կամ ինչպէս իրենք են ասում՝ կանտոններից։ Այդ կանտոնները ինքնավար էին. կառավարուում էին ընդհանուր խորհրդով։ Ամեն բնակիչ ձայն ունէր օրէնքներ դնելու մէջ և ամեն մի հարց վճռուում էր բոլոր բնակիչների ձայների մեծամասնութեամբ։ Ամենքը հնազանդուում էին ընդհանուր խորհրդի վճիռներին։

Հելուետները պարապում էին երկրագործութեամբ և խաշնարածութեամբ. նրանք քաջ, աշխատասէր էին և պատիւն ու ազատութիւնը բարձր էին դասում աշխարհի ամեն բարիքներից, նոյնիսկ իրենց կեանքից։

Սակայն արտաքին զօրեղ թշնամիներից պաշտպանուելու համար հելուետները յօժարակամ ընդունել էին գերմանական թագաւորի հովանաւորութիւնը, այն պայմանով՝ որ նրանք թագաւորին օգնեն պատերազմի դէպքում, թագաւորն էլ նրանց պաշտպանէ օտար յարձակումներից։

Այսպէս ապրում էին նրանք ազատ ու անկախ, բայց երբ գահ նստաւ Ալբրէխտ, սկսեց նրանց ազատութիւնը վտանգուել։ Ալբրէխտը մի ագահ, գոռոզ և խստասիրտ մարդ էր. ուշք ու միտքը դրել էր աշխարհը տիրել, հպատակեցնել բոլորին և անվերջ հարստանալ։

Առաջ ու առաջ նա սպառնաց հելուետներին, որ իրենց բարի կամքով հպատակուեն պետութեան միւս հպատակների պէս, բայց հելուետները ոչ վախեցան և ոչ էլ հնազանդուեցին։

Զայրացած Ալբրէխտը խիստ հրամաններով Զուիցերիա ուղարկեց իր երկու կուսակալներին՝ որ ժողովրդին ամեն միջոցներով նուաճեն, հպատակեցնեն։

Կուսակալները Զիլիցերիա հասան թէ չէ՝ սկսեցին խստութիւններ բանեցնել։ Թոյլ չէին տալիս, որ հելլեհներն իրենց սպրանքներն երկրիցը դուրս տանեն ծախելու. ուրիշ երկրից բերուող սպրանքներից ծանր հարկեր էին առնում և մի չնչին յանցանքի համար անագին տուգանքներ էին վերցնում։

Ծանր էր, շատ ծանր էր այս ամենը ժողովրդի համար։

—

Մի օր, իրիկնադէմին մի ձկնորս, մի հովիւ և մի որսորդ միասին նստած իրենց երկրի կապոյտ լճի ափին զրոյց էին անում. հովիւն իր խաշներից էր խօսում, ձկնորսը ձկներից, իսկ որսորդն էլ իր սիրելի որսերից. մէկէլ որտեղից որտեղ շնչասպառ, արիւնի մէջ կորած՝ նրանց մօտ վազէվազ եկաւ զիլիցերացի Կոնրադը։

—Աստծու սիրուն, ձկնորս, ինձ անցրու լճի միւս ափը և ազատիր անխիղճ հալածողների ձեռքից։

Կուսակալի զինուորները Կոնրադի յետևից ընկած հալածում էին նրան. պատճառն այն էր, որ կուսակալ Գեսլերի սպաներից մէկը մի քանի զինուորների հետ մտել էր խեղճի տունը, ինչ որ սիրտն ուզել էր վեր էր առել և այդ դեռ քիչ էր, ուզեցել էր նրա կնոջ պատիւն էլ խայտառակել։ Կոնրադն այս ամենը չկարողանալով տանել, կացնով տեղն ու տեղը սպանել էր սոպային և փախել։

Մինչև նա հատուկտոր խօսքերով պատմում էր իր գլխի եկածը, և մակոյկը պտտտում էին, յանկարծ սաստիկ հողմ բարձրացաւ. լիճը տակն ու վերայ էր լինում, ձկնորսը սիրտ չարաւ խեղճ մարդուն լճի միւս ափն անցնել։

Կոնրադի բախտին էր, որ հէնց այդ միջոցին նրանց հանդիպեց Վիլհելմ Տելլն, որ անվեհեր որսորդ էր, լսելով Կոնրադի աղաչանքը, իսկոյն մակոյկն արձակեց կապից և ասաւ.

—Է՛հ, ինչ ուզում է, թող լինի, յոյսերս դնենք Աստծու վրայ. ինչքան ուժ ունեմ, կը փորձեմ. դատաւորի ձեռքից ես քեզ կը ազատեմ, իսկ փոթորիկից էլ թող Աստուած ազատէ։

Ու Կոնրադի հետ մակոյկ նստան։

—Դու էլ, ձկնորս եղբայր, ասաւ Տելլը, կնոջս կը մխիթարես, եթէ բան է, Աստուած մի անէ, գլխիս մի փորձանք եկաւ կ'ասես նրան, թէ ես արի, ինչ որ մարդու պարտքն էր։

—Այս ասելուց յետոյ Տելլը նուժկու ձեռքերով սկսեց թիավարել. լիճը սաստիկ կատաղած էր, անագին ալիքները մակոյկը տաշեղի նման այս ու այն կողմն էին նետում։ Բայց Տելլը, որ վարպետ թիավար էր, կարողացաւ Կոնրադին միւս ափն հասցնել։ Կոնրադն ազատուեց մահապատժից։

Նրանք մակոյկը նոր էին նստել, որ վրայ հասան կուսակալ զինուորները, ու տեսնելով որ բանը բանից անցել է, կատաղած վրայ թափուեցին ու իրենց վրէժը հանեցին խեղճ ու կրակ հովուից, ցիր ու ցան արին նրա հօտը, այրեցին նրա աղքատիկ խրճիթը...

II.

Ամեն գիւղ ու ամեն տեղ էլ կուսակալների զինուորները նեղութիւններ էին տալիս ժողովրդին. մի տեղ կողոպտում էին, մի ուրիշ տեղ ծեծում, մի տեղ այրում, մի ուրիշ տեղ բռնաբարում։ Կուսակալի սպաներից մէկը բռնի քշում, տանում է ծերունի Միլխթարի հոները. ծերունու որդին Անդրէը չդիմանալով այս անպիտանի արարքին, վրայ է պրծնում, մի լաւ ծեծում նրան և վախենալով կուսակալի ահեղ վրէժից, փախնում է լեռները։ Սակայն սարսափելի հետևանք ունեցաւ այս դէպքը։ Կուսակալը ծերունուց պահանջում է՝ որդու տեղն ասէ, ծերունին երդւում է, թէ ինքը չգիտէ որդու տեղն. այդ անգութը կանչում է դահիճներին, հրամայում է ծերունու աչքերը հանեն.—«Լաւ, ասենք թէ որդիդ այստեղ չէ, դու իմ ձեռքս ես. այսպէս է ասում նա, այնինչ դահիճները փորում են թշուառ ծերունու աչքերը։ Եւ կարծես թէ ուղածը քիչ էր, նրա ունեցած չունեցածն էլ յափշտակում է, տունն աւերում, այնպէս որ անբախտ ծերունին երկու աչքով կոյր՝ ցու-

-ը ձեռքին, դոնէ գուն ընկած ողորմութիւն է խնդրում։

Նրա որդին Առնոլդը զարհուրանքով լսեց այս բոթը և ուխտեց, ինչ էլ որ լինի, հօր վրէժն անպատճառ հանել կուսակալից.—«Ոչինչ չի մնում ինձ կեանքում այլևս անելու, եթէ ոչ միայն իմ այրոզ, անհուն ցաւը գովացնել բռնակալի արիւնի մէջ»—այսպէս ասաւ նա և ընկաւ այն օրանից Զուիցերիայի լեռներն ու ձորերն. անցաւ մի տնից միւսը, մի հովիւ խրճիթից միւսի խրճիթը, խօսեց բոլորի հետ. ամենքին կրակոտ խօսքերով համոզում էր, յորդորում՝ սրրաների մէջ գայրոյթ էր վառում, որ միանան և բռնակալների լուծը տապալեն։

Եւ որովհետև ամեն զուիցերացու սիրտ լիքն էր բռնակալների դէմ ատելութեամբ, ուստի ամենքն էլ արձագանք էին տալիս Առնոլդի կոչին, և այդպիսով էլ երկրի աւագներն որոշեցին խորհրդի գալ, մտածելու երկրի փրկութեան մասին։

Լեռան կող ու մեռ շաւիղներից, գաղտագողի իջնում էին ձորը ժողովրդի ընտրելիները և հաւաքւում էին խարոյկի շուրջն, որ վառել էին թէ տաքանալու և թէ նշանի համար։ Ամենքն էլ մէկ սիրով ու մէկ տենչանքով էին կապուած իրար հետ. նոյն սիրով էին սիրում իրենց հայրենի լեռներն ու ձորերը, նոյն տենչով էին վառուած՝ ազատելու իրենց կիներն ու երեխաները դաժան թշնամուց։ Մենակ քաջ որսորդ Վիլհելմ Տելլն էր պակաս. նա ասել էր.—ինձ մի կանչէք, խորհուրդն ու խօսքերն իմ բանս չեն, իմս այ—սա է. այս ասելով մեկնել էր նա իր ուժեղ բազուկը. երբ այս բազուկները ձեզ հարկաւոր կը լինեն, այն ժամանակ բաւական է, որ մի խօսք ասէք, մէկ էլ տեսաք. Տելլը կողքերիդ կանգնած է։ Վերջապէս ընտրելիներից մէկն ասաց.

«Գուք գիտէք, որ մենք եկել ենք հեռու տեղերից այս լեռները. մեր պապերը մատներով մէկ-մէկ մշակել են այս հողերն, անտառները կարել, ժայռերը հարթել, և միշտ ազատ են ապրել. մենք այդ ոսկուն և ազատ պապերի որդիներն ենք, մենք չենք յպիւած, մենք պահել ենք մեր ազատութիւնն ու մեր յօժար կամքով ընդունել ենք գերմանական թագաւորի հովանին։

Մի անգամ չէ, երկու անգամ չէ, որ մենք գերմանացիների համար արիւն ենք թափել, բայց տեսէք, թէ փոխարէնը ինչպէս են հատուցանում. էլ ոչխարների հօտ չի մնացել, որ տարած չլինեն, էլ ձեր, էլ կին, էլ երեխայ չի մնացել, որ չարչարանքի ու անարգանքի չենթարկուէին. երբ բռնութիւնն աշխարհը լցնում է անարդարութեամբ, երբ գանակն ոսկորին է հասնում և համբերութիւն տածող այլևս կեանք չէ, այլ մահ՝ այն ժամանակ արդարացած ասուն է, որ պիտի մերկանայ և փայլի չարի ու բռնութեան դէմ մեր հողի, մեր երեխաների, մեր կեանքի փրկութեան համար։

Թանձր խաւարի մէջ, եկէք երդումով հաստատենք մեր խօսքն ու դաշինքն. այս վայրկեանից մենք եղբայրներ ենք, և մեզնից ոչ մէկն իր ընկերներին մենակ չպիտի թողնի փորձանքի դժուար օրերում. ազատ լինենք, ինչպէս որ ազատ են եղել մեր պապերը. լաւ է մեռնենք, քան թէ սարուկ ապրենք, յոյսերս դնենք Աստծու վրայ և մարդկային զօրութիւնից չվախենանք. այն ժամանակ, ինչ որ ուզում է, թող լինի ..»

Ամենքն երդուեցին այդպէս անել։

III.

Կուսակալ Գեսլերի ենթակայ կանտոնի մի գիւղի հրապարակի վրայ մի ձող կայ անկած, ձողի ծայրին էլ մի գլակ։ Այդ Գեսլերի գլակն է. նա հրաման է արձակել ժողովրդին թէ՝ իւրաքանչիւր ոք, այդ ճանապարհով անցնելիս, պէտք է գլուխ բանայ և նոյն պատիւը տայ գլակին, ինչպէս տալիս են իրեն. գրանով ուզում է իմանալ, ով է իրեն հնազանդում։ Ով որ այս հրամանը չկատարի, նա կը զրկւի իր ազատութիւնից և բոլոր գոյքերից։

Երկու զինուոր էլ կանգնած են ձողի աջ ու ձախ կողմը, հսկելու համար, թէ ով է անհնազանդ։ Առաւօտից մինչև երեկոյ զինուորները զուր տեղը մնացել են կանգնած, որովհետև ամենքն էլ

դիտամբ ուրիշ ճանապարհով են գնում, որ ինչ է գդակի մօտով չանցնեն։

Բայց ահա երևաց Վիլհելմ Տելլն իր փոքրիկ Վալտերի ձեռքը բռնած. նա հէնց ուղիղ դէպի ձողը ձգող ճանապարհովն էր գալիս. միամտա եկաւ և ուզում էր ձողի առջևից անցնել, երբ զինուորները նիզակով կտրեցին նրա ճանապարհը և հրամայեցին, որ գլուխ տայ Գեսլերի գդակին։ Տելլն ընդդիմացաւ. այդ ժամանակ զինուորները գոռգոռալով յարձակուեցին նրա վրայ, որ կապտաեն ձեռն ու ոտները և բանդ տանեն։

Տելլը դիմադրում էր, իսկ զինուորները գոռում-գոչում էին. այդ ձայնի վերայ ամեն կողմից գիւղացիները հաւաքուեցին հրապարակ։ Իրենց ամենաւաղ հայրենակցի վրայ գործ դրած այս անասելի բռնութիւնը սաստիկ վրդովեց գիւղացիներին և նրանց գայրոյթն այն չափի հասաւ, որ քիչ էր մնում թափուէին զինուորների վրայ Տելլին ազատելու նրանց ձեռքերից։

Այդ իսկ վարկեանին որսորդների փողերի ձայներ եկան. «Կուսակալը գալիս է, կուսակալը գալիս է» լսելի եղաւ ժողովրդի միջից։

—Է՛յ, ճամբայ տուէք, յետ քաշուեցէք, դէն շուտ։

—Այս ինչ աղմուկ է, ինչու է հաւաքած ժողովուրդն, ինչ կայ, հարցրեց Գեսլերը։

Զինուորներից մէկը մատով ցոյց տուաւ Տելլին և ասաւ.

—Տէր իմ, այս մարդը չի ուզում գդակիդ գլուխ տայ, դրա համար էլ ուզում ենք՝ տանենք, բանդ ձգենք, ժողովուրդը չի թողնում։

—Մի՞թէ դու այնքան քիչ ես յարգում թագաւորին և ինձ, նրա փոխանորդին, որ չես ուզում պատիւ տալ այս գդակին. ես հէնց նրա համար եմ այդ կախ տուել այստեղ, որ իմանամ թէ ո՞վ է հնազանդ, ով հնազանդ չէ։ Առաջին մարդը դու ես, որ իմ հրամանը չես կատարել։

—Այս անգամը բաշխիր, ասաւ Տելլը, ես չգիտնալով եմ արել։

—Գեսլերը մի փոքր լռելուց յետոյ ասաւ.—

—Տելլ, ճիշտ են ասում, թէ դու լաւ նետաձիգ ես, ասում են՝ այդ բանում քեզ նման հաւասար մէկը չկայ, ամբողջ Զուիցերիայում առաջին վարպետն ես։

—Այո՛, այո՛, Տէր, ճիշտ է, մէջ ընկաւ փոքրիկ Վալտերն, իմ հայրը հարիւր քայլի վրայ խնձորը ծառից նետով խփում, վայր է ձգում։

—Զլինի՞ թէ սա քո որդին է, հարցրեց Գեսլերը։

—Այո՛, Տէր։

—Եթէ ուղիղ են ասում, դէ, շնորհդ մէկ ցոյց տուր մեզ՝ տեսնենք. քո որդու գլխի վրայից խնձորը թողնու նետով, բայց տես, հիմիկուանից ասում եմ, հա՛, լաւ նշան առ, եթէ խնձորը մի անգամից չթողնես, իմացած լինես, որ գլուխդ թողնել կուտամ։

Ժողովուրդն այս խօսքի վրայ ահ ու դողի մէջ ընկաւ։

—Ագատիր ինձ այս փորձանքից, Տէր իմ, թող որդեսպան չը դառնամ, մի՞թէ ես իմ ձեռքով իմ հարազատ որդու արիւնը պիտի թափեմ, աղաչում էր Տելլը։

Գեսլերը նրան ականջ չէր դնում, նա անողոքմ էր, սիրտը քար էր կտրել։ Նա մօտակայ ծառից մի խնձոր կտրեց ու դառնալով հաւաքած բազմութեանը՝ գոռաց.

—Տեղ տուէք, ութսուն քայլ չափեցէք, տես, հա՛, ծուռ չխփես, ասաւ նա Տելլին. իմ ձեռքիս ես դու, որ ուզենամ, կարող եմ քեզ ազատել տալ, բայց քո բախտը քեզ եմ յանձնում. քո ձեռքին է ապրելդ էլ, մեռնելդէլ. եթէ լաւ նշան առնես, կեանքդ կը բաշխեմ։

Ապա հրամայեց, որ Վալտերին կապեն ծառին։

—Ձէ՛, ոչ էլաք չէ, չեմ ուզում, ընդդիմացաւ երեխան, առանց այդ էլ ես ոչ շունչ կը քաշեմ, ոչ էլ տեղից կը շարժուեմ։

Ուզեցին աչքերը կապել, դրան էլ չհամաձայնեց։

—Ի՞նչ է, հէնց իմանում էք, թէ հայրիկիս նետիցը վախենում եմ, ասաւ Վալտերը. միամիտ կացէք, աչքս էլ չեմ թարթի. հայրիկ, ոա չի հաւատում, մի ցոյց տուր է, ցոյց տուր, որ լաւ նշան կը-ցող ես։

Այս խօսքերն ասելով՝ նա հանդարձակ գնաց դէպի ծառը և ան շարժ կանգնեց։ Խնձորը դրին գլխի վրայ, ժողովուրդը շունչը կըտրած՝ լուռ, սարսափով նայում էր։

—Հը, ինչպէս ես շարժւում, ասես, աղա լինիս գլխիս, ասաւ Գեղերը. խփիր, ասենեմ։

Տէլլը աղեղը լարեց, բայց իսկոյն խեղճի աչքերը մթնեցին. գլուխը շուռ եկաւ ու աղեղն ձեռքից ընկաւ։

—Տէր, խնդրեց Տէլլը, ինձ ազատիր, ինչ ուզում ես արա, ինչ պատիժ ուզում ես տուր, միայն աղատիր ինձ այս կրակից։

—Ի՞նչ եմ անում քո մեռնելը, անպիծօրէն ասաւ Գեղերը. ես հէնց այնպէս, ուզում եմ տեսնել, թէ ինչպիսի նետ ձգող ես։

Տէլլն աղեղը գետնից վերցրեց, նրա ձեռն ու ոտքերը դողում էին. աղերսող հայեացքով նա մէկ կուսակալի երեսին էր նայում, մէկ դէպի երկինք։

Ցանկարծ Տէլլը կապարճից մի նետ էլ հանեց ու ծածուկ կոխեց թեւի տակը։

Տէլլն աղեղը լարեց...

Եւ մէկ էլ ժողովրդի միջից մէկը գոռաց.—«խնձորը վայր ընկաւ, խնձորը վայր ընկաւ, Տէլլը խփել է խնձորին, խփել է»։

Փոքրիկ Վալտերը վերցրեց գետին ընկած խնձորը և ուրախ-ուրախ հօր մօտը վազ տուաւ։

—Հայրիկ, ահա խնձորը, տեսա՞ր, որ ես ասում էի, թէ ինձ չես խփի։

Տէլն արցունքոտ աչքերով գրկեց որդուն և ծնկաչոք փառք տուաւ Աստծուն։ Գեղերն առաւ խնձորը և իր իսկ աչքերով տեսաւ, որ նետը ծակել անցել է։

Ցեռոյ դառնալով Տէլլին հարցրեց.

—Իսկ այն միւս նետն ինչու պահեցիր թեւդ տակը. դու ինձ ճշմարիտ ասա, մի վախենար, կեանքդ բաշխում եմ, խօսքս խօսք է։

—Աստծուն յայտնի է, քեզնից ինչ թաղցնեմ, Տէր, մտքումս դրել էի, որ եթէ բան է նետն որդուս դիպչէր, միւս նետովն էլ քեզ

խփէի, ազատէի։

Գեղերը մի փոքր լռելուց յետոյ ասաւ.

—Կեանքդ բաշխել եմ, ասածս ասած է, բայց որովհետև հիմա իմացայ քո չար միտքը, դրա համար էլ ես քեզ մի այնպիսի ծակ կոխեմ, որ արեւի լոյսն էլ երբէք չտեսնես. դինւորներ սրա ձեռն ու ոտքն կապեցէք։

Հրամայեցին ու կատարեցին մէկ եղաւ։ Ժողովուրդը շատ յուզուեց, բայց ճարն ինչ. ամենքն էլ որտագին մեռաս բարև ասին Տէլլին։ Քաջ որսորդն օրհնեց որդուն ասելով.—

—Ահա, այնտեղն է քո հայրիկն. երկնքում, նրան ազօթիր. դու միայն ողջ լինիս, բաւական է, իսկ Աստուածդ ինձ կ'օգնէ, ինչ որ քեզ ասի, գնաս մօրդ կ'ասես։

Ապա համբուրեց որդուն և ժողովրդին մեռաս բարև ասելով, Գեղերի եռեն ընկած գնաց։

Գեղերը դինւորների հետ նաւակ նստաւ իր Կիւսնախտ ամրոցը գնալու, իսկ Տէլլը կապած-կապկպած ընկել է նաւակի յատակին և իր մտքում արդէն մեռաս բարև էր ասում իր ընտանիքին և ազատ կեանքին։

Նաւակը դեռ լճի կէսը չէր հասել, որ լեռներից փչեց մի այնպիսի քամի, մի այնպիսի կատաղի քամի, որ լիճն ասես, յատակից ճեղքւում էր և նաւակը քիչ էր մեռնում կուլ տար իր մութ խորքերում։ Թիավարները վախից գլուխները կորցրել էին և մոլորուել կատղած ջրերի վրայ։

—Տէր, էլ մեզ փրկութիւն չկայ, ասին թիավարը դինւորներն. ամենքիս կեանքն էլ մազից է կախուած, ճամբան կորցրել ենք և ով գիտէ ինչ ժայռի և խութի կը հանդիպենք. բայց մեր բախտիցն է, որ Տէլլը հետներս է, նա փորձուած դեկավար է, ճամբաները լաւ գիտէ, աղաչում ենք, Տէր, ինչ կը լինի՝ հրամայես նրան՝ դեկի գլուխն անցնի։

Գեղերի հրամանով իսկոյն արձակեցին Տէլլի կապանքները. կուսակալը խոստացաւ նրան ազատութիւն շնորհել, եթէ անվտանգ

ափ հանէ իրենց։ Տէլլը ղեկն առաւ ձեռքը։ Նա լճի ափերն իր հինգ մատի պէս էր ճանաչում, ուստի նաւակն ուղղեց մի մեծ ժայռի մօտ, որը փրփրած ալիքների միջից գլուխը ցից կանգնել էր։ Մեծ սիրտ և շնորհք էր հարկաւոր, որ մարդ կարողանար նաւակից դրա վրայ ցատկել։ Տէլլը վարպետութեամբ նաւակը հասցրեց ժայռի տակ և մի ակնթարթում խլելով իր նետն, Աստուած կանչելով նաւակից ցատկեց ժայռի վրայ և նաւակն էլ մի ոռքով հրեց ու ձգեց ալիքների բերանը։ Իսկ ինքն անյայտացաւ անտառի մէջ։

IV.

Կիւնախտ տանող ճանապարհի երկու կողմը մռայլ ժայռեր էին բարձրանում, որոնք ծածկուած էին թփերով ու մացառներով. անց ու դարձն անպակաս էր այդ ճանապարհով. մի գիւղացի կին էլ իր փոքրիկ երեխաներն առած եկել բռնել էր ճանապարհի բերանը. նա սպասում էր կուսակալին, որ սովորաբար այստեղով էր անցնում իր ամրոցը գնալու։

Այդ միջոցին մի ձիաւոր արագ վազելով ձին՝ կաւ, բարձր գոռալով. «Ճամբայ բացէք, կուսակալը գալիս է»։

Մի փոքր անց Գեսլերը ձին նստած իր զինակիրի հետ եկաւ ճանապարհի գլխին. կինն երեխաներով վազեց ձիերի դիմաց և նրանց առաջը կտրեց։

Ի՞նչ ես ուզում, այ կին, հեռու քաշուիր, ճամբայ բաց, գոռաց կուսակալը։

—Տէր, Աստուածդ սիրես, խղճա ինձ, ազատիր իմ մարդուն, նա գնում էր սարերը, խոտ էր հնձում և դրանով մեզ պահում. հիմա էս վեց ամիս է, նա բանդում պառկած է, քո դատաստանին է սպասում, մենք էլ առանց նրան մնացել ենք մի կտոր չոր հացի կարօտ։

—Հեռու կաց, կորիր, բան ունիս ասելու, եկ Կիւնախտ, ինչ ես ճանապարհը կտրել, ասում էր զինակիրը։

Բայց կինը տեղիցը չէր շարժւում, կանգնել, լաց էր լինում։ Գեսլերը բարկացաւ և հրամայեց՝ նրան ուժով հեռացնեն. բայց կինը կուսակալի ձիու սանձը բռնած լալով ասում էր.

—Չէ, ինչից եմ վախենում, էլ ինչ ունիմ կորցնելու, ինձ էլ երեխաներիս էլ գցիր ձիուդ ոտների տակն ու կոխկրտիր։

Խեղճ կինը յուսահատութիւնից երեխաներով փուլ եկաւ ձիու առաջ։

—Կոխ տուր, կոխ տուր, որը ու անտէր ձաղուկներիս, քշիր ձիդ, քշիր, մեռնենք ու պրծնենք քո ձեռքից, քան թէ այսպես ապրենք. սատանայ քո օրը, ինչպէս որ մեր օրը սատկիր։

Այս խօսքերի վրայ Գեսլերը փրփրած բերանով գոռաց.

—Անպիտաններ, անիծուածներ, ես ձեզ ցոյց կը տամ, ձեր հոգին պիտի հանեմ, սպասեցէք, սպասեցէք, ես պիտի...

Դեռ խօսքը չվերջացրած Գեսլերը յանկարծ ձեռքը տարաւ սրտին և ամուր սեղմեց... մի նեղ դիպել էր սրտին... Նա մէկ այս կողմը, մէկ այն կողմը թեքուեց ու վայր ընկաւ ձիուց. «Վա՛յ, սա Տէլլի նետն էր...»։ Այս եղաւ վերջին խօսքը։

Եւ իսկ որ այդ վայրկենին ժայռի գլխին երևաց Տէլլը՝ ազեղը ձեռքին։

—Հը՛, ճանաչեցիր նետ-գցողին, հիմա տեսար, թէ անպատիժ չմնացին քո անզթութիւնները. հիմա իմացար եղիր, որ ազատ ենք քո բռնութիւնից և զերութեանը վերջ տուինք. էլ չես կարող ժողովրդին ֆնաս տալ, բարի ճանապարհ։ Այս ասելուց յետոյ Տէլլն այծեամի պէս սլացաւ, անհետացաւ ժայռերի և ծերպերի մէջ։

Ծիծեռնակի պէս արագ այս լուրը թռաւ բերնէ բերան և Զիւցերիայի մի ծայրից միւս ծայրը բոլոր ժողովուրդն իմացան բռնակալի սպանելը Տէլլի ձեռքով։ Ժողովուրդի սուրհանդակները շրջում էին գիւղէ գիւղ յայտարարելով. —Ազատ ենք, ազատ, ա՛յ եղբայրներ, բարեկամներ. մեծ չարագործը սատակեց, գնաց, նրանից յետոյ ազատութիւնը թևերը փռել է մեր լեռների և լճերի վրայ։

Եւ ժողովուրդը մի մարդու պէս ամէն տեղ ոտքի կանգնեց, մաքրեց երկիրը բռնակալների բերդերից ու զինուորներից։

V.

Վիլհելմ Տելլի տանը, նրա կինն ու երեխաներն անհամբեր սպասում էին Տելլին, իրենց հօրը, որն ազատեց հայրենիքը։

—Մայրիկ, մայրիկ, հայրիկն եկաւ, հայրիկն եկաւ, սրտապատառ ուրախութեամբ կանչեցին փոքրիկները և հօրն ընդառաջ վազեցին։ Տելլի կինն էլ ուզում էր առաջ վազել ուրախութիւնից զլուխը կորցրեց և դուռը բռնած մնաց կանգնած։

—Տելլը փոքրիկներին զրկած նեղս մտաւ. կինը փոթորիկ ամուսնու պարանոցովը և ուրախութիւնից լաց եղաւ։

Սիրելիս, ասաւ Տելլը, Աստուած մեզ օգնեց։

Ա՜խ, որ զիտենայիր, թէ որքան էի վախենում քեզ համար, ասում էր կինն արցունքը սրբելով։

—Լաւ, հանգստացիր, ամէն ինչ անցաւ, հիմա ուրախութեան օրեր են։

—Հայրիկ, ազեղդ ուր է, հարցրեց Վալտերը։

—Սուրբ մատուռում գրի, որդիս, էլ նա հարկաւոր չէ որսի համար, պատասխանեց Տելլը։

Կինը հասկացաւ Տելլի ասածը. զարհուրած յետ քաշուեց ասելով՝

Սպանեցիր, ասա, դու սպանեցիր, այս ձեռքն... արիւն է թափել, Աստուած իմ։

Այո՛, տեսնում ես, այս ձեռքն էր, որ փրկեց մեր երկիրն, այս է ձեր պաշտպանն, ասա՝ Տելլը համարձակօրէն. ես մաքուր խղճմտանքով իմ ձեռքերը զէպ երկինք եմ բարձրացնում, Աստուած զիտէ, ինքն է օգնել ինձ...

—Հայրիկ, տեսէք, տեսէք պապը գալիս է, յետևից էլ շատ, շատ մարդիկ. հօր խօսքը կարեց փոքրիկը.. տես, քեզ են կանչում.. ։

Տելլը կնոջ և երեխաների հետ դուրս եկաւ դուռը։

Եւ ճիշտ որ Տելլի տան առջև մեծ բազմութիւն էր հաւաքել։ Ժողովրդի մէջ կանայք էլ կային, երեխաներ էլ, կային և ազնուականներ, որոնք նոյնպէս խառնուել էին ապստամբների հետ։ Զարդարած աղջիկները ձեռքերին մի մեծ ձող էին բռնել, ծայրին ցցել էին սպանուած Գեսլերի գլուխը, և ծիծաղելով ու ծաղր անելով առաջ էին գալիս. երաժիշտներն էլ իրենց փողերն էին հնչում։

Տելլը դուրս եկաւ թէ չէ, ժողովուրդն իսկոյն նրա բոլորը պատեց։ Երգը, ծիծաղն, ուրախութեան ձայները կարուեցին. առաջ եկան ժողովրդի ընտրելիները, մօտեցան Տելլին և համբուրեցին նրան։

—Դէ՛հ, Վիլհելմ, մենք եկել ենք քեզ շնորհաւորելու և շնորհակալութիւններս յայտնելու։ Մեր հայրենիքը հիմա բոլորովին ազատ է։ Հէնց որ դու Գեսլերին սպանեցիր յետոյ փախար ու թաք կացար լեռներում, քեզնից յետոյ իսկոյն կրակները վառեցին լեռների վրայ և բերդերի վրայ յարձակուեցին։ Քո նկատի ձայնն էր, որ ամենքի սրտերում ապստամբութեան հուրը ձգեց. մեր թշնամիները յաղթուեցին, ջարդ ու փչուր եղան, նրանց բոլոր բերդերը հիմա մեր ձեռքին է։ Այն բանն, որ մեր ձեռքով շինում էինք մեզ համար, քանդեցինք ու աւերակ դարձրինք։ Այրի թագուհու կողմից էլ մարդ է եկել ու մի թուղթ է բերել։ Այդ թղթով նա մեզ յետ է տալիս մեր առաջուան իրաւունքները։ Հիմա մենք ազատ ենք և հէնց դրա համար է, որ այսքան բազմութեամբ եկել ենք քեզ շնորհաւորելու, իբրև մեր ազատողին։ Տեսնում ես այս լեռները, քանի որ սրանք այստեղ են, հրօր կանգնած, խմացած լինիս, որ քո անունդ միշտ կը յիշուի, միշտ կը մնայ. երբէք չեն մոռանայ, որ Տելլը նեռով խփեց ու իր հարազատ որդու գլխից թռցրեց խնձորը, թէ Տելլն էր, որ սպանեց բռնակալին և ազատեց Զուիցերիան»։

—Կեցցէ՛ մեր Տելլը, կեցցէ՛, կեցցէ՛ մեր ազատողը, յաւիտեան կեցցէ... կանչեցին ամէն կողմից հաւաքուածները։

Հեռուում, չորս կողմի գիւղերի զանգերի զօղանջները տարածուում էին ամէն մի անկիւն, թնդացրել էր լեռ ու ձոր, և արձագանք էր տալիս։ Այստեղ ու այնտեղ կրակներ էին վառում ու շողշողում։ Ամէն տեղերից և ամէն սրտերից լսում էին ուրախագին ձայներ.—

—Ազատ ենք, ազատ, ապրի՛ Տելլը, կեցցէ՛, կեցցէ՛ Վիլհելմ Տելլը»։

Այս անմոռանալի օրը 1308 թուի կաղանդի օրն էր։

---

24. ՑՈՑՍ

Թող փչէ քամին պաղ-պաղ երեսիս,
Վերէն, ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ կուզէ, թող փչէ հիւսիս,
Ցուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գայ։
Թուխպը թող պատի երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թող պատի,
Տաքերք աշխարհիս խառնուին իրար,
Ցուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գայ։
Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հային տառապանք—
Միայն... չը հատնի խեղճուկի յոյսը։





Դիտեցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և գրեցէք։

Կապոյտ

Կապոյտին առազնորդեց դէպի ծոցին կապոյտ,
ուր այդ- մրգոյին մի մայր, իրկու նստակատար
և մի փոքր աղջիկ, ուրնոմիայ մի գողայ
Կիր կրնդուած էին յորդին կապտիրով։
Մայրն իրանք ջրոջիս պրպրում էր կապտ
ջուրգը և զարոնակ նստիրը նստրում
կապամէզ, որ պրպրում էիս իրի կոյդ կամիր։
Դրանցից իրիրուք լիած կոյդ իրնիրով,
կառուպարում էին իրկու մէջ աղջիկներ,
իսկ իրորդը, որիս լիած էր մի մարդակ,
կառուպարում էր փորիկը, Փէնորդ
իրքար օգնութիամբ։ Ներկը թափէր պ-
րում էր վիրիկ, ասկյա կապուղներն
ապիրարում էիս ժրութիամբ։ Իամիրը,

որոնց վրայ ամուր կանգնած էին աղջիկ-
ները, պարարում էին կապում գոյգ գոյգի իրենց
և իրենց կայծախարէ, արուծայր ապամիրով
անարիանների կիրպով յողունները կարարում,
նատակները գրորում և կապի յարդաշուշկ
մակիրև դրի վրայ ցորենը փռում:

---

27. ԲԱՐԱԾՈՒՄ

Շատ ու շատ տարիներ մեզանից առաջ երկրի վրայ տիրում էր յուրատենական ամառ։ Չկային ոչ ցուրտ երկրներ, ոչ ձիւն ու սառոյց, ոչ աշուն իր դեղնած,թափուղ տերևներով։ Երկրի մակերևոյթն ամեն տեղ խոնաւ էր ու տաք, այնքան տաք, որ նրանից գոլորշի էր բարձրանում։ Գոլորշի էր բարձրանում նոյնպէս գետակներից, գետերից, լճերից ու ծովերից։ Այդ պատճառով էլ անընդհատ յորդ անձրևներ էին գալիս։ Ցաճախակի անձրևներից ծառերն աւելի արագ էին մեծանում, աւելի դեղեցիկ տեսք ստանում. կային խիտ, անանցանելի անտառներ հսկայական ծառերով, որոնց բարձրութիւնը 10—15 սաժէնի էր հասնում։

Այդ ժամանակ երկրաշարժ յաճախ էր պատահում. դրանից երկրի մակերևոյթը մի տեղ բարձրանում էր, մի ուրիշ տեղ իջնում։ Երկրի օրօրւելուց ծառերն արմատահան էին լինում և ցած ընկնում ու այդպէս կիսաւում իրար վրայ։ Նոր օրօրումներից ծառաբների կիսաւած տեղը ցածրանում և որևէ գետ հունը փոխելով անցնում էր այդ տեղով, դարերի ընթացքում դիզելով կաւի, աւազի, կրի շերտեր։ Նոր ու նոր օրօրումներից գետը կրկին փոխում էր

իր ընթացքը և այդ նոր տարի վրայ բուսնում էին նոր, հսկայական ծառեր, երկրաշարժից կրկին թափւում, կիսաւում, դարձեալ ծածկւում կրի, աւազի, կաւի շերտերով և այդպէս անվերջ...

Վերին շերտերը ճնշում են միջին շերտերին, միջինը՝ ստորի-



նին, տաք մայր-երկիրը տաքացնում է նրանց, այրում, քարածուխ դարձնում։

Եւ այսպէս մայր երկրի ծոցում հաստ շերտերի տակ, դարերի ընթացքում ամբարւել է այդ թանկագին հանքը։

Հանքահանները երկրի կուրծքը փորելիս գտան ստորերկրեայ սև անտառ։

—Քարածուխ... ուրախ բացականչեցին նրանք։

Շուտով մեռած ծառերը կրկին յայտնուեցին երկրի վրայ և սկսեցին ապրել, բայց ի հարկէ ոչ առաջուայ պէս, այլ որպէս վառելիք։

Հինաւուրց ծառի բնի մի մասը տարուեց խոնանոց. նրան վառեցին ու նրա օգնութեամբ արդանակ եփեցին, միս տապակեցին, կարկանդակներ թխեցին։ Ծառի մի ուրիշ կտորն էլ տարուեց սենեակը. ծառան վառարանը վառեց, սենեակներ տաքացրեց։ Երրորդ կտորն յայտնուեց գազի գործարանում։ Այնտեղ նրան ամուր փակուած կաթսայի մէջ շիկացրին և դարձրին գազ։ Ստորերկրեայ շտկունք խողովակների միջով գազն ուղարկեցին դէպի փողոցի լապտերներն ու մի քանի տներ։ Գազն այնտեղ բոցավառուեց և մութ գիշերներին լուսաւորեց փողոցներն ու սենեակներն աւելի լաւքան մոմն ու լամպը։ Քարածուխի շորրորդ կտորն ընկաւ երկաթուղու շոգեմեքենայի վրայ։ Նրանով վառարան վառեցին։ Շոգեմեքենան ապաղակեց, սուլեց, հնաց և գնացքը պացաւ քաղաքներից քաղաք, տանելով անհամար մարդիկ ու ապրանք։

Քարածուխի աւելի կարծր ու փայլուն կտորից էլ մարդիկ շինեցին սև, սիրուն կոճակներ, որոնք երեխայի նոր շորերի վրայ, արեգակի տակ, փայլում էին ինչպէս խսկական թանկագին քարեր։

Մայրիկ զան!

Կայրիդ էլ իմ Հանդիս գրնա լաս
անցաս։ Ցնորեսկայ իմ ուղարկուդ ան-
նման նէրիս։ Մօրաբրդիս արաստ

ապիրանկիդիս, նօրաբոյրն ուղարկիլ էր մի
ոսկեջծ փառակալմ գրեցի։ Նրա մէջ
կայրիս մանկական գրչի նկարներ, իսկ գրա-
նաւոր նկարները դեղցն էին։ Ձորդ բայրն
ընծայել մի շրջուած գեղեցիկ գրչաման։
Հոմին էլ շատ նաւանիցին։ Ցանեւոր
ընկերներիցս մէկը խլուում էր նայելուց
իս նրան ամէն ինչ ցոյց տուի. դրուելիս
նօր միանալով իրենց դեղեցիկ,
դրա համար իս նրան սիրով ընծայեցի
իմ ոսկեայ գրչակորը, երկու դեղնաւուն
մատիր և մի խանի գրչաձայր։ Ընծանելիս
ցոյց տալուց յետոյ, մտքով սիրուստրուս
տեղ խնայ։ Ձայնանդ ուխտն ու

Հայկուհին մի խաղրիդիանով
Տիրատիրոջին: Ֆիդանուհին նստած,
մի-ով պարոյինի, իրոյինի ու շատ ուրա-
խությանի: Հիմա պարզ է, որ իս ողջ առողջ իմ:
Համբուրում իմ ձեզ և իրոգ:

Ֆո Զարուհի

1912 թ. 20 մարտի
Կարս

---

29. Քաջ պատանի

Բոլոր աշակերտները վարժապետների հետ գնացին քաղաքի մեծ հրապարակը: Այնտեղ կարգով կանգնած էին քաղաքի բոլոր դպրոցների աշակերտները. ամենքն էլ մաքուր և գեղեցիկ հագնված էին: Հրապարակում մեծ բազմություն կար. բոլոր տների լուսամուտները, պատշգամբները ծաղիկներով, գորգերով էին զարդարված: Զինուորական երաժշտական խումբը նվագում էր: Բիչ յեթոյ երեսց քաղաքացուն իր օգնականներով. ամենքը նստան զարդարված սեղանի շուրջը: Այդ միջոցին գուռը բացվեց և մի փոքրիկ պատանի երևաց. կեցցե, ուռա, թնդում էր ամեն կողմից. պատանին կասկարմիր կարած՝ շփոթված—կանգնած էր. Քաղաքագլուխը նշան տվեց՝ ամենքը լռեցին: Քաղաքագլուխը կանգնեց ու ասաց.

—Տեսնում էք այս փոքրիկ հերոսին, սա ազատեց այն փոքրիկ ութը տարեկան տղային կատաղի գետի ալիքներից: Երբ խեղդվողը կոխ էր տալիս ալիքների հետ և օգնություն կանչում՝ անտագին բազմության մեջ այս փոքրիկն էր, որ դեն ձգեց շորերը և անվախ վազեց դեպի ջուրը:

—Ջուր է, կը խեղդվես, ազատել անկարելի է—կանչում էին ամեն կողմից: Սա չլսեց. մարդիկ սրան բռնում էին, բայց այս քաջը ձեռքերից փախաւ և իրեն ձգեց կատաղի ալիքների մեջ:

—Կորաւ, կորաւ, ասում էին մարդիկ. բայց սա անվախ կերպով վրայ հասաւ և բռնեց խեղդվողին, ջրի երեսը հանեց և կատաղի կերպով կռվում էր փրփրած ալիքների հետ: Կոհակներն սպառնում էին երկուսին էլ կուլ տալ. սա մերթ սուզվում էր, մերթ բարձրանում և կռվելով՝ առաջ էր շարժվում: Այդ ժամանակ սա արդեն մի փոքրիկ չէր երևում, այլ քաջ տղամարդ: Վերջապես այս հերոսը կարողացաւ յափշտակել խեղդվողին և պարգևեց աշխարհին: Սա ոչ թէ միայն բարի, քաջ է, այլև անձնազոհ:

Զօրականներ, ողջունեցէք սրան որպէս ձեր եղբօրը... Մայրեր, օրհնեցէք սրան որպէս ձեր հարազատ որդուն: Մանուկներ, ապաւորեցէք սրա դէմքը, քաջագործությունը ձեր յիշողության մէջ: Իսկ ես, թագաւորի անունով, այս անվեհեր, փոքրիկ քաղաքացուն տալիս եմ այս քաջության մէդալը:

Ամեն կողմից որոտացին կեցցէներ, ծափահարություններ: Քաղաքագլուխը մոտեցաւ պատանու որմնադիր հօրը, ձեռքը սեղմելով՝ շնորհաւորեց. շնորհաւորեց նոյնպէս մօրը:

Յանկարծ մի ութը տարեկան տղայ վրայ հասաւ և փոքրիկ քաջին անվերջ համբուրում էր... դա փրկված տղան էր, որ շնորհակալություն էր յայտնում իր փրկողին: Նորից

ծափահարութիւններ, նորից սրտագին ուռաներ թնդացրին օդը։ Ամեն կողմից փոքրիկների վրայ ծաղիկներ էին թափ-ուում։

Զմեռն անցաւ, եկաւ գարուն, Ղարիբ երկիր ամպ ու մշուշ,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն. Իմ զարիբի սիրտն է քնքուշ,
Ճամբայ բացաւ զարիբներուն։ Ոտ կը փոխէ՝ քոայ ու փուշ,
Իմ զարիբէն խաբար չիգայ, Հերիք Ճաս, դարձիր վաթան,
Աչքս ճամբին՝ գադար չկայ։ Իմ սիրտէր Ջան, ազիզ եար Ջան։

Ջուրն է պրծել՝ կուգայ սարէն,
Սարէն, ձորէն... իմ աչքերէն...
Մի նորոգիր սրտիս եարէն,
Դարձիր վաթան, հոգն անուշ է,
Հոգն անուշ է, ջուրն անուշ է։

Պուրպր էր, դոլորը բուք ու բորան,
օրը մթնել, թիփրին կապրդել, արև-իր-
կինի մշուշի մէջ կորել էին։ Դա.
ալ խարկի վերջն էր կարծիս։ Ջուլ
վերսարկուս առայ վրաս, փաթաթուիր,
մէջ քոցն էլ ղալակա առած, դուրս

ելայ։ Թիփու մոգիս, ջիւնի մոգիս, էլ
ինչպէս իմ վազ գալ։ Երթս-բերնիս
վայր բնկնելով, վեր էնելով, մի կերպ
խոպնոցը հասել, էլ դիպրէմ։
Ձիւնիս, քամուս դաղուած դէմս մռռում էր.
քամին ոռնում, փչում, ղաչում, ղառաչում,
կարծիս նա էլ ջիւնիս, բուքիս մրաած-սառած
մերթ մղկրում կկկում էր, մերթ կապաղած
գառած ձիրուկ ջմրան դէմ, գոռում-գո-
ղում, մռնչում էր։ Եւ բնութիւն ամբն
բերան ջիւն ու թիփու, բուք-բորանի։
Համբրգի կէր ինչոր մի խուլ արդակրուր
կիմկլրանք էր ինչ հասնում, որ մերթ
խեղդում, կորչում էր վել քամու
ուժգին ոռնոցով, մերթ բեկբեկած
կնճկնճոցով լսում կիռնն, ղայր կիռնն..

Քինդիո ծրաաշ, պաղ ջիոիերովա իս
Մերբ խոցս էի լցնում, մերբ կապարկաշ
ֆիրբ բերանա գրրորում ու ծրաշում, թէ ով
կը լինէր այդ առակալի ժամին դուրաբ մբ-
նապաշ, յանկարծ դողալով, որնիրա ընկաւ
մի չան լակոտ: Լիկիս, կրծիս ջիւնոտ
գրիխանիրա, նուրմբաց, ապա պոչն իրան
խաղաշ, դողդողալով, վնգպրալով յիր փաս-
իաւ, պապրի գրակը խոտի մօտը կշկիւ:
Նորիս իկաւ, նորիս լիկիս, նուրմբաց, սի-
բուն դունչը, կապրաշ դունչը վիրև գրն-
կիս: Խիղէ կինդանի, նա էլ ընկեր
էր ուզում, ցրրիս, ֆաշոց պատրապարան
էր խնդրում:

Դեռևս էր, ասում էին, վիրավոր ոտք և գլուխ

32. ՌՕԲԻՆԶՕՆԻ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

I.

Նոր էին պառկել, որ փոթորիկ բարձրացաւ, անձրև տեղաց ու ամպերն որոտացին։ Յանկարծ թնդանօթի բոմբիւններ լսեցան։

Նա կարծում էր, թէ որևէ նաւ է ընկղմում և օգնութիւն խընդրում։ Նա բլրի վրայ կրակ վառեց, բայց կրակը հանգաւ անձրևից։ Ռօբինզօնը տան անգամ վառեց. անձրևը միշտ հանգցնում էր. այդպէս էլ հանգած մնաց։

Ամբողջ գիշեր Ռօբինզօնը թնդանօթի պայթիւն էր լսում ու մտածում էր, թէ նաւն եկերքի մօտ կանգնած կը լինի։ Արշալոյսին նա վեր կացաւ և վերև վազեց տեսնելու, թէ որտեղ է կանգնած այն նաւը. և քիչ մնաց՝ մեռնէր ուրախութիւնից։ Կղզու մօտ մի նաւ էր կանգնած։

Ռօբինզօնը շտապով վազեց դէպի տուն ու գոռալով ասաց Ուրբաթին. «Եկա՛ն, եկա՛ն». Ուրբաթը կարծեց, թէ վայրենի մարդիկ են եկել. իսկոյն վերցրեց տէզն, աղեղն ու նետերը և դէպի ծովը վազեց Ռօբինզօնի յետևից։ Նա էլ նաւը տեսաւ։

Ռօբինզօնն և Ուրբաթը շտապով կրակ վառեցին ծովափին. բայց նաւի վրայ ոչ մի մարդ չէր երևում։ «Թոյլ տուր, լոգ տամ դէպի նաւը», ասաց Ուրբաթը։

Ռօբինզօնը համաձայնեց։

Ուրբաթը հանեց շորերն ու լոգաց։ Ռօբինզօնն ափին կանգնած նայում էր նրա յետևից։ Երբ Ուրբաթը մօտեցաւ նաւին և երբ նրա վրայի եղած բաները դիտում էր, յանկարծ մի այնպիսի հարուած ստացաւ յետևից, որ տեղն ու տեղը վայր ընկաւ։ Յետ նայեց՝ տեսաւ, որ իրեն խփողը մի հրէշ է՝ մօրուքով ու պոզերով։

Ուրբաթը վախից ջուրն ընկաւ, նաւի վրայի շունն էլ յետևից. նա կարծում էր, թէ եկողն այն պոզերով հրէշն է, և սաստիկ վախից շնչասպառ ափ հասաւ։ Հանեցին ու գետին փռեցին մէկ եղաւ։

Ռօբինզօնի սիրտը դող ընկաւ, նա կարծեց թէ Ուրբաթը մեռել է. գրկեց նրան ու սկսաւ անունը տալ։ Ուրբաթն ուշքի գալով պատմեց, թէ ինչից էր սարսափել։ «Զուր ես այդքան սարսափել. քո տեսածը ոչ թէ հրէշ է, այլ այծ», ծիծաղելով ասաց Ռօբինզօնը։

Այդ միջոցին շունը լոգալով ցամաք հասաւ, և Ռօբինզօնն ասաց Ուրբաթին. «Սպիտակ մարդկանց բնակած երկրում շները էլ շատ կան»։

Երբ Ուրբաթի վախն անցաւ, Ռօբինզօնը նրան ասաց. «Նաւի մարդիկը խեղդուած կը լինեն. գնանք, միջի բաներն այստեղ բերենք, թէ չէ՝ զուր տեղը կը կորչեն»։

Նրանք օր ու գիշեր աշխատելով մի լաստ շինեցին. տաւտան մէջը նստեցին ու գնացին նաւի մօտ։ Հասնելիս Ռօբինզօնը տեսաւ, որ նաւն ամուր խրուել է աւազի մէջ։

Ռօբինզօնը գնաց տեսնելու, թէ ինչ կայ նաւում։ Տեսաւ պաքսիմատով, ալիւրով ու ցորենով լիքը պարկեր, գինով լիքը տակառներ. տեսաւ շատ հրացաններ, վառօդ, կապար, կացիններ ու սղոցներ, տեսակ տեսակ հագուստներ։ Նա շատ ուրախացաւ, իսկ Ուրբաթը նայում էր և չէր հասկանում, թէ ինչացու են այս բոլոր իրերը։

Ամենից առաջ նրանք վերցրին մի տակառ վառօդ, երկու հատ կապայ, երկու զոյգ շապիկ-վարտիկ, երկու զոյգ կօշիկ, երկու հատ կացին, երկու հատ սղոց. վերցրին թուղթ, մի կայծքար, մի հրահան (չախմախ) ու պատրոյգ, մի տակառ պաքսիմատ և այծին։

Ճաշից յետոյ նրանք նաւեցին դէպի եզերքը։ Ցամաք որ իջան, Ուրբաթին զարմացնելու համար Ռօբինզօնն ասաց.

— Նայիր, տեսնում ես, վերևում ուրուր է թռչում։ Նա այժմ իսկոյն վայր կընկնի։

Ռօբինզօնն նշան դրաւ ուրուրին և հրացանն արձակեց։ Ուրբաթը լեղապատառ գետին ընկաւ։ Ռօբինզօնն ասաց. «Վախեցար, հա՞»։ Եւ ցոյց տուաւ, թէ ինչպէս է պայթում հրացանը։ «Այդ որքան լաւ բաներ են հնարել սպիտակները — մինչև անգամ կենդանի կրակ»։

Հետևեալ օրը նրանք նորից դէպի նաւը գնացին։ Այս անգամ մի թնդանօթ գրին լասաի վրայ, մի մի պարկ ցորեն, գարի, սիսեռ, մի արկղ մեխ, մի տակառ վառօդ ու կապար, մի հատ մեծ ատաղաստ ու մի յեսան (սրելու քար)։ Այս բոլորը ծովափ տանելուց յետոյ՝ երկրորդ անգամ նաւի վրայ եկան և ոսկի ու ազնիւ քարեր վերցրին։

Երեկոյեան Ռոբինզոնը մամ վառեց ու սկսաւ գրած թղթերը կարդալ։ Շատ բան չհասկացաւ, որովհետև նրանք սպանիական լեզուով էին գրած։ Միայն այսքան իմացաւ, որ նաւն Ասիա էր նաւում և 100 հոգի գերի էր տանում վաճառելու համար։

Ռոբինզոնը պահեց այդ բոլոր թղթերը, թանկագին ակնեղէններն ու ոսկին և ասաց. «Թող կենան. գրանց աերը գուցէ մի օր եկեայ»։

II.

Մի առաւօտ Ռոբինզոնը ծովափ գրկեց Ուրբաթին, որ ոտաբէներ հաւաքէ, իսկ ինքը տանը մնաց՝ վառարանը նորոգելու համար։ Յանկարծ տեսաւ, որ Ուրբաթը վազէ-վազ յետ է գալիս. «Եկել են, եկել են։»

«Ովքեր են եկել», հարցրեց Ռոբինզոնը։

Իսկ Ուրբաթը կանչում էր. «Երկու, երեք, վեց նաւակ»։

Ռոբինզոնը վազելով բարձրացաւ լեռան վրայ և տեսաւ, որ ափի մօտ վեց նաւակ է կանգնած և մէջն էլ շատ վայրենի մարդիկ կան։ Շուտ վայր իջաւ և ասաց «Ուրբաթ, վերցրու հրացանդ և շուտով այնտեղ գնանք»։

Նրանք լցրին վեց հատ հրացան և այնպէս ճանապարհ բռնեցին, որ վայրենիները նրանց չտեսնեն։

Ուրբաթը թագուն մօտեցաւ վայրենիներին, ամեն բան դիտեց, և յետ գնալով ասաց. «Վայրենիները կրակ են վառել, շուրջը նստոտել են, կրակի վրայ մի մարդ են խորովում. իսկ մի ուրիշ մօտուքաւոր սպիտակ մարդ, ձեռքն ու ոտքն կապուած, գետնի վրայ ընկած է»։

Ծովափի մօտ մի փոքրիկ անտառ կար. այդ անտառի միջով նրանք մօտեցան վայրենիներին. Ռոբինզոնն այնպէս ուղղեց և արձակեց հրացանն, որ գնդակը վայրենիների գլխի վրայով թռաւ։ Սկզբում վայրենիները ցիր ու ցան եղան ահից. բայց յետոյ, տեսնելով որ ոչ ոք չկայ, կարծեցին թէ լուծներն ամպի գոռոց է, նորից հաւաքուեցան և սկսան պար գալ կրակի շուրջը։

Ռոբինզոնն ասաց Ուրբաթին. «Զարկ»։ Երկուսն էլ միասին հրացան արձակեցին. վայրենիներից երեք մարդ սպանուեցան, հինգը՝ վիրաւորուեցան։ Էլի մի անգամ պարպեցին, նորից երեք մարդ ընկան։ Յետոյ վայրենիների վրայ յարձակուեցան. Ուրբաթը սկսաւ կռուել, իսկ Ռոբինզոնը վազեց այն մարդու մօտ, որ կապուած ընկած էր գետնի վրայ. քակեց նրա թոկերը, մի սարճանակ և սուր տուաւ։ Սպիտակ մարդն էլ սկսաւ կռուել վայրենիների հետ և շատերին ջարդեց։

Վայրենիները, տեսնելով որ իրենցից շատերը սպանուել են, նաւակներ նստան և փախան։

Ռոբինզոնը գնաց վայրենիների թողած նաւակը տեսնելու և գտաւ նրա մէջ մի կապուած ծերունի։ Կապերը բաց անելուց յետոյ, կանչեց Ուրբաթին։ Հէնց որ Ուրբաթը վայրենուն տեսաւ, սկսաւ համբուրել նրան և թոչկոտել նաւակում։ Ռոբինզոնը հարցրեց, ինչու է այդպէս ուրախանում։

«Սա իմ հայրն է»։ Ռոբինզոնը դինի տուաւ նրան, իսկ Ուրբաթը սկսաւ շփել հօր մարմնի անդամները, որոնք ուռել էին կապերից։

Յետոյ Ուրբաթը մի նաւակի մէջ տեղաւորեց հօրն ու սպիտակին. իսկ Ռոբինզոնը միւս նաւակի մէջ դրաւ հրացաններն ու վայրենիներից մնացած տէգերը, և ամենքը միասին եզերքին մօտիկ ճանապարհ բռնելով, դէպի քարայրը նաւեցին։

Քարայրը տանելուց յետոյ կերակուր տուին նրանց, որ ուտեն. նրանք լաւ կերան կշտացան և քուն եղան։ Միւս օրը Ռոբինզոնն ասաց սպանացուն. «Ինչպէս ընկար վայրենիների ձեռքը»։ Սպանեցին պատմեց. «Մենք մի նաւ ունէինք և Ասիա էինք նաւում,

հետներս էլ հարիւր հատ գերի էինք տանում վաճառելու։ Ցանկարծ փոթորիկ բարձրացաւ և գիշերը մի ծանծաղի մէջ ընկանք (ջուրը քիչ՝ աւազոտ տեղ)։ սկսանք թնդանօթներ արձակել, բայց ոչ ոք չեկաւ մեզ օգնելու։ Գերիները մեր հրացանները յափշտակեցին, մեր բոլոր նաւակները խլեցին և ուզում էին նաւի վրայ թողնել մեզ ու փախչել։բայց մենք աղաչեցինք, որ մեզ էլ նաւակների մէջ առնեն։ Առաւօտեան մի կղզի իջանք. այնտեղ վայրենի մարդիկ էին բնակւում. նրանք մեզ տեսնելով ուրախացան և ձկնով կերակրեցին։ Կէս տարուայ չափ ապրեցինք նրանց մօտ։ Մի օր ուրիշ վայրենիներ եկան այնտեղ, մեզ հետ կուեցին, մեզնից շատերին սպանեցին, իսկ ինձ, Ուրբաթի հօրն և մի ուրիշ վայրենի մարդու գերի բերին ու կերան այն մարդուն»։

III.

Ռոբինզօնն Ուրբաթի հօր անունը Հիւգշադթի դրաւ։

Մի օր էլ Ռոբինզօնն իսպանացուն ասաց. «Վեր կաց, գնա, ազգակիցներդ մեզ մօտ բեր. նրանք այստեղ աւելի լաւ կ'ապրեն»։ «Լաւ, բայց մենակ ինչպէս գնամ»։ Ռոբինզօնն ասաց. «Հինգշաբթին էլ հետդ կը գայ։Միայն մի երկու օր սպասեցէք. առաջ պէտք է գետինը հերկել, ցանքս անել, որ երբ ազգակիցներ գան. ուտելու բան ունենան»։

Նրանք գետինը հերկեցին, ցորեն և գարի ցանեցին. այդ աշխատանքն երկու շաբաթում աւարտեցին և յետոյ ճանապարհ դրին։

Մի օր Ռոբինզօնը և Ուրբաթը ժայռի վրայից մի մեծ նաւակ տեսան ծովափին։ Նրանք իջան ժայռից և թագ կացան ծառերի ետև. նրանք ամեն բան տեսնում էին, իսկ իրենց ոչ ոք չէր տեսնում։ Նաւակն ափին մօտեցաւ. միջից 11 մարդ դուրս եկաւ և երեք հոգի էլ կապուած դուրս հանեցին։ Մի բարձր հասակով մարդ ասաց կապուածներին. «Մենք ձեզ պիտի սպանենք»։ Իսկ կապուածներն սկսան աղաչել, թէ «Մի սպանիր մեզ, լաւ է՝ այս կղզու վրայ թող. այստեղ ոչ ոք չէ բնակւում, բոլորը մէկ է՝ սովից կը

մեռնենք»։Բարձր հասակով մարդն ասաց. «Դէ լաւ, կը տեսնենք»։

Ռոբինզօնն այդ որ լսեց, ասաց Ուրբաթին. «Շուտ գնա, մի քանի հատ հրացան և տորճանակ, վառօդ ու գնդակներ բեր»։ Երբ Ուրբաթը բերեց, հրացանները լցրին։

Երեք կապուածները նստած էին, իսկ միւսները կղզու վրայ ման գալու գնացին. մի քանիսն էլ պառկեցին։ Երբ ընեցին, Ռոբինզօնը թագուն մօտեցաւ կապուածներին ու ասաց. «Մի վախենաք. ասէք— ովքեր էք։ Մէկն ասաց. «Ես նաւապետ եմ.— սրանք ընկերներս են.նաւաստիները չկամեցան հնազանդուիլ ինձ և ուզում էին սպանել մեզ։» Ռոբինզօնն ասաց. «Ես կ'ազատեմ ձեզ մահից, միայն թէ երդում արէք, որ ինձ Անգլիա կը տանէք»։ Ամենքն երդում արին։ Ռոբինզօնը և Ուրբաթը կամացուկ մօտեցան նաւաստիներին կապկպեցին նրանց և տարան մի մի քարայրում փակեցին։ Իսկ նաւակը ցամաք հանելով յատակը ծակեցին, որ եթէ նաւից մարդիկ դան, չկարողանան յետ տանել։

Այդ միջոցին թնդանօթի ձայն որոտաց. դա նշան էր,որ կղզու վրայ դանուող նաւաստիները նաւ վերադառնան։ Յետոյ մի ուրիշ նաւակ եկաւ մարդիկը դուրս եկան ու սկսան տապալուց եկողների անունը տալ։ Կանչեցին, կանչեցին, բայց վերադարձող չկար. երբ ուզում էին դէպի նաւը յետ գնալ, Ռոբինզօնն ասաց Ուրբաթին. «Գնա անտառ և ձայն հանիր. նրանք կը կարծեն,թէ կանչողներն իրենց ընկերներից մէկն է»։ Ուրբաթը կանչեց. ամենքը նրա կողմը վազեցին, իսկ նաւակի մօտ միայն երկու մարդ մնաց։

Ռոբինզօնն ու նաւապետն երկու ընկերով թագուն մօտեցան նաւակին, բռնեցին, կապեցին պահապաններին,իսկ նաւակը մացառի մէջ թաղցրին։ Նաւաստիներն երբ յետ եկան, տեսան, որ նաւակը չկայ, նրանք շատ վախեցան։

Նաւապետն ասաց նրանց.«Վաղը դուք ինձ հետ պէտք է գաք, որ նաւն ապատամբ նաւաստիների ձիրքից խլենք։ Եթէ ինձ չօգնէք, կղզու վրայ մնացող ընկերներդ կը սպանեն»։Նրանք ասացին. «Մենք կ'օգնենք քեզ, միայն թէ ամենքիս ներիր»։

Այն ժամանակ Ռոբինզոնն ասաց նաւապետին.«Գնա, հէնց որ նաւին տէր դառնաս, թնդանօթ արձակիր։ Նաւապետը խօսք տուեց և գնաց։ Երկար ժամանակ ոչ մի ձայն չէր լսւում, գիշերը մութն էր, և Ռոբինզոնը կարծեց թէ նաւապետին սպանել են. Ցանկարծ թնդանօթը որոտաց։ Ռոբինզոնը շատ ուրախացաւ,որովհետև ինքն էլ այժմ այդ նաւով Եւրոպա կը վերադառնայ.իւր հօր ու մօրը կը տեսնէ։Նա մինչև առաւօտ սարի վրայ կանգնած մնաց և միշտ ծովի վրայ էր նայում։ Երբ լուսացաւ, Ռոբինզոնը ասաց Ուրբաթին «Նաւը չէ գալիս.երևի նաւապետը խափեց մեզ և ինքը մենակ հեռացաւ»։ Մինչև նրանք այսպէս խօսում էին,յանկարծ մի շարժում լսեցին. յետ նայեցին տեսան, որ նաւապետը գալիս էր նաւաստիների հետ։ Ռոբինզոնը շատ ուրախացաւ և ասաց «Հապա նաւդ որտեղ է» Նաւապետն ասաց.«Կղզու միւս կողմը տարայ—այնտեղ քամին օտարիկ չէ»։ Յետոյ Ռոբինզոնը նաւապետին իւր մօտ ճաշի հրաւիրեց։ Ճաշի ժամանակ Ռոբինզոնը պատմեց նաւապետին թէ ինչպէս էր ընկել կղզու վրայ և քսան տարի տպրել այնտեղ։ Նաւապետը շատ զարմացաւ և ասաց. Ռոբինզոն, երբ ես ուզում ասուն վերադառնայ»։Ռոբինզոնն ասաւ,«Թող Հինդշաբթին և Սպանիացին գան—այն ժամանակ»։

Ուրբաթը գնաց, յայտնեց նաւաստիներին, որ նրանց սպասելու չեն,նրանք շատ ուրախացան։Եւ Ռոբինզոնն ասաց.«Ես ձեզ կը թողնեմ անասուններս ու հրացաններս և ամեն բան,ինչ որ ունիմ միայն թէ լաւ մարդիկ եղէք»։

Այդ միջոցին վազելով եկաւ Ուրբաթն և ասաց, որ Հինդշաբթին և սպանիացին եկել են։

Երբ նրանք եկան, Ռոբինզոնը սկսաւ ճանապարհի պատրաստութիւն տեսնել. վերցրեց իր կապան ու վարտիկը, որ կարել էր լամայի մորթուց.—առաւ իր աղեղը, տէգերն ու քարէ կացինը, որ մենակութեան ժամանակ էր շինել,—վերցրեց և թանկագին քարեր ու ոսկին։

Երբ ամեն ինչ նաւը դրին, Ռոբինզոնը նաւը նստաւ իր երկու

լամաների, թութակի և շան հետ միասին։ Ուրբաթն ու Հինդշաբթին էլ նրա հետ նստան։ Կղզու վրայ մնացին վեց անգլիացի և երկու սպանիացի իրենց կանանցով։

Ռոբինզոնը Ուրբաթի հետ յաջող կերպով հասան հայրենիք, իսկոյն հօր մօտ գնաց։ Հայրը ծերացել էր. երբ իմացաւ,որ եկողն որդին է, լաց եղաւ. Ռոբինզոնն էլ լաց եղաւ, և ասաց. «Հայրիկ հապա մայրս որտեղ է». «Նա մեռել է, միշտ ուզում էր քեզ տեսնել»։

Ռոբինզոնը շատ ցաւեց, յետոյ պատմեց հօրը, թէ ինչպէս էր ընկել կղզու վրայ և քսան տարի այնտեղ տպրել։Հայրը շատ զարմացաւ և սիրով սկսանչ էր գնում որդու ասածներին։

Ռոբինզոնը Ուրբաթի հետ հիւսն զարձան։Նրանք գործ ունէին, որովհետև լաւ էին աշխատում։ Երկար տպրեցան և շատ փող վաստակեցին։ Ռոբինզոնի հայրը մեռաւ. նրանից յետոյ Ուրբաթն էլ մեռաւ։ Եւ Ռոբինզոնը նորից մնաց այդպէս մենակ, ինչպէս որ էր կղզու վրայ բնակելիս։

---

34. Զիւն ձմեռ

Զիւն ձմեռ. երկու կարճ խօսք տուն, ու երեք չորս երկար ու ձիգ ամիսներ մտիր տունդ, դուռը պինդ փակիր, տաք քուրսու տակին, կամ տաւարի շնչով տաք բաղնիս զարձած զոմի յողայում մի կողքի ձգիր։

—Զիւն ձմեռ. ասում է աշխատանք սիրող երկրագործը և մտամոլոր տարտկուսում։ Ի՞նչ պիտի անենք երեք-չորս երկար ամիսներ.տխուր տրտում մտածում է նա.Չանս ցեղ է մտել, զործելու սովոր եմ, աշխատել եմ ուզում, գործ չկայ։ Զիւնն եկել, հողի երեսը պինդ ծածկել է. պարզկան ու սառնամանիքը կանաչ ու զարդ ծառերին մերկացրել, շինել են չոր ցախ. ցուրտն ու բուքն, իմ աշխատաւոր

եղանն, իմ գոմշին ու ոչխարին կապերի մէջ է կոխել ու չի թողնում, որ երկնքի երես տեսնեն. կէս գազի հաստութիւնով սառոյց մեր զոչգոչած գետերին, մեր կչկչան առուներին պապանձացրել է. գործ չի մնացել՝ գործենք, անելիք չկայ՝ անենք, ծոյլերի վրայ ծիծաղում ենք, էն օրին ենք հասել, որ ուզենք չուզենք՝ պիտի մենք էլ ծուլանանք։

---

35. Զմեռ

Զինջ երկնքի զողորիկ ժպիտը մարեց.
Վառ արևը կորաւ, գնաց անանուն.
Մեր չորս կողմում անուշ երգը դադարեց,
Քնեց, տսես, յանկարծ սիրուն բնութիւն։

Թալանուեցին շքեղ պարտէզ, թաւ մէրին,
Հեծհեծեցին մերկ ճիւղերը զարդազուրկ,
Բայց քարացան նրանց գալար աչքերին
Լուսաշողին վշտի գոհար արտասուք։

Եւ արցունքի բիւրեղներով ծառ ու ճիւղ
Ճերմակ, սիրուն շորեր հագան սարսռուն.
Կարկաչահոս, գլգլահոս յորդաբուղխ—
Վերմակ տան վրան—աղբիւրն ու առուն։

Ցուրտ երկնքից մաղւող շողերն արևի
Փրշրւելով հատիկ-հատիկ փուեցին.
Ցած, պատանուած, մեռած երկրի դագաղին
Բիւր երփներանգ գոհար մոմեր վառուեցին։

36. Զմեռ

Զիւնն եկել դիզւել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերն էնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճրճքում էր ու մարդի ջանը սոսոցնում։ Ամեն մէկ ծառի ճիւղերից, ամեն մէկ տան կտուրից հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ կախ էր ընկել ու բիզ բիզ իրար վրայ սառել։ Հէնց գիտես սար, ձոր կամ նոր էր ծաղկել կամ նոր ծերացել։ Թռչուն, գազան, անասուն, սողուն, որը փէտացել, էստեղ, էնտեղ ընկել, որն էլ վաղուց բունը մտել, ձէնը կըտրել, պաշարը վայելում, զարնան գալուն սպասում։ Փետերի, առուների երեսները սառուցը մէկ գաղ եկել, հաստացել, որ մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լսում։

Արեգակն էս առաւօտ, որ աղօթարանից չբարձրացրեց ու աչքն աշխարհին ձգեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին, էնպէս էր պէծին տալիս, պսպղում ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, ալմաստ, զմրուխտ, եաղուտ ու հազար տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին փռած։

Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին ձնի թեփն իրար գլխով տալով, ճամբորդի քիթ ու պռունգ իրար կպցնում, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում։



Դիտեցէք, պատմեցէք և գրեցէք։

38. Աշակերտը

Ձիւնը գալիս ու գալիս է։ Երբ դասերը վերջացան։ մենք վազեցինք ձնագնդի խաղալու։ Ձիւնը փափուկ է, ձնագնդերը կոշտ ու քարի պէս ծանր են դուրս գալիս։Մայթի վրայ շատ մարդիկ կային։ Փողոցում զնացողներից մէկը կանչեց.—Հէրիք է չարութիւն անէք։ Մի բոպէից յետոյ փողոցի միւս կողմից լսում ենք մի սուր ճիչ և տեսնում ենք մի գլխարաց ծերունի. նա երեսը ձեռքով ծածկած երերւում է, կողքին կանգնած տղան կանչում է։

—Օգնեցէք, օգնեցէք։ Իսկոյն բազմութիւն հաւաքեցաւ։ Ջնագունդը գիպել էր ծերունու աչքին։ Աշակերտներն իսկոյն փախան։ Ես կանգնած էի գրավաճառի խանութի մօտ, այնտեղ եկան ընկերներից շատերը։

Ո՞վ արաւ, ո՞վ, կանչում էին ոստիկանները և ոմանք ժողովրդից։

Ես լսեցի, որ Գարեգինը կամացուկ ասաց Գուրգէնին.

—Գնա, գնա, խոստովանուիր, ուրիշների վրայ ձգելը ցածութիւն է։

—Բայց ես գիտութեամբ չեմ արել, ասաց Գուրգէնը ահաբեկ։

—Միևնոյն է, գնա, խոստովանուիր, դու պարտական ես այդպէս անել։

—Ես վախենում եմ։

—Ոչինչ, ես քեզ հետ կը գամ։

Ոստիկանները կանչում էին.—Ո՞վ ակնոցները փշրեց. ապակու կտորն աչքն է մտել. կը կուրանայ։

—Գնանք, կրկնեց վճռողաբար Գարեգինը. նա բռնեց ընկերոջ թևից ու առաջ քաշեց։ Ժողովուրդը բանի էութիւնը հասկացաւ, ոմանք բռունցքներով վրայ վազեցին։

Ոստիկանները տարան նրան ծերունու մօտ։ նա նստած էր, աչքերը թաշկինակով կապած։

—Ես անգիտաբար...անգիտաբար, կրկնում էր, Գուրգէնը հեկեկալով, ես ակամայ գործեցի։ Մի քանի պարոններ գետին գլորեցին նրան, բայց երկու հոգի բազուկներ վերցրին նրան և լուեցաւ մի բարձր ձայն։

—Չէ, պարոններ, սպասեցէք...Այդ մեր տեսուչն էր, նա ամեն բան տեսել էր։

—Տղան արիութիւն ունեցաւ խոստովանելու, ուրեմն ոչ ոք իրաւունք չունի նեստացնելու նրան։ Ամենքն էլ լուռ կեցան։

—Ներողություն խնդրիր, ասաց տեսուչը։

Գուրգէնը յալով չոքեց ալևորի առաջ և ծերունին նրան համբուրեց։

---

39. ԱԻԵՏԻՍ

Ցուրա գիշեր էր, երկինքը պարզ. ձիւնը քարացել կպել էր գետնին և ոտների տակ տրորուած հողի գոյն էր ստացել։ Անսովոր թափանցիկ օդի մէջ երկինքը մոյգ փիրուզի գոյն էր խփում։ Աստղերը սովորականից մեծ էին երևում և կարծես սառնամանիքից մրսելով, կապտել էին։

Քողոցներում անցուդարձը դրեթէ դադարել էր, չնայելով որ դեռ շատ վաղ էր։ Տների լուսամուտները պայծառ լուսաւորուած՝ ծիծաղում էին կարծես։ Օդի մէջ կանգնած էր խունկի, փլաւի և ձկան հոտ։

Ծերունի ժամկոչը փոքրիկ թոռան հետ, ժամաշապիկ հագած, անագին ոտնամանները սառած գետնին քրթքրթացնելով, անցնում էր տնէ-տուն, փողոցէ-փողոց և իր ճաթած ձայնով աւետում էր ամենքին Քրիստոսի ծնունդն իր պատանի ընկերոջ ձայնակցութեամբ։

Ահա նա կանգ առաւ ուղղակի փողոց նայող մի ցածլիկ դռան առաջ ու ծեծեց։

Դուռը բաց արեց մի փոքրիկ երեխայ։

Ժամկոչը թոռանն առաջ գցեց և ինքն էլ մտաւ ետևից։

Հին նահապետական մեծ սենեակ էր մէկ պատից մինչև միւսը կապած երկայն ու լայն թախթով։ Թախթի վրայ ձգուած էր մի ծայրից մինչև միւսը կապոյտ դաջած սուփրա, որի վրայ նկարուած էին ձուկ, դանակ, պատառաքաղ, գդալ, եղջերու և այլն զարդեր։ Սուփրի վրայ կար միմիայն ձկնեղէն, իսկ մսեղէն՝ ոչ.—նաւակատիկ էր։ Կերակուրների պսակը կազմում էր փլաւն, որից բարձրացած ախորժահոտ գոլորշին բռնել էր սենեակը։ Սուփրի դիմին նստած էր ընտանիքի հայրն ու պապը՝ մի աշխոյժ, ուրախ ծերունի, թրաշած երեսով և դեռ ևս սև մազերով։ Նրա աջ ու ձախ կողմերում շարուած էին եօթ երեխայ։ Սուփրի մի ծայրին նստած էր մեծ մայրը, միւս ծայրին՝ երկու հարս, որոնցից մէկը ծիծ էր տալիս օրօրոցի մէջ պառկած երեխային, միւսը հաց էր ուտում։ Այնուհետև թախթի երկայնքով մի երկայն նստարանի վրայ իրար կողքի նստոտած էին չորս եղբայր՝ մէկը միւսից թիկնաւէտ, ուտող-խմող, քէֆ սիրող։

Սենեակում ականջ խլացնող ուրախ աղմուկ էր տիրում. խօսում էին բոլորը միասին—մեծ, փոքր, կին, տղամարդ։ Սակայն այդ աղմուկն իսկոյն դադարեց, երբ «աւետիս» ասողները ներս մտան։

Ծերունի ժամկոչն ու թոռը կանգնեցին դռան մօտ, մի-մի մոմ վառեցին, գլխարկները վերցրին և սկսեցին երգել՝

Այսօր ծոն է ծննդեան, աւետիս,
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս . . .

Երգում էին առանց շտապելու, առանձին հանդիսաւորութեամբ. ծերունի ժամկոչն իր խուլ, ճաթած ձայնով, պատանի տիրացուն՝ իր երեխայական զիլ, սուր ձայնով։ Թէև ոչ մի ներդաշնակութիւն չկար այդ ձայների մէջ, բայց և այնպէս սրբազան երգը սրտաշարժ տպաւորութիւն էր թողնում ունկնդիրների վրայ։

Վերջացաւ «Աւետիսը», վերջապէս և «Խորհուրդ մեծը», որն երգուեց աւելի արագ տեմպով, քան առաջինը։

Շնորհաւոր ծնունդ և յայտնութիւն,—ասաց ծերունի ժամկոչը և հանդցրեց ձեռքի մոմը։

—Շնորհաւոր կենաս, մղդսի ջան,—կսմնչեց տան ծերունին։—Դէհ, տղէրք,—դարձաւ նա երիտասարդներին, ձեռքն աբխալուղի դրպանը կոխելով,—հանեցէք , մի-մի աբասի տէք մեր մղդսուն։ Ըհը, էս էլ իմ աբասին։

Եւ հինգ աբասին մէկը միւսի ետևից մտաւ ծեր ժամկոչի բուռը։

—Ա՛ կնիկ, վեր կաց էն երեխին զոգինաղ տուր, մուրաբա տուր՝ ուտի,—դիմեց կնոջը տան նահապետը։—Մղդսի ջան, բա որ եկար՝ մեզ համար աւետիս ասացիր, աբի մի թաս գինի խմիր։ Ա-ծա, ա՛յ տղայ, ածա տուր՝ օրհնի։

Ծերունի ժամկոչը մի թաս գինի շպրտեց, երկայն ու բարակ օրհնանքներից յետոյ։

—Փլաւից-զատից կեր, մղոսի ջան. բեր էլ երեխին դէսը, թող դա էլ ուտի։

Փլաւը և ձկնեղէնն ուտելու ժամանակ նոյն երկայն ու բարակ օրհնանքներով ժամկոչը ծծեց երկրորդ թաս գինին, յետոյ երրորդը, յետոյ չորրորդը, բայց հինգերորդից վճռապէս հրաժարուեց և նորանոր օրհնանքներով դուրս գնաց թոռան հետ հետևեալ տները հերթով ման գալու համար։

Դիտեցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և գրեցէք։

41 ԱՂՋԻԿՆ ՈՒ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

I.

Սատիկ յուրա էր։ Ձիւնը քուլա-քուլա թափուելով՝ ծածկում էր գետինը։ Արդէն սկսում էր մթնանալ. այդ գիշերը հին տարին հրաժարական ողջոյն էր տալիս ամբողջ աշխարհին, իսկ վաղը նոր տարի էր—բերկրանքի և ուրախութեան օր։ Այդ միջոցին ձիւնապատ փողոցովն անցնում էր գլխաբաց և ոտաբոբիկ մի խեղճ աղջիկ։ Իրաւ է, անից դուրս գալիս նա հագել էր մօր մաշիկները, բայց փողոցի մի ափից միւս ափն անցնելիս՝ նա ընկաւ երկու միմեանց հանդէպ ընթացող կառքերի մէջ տեղ և շտապելուց ու շփոթուելուց՝ մաշիկները կորցրեց։ Մաշիկներից մէկն իսկապէս կորաւ, իսկ միւսը թոցրեց մի փոքրիկ չարաճճի տղայոց նաւակ շինելի նրանից ու գարձնելոյ։

Աղջիկը գնում էր ոտաբոբիկ. նրա փոքրիկ ոտները կարմրատակել էին և ցրտից փէտացել. նա իր կրծքի վրայ ամրացրած փոքրիկ արկղիկում գարսած ունէր լուցկիների մի քանի կապոց, իսկ մի կապոց բռնած էր ձեռքին։ Վատ եղանակը շատ էր ֆնատում նրան. փողոցի անցուդարձը համարեայ կտրած էր, չկային գնողներ, այդ պատճառով նրա դրպանում ևս չկար ոչ մի կոպէկ։ Համ մրսում էր, համ քաղցած էր ոդորմելին, և հէնց երեսին էլ երեւում էր, թէ որքան չարաչար ոտնձգում էր նա։ Անբախտ տարաբաղդ։ Ձիւնը քուլաներով թափում էր նրա բաց-խարտեաշ մազերի վրայ, որոնք գեղեցիկ գանգուրներով շրջապատում էին նրա փոքրիկ։ չքնաղ վիզը։ Բայց ամենևին ուշք չէր դարձնում իր գանգուրների վրայ. նրանց մասին չէր էլ մտածում։ Պատուհանները վառվում են բազմաթիւ ճրագներով, խորովածի հոտը բռնել է ամբողջ փողոցը, ամենքը պատրաստւում են դիմաւորելու նոր տարեան, ամեն տեղ եռում է կեանք—ահա ինչով էր զբաղուած նրա միտքը։

Վերջապէս մի խուլ անկիւն գտաւ երկու տների մէջ տեղում և, ոգնու պէս կուչ գալով, նստեց այնտեղ։ Սառնամանիքը փէտացնում էր նրա ամբողջ մարմինը, բայց նա չէր համարձակւում տուն գնալ. և ինչպէս վերադառնար, երբ մէկ հատիկ լուցկի անգամ չէր ծախած և գրպանումն էլ կոպէկ չունէր։ Առաջինն որ հայրը նրան կը թակէր՝ տեսնելով աղջկանը դատարկաձեռն տուն վերադարձած, և երկրորդն էլ—միթէ միևնոյն չէր՝ տուն գնալ թէ փողոցում մնալ. չէ՞ որ նրանց տանն էլ նոյնքան ցուրտ էր, որքան և դուրսը, բաց երկնքի տակ։ Նրանք ապրում էին ցարդախոռում և քամին չորս կողմից ազատ ներս ու դուրս էր անում, չնայելով որ ամենամեծ անցքերն ու ճղքերը խցած էին յարդով ու զանազան վալաս-փուլուսներով։ Թեզճ աղջկայ ձեռքերը կապտել, լեղակի գոյն էին ստացել։—Ա՜խ, ինչ կը լինէր գէթ լուցկու աղօտ բոցով տաքանալ։ Բայց ինչու՞ չհանել մի լուցկի, չքսել պատին և չտաքացնել սառած մատներս։ Նա հանեց լուցկին և ծկրը՞պ՝ քսեց պատին. օ՜, ինչպէս բոցավառւեց։ Աղջիկը ձեռքով ծածկեց աղօտ բոցը և լուցկին սկսեց այրւել, ինչպէս փոքրիկ ճրագ։ Եւ խղճուկին թւում էր՝ թէ նստած է երկաթէ մեծ վառարանի առաջ և փէտացած մարմինը տաքացրնում է նրա հրաշալի բոցով։ Օ՜, ինչ գեղեցիկ վառվում է կրակն այդ հսկայ վառարանում՝ տարածելով շուրջն ախորժելի տաքութիւն։ Ողորմելին ձեռքերը մեկնեց, որ տաքացնի, բայց յանկարծ բոցը հանգաւ, վառարանը չքացաւ և ինքը դարձեալ նստած էր փողոցի մութ անկիւնում, այրւած լուցկին ձեռքին։

Նա հանեց երկրորդ լուցկին և քսեց պատին։ Լուցկին վառւեց, լուսաւորեց պատը և լուսաւորւած տեղը պատի վրայ դարձաւ թափանցիկ, կարծես լուսաւորութիւնը գազային էր։ Աղջիկն տեսաւ մի շքեղազարդ սենեակ, որի մէջտեղը դրւած էր սպիտակ սփռոցով ծածկած սեղան։ Սեղանի վրայ կարգով շարւած էին փայլուն ճենապակեայ ափսէներ. իսկ մէջտեղը՝ մեծ սկուտեղի վրայ դրւած էր սղոցով և խնձորով գեղեցիկ համեմած ու տապակած սագ, որից այնպիսի մի անուշ հոտ էր բուրում, որ ամենակուշտ մարդու ախորժակն անգամ կը շարժէր։ Օ՜, երջանկութիւն յանկարծ սագը վեր կացաւ սկուտեղի վրայից և գլորւեց յատակի վրայ։ Նրա մէջքի մէջ ցցւած էին դանակ և պատառաքաղ։ Նա գլորւելով մօտեցաւ մանուկ աղջկանը։ Բայց լուցկին այդ միջոցին հանգաւ, և նրա առաջ կանգնած էր դարձեալ նոյն սառն ու հաստ պատն իր դաժան կերպարանքով։

Բայց ահա վառւեց երրորդ լուցկին. և աղջիկը տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած է մի շքեղազարդ ոսնածառի առաջ։ Այս ոսնածառն անհամեմատ հարուստ ու բարձր էր այն ոսնածառից, որ նա անցեալ ծննդեան ոսնին տեսել էր ոսպակեայ գնների միջով մի հարուստ վաճառականի տանը։ Ոսնածառի կանաչ ճիւղերի վրայ վառւում էին հազարաւոր մոմեր, իսկ սենեակի պատերի վրայ կախկըռւած բազմաթիւ գեղազրական պատկերներն, որպիսիք նա յաճախ տեսել էր խանութների պատուհաններում գւարս դրած, կարծես ժպտում էին նրան։ Նա վեր բարձրացրեց իր փոքրիկ ձեռքերը, բայց մեռաղ, լուցկին հանգաւ. ոսնածառի մոմերն սկսեցին սլանալ բարձր, շատ բարձր, – և աղջիկը տեսաւ, որ այդ աստղեր էին...

Նա պատին քսեց դարձեալ մի լուցկի։ Շուրջը տարածւեց շքեղ լոյս և հրաշալի լոյսի մէջ երևաց նրա պառաւ տատը՝ հեզ և փայլուն ժպիտն երեսին։

«Տատի ջան, – գոչեց աղջիկը՝ փէտացած կոնները տարածելով առաջ, – տա՛ր ինձ քեզ մօտ։ Ես գիտեմ, որ երբ լուցկին կը հանգչի, դու էլ չես լինի. կը չքանաս, ինչպէս՝ չքացան երկաթէ վառարանը, տապակած սագը և շքեղ ոսնածառը»։

Նա շտապով վառեց կապոցում մնացած միւս բոլոր լուցկիները, որովհետև նա սրտով ցանկանում էր, որ տատիկը չհեռանայ։ Լուցկիները մի ակնթարթում բոցավառւեցին և չորս կողմը տարածեցին այնպիսի մի զօրեղ լոյս, որ կարծես թէ ցերեկ լինէր։ Ոչ մի ժամանակ այնքան գեղեցիկ չէր եղած նրա տատն, որքան այդ բոպէին։ Նա վերցրեց Թոռնիկին իր ձեռքերի վրայ և երկուսն էլ ուրախ ու զւարթ պայծառ լոյսի շերտը ճեղքելով՝ պացան բարձր, բարձր

—այնտեղ, ուր չկան ոչ ցուրտ, ոչ քաղց, ոչ տանջանք...

Երբ վրայ հասաւ ցուրտ առաւօտն, աղջկանը դատն երկու տարիների մէջ տեղը, խուլ անկիւնում նստած։ Նրա այտերը կարմիր էին. շրթունքները ժպտում էին։

Թեղճ ողորմելին մեռել էր։

Նա փէտացաւ նոր տարւայ նախընթաց գիշերը։ Նոր տարւայ առաջին օրը լուսաւորեց Թշուառութեան մի անմեղ և անպաշտպան զոհի դիակ, որ մի քանի ժամ առաջ սրտագրաւ պատկերներ տեսնելով լուցկու փայլուն լոյսի մէջ՝ ժպտում ու հրճւում էր, ինչպէս ճրագի շուրջը ճախրող թիթեռ։ Լուցկիների մի կապոցը բոլորովին այրւած էր։ «Երևի նա ուզեցել է տաքանալ» — ասաց մէկը։ Եւ ոչ ոքի մտքովն անգամ չանցաւ, թէ ինչպիսի հրաշալի տեսիլներ էին նկարւել փոքրիկ աղջկայ չքնաղ աչքերին. ոչ ոք չիմացաւ, թէ որպիսի փառքով և շքեղութեամբ դիմաւորեց նա նոր տարւան իր սիրելի տատիկի հետ միասին։

Պարզկայ գիշեր...
Առաղերն երկնքում լուռ պսպղում են,
Շողերը լուսնի դիպել են սարի
Ձիւնոտ կողերին—կողերը ցոլում,
Պէծին են տալիս։

Քամին ցրտաշունչ
Թևերը փռած՝ փնչում է, թռչում,
Երկիրը սառած ճաքում—ճաքճքում,
Ձեռն հատիկները կուրծքը քարափի
Ծեծում ու ծեծկւում...

Անծայր ճանապարհ...
Առաջ եմ գնում—ուր—ես չգիտեմ,
Սառույց ու ձմեռ...

Առաջ եմ գնում անյոյս, անընկեր,
Քամի ու գիշեր...
Ա՜խ. եթէ յանկարծ յոյսը շողշողար,—
Նա ինձ ողջունէր։

---

48. ԽԱՅԸ

1.

Ցուրտ էր, ձմեռ, բուք-բորան. գիշերն էլ այնքան խաւար էր, այնպէս սարսափելի, որ լեռնային Օ...գիւղում մարդիկ այն ժամանակ էլ չէին յիշում, թէ իրենք երբ և ինչ օր ու արև, լոյս ու ջերմութիւն, պարզ երկինք տեսել են, թէ ոչ։

Վա՜ւ, վա՜ւ, վա՜ւ,—ոռնում էր քամին և ամեն անգամ այդ գարհուրելի կազկանձոցի հետ Մելիք-Շահէնի տաքուն երկու կողմի բազմականները դաղարում էին խօսելուց, ցած էին առնում բերանեբից չիբուխներն, իրար երես էին նայում և նոյնիսկ մի ներքին պտռանջ զգում իրար աւելի մօտ գալու, աւելի կուչ գալու։

—Ա՜խ, գժոխք է դուրսը, ասաց նստողներից մէկը խօսած լինելու համար. զուշմանս հիմա սարում չլինի։

—Սարո՞ւմ, պատասխանեց մի ուրիշը հեգնութեամբ. սաքի թէ դու ջան կ'անես հիմա մինչև մեր այգիները գնալ, որ սարերից ես խօսում. չե՞ս լսում ձայները...երկինք-գետինք իրար են դիպել՝էէ։

Գոմի դուռը հանդարտ ճռռաց. ամենքը դէպի այն կողմը նայեցին. կիսախաւարի մէջ գծագրւեց մի մարդու հասակ, որ եռփունջու մէջ կորուած նեռկայացնում էր մի ձիւնակոյտ. պարզ էր որ մարդն երկար ժամանակ բքի տակ էր մնացել։

—Բարի երեկոյ, ասաց նորեկը, թափ տալով եռփունջու վրայից ձեռն հաստ շերտը.

Աստուծոյ բարին. վա՜յ խեղճ Խայ, արի, արի, առաջ անցիր,

տնաշէն, փէտացար—ձայն տուին այս ու այն կողմից նստողները սրատաքաւ եղանակով—Խային տեղ տուէք, թող նստի։

—Հա, փէտացայ, ասաց նորեկն առաջանալով.էլ դուրսը մնալու ճար չկայ, ասես թէ երկինքը փուլ է գալիս, գիւղի մէջ էլ մարդ խեղդւում է. ձիւն ու քամի. օ, ինչ բուք. ասացի՝ մտնեմ սաղուն տաքանամ, դուրս ելնեմ։

Մարդը նստեց։

Գիւղի պահապանն էր նա, վարձւած գիշերապահը։ «Խայ»-ը շատ կայլն Բ...գիւղում,գնացին. այս մէկը մեաց ուշացած կռունկի պէս. մուրալ չուզեց պահապան եղաւ. տեղացիք անունը լաւ չդիտէին, Նախօ կանչելու տեղ ոմանք Մխօ կանչեցին, ոմանք էլ Մկօ ասեցին, բայց վերջ իվերջոյ՝ խօսքերը կարծես մէկ արած՝ սկսեցին պարզապէս «Խայ» կանչել։ Այդպէս լաւ էր, հեշտ էր,համ էլ՝իրաւ որ նա «Խայ» էր, որովհետև Հայաստանցի էր։ Ահա այս «Խայ»-ն էր, որ անկիւնում պառկ տակ տեղ գրաւեց, կծկւեց, սաղ արեց։ սարուն տաք էր։

Բուքը շարունակւում էր, կատաղի քամին վիրաւոր գազանի պէս մռնչում, ոռնում էր։

—Էսպիսի գիշերւայ է ռասա եկել խեղճ ողորմելին հա, ասաց ուէս Գէվօն. էլ ինչ հոգը տար գլխին։

Խօսքը մի գիւղացու մասին էր, որ մի քանի օր առաջ լեռնեռում բքի բռնելով խեղդւել էր։

—Քանի ասինք մի գնար, էս ձիւն ու ձմրան չօլերը մի ընկնիր. կնիկ, երեխայի տէր ես, վրայ բերեց միւնը։

—Է՛, ինչ ես անգէտ անդէտ խօսում, մարդի ճակատին էն էր գրւած, ասաց Մէլիքը. նա պիտի գնար, նա պիտի խեղդւէր. ճակատագրից ով կարող է փախչել,

—Իրաւ է, իրաւ, Մէլիքը, ասացին մի քանի հոգի. ճակատի գրածը չի ջնջւի։

Իւրաքանչիւրն իր դիտողութիւններն արեց այդ մասին.ամենքն էլ հասան այն եզրակացութեան,որ մարդը խաղալիք է ճակատագրի

քմահաճոյքին, որ նրա առաջ անզօր են մարդկային բոլոր հնարքները, նրա բոլոր խելքը, եռանդը, աշխատանքը։

—Ես ճակատագրին չեմ հաւատում, ասաց մի ձայն սաքի մի անկիւնից։

Ամենքի հայեացքները դարձան դէպի այն կողմը... Զարմանքն ընդհանուր էր։

—Ով է այդ «աժդահան», ասաց Մէլիքը հեգնութեամբ։

—Ծառադ եմ, ես եմ, Մէլիք. ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց նոյն ձայնը յամառութեամբ։

Մարդիկ չգիտէին՝ ծիծաղեն, թէ զայրանան, ճակատագրի ամենակարող ուժին չհաւատացողն ողորմելի «Խայն»էր։

—«Էծերի քոսոտը կը կատաղի»,սուտ չէ ասած, մրմռաց Մէլիքը կէս հեգնութեամբ, կէս բարկացած,

Իսկապէս ամենքն էլ զայրացած էին։ Եւ ինչպէս չզայրանային. Մէլիքը՝ հարուստ,զօրեղ, Մէլիքը հաւատում էր ճակատագրին, վախենում էին նրանից. ուէս Գէվօն,որի ճիպոտի առաջ բոլորը դողում էին ինչպէս ուռի տերևներ, սարսափում էր ճակատագրից, տէրտէրը խօ՝ ինչ քարոզէր, վերջը ճակատագիրն էր. ամենքն էլ ընկճւած էին այդ աներևոյթ զօրութեան առաջ, ամենքն էլ սոսկում էին նրանից. մենակ այս ողորմելի Խայը ճակատագրին չէր հաւատում, չէր վախենում նրանից։

—Այո, ես չեմ հաւատում այդ ձեր ճակատագրին, կրկնեց Խայը—այս անգամ աւելի յանդուգն ձայնով, երբ տեսաւ իր վրայ ուղղւած արհամարհական հայեացքները։ Եւ ես ձեզ հէնց այս րոպէիս կարող էի ցոյց տալ, որ իրաւունք ունիմ, բայց ափսոս, որ պիտի դուրս գամ գիւղը շրջելու։ Եւ նա վեր կացաւ, պատրաստւելով դուրս գալ.

Մնա, մնա, Խայ, գոռացին մի քանի ձայներ հետաքրքրւած. ուէս, ասա՝ թող մնայ. հիմա գիւղը չթալանեցին։

Ուէսի ցանկութեամբը Խայը կրկին նստեց իր տեղը։ Ամենքի հայեացքները դէպի նա դարձան, ամենքը սպասում էին, թէ ինչ

պիտի պատմի այս մարդն, որ այդպէս հանդուգն յամառութեամբ արհամարհում է ճակատագիրը։

II.

— Էն տարին — այսպէս սկսեց Նայը — մենք հոգի էինք, տարը գժեր, տարը բոց ու կրակ ունէինք կրծքներիս տակ, միատեսակ կրակ, միևնոյն կայծից բռնկուած, որ վառում փոթորկում էր մեզ։ Միատեսակ անվախ սիրտ ունէինք, բայց ինչ սիրտ... ծով էր վշտերով ալեկոծ ու ամօթից կապտած, խարոյկ էր վրէժով վառուած... Ամիսներ էր, ինչ թափառում էինք չօլից չօլ, սարից սար, ձորից ձոր, օձերի հետ էինք ջուր խմում, քարէ անկողնու մէջ բոլշևիկներով հանգիստ առնում։ Դէ, ինչ անէինք. շատ երկար կուլ տուինք մեր անարգանքը. համբերութիւններս ահագին էր, բայց մեր զուշմանի անասուածութիւնը, նրա անսիրտ անամօթութիւնն անսահման էր. էլ ապրել չէը լինում. հաց չկար, եղածն էլ կուլ չէր գնում, թոյն ու լեղի էր դարձել։ Մենք էլ ամեն բան թողինք, տուն ու ընտանիք, մալ ու մուլք և մեր պատի թուք ու մուրը սրբելու համար մի մի հրացան առանք, սարերն ընկանք։ Այսպէս լաւ էր... ազատ էինք...

Քիւրդերն ու թիւրքերը մեզ ասում էին «ֆէդայի», իսկ հայերն ասում էին «վրիժառու ոգի»։ Մեր առջևից սարսափն էր գընում, մեր յետևում մահն էր փուռում։ Սարերի միակ տէրը մնացինք մենք ու արծիւները. մի քիչ նման էլ էինք իրար, միատեսակ էինք յարձակւում մեր որսերի վրայ։ Շատ անգամ մեզ փնդրում էին, բայց մենք դարձել էինք աներևոյթ դևեր, ամեն տեղ էինք և ոչ մի տեղ ֆէդայիին գտնելը հեշտ չէը, հանդիպելն էլ դարհուրելի։ Այսպէս էինք մենք և սպասում էինք ճակատագրին մենք հաւատում էինք նրան։

Մի օր Սիմ լեռան կատարին էինք, որ մեր պաշարը վերջացաւ։ Ինձ վիճակւեց պաշարի գնալ։ Ես գիւղերը ճանաչում էի. բայց չէն էին, թէ աւերակ, բնակիչներ կային, թէ գաղթել էին, — այդ

ես չգիտէի. ինչ և լինէր, պիտի գնայի, ինչպէս և լինէր, պիտի պաշար ճարէի։ Եւ ցած իջայ մեր որջից օրը ցերեկով, առանց զէնքի, առանց նոյնիսկ ձեռնափայտի. մտածում էի, թէ թշնամու չեմ պատահի, եթէ պատահեմ էլ, անզէն լինելս գուցէ ինձ փրկի. իսկ եթէ չեմ փրկւի, երևի ճակատագիրս այդպէս է։ Եւ այսպէս ես գնում էի... Բաւական ժամանակ շուրջս մեռելութիւն էր, ոչ ոք չկար. առջևս մի սար էր, պէտք էր բարձրանալ և ապա վար իջնել յաջորդ ձորը։ Բարձրացայ թէ չէ, հէնց կատարին առջևս ցցւեց մի քիւրդ, ոտից գլուխ զինուած։

— Բարև, քիրվա, ասացի ես անհոգ եղանակով։

— Բարև, ֆլա, պատասխանեց քիւրդը, բայց չանցաւ, կանք առաւ՝ նայեց ինձ։

— Ես կանգ չառայ, այլ առաջ անցայ, շարունակեցի ճանապարհս, բայց զգում էի, որ քիւրդը տակաւին կանգնած հետևում է ինձ հայեացքով։ Ես չէի շտապում՝ կասկածի առիթ չտալու համար։

— Հէյ ֆլա, կաց, լսեցի յանկարծ քիւրդի ձայնը, յետ նայեցի, կանգ առայ։ Ճակատագիրս է, մտածեցի ես. և ճիշդ որ ճակատագիրը հէնց այս քիւրդի կերպարանքը կարող էր ունենալ հրացանն ուսին, կեռ թուրը կողքին, սպիտակ փղոսկրէ կոթով մի դաշոյն գոտիկը խրած, դէմքը զզուելի, աչքերը կատաղի, իսկ և իսկ բացցած գայլի աչքեր։ Նա մօտեցաւ ինձ։

— Էս օրերում, էս տեղերում ոչ մի ֆլա սիրտ չէը անում երեւալ, ասաց քիւրդը. դու բարի պտուղ չես երևում. ով ես, ուր ես գնում։

— Քիւրդ, ասացի. ժամանակները վատացել են, բայց մի մոռացիր, որ մենք հարևաններ ենք. քեզ իբր հարևանի ասում եմ, որ ես խութեցի եմ, մեր կողմերում սով է, այդ խօմ գիտես. Դերջան եմ գնում երեխաներիս համար մի քիչ հաց ճարեմ. թող ինձ հանգիստ անցնեմ գնամ։

— Չէ՝ ֆլա՝ խափել չես կարող ինձ՝ դու քաջի պտուղ չես։

—Քիւրդ, Աստուած ունիս, ինչպէս տեսնում ես՝ վրաս զէնք չունեմ, գրպանումս դանակ չկայ, թէ գազան էլ դառնամ, երկու ձեռով ինչ կարող եմ անել. ազաչում եմ քեզ, թող անցնեմ, գնամ։

—Առաջ անցիր, քեզ գայմագամին պիտի տանեմ։

Գայմագամին...Այս արդէն սարսափելի էր, որովհետև մեզ վաղուց վնտռում էին։

—Քիւրդ, գայմագամին մի տար ինձ. թէև դրանից իմ անձին վնաս չկայ, բայց կ'ուշանամ, երեխաներս մեղք են, սովից կը մեռնեն. Աստուծու սիրուն, քիւրդ, բրա*), թող ինձ երթամ։

Քիւրդն անողոք մնաց։ Ճակատագիրս է, մտածեցի ես և զբոսիս քաշ արած, առաջ անցայ, Ի՞նչ կարող էի անել, ուժը նրանն էր, հրացանը նրա ուսին էր, դաշոյնը նրա գօտկումն էր, թուրը նրա կողքին, ինչ անէի երկու ձեռքով, Ճակատագիրս էր։

Գնացինք։

III.

Շուրջս ամէն բան գեղեցիկ էր. արևը պայծառ, երկինքը պարզ, լեռները կանաչ, ծաղիկներն անուշահոտ, օդը թռչուններով լի, ամէն կողմ կեանք, խնդութիւն։ Վերև, շատ վերև՝ օդի մէջ ճախրում էր մի արագիլ, ազատ, համարձակ։ Ես չգիտեմ ինչու, իմ վիճակի բոլոր սարսափը մոռացած, նայում էի այդ թռչունին անթարթ, երկար։ Նախանձում էի արդեօք, թէ ուրիշ մի բան կար, որ գրաւում էր ինձ, ես այդ չգիտէի, բայց նայում էի։ Երկար ճախրում էր արագիլը, մէկ էլ յանկարծ սկսեց պտոյտներ անելով դէպի վար իջնել և շեշտակի թափով ձգեց իրեն մեզանից շատ մօտիկ մի բլրի վրայ։ Ես հետևում էի. այնտեղ մի մեծ օձ կար, ուրեմն նշմարել էր արագիլը։ Թռչնի թևերի շփշփոցից սողունը կըծկուեց, գլուխը թաղցրեց մարմնի օղակների տակ։ Սկսեց մի սարսափելի կռիւ։ Մենք երկուսով էլ կանգ առանք։

—Տեսնում ես, ասաց քիւրդը, ֆլան որ կայ օձ է, այսպէս

*) «Բրա» - եղբայր։

պէտք է ջախջախել նրան։

Ես պատասխան չունէի. ես դիտում էի։ Արագիլն իջնում էր, կտցով հարուածում օձին և վրայից անցնում, այդ ժամանակից օգուտ չունենալով՝ օձն աշխատում էր փախչել, բայց հազիւ մի քանի օղակ արած, սարսափելի թշնամին սաւառնում էր նրա գլխին, օձը կրկին կծկուում էր, կրկին ծածկում էր գլուխը։ Իրաւունք ունէր քիւրդը, իմ և օձի վիճակի մէջ մեծ նմանութիւն կար։ Օձի էլ ճակատագիրը հասել է, էլ փրկութիւն չունի, մտածեցի ես։ Այս միտքը նոյնիսկ ինձ մի փոքր մխիթարում էր։ Կամաց կամաց արագիլն աւելի յանդգնեցաւ, հարուածներն աւելի յաճախ և մահացու դարձան. վերջ իվերջոյ օձին արդէն բաւական թուլացած համարելով՝ նա ցած իջաւ նրա կողքին և արդէն շուրջը քայլելով՝ երկար կտցով վերջին հարուածներն էր տալիս։ Օձը շարունակում էր գլուխը թաղցրած պահել, շարունակում էր բան երևոյթին թոյլ թոյլ պաշտպանուել։ Արագիլը խիստ մօտ էր նրան այժմ։ Մէկ էլ յանկարծ մի զարմանալի բան պատահեց։ Այդ կիսամեռ սողունը վերջին ճիգերը հաւաքեց. դուրս հանեց գլուխը, բացեց իր օղակները, պոչի վրայ ցցուեց, ձգուեց ինչպէս մի խարազան և մահացու օղակներով արագիլի երկար վզին փաթաթուեց։ Դուր անցան արագիլի ջանքերը դուրս կորզելու իր վիզն այն մահաբեր օղակներից։ Նա թևերը թափթափ էր տալիս, կտուցը դեռնին քսում, յետ յետ էր քաշում. առաջ անցնում, դեռին թաւալում, փորձում էր վեր բարձրանալ, թռչել՝ փախչել, ապարդիւն ջանքեր... Օձի յաւաճատ կատաղութիւնը դարհուրելի էր. նրա օղակները սղմում էին ու սղմում, և վերջ իվերջոյ թռչունը փուլեց բլրի կրծքին անկենդան... Օձը քաշուեց, անյայտացաւ։

IV.

Քիւրդը լուռ էր այժմ։ Նա նայեց ինձ, մեր աչքերն իրար հանդիպեցին և մի քանի վայրկեան մենք անկարող եղանք հեռացնել իրարից մեր հայեացքները։ Մեզանից իւրաքանչիւրը աշխատում էր

հասկանայ, թէ ինչ է մտածում իր հակառակորդն այդ բոպէին։ Ոչ մի կասկած չկար, որ երկսիս գանգերի մէջ եռացող մտքերն էլ միմեանց վերաբերմամբ ոտաւոր էին։ Այդ մենք հասկանում էինք, կարդում էինք իրար աչքերում փոխադարձաբար։ Ես հասկացայ, որ այդ գագանը օձի անակընկալ յաղթանակով կատաղած՝ որոշել է ինձ սպանել։ Այդ ես շատ լաւ կարդացի նրա աչքերում, որոնց արտայայտութիւնը այժմ աւելի չարագուշակ էր. օ, ես ճանաչում էի քիւրդի աչքերը։ Բայց ես էլ էի մտածում։ Օձի և արագիլի կռիւը իմ մէջ էլ մի փոփոխութիւն առաջ բերեց։ Ես դեռ երբէք չէի լսել, թէ օձը արագիլին կարող է խեղդել. յայտնի է, որ արագիլն է օձի մահաբեր թշնամին, նրա մարմնացած ճակատագիրը. այդ ինչպէս պատահեց, որ այսօր այդ ճակատագիրը սխալ դուրս եկաւ։ Աստուած, որ թոյլ չի տալիս օձի նման զզուելի սողունն անգամ անարգար զոհ դառնայ արագիլին, նոյն Աստուածը մի՞թէ պիտի թոյլ տայ, որ այդ քիւրդը, օձից ատան անգամ զզուելի այդ արարածը, իմ ճակատագիրը անօրինէ։ Չէ ճակատագիրը սխալ է, մտածեցի ես... պիտի ճար տեսնել։

Եւ ես սկսեցի մտածել երկար, երկար... Հնարք էի փնտրում. բայց ինչ հնարք, մի դանակ էլ չունէի։ Այդ բոպէին աչքս ընկաւ քիւրդի այն սիրուն դաշոյնին, որ խրել էր իր գօտին... Ա՜խ, գոնէ այն իմ ձեռքում լինէր, միայն այն։

—Գնա՛, որոտաց քիւրդը, ինչ ես կանգնել։

Ես շարժուեցի. մենք մտանք մի ձոր, խուլ, ամայի ձոր։ Քիւրդն սկսեց իր շուրջը նայել. նրա շարժուձևերն անհանգիստ էին, երևի չարագործն էլ իր անմեղ զոհի առաջ վճռական բոպէին դէթ մի փոքր զղջալ գիտէ։ Նա յաճախակի ցած էր առնում հրացանն ուսից, կրկին ուսն էր ձգում։ Ես զգացի, որ մօտ է վախճանս, բայց այլևս չէի ուզում մեռնելը. երբ օձն ապրելու իրաւունք ունի, մարդը չի կարող այդ իրաւունքներից զրկուած լինի։ Ես կամաց կամաց քայլերս նւազեցրի։ Ես անելիք ունէի. ինձ համար անհրաժեշտ էր որ քիւրդի առջևը չլինեմ, դա աւելի վտանգաւոր էր։

—Շուտ արա, գնա, շտապեցնում էր քիւրդը։ Նա աշխատում էր անդադար, որ ես իր առջևը լինեմ. այդ ես զգում էի. իսկ ես աշխատում էի նրա հետ հաւասար գծով ընթանալ։ Կարծես թէ մենք հասկանում էինք իրար. մենք լուռ կռուում էինք, կեանքի ու մահու կռիւ, որ ոտաւոր էր մանաւանդ իր դաւաճան խորհրդաւորութեամբ...

Ես կանգ առայ յանկարծ. պէտք էր արեխիս թելը պնդացնել։ Քիւրդը հասաւ ինձ, նոյնպէս կանգ առաւ։ Ես առանց գլուխս բարձրացնելու վարից դիտեցի նրա դիրքը. նա իմ աջ կողմն էր ցցուած. դաշոյնի սպիտակ կոթը երևում էր գօտկի միջից։

—Շուտ արա, պրծի՛ քեզ, կանչեց նա զայրացած, տեսնելով իմ դանդաղկոտութիւնը։

Ես յանկարծ գլուխս բարձրացրի, քրտի գօտկից վայրկենապէս դուրս քաշեցի դաշոյնը, և մինչև որ նա ապշած ու սարսափած պաշտպանուելու որ և է փորձ կ'անէր, փայլուն դաշոյնը մինչև կոթը ուռագին թափով նրա կուրծքը մխեցի։ Վայրենին ոռնաց և գետին գլորուեց... Ես փրկուած էի։ Այո՛ այն փրկարար դաշոյնը...

Խայը դուրս քաշեց իր գօտուց մի փոքրիկ կոթով դաշոյն ու դրեց բազմականների առաջ։ Ճրագի առաջ փայլուն պողպատը պաղպաղ փայլ էր արձակում։ Ամենքը՝ ծնկների վրայ ընկած, լուռ դիտում էին այդ ոտաւոր գործիքը, որ մարդկային անզօր ձեռներում լուծել էր ճակատագրի բարդ հանգոյցը։ Փոքրիկ, կորած, ողորմելի Խայը հսկայ զարձաւ ամենքի աչքին. նա «ազգանայ» էր. նա իշխում էր իր ճակատագրի վրայ, ծաղրում էր բախտը։ Նա իրաւունք ունէր։

—Ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց վերոտին Խայը վեհ յամառութեամբ. բայց այդ բառերն այս անգամ ծիծաղ ու զայրոյթ չառաջացրին, այլ պատկառանք ու մտքեր, մտքեր, փրկարար մտքեր, ազատիչ մտքեր, արբազան խորհուրդներ։

Խայը վերցրեց իր դաշոյնը, գօտիկը խրեց, դուրս գնաց գոմի դռնից, բազմականները մնացին լուռ...

44. ԴԱՐԲՆԻ ԵՐԳԸ

Առաջ, եղբարք, երկաթ կռենք,
Թող դողդողայ մեծ սալը.
Շանթի տարափ մեր շուրջ փռենք,
Լուսաւորի աշխարհը։
Մենք բնութեան առողջ գաւակ
Քրտինք թափենք—սև արիւն,
Ջլուա բազկով ճարենք վաստակ,
Մօտդաջ չլինենք թշնամուն։
Առաջ, եղբարք, էլ կանգ չառնենք,
Մօտ է ահա լաւ օրը.
Այնպէս թափով սալին դարնենք,
Որ դողդողայ աշխարհը...



Դիտեցէք այս պատկերը. ինչու կատուն բարձրացել է էշի վրայ. ինչ է անում էշը. ինչ է անում կատուն. պատմեցէք ձեր դիտածը և գրեցէք։

46. Էս եմ

—Պապի՛, պապի, վայ. պապի, խնձորս խլեց Ամբօն,ոտները տափը թակելով բղաւեց Գուրգէնը։

—Ամբօ, այ տղայ, հերիք չի՞ քեզ .. Զալը խօ չեմ ..

—Պապի, իմն էլ է խլում, լացախառն մրմնջաց Զարիկը։

—Պապի, իմի էլ կէսն է առել, գանգատուեց Համիկը.իսկ Պապն Ամբօն կանչեց իրեն մօտ, առաւ նրա բաժին խնձորը, երեք կէս արաւ,տուաւ զրկւածներին ու ինքն իրեն փքափսաց.

—Խոփդ սուր է,ամա հանդը բաժնովի։

—Պապի,էդ ի՞նչ ասել է՝ խոփդ սուր է,հարցրեց Համիկը։

—Է՛հ, էդ հին զրոյց է, Համիկ, դեռ խնձորդ կեր...

—Պապի, մի նաղլ ասա՝ հա՛, պապի հա՛..

—Հա՛, հա՛. պապի մի նաղլ, մի նաղլ,արձագանքեց երեխաների ճիչը։

—Լա՛ւ, լա՛ւ, կ՚ասեմ, ականջս խլացրիք. ասաց պապը, զլուխը այս-ա՛յն կողմ տարուբերեց ու քաշ գցեց. փոքրիկ Համիկը նրա գոգում նստած տեղը պար էր գալիս ու շարունակ թախանձում։

—Շատ հին է հա՛ .. սկսեց։

—Էն ժամանակ ո՞վ էր հարցնում իրաւունք ասած բանը. ով ուժով էր, ինչ կար-չկար, գաւթում էր։ Թոյլը ուժովի նօքարն էր. նրա հպատակը։ Ահա էդ ժամանակ մեր գեղումն էլ մի անօրէն ուժի տէր մարդ կար.ուժ եմ ասում՝ է՛...էս գերանը մենակ կը տանէր, ասաց պապը ցոյց տալով հին տան ծխամած գերաններից ամենահաստը։—Ինչ կ՚ուզէր, կ՚անէր, ո՞վ էր առաջը կարողը ում ուզէր, ինչպէս ուզէր,

կը պատժէր,ով էր ձեռը բռնողը։ Հողի լաւ տեղերը ու ինչ-
քան ուզէր, նա էր վարում. ով եզն ունէր, նրանն էր, ում
հրամայէր, կը գնան՝ նրա համար վար կ՚անէր.ում ամբարը
դատարկ լինէր, նրանը խօ լիքն էր,ամա մենակ իր համար.
Մի ձի էր պահում ու մի նեռ աղեղ. որս անել շատ էր սի-
րում, օրերով գաշտից տուն չէր գայ. նրա ձիու ուտելիքը
գարունքից բռնած մինչև հունձը մեր պապերի արան էր
լինում. որտեղ լաւ բուսած, կանաչ արտ տեսնէր, ինքը կը
պառկէր ու ձին մէջը կ՚արձակէր. ով կարող էր խօսել. իսկ
ձմեռը խօ նրա գարին սաղ գեղի գարու չափ կը լինէր. մի
խօսքով մի անաստուած։ Անունը Զալ էր,իր անօրէն գործե-
րը կատարելիս էնքան « Ես եմ Ես եմ» էր ասել, որ մեր պա-
պերն անունը «Ես եմ» էին դրել։

Մեր պապերն կը գնային, որ հասած արտը հնձեն, կը
տեսնէին կոխ ուած, տրորած, փչացրած։ Մեր պապերը կը
գնային, որ իրենց տափը վարեն, տեսնում են վարած, ցե-
րած. ով է արել, ով չէ արել, Եսեմն է արել ու կը պապան-
ձէին ամենքը։Հարսներն էլ նոյն իսկ Եսեմի կնոջ ձեռքին ե-
սիր էին. նրա համար մանում էին, գործում, աշխատում։
Աղբիւրումը, Աստծու ուած ջրի մօտ ով կը համարձակուէր
Եսեմի ձիուց առաջ իր ձիուն ջուր տալ, կամ նրա կնոջից
առաջ որ հարան էր, որ իրան կուժը կարող էր լցնել։ Մի
խօսքով, Եսեմը մեր պապերի համար պատիժ էր։

—Մեր պապերը սիրտները թագում էին, էդ անխիղճ
Եսեմի ձեռքից կրակն էին ընկել։

—Մի հալալ, հալալ եմ ասում՝ Է... մարդ կար էդ ժա-
մանակը. խեղճերի պահապան, անտէրների տիրական, որ-
բերին հայրն ու ամենին սիրելի մի խղճմտանքով բարեհոգի։
Նա շատ էր արդար, նրա անունն Իրաւունք էր։

Եսեմն արդար Իրաւունքի թշնամին էր։

Իրաւունքը գեռ ջահել,25-ին մօտ երիտասարդ էր, հեզ,

խոնարհ, աչքերը մի—մի ծով,արեգակը միջին. գնացքը ան-
մեղ, խօսքերը կակուղ, լեզուն քաղցր, մի խօսքով մի հրեշ-
տակ։ Սաղ աշխարհումս անգութ Եսեմը մենակ Իրաւունք-
քից էր, որ քաշւում էր, վախենում էր. մենակ Իրաւունքի
առաջն էր, որ լեզուն կապւում էր։

Իրաւունքը տեսնում էր, մեր գեղացոց տանջելը, ցաւն
ու պատիժը. տեսնում էր, սիրտը մորմոքում. կանչում էր
բոլորին, հաւաքում, խօսում, խրատում. —«Ա՛յ ախպէրներ,»
ասում էր նա, մենք մի գեղ, նա մի մարդ, ինչ էք կուչ
եկել,գերի դառել.մի միտք արէք. Աստուած մեզ նրան նօքար
խօ չի՞ ստեղծել...» Լսում էին ամենքը։ Իրաւունքի խօս-
քերն էնպէս էր ազդում խալխի սրտին, ինչպէս երաշտ տար-
ուայ յուլիսի անձրեւ ցամաք ցեղին. բայց ինչ կ՚անես,Իրա-
ւունքին չէին լսում, Եսեմին չէին կարողանում հակառա-
կել։ Իրաւունքը շատ ասեց, շատ խրատեց, բայց չեղաւ ու
չեղաւ. խեղճը ճարը կտրած՝ թողեց ամեն բան, մարդկան-
ցից քաշուեց։

—Տեսել էք ձորի ջրադացը, երեխէք։

—Հա՛ պապի, էն ձորի ջրադացն ես ասում, վրայ բերին
երեխէքը։

—Հէնց էն, հէնց էն. վերջը ճարը կտրեց, գեղը թողեց,
գնաց էն ջրադացը շինեց ու ջաղացպան դառաւ...Իրաւուն-
քը ջաղացպան դառաւ, ասաց պապը ու գլուխը նորից քաշ
գցեց։—Եսեմը, ես էլ չգիտեմ թէ ինչպէս եղաւ, մի պարկ
ցորեն գրաւ. ուսին ու տարաւ արաղաւ։ Հպարտ ու գոռոզ
բայլերով մտաւ ջաղացը. նա չէր իմանում թէ ջաղացպանն
ով է, սկի մաքսին ինչ էր կենում, որ Իրաւունքը կարող
է ջաղացպան լինել...

Քարը գրռռում է, պտտւում, ջուրը գոռում վազում,
ալիւրը բարակ խաստ պէս ալրատուն թափւում. Իրաւունքն
էլ ալրատան փէտին նստած, ջաղացի պտտելուն է նայում
շաղուռնակ։ Էդ ժամանակ Եսեմը ներս մտաւ, ու —Ես եմ,

գոռաց՝ իմաց տալով, որ Եսեմն եկել է, էլ ինչ հերթի հարց կարող է լինել, շուտ անի, ցորնատաշտը ցորենն առանց աղալու դատարկի ու իրենը վրան ածի։ Իրաւունքը յետ նայեց։ Նրանք իրար ճանաչեցին և աչքերով իրար ուտում էին։ Ջաղացի խռոռոցը չի թողնում, որ Իրաւունքը Եսեմի ձայնը լսի, ինչ որ փնթփնթում էր։ Իրաւունքը ձեռքը հանդարտ մեկնեց դէպի պտտւող քարը ու ձեռքը դրաւ պտտւող քարին. քարը կանգնեց. նրա թուփը մի գետ ջուր է պտտացնում, ամա կանգնեց՝ գրռռոցը կտրեց։ Եսեմը զարմանքից քար էր կտրել ու պապանձւել. նրա պռոշը ճաքեց. ջաղացի պտտւող քարը մարդու ձեռքի տակ կանգնի՞...,

Իրաւունքը ձեռքը քարին, հարցմունքով յետ նայեց.

—Էդ դու ե՞ս, ինչ ես ասում, Եսեմ։

Եսեմը կակազեց «Ես եմ, ասաց նա. ամա առաջ դու ես, յետոյ ես». ու դլուխը քաշ գցեց։

Եսեմն յաղթւեց, երեխէք։ Համիկն էլ չհամբերեց, նա փաթաթւեց պապին։

—Քարը կանգնեց, պապի, հարցրեց։

—Քարը կանգնեց բա՛, Իրաւունքի ձեռքի տակ ջաղացի պտտւող քարը կանգնեց. մի գետ ջուր է, մի գետ ջուր կար նրայ վրայ թողած...

Եսեմի ասողը ծոմն ընկաւ. բախտի կծիկը յետ էր տալիս։ Մեր պապերն էլ հէնց էդ ժամանակ Եսեմի չարչարանքները տանել չէին կարողանում, համբերութիւնները հատել էր, էսօր էգուց էին անում, որ մի հնարքով նրա ձեռքի տակից ազատւեն։ Ջաղացի պատահմունքն երբ որ լսում են մէր, մանուկ՝ ամենքը, գեղում էլ երկու ոտնանի չմնաց, բոլորն էլ գալիս ու Իրաւունքի ջաղացի դուռը կտրում են... «Մեր ձեռն է քո փէշը, ասում են, եա մեր ձեռը կտրի, եա քու փէշը»։ Գնանք գեղը, ասում են, Եսեմի համար մի հնար գտնենք ու խնդրում են, աղաչում՝ պաղատում։

—Բերի՞ն, պապի, եկա՛ւ, անհամբեր կերպով՝ հարցրին

երեխէքն ամեն կողմից։

Բերին, բաս չբերի՞ն. մէջներն առած, իրանք չորս կողմը կտրած, եկան գեղամէջ ու «Մեր տերը դուռ ես ու դուռ ես» ասացին. Իրաւունքն էլ նրանց օգնելու համար պատրաստ էր։ Բոլորն էլ հաւաքւեցին. էն ժամանակւայ մեր պապերը, խելօք, իմաստուն պապերը հաւաքւեցին, որ մի օրէնք գտնեն Եսեմի համար, հա՛, մենակ նրա համար չէ, Եսեմի պէս անխիղճ մարդկանց համար։

Շատ միտք արին, չափեցին, ձևեցին, Իրաւունքն էլ նրանց հետ խելք խելքի տւին և էս օրէնքը դրին.—*Խոփդ սուր է, հանդը բաժնովի»։* Իրաւունքի միտն ընկաւ ջաղացի անցքն ու իրան կողմից աւելացրեց —«*Առաջ դու ես յետոյ ես»։*

Համիկը բերանբաց դիտում էր Մաթոս ամու բացուխուփ անող բերանին։ Մաթոս ամին աչքը ձգեց խնձորներ խլող Ամբօին և դլուխը արմբ-արմբացնելով ասաց.

—*Խոփդ սուր է, հանդը բաժնովի, առաջ դու ես, յետոյ ես* ու մեր պապերն էս օրէնքն իրանց օրէնքի գրքումը դրեցին ու մինչև էսօր էլ պահում են. Եսեմի կռները կորրաւեցին, էլ առաջւայ Եսեմը չէր, էլ առանց Իրաւունքի ոտն ոտի առաջ չէր գնում։ Իսկ իրաւունքին փառք ու պատւով պահեցին... վերջացրեց պապը։

Շարան, Շարան ամպերն եկան,
Ա՜խ, մուժն առաւ իմ ճամբէն.
Ո՞ւրտից կը գամ, ուրտեղ կ'երթամ,
Միտքս շատ, չգիտեմ։
Սար ու ձորեր ձիւնն է իջեր,
Քամին պաղ պաղ կը փչէ,
Ես մենակ եմ, ես անընկեր,
Քամին ճակտիս կը փչէ.
Շարան, շարան, ամպերն եկան,
Ա՜խ, մուժն առաւ իմ ճամբէն.
Ո՞ւրտից կը գամ, ուրտեղ կ'երթամ,
Միտքս շատ, չգիտեմ։



Տարեայ մը ժամանակն է.
Ինչ է անում Թռչնիկը։

Ի՞նչ է անում աղջիկը։

Ի՞նչպէս է կիբակրում
աղջիկը։

Ի՞նչու է վանդակի դուռը
բացում։

Տարեայ մը ժամանակն է.
Ինչ է անում Թռչնիկը։

Տարեայ մը ժամանակն է։
Ցաւ է եկել Թռչնիկը։

Հէյ արարածներ, ամբանց արէք
Թարգմանութիւն ազգերէն,
Արքուն տիկնայք, գաւիլ, գողիք,
Լաւ ուշէ դրեք իմ խօսքիս։

Ինչ ամիսներ կան իմ կեանքում
Որ Ձմեռներս տուշ օրից,
Հրջոյլ գայիս ուշ իմ կիսում
Էս ուշատոր ապրուստիս։

Անոց իմ կիսում ամբ ու խաղում,
Ցիրուցանկութիւն, գանց ու. գան,
Մանր մրրիկ է, մրրիկ ճանիրը,
Սարդու գորձն է միայր ուժան։

Գորձն է ուժան, լաւ իմանայք,
Որ խօսում է դարերդար,
Քրիստէ նրանց, որ իր գորձով
Կարդրի ազգերց, աշխարհար։



50. ՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

— Զարմանալի կենդանիներ են շները, ասաց Հայկն ընկերներին. ինչքա՞ր ասես՝ չեն պատմում նրանց մասին։

— Հետաքրքիր է, Հայկ, պատմիր, պատմիր՝ լսենք, խնդրեցին մյուսները։

— Շատ լա՛ւ, ասաց Հայկն ու սկսեց.

Այսօր ուսուցիչը մի յօդուած կարդաց. մի տան տէր մի քանի

օր իրար վրայ նկատում է, որ սեղանի վրայ դրած մսի կտորն անյայտանում է։ Նա հետևում է և համոզւում, որ իր շունը կամ կատուն պէտք է արած լինեն։

Մի օր էլ դրսից լուսամուտի վարագոյրի արանքով թագուն նայում ու դիտում է։ Կէս ժամ չէր անցել, ասում է տէրը, շունը տեղից վեր կացաւ, մօտեցաւ լուսամուտներին, գոներին և ականջ դրեց։ Երբ համոզւեց որ ձայն չկայ, մօտեցաւ կատուին և դնչով խփելով՝ սեղանին նայեց։ այստէղ մի քանի անգամ կրկնեց։ Կատուն հանկարծ շան միտքը, թռաւ սեղանի վրայ և առպահած միսն առած՝ նեղքն ցատկեց։

Շունն իսկոյն վրայ հասաւ, միսը խլեց նրանից և սկսեց ուտել։

Տէրն իմաց է տալիս ծառային, որ գուռը բաց անէ. երբ շունը դռան ձայնը լսում է, իսկոյն մսի կտորը բերանից դցում է և հաչելով՝ կատուի վրայ է յարձակւում։ Տէրը շան խելօքութեանը հաւանելով՝ նրան ներում է։

Մի մայր էլ ջրի է գնում. տանը ոչ ոք չի լինում. մայրը գառնալով շանն՝ ասում է.— Արաբ, Հրանդի քով կաց և լաւ նայիր։ Քիչ յետոյ շունը տեսնում է, որ մի օձ սողալով ներս է գալիս և սողում է դէպի երեխայի օրօրոցը։ Արաբն իսկոյն յարձակւում է օձի վրայ և նրան մի քանի կտոր անում։ Շատ հաչոցից երեխան տեղից վեր է թռչում և օրօրոցից ներքև ընկնելով՝ լալիս, լալիս՝ քնում է։ Արաբը մանկան մօտ նստած, հսկում է։ Երբ մայրը ներս է մտնում և տեսնում է երեխան օրօրոցից վայր ընկած, շան բերանն էլ արիւնոտած՝— Որդիս, որդիս, գոռալով՝ ուշաթափւում է. երեխայի լացն ու սղոցակը վերջապէս մօրն ուշքի են բերում. երբ նա տեսնում է սպանուած օձին, նոր հասկանում է շան քաջագործութիւնը։

— Մեր փոքրիկ Զալումն էլ խելօք է, մէջ մտաւ Օնդիկը։ Մի անգամ մայրս տանից դուրս գալիս ասում է.— Զալում, երեխի մօտ կաց, մինչև վերադառնամ։ Զալումը մնում է. քիչ յետոյ, երբ երեխան լալիս է, Զալումը մօտենում է նրան, ձեռները լիզում է, ցածր հաչում է, հեռը խաղալ է ուզում, որ մանուկը ձայնը կտրէ. երբ

տեսնում է, որ չի լինում՝ վազում, բերում է բագում թագցրած իր օգերը և նրան տալիս։ Մայրս վրայ է հասնում և ծիծաղում է Զալումի արածների վրայ։

—Դրա համար բաներ ես շատ եմ կարդացել, մէջ մտաւ Միրուշը. օրինակի համար՝ մի վարժեցրած օրսի շուն ամեն առաւօտ շուկայից հաց, միս, ծխախօտ և այլ բաներ էր բերում։ Մի օր էլ հացթուխը փուրձելու համար՝ շանը թոնրից նոր հանած տաք հաց է տալիս։ Շունը բարկացած հաչում է նրա վրայ, փոշն առնելով հեռանում է և էլ նրա մօտ չի գնում։ Մի անգամ էլ այդ շան տաքած կաթսայը ճանապարհին բացւում է, միջի միսը, գինու շիշը ներքև են ընկնում։ Շունը որչափ աշխատում է, չի կարողանում առնել, ստիպւած՝ մօտը կանգնած պահում է։ Տէրը զարմանում է, թէ ինչու շունն այսչափ ուշանում է. դրա համար գուրս է գալիս և ինչ է տեսնում։ Իր շան չորս կողմը մի քանի շներ հաւաքւած՝ ուզում են նրանից միսը խլել, իսկ սա կատաղի կերպով պաշտպանում է և չի թողնում իրեն մօտենալու։

—Մեծ գամբռներն էլ խելացի են, ձայն տւեց Աշոտը։ Գիւղում ինձ ցոյց տւին երկու մեծ գամբռ, իսկ և իսկ պայլխեզդոզներ։ Տէրը մէկը հինգ ոչխարի հետ չէր փոխում։

—Այս գամբռներն են իմ տունն ու տեղը պաշտպանում, ասում էր աէրը. սրանք ոչ միայն գայլերի հետ են կռւում և նրանց պատառում, այլև ամենակատաղի աւազակների դէմ և նրանց ձիուց վայր են բերում։

II.

Շները շատ լաւ, հետաքրքիր և զարմանալի պատմութիւններ ունին, մէջ մտաւ նորից Հայկը. ինչպէս օրինակ՝ որսի, հրդեհի, կրկէսներում խաղացող և այլ տեսակ շներ. բայց իմ կարծիքով ամենքից հետաքրքիր են Ս.Բերնհարդի մեծ մեծ շները։ Սրանք բուք ու բորանից մարդկանց կեանքն են ազատում

—Պատմիր, պատմիր մեզ նրանց մասին, ամեն կողմից կրկնեցին մանուկները

—Ս. Բերնհարդի վանքը, սկսեց Հայկը, գտնւում է Շուէյցարիայի լեռներից մէկի վրայ։ Այնտեղ մինչև անգամ ամառւայ տաք օրերին յոնկարծ ձիւն, կարկուտ է գալիս, բուք ու բորան է լինում և ճանապարհորդներին տակովը անելով՝ խեղդում է։ Վանքի վանականները պտտում են այդ խելացի մեծ շներին և նրանցից օգտւում են, մոլորւածներին ազատում են։

Ա՛յ թէ ինչ է պատմում մի փոքրիկ ճանապարհորդ։

— Ես հօրեղբօրս հետ գնացի Ս. Բերնհարդի վանքն ուխտաւորներին տեսանք այդ ուժեղ, գեղեցիկ, մեծ մեծ շներից մի քանիսին։ Նրանց վզերից կախած էին զոնազան ուտելիքներ ու օգելից խմիչքներ։ Նրանք ժայռերի, ձորերի և ձիւնների մէջ ման էին գալիս, որ մոլորւած ճանապարհորդներին կամ ձիւնի տակ մնացողներին ազատեն և վանքն առաջնորդեն։ Մենք վանքումն էինք, երբ մէկ էլ մի շուն ներս ընկաւ և հաչելով հասկացրեց, որ օգնութեան կարիք կայ։ Վանականի հետ ես ու հօրեղբայրս դուրս եկանք և գնացինք նրա յետևից։ Խելացի կենդանին առաջ ընկած՝ հաչելով գնում էր և մէկ մէկ էլ մեզ էր նայում, որ տեսնի թէ իրան հետևում ենք, թէ ոչ։ Բաւական տեղ անցնելուց յետոյ նա կանգնեց մի բլրի մօտ և թաթերով ձիւնը յետ արեց։ Մենք նրան օգնեցինք, ձիւնը մի կողմ արինք և երկու մարդ տակից գուրս բերեցինք։ Խմիչքներ տալով, մարմինները շփելով, ուտեցներով մի կերպ նրանց ուշքի բերինք և վերադարձանք վանք։ Դեռ չէինք հանգրստացել, որ մի այլ շուն հաչելով ներս ընկաւ, նրա յետևից էլ մի կին։ Սա արտասուելով պատմում էր, որ իր տաք տարեկան օրգին ձորից ներքև գլորւեց ձիւնների մէջ և էլ չերևաց։ Երկու ժամ չէր անցել, որ վանականներից մէկը շան հետ միասին ներս մտաւ և անմխիթար մօրը յանձնեց իր որդուն։

Վանականներն այդ շների մասին մեզ շատ բաներ պատմեցին։ Նրանցից մէկը՝ Բարրին նոյնիսկ քառասուն մարդ էր ազատել և դրա համար շքանշան ստացել։

51. ԻՆՉ Է ԽՈՍՈՒՄ ՍԵՆԵԱԿԸ

I.

Գիշեր էր, Վահանի քունը չէր տանում. նա անկողնու մէջ այս ու այն կողմն էր շրջւում և անդադրիտ շարժւում։ Յանկարծ նա սենեակի մէջ լսեց չիչիկոց, թիթիկոց և գոնդոան ձայներ։

—Ի՞նչ ձայներ են, ո՞վքեր են խօսողները, մտածում էր Վահանը. նա լսեց և ծածուկ ականջ դրեց։—Ա՛յ քեզ բան, աթոռներն են խօսում, ասաց նա ինքն իրան։

—Սպասեցէք, պարոններ, բոլորս միանգամից չենք կարող խօսել, գոնայ մի աթոռ. եթէ ուզում էք, դուք լռեցէք, ես ձեր բոլորի ցանկութիւնը կը կատարեմ և ամեն ինչ կը պատմեմ։

—Պատմիր, պատմիր, ասացին ամեն կողմից աթոռները։

—Մենք բոլորս գեղեցիկ կեչի ծառեր էինք, սկսեց աթոռը. մեր մանկութեան ժամանակ ամեն ինչ լաւ էր, մենք անտառում ուրախ, զուարթ էինք։ Արեգակը մեզ տարացնում էր, անձրևը ջրում էր, թռչունները մեզ վրայ բներ էին շինում, քաղցը երգեր էին երգում։ Գիւղի աղջիկները, ազատները քանի՞ քանի՞ անգամ մեզ մօտ էին գալիս, մեր տաւերի մէջ հանգստանում, զովանում և կուշտ շունչ քաշելով ասում էին.— Ի՞նչ հիանալի են բուրում այս կեչինները, յիշում էք ընկերներ։

—Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ, պատասխանեցին աթոռները։

—Բայց մենք անտառում շուտով ճանձրացանք. շատ անգամ դժգոհելով՝ մէկ մէկու ասում էինք. ինչ է, շարունակ միևնոյն տեղումն ենք ապրում. ինչու՞ պէտք է հեռու չգնանք, նոր աշխարհներ չտեսնենք։ Մեր ցանկութիւնը շուտով կատարուեց. մի օր էլ դիւղացիք եկան, կացիններով բոլորիս կտրեցին և տարան քաղաք հիւանդին վաճառեցին։ Նա մեզ ուրագով տաշեց, հարթիչով հարթեց, սոսինձով իրար կպցրեց, աղորկեց, լաքեց և շինեց աթոռ։ Մենք մարդկանց

մօտ շատ պատիւ ունինք. հէնց որ յոգնում են, նստում հանգստանում են. կեցցենք մենք, այնպէս չէ։

—Կեցցենք, կեցցենք, ձայն տուին բոլոր աթոռները։

—Ի՞նչ էք այդչափ պարծենում, ասաց սեղանը, աւելի շուտ ես իրաւունք ունիմ պարծենալու, ոռվհետև ես ձեզ նման հասարակ կեչուց չեմ շինուած, այլ մեծ և ամուր ընկուզենուց. տեսէք, իմ երեսն այնպէս ողորկ է, հայելու նման փայլում է. հիւանը ինձ ոչ միայն լաքել է, այլև ապակեայ թղթով մաքրել, կոկել է և փայլեցրել։ Այստեղ միայն ես և այս շարքերի պատարանն ենք հարազատ եղբայրներ՝ ընկուզենուց շինուած, կոկուած, փայլեցրած։

Մի՞թէ, մի՞թէ, ծիծաղեց մի աթոռ. եթէ այդպէս է, ապա ինչու՞ նա մէջքը պատին է կպցրել. կարծես մենք չգիտենք, որ նրա մէջքը ոչ փայլուն է և ոչ էլ ընկուզենուց շինուած, այլ ուռենուց, ամենահասարակ ուռենուց։

—Զայնդ կտրիր, անպիտան, ասաց պատարանը. ինչպէս ես համարձակւում ինձ պէս մի ծերունու մասին այդպէս խօսել. մի՞թէ ուռենին էլ ծառ չէ, ինչպէս ընկուզենին կամ կեչին. ինչ անենք, թէ մի փոքր թոյլ է։ Ես տան ամենահաստատարիմ բարեկամն եմ. ամեն տեսակ շոր իմ մէջն են պահում և ես չեմ թողնում, որ այնտեղ փոշի, ցեց մտնի և գոդն էլ գողանայ։

II

Յանկարծ յատակի վրայ մի բան զրնգաց. այդ ո՞վ է, մտածեց Վահանը և գլուխը քիչ բարձրացնելով՝ տեսաւ պատարանի բանալին։

—Ի՞նչ էք պարծենում դուք, փայտեայ ժողովուրդ, ասում էր բանալին։ Ես փայտից չեմ շինուած, այլ երկաթից։ Փայտը հեշտ կտրուող, թոյլ, այրուող և փթող է, իսկ ես ամուր և պինդ։ Ես մետաղների ցեղից եմ, իսկ մետաղներ շատ շատ կան. ի հարկէ, ոսկին և արծաթը ազնիւ մետաղներ են. նրանք թանդ են, բայց երկաթն ամենից հարկաւոր է և ամեն տեղ պէտք է դալիս։



—Մենք էլ երկաթ ենք, մենք էլ, կանչեցին պատի մէջ խփուած մեխերը։

—Ճշմարիտ է, ճշմարիտ, ասաց բանալին. գուք թէև պատի մէջն էք խրուած և մարմնով փոքր, բայց և այնպէս մարդկանց շատ պէտք էք գալիս. էլ ինչեր ասեմ, ձեր փոքրիկ գլխից չեն կախում. իսկ մեր ամենից մեծը ամենից յարգելին այս մանճակալն է. նա իր վրա հանգրստացնում է յոգնածներին, աշխատաւորներին։ Հետաքրքիր է, մայրիկ, շատ հետաքրքիր է իմանալ, թէ մենք որտեղից ենք եկել, ինչպէս են մարդիկ ձեռք բերել. հետաքրքիր է իմանալ այն ամենը, ինչ մի փոքր առաջ փայտերն էին մէկ մէկու պատմում։

—Պատմիր, մայրիկ, պատմիր, մենք էլ իմանանք, կանչեցին ամեն կողմից մեխերը։

Վահանը քիչ էր մնացել վախից վայր ընկնէր. նա ինքն իրեն սիրտ տուեց ու ականջ դրեց։

—Օհ, իմ որդիք, սկսեց մանճակալը. մեր յեղն այս աշխարհից չէ. մեր հայրենիքը հողի վրայ չէ, այլ երկրի խորքում, լեռների մէջ։ Մեր պապերն այնտեղ ընկած էին երկար, շատ երկար ժամանակով, հարիւրաւոր, հազարաւոր տարիներով։ Մարդիկ երկիրը փորելով մեզ էլ հասան. այն ժամանակ մենք հանք էինք, անճոռնի, կարմրաւուն քարակոյտ։ Մեզ հանեցին, տարան մեծ, բարձր ամուր հնոցների մէջ լցրին։ Ամենից առաջ մի հատա շերտ քարածուխ, ապա հանք, էլի քարածուխ, էլի հանք և այդպէս լցրին վիթխարի հնոցը և տակից վառեցին։ Կրակը քանի գնաց թէժացաւ. մենք քիչ քիչ տաքացանք, այնչափ տաքացանք, որ փափկացանք, վերջն էլ հալեցանք։ Մէկ էլ հնոցի տակի անցքը բացին, ինչ ասել կուզէ, որ մաքուր հալուած երկաթը գուրս հոսեց։ Առաջ մեզնից շինեցին չուգուն, յետոյ հալեցին՝ դարձրին պողպատ, կրկին հալեցին, վերջապէս դարձրին փափուկ, ծռուլող երկաթ. էլ ինչեր ասեմ, որ մեզանից չշինեցին՝ մուրճեր, ունելիքներ, բահեր, ուրագներ, արօր, խոփ, գրիչ, ասեղ, մկրատ, դանակ, մեքենաներ, թնդանօթներ նայէն հայէն։ Մի խօսքով, մեր յեղն ամբողջ աշխարհը լցրեց, բայց մարդկանց ամենապէտքական միջոցը դարձաւ։ Եւ եթէ մարդիկ կամենում են իրանցից մէկի առողջութիւնը կամ հատատա բնաւորութիւնը գովել՝ ասում են—օ, նա երկաթի բնաւորութիւն ունի, երկաթէ մարդ է։—

Ինձ էլ ձեզ մատնակից արէք, մէջ մտաւ ձեր վառարանը. չէ՞ որ ես էլ գրսից երկաթէ հատա թիթեղով եմ ծածկուած. իմ դուռն էլ երկաթից է, միայն իմ ներսն է ապիւսից շինուած. բայց չէ՞ որ ապիւսն էլ հողից, կաւից և աւազից է շինուած. ուրեմն ես ձեզ հետ ազգակից եմ։ Ես էլ օգտակար եմ. ձմեռը մարդիկ ինձ շատ են սիրում, հէնց որ մրսում են, իսկոյն ինձ մօտ են գալիս տաքանալու։

III.

—Տաքութիւնը շատ լաւ է, վառարան քոյրիկ, մէջ մտաւ բացատրանք. բայց չէ՞ որ առողջութեան համար նոյնպէս պէտք է մարմնի մաքրութիւնը. այ, հէնց դրա համար ես և իմ քոյր առափնեան ենք գործ կատարում. մենք էլ թէև կաւից ենք շինուած, բայց ապնիւ, թանկակին կաւից։

—Քոյրիկ, կարող ես դու ինձ պատմել, թէ ինչպէս են մեզ

չինել, հարցրեց սափորը։

—Ինչպէս չէ, պատասխանեց լացարանը։ Մենք բրուտի մօտ հասարակ ցեխի նման վէր ընկած էինք. մի օր նա մեզ վրայ ջուր ածեց և ոտներով կոխեց, կոխեց, այնչափ կոխեց՝ մինչև որ մենք շատ փափուկ, մածուծիկ, կպչուն կաւ դարձանք։ Յետոյ վարպետ բրուտը դրանից մի կտոր առաւ, ձեռքերով քիչ ճմռեց և դրեց կլոր

սեղանի վրայ. սեղանը ոտի անիւով շարժեց. մի կողմից մենք կլորուում էինք, միւս կողմից վարպետի ձեռքի մէջ մի տեսակ ձև էինք ստանում. մէկ էլ տեսնեմ՝ իմ մէջս փոս ընկաւ, շրթունքներս կլորացան, ինքս ինձ նայեցի, չճանաչեցի. այժմ ես դարձել եմ մի գեղեցիկ լացարան։ Տեսնում եմ, վարպետն էլի պտտեց սեղանը, մի գունդ կաւ ձեռքին բռնած սեղմելով շինում էր. հիմա ինչ պիտի դուրս գայ, մտածում էի ես։

—Չլինի՝ ես դուրս եկայ, ասաց սափորը։

—Այո, դու դուրս եկար, վրայ բերեց լացարանը. հէնց որ

քեզ տեսայ, այնչափ ուրախացայ, որ քիչ էր մնում, սեղանից ներքև ընկնէի։ Վարպետն ուրիշ շատ ափսէներ, պուտկներ, թէյամանները, կոթնամանները շինեց և երբ մենք բաւական լաւ չորացել էինք, տարաւ՝ մի մեծ վառարանի մէջ դարսեց։ Ա՜հ ինչ բան է, մտածում էի ես. ինչու է մեզ այստեղ բերել։ Քիչ յետոյ վառարանը վառեց. մենք ամբողջ օր ու գիշեր թէժ կրակի մէջ մնացինք, թրծուեցինք և ահա այս ձևն ստացանք։

—Դուք մարդկանց դրսից էք բանում, իսկ մենք ներսից, վրայ բերեց ջրով լիքը շիշը. այս բաժակն էլ իմ ցեղից է, բոլոր թէյի բաժակները նոյնպէս։

—Իսկ մեզ ինչու՞ են շինել, հարցրեց բաժակը։

—Մեզ հասարակ կաւից չեն շինել, ասաց շիշը. մենք մաքուր, դայլոխաղի լաւ աւազ էինք. մեզ հետ խառնեցին կալաքար և կրակի մէջ դրին. որոշ ժամանակից յետոյ մենք հարեցինք. մէկ էլ վարպետն երկար երկաթէ խողովակը թաթախեց այդ հալածի մէջ. մի քանի կոթիլ կոպաս նրա ծայրին. վարպետը միւս ծայրից սկսեց փչել, ապակու կաթիլներն ուռան, ուռան- փուչուկի չափ դարձան։ Դեռ այդ բաւական չէ. նա փչելով՝ դեռ գլխի չորս կողմը պտտեցնում էր, ապակէ փուչիկը ձգւում, երկարում էր, ինչպէս մի շիշ. մէկ էլ դրեց սաք սալի վրայ և դանակով չխկացրեց պարանոցիդ և ինչ .. խողովակը բացուեց. յետոյ շշի բերանը կպցրեց. արդէն շիշը պատրաստ էր։

—Իսկ ինձ ինչպէս շինեց, գնգաց բաժակը։

—Դու կէս շիշն ես, շիշը կէս տրին, ասացան բաժակ.

IV.

Մէկ էլ սենեակի ամբողջ պատերը խշխշացին։

—Ա՛յ քեզ բան, պատատոներն էլ են խօսում, փնթփնթաց Վահանը. հետաքրքիր է սրանց էլ լսել, ասաց ու լռեց։

—Ձեզանից ամեն մէկը, պարոններ, ասացին պատատոները,

ապրում էք ձեր առաջին կեանքով, իսկ երկրորդ կեանք չէք ունեցել և չէք էլ տեսել։

—Իսկ դուք, իսկ դուք, ձայնեցին ամեն կողմից։

Մենք այժմ երկրորդ կեանքով ենք ապրում, տատցին պատասխանները.

—Շատ հետաքրքիր է իմանալ այդ տարօրինակ կեանքը, ծիծաղելով ասաց բանալին։

—Մենք կը պատմենք, սիրելի բարեկամ երկաթ, այն ժամանակ գու կ'իմանաս, ասացին պատասխանները և սկսեցին։

—Մենք էլ առաջ դաշտումն էինք, բայց ոչ ձեզ նման մանուկներ, տգեղ ցեխի կամ քարի կտոր, այլ գեղեցիկ բամբակի բույս և սպիտակ, մաքուր բամբակ էինք։ Գործարանում մեզանից մեքենաներով գործեցին զանազան կտորներ՝ սպիտակեղէն, չիթ, կտաւ և այլ սրանց նման բաներ։ Երբ մենք բոլորովին հնացանք և ցնցոտի դարձանք, մարդիկ մեզ դուրս գցին։ Մենք կարծեցինք, թէ մեր վերջն է, էլ բանի պէտք չենք։ Բանից դուրս եկաւ, սխալուած էինք։ Մի օր էլ տեսնենք՝ մարդիկ մեզ տղաներից, փոսերից, բակերից հաւաքում և սայլերի վրայ լցրած տանում են. ուր են տանում, ինչու են տանում, մտածում էինք մենք և չէինք կարող հասկանալ։ Մէկ էլ յանկարծ թղթի գործարան ընկանք։

—Ի՞նչ հիանալի ընկերութիւն է, ամեն տեսակ կեղտոտ շորեր իրար գլխին հաւաքուած, ասաց զգուելով շիշը։

—Մի բան ստիպեց դրանց չէր կարող մաքրել, վրայ բերեց լուացարանը։

—Դու էլ կարծում ես՝ շատ մեծ մաքրութիւն ես տարածում, խշխշացին պատասխանները։ Մեզ մի քանի անգամ մեծ զգնդի մէջ ածեցին, եռացրած ջրով լուացին, ապա մոխրաջրով լու եփեցին, յետոյ զգոյով այնքան զգոյեցին, որ խաշիլ դարձանք։ Դու հոգար գոտայ, օգնութիւն կանչիր, ով է լսողը։ Յետոյ մեծ տաշտի մէջ լցրին, թարմ ջրի մէջ այնպէս լուացին, որ կեղտերս բոլորը փնացին և մենք դարձանք մաքուր խաշիլանման մի բան։ Յետոյ մեզ մի

ուրիշ հոտ տուին։

—Երեի վարդաջրով լուացին, ասաց շիշը։

—Ոչ, ոչ, քլորաջրով, սա անուշ հոտ չունի, ընդհակառակն ամենքին փուչտացնում, հազացնում է, բայց նա մաքրում, սպիտակացնում է ինչպէս ձիւն և իսկապէս, մենք ձիւնի նման սպիտակ դարձանք։

—Իսկ յետոյ ինչ եղաւ, հարցրին ամեն կողմից։

—Յետոյ արդէն մի ուրախալի գործանք էր։ Լուացուելուց, սպիտակելուց յետոյ՝ խողովակի միջով անցանք և հասանք երկաթի ծանր ցանցի վրայ. սա էլ որսվեհան շարժւում էր, դրա համար բոլոր ջրերն մասը մեզանից քամեց և այսպէս մենք դանդաղ առաջ



գնացինք։ Այստեղ մեզ պատահեց երկու շարժուող գլան. մենք դրանց միջով անցնելով՝ արագ սողացինք. երբ գլանների միջով դուրս եկանք, մենք էլ ոչ թէ թանձր խիւս էինք, այլ իսկական թուղթ, միայն դեռ թաց։ Քիչ էլ առաջ գնացինք, պատահեցինք երկու շարժուող տաք գլանների. մենք դրանց միջով անցանք, տաքացանք ու հարթուեցինք. հէնց որ այդտեղից դուրս եկանք՝ չոր, մաքուր սպիտակ թուղթ էինք։

—Բայց դուք, պ. պատասխաններ, չէ՞ որ հասարակ թուղթ չէք, այլ ներկուած, ծաղկաւոր էք։

—Այդ արդէն պատասխանի գործարանում ներկեցին. մեզ տարան

այնտեղ. մի քանիսը վրձինով ներկեցին. երբ չորացան, վերցրին ծաղիկներով փորագրած կաղապարները, թաթախեցին վարդագույն ներկի մէջ և սեղմեցին մեղ վրայ և դուրս եկան ծաղիկները. յետոյ վերցրին տերևներով փորագրած կաղապարը, թաթախելով կանաչ ներկի մէջ, կրկին սեղմեցին և դուրս եկան տերևներ։ Այսպէս մենք դարձանք իսկական պատատու և այժմ ապրում ենք երկրորդ կեանքով։

V.

—Դուք ամենքդ որչափ էլ պարծենաք, բայց և այնպէս մարդկանց քիչ օգուտ էք տալիս, լուեց սեղանի վրայից։ Ո՞վ է այդ յանդուգը, որ մեղ չի հաւանում։

—Օ՜, դա իմ գիրքն է, հեռաբրքիր է, թէ սա ինչ ունի ասելու, մոռածեմ Վահանը և անհամբերութեամբ ապասում էր։

—Այո, յարգելի պատատուներ, թէև ես էլ ձեր ցեղակիցն եմ, թէև ինձ վրայ էլ նախշեր կան, բայց իմը բոլորովին այլ բան է։

—Հիանալի նախշեր են, ինչ եմ ասում՝ է, ծաղրելով ասացին պատատուները. ծուռ ու մուռ գծեր, որոնց գրեր են ասում։

—Դրանք ինչ նմանութիւն ունին գեղեցիկ պատատուների հետ, ասացին երկաթն ու աթոռները։

—Այո, նրանք ծուռ ու մուռ գծեր են, բայց գիտէք ինչ կայ նրանց մէջ. այդ տառերն իրար հետ կարգացելով՝ կազմում են բառեր, բառերից էլ մաքեր, դրանից էլ գեղեցիկ հէքիաթներ, սիրուն պատմութիւններ, լաւ լաւ առակներ։ Մարդիկ այդ բոլորը կարդում, ուրախանում և խելօքանում են։ Այդ պատմութիւնների մէջ գրուած է, թէ ինչպէս են աճում, մեծանում ծառերը, ինչպէս են նրանից սեղաններ, աթոռներ շինում, ինչպէս են երկաթի հանքեր գտնում, նրանց հալում, ամեն տեսակ երկաթէ գործիքներ շինում. ինչպէս են կաւերից ամաններ շինում, ինչպէս ապակէ ամաններ պատրաստում. մի խօսքով՝ այդ տառերով ամեն տեսակ բաների մասին գրում, տպում են և մարդիկ կարդալով հասկանում, սովորում են։

—Բայց որտեղ են այդ տառերը շարում և տպում, հարցրին ամեն կողմից։

—Դա ապարանում են անում. գրաշարները գրերն իրար մօտ շարում են, տպելու մեքենան էլ տպում է, յետոյ տպած թերթերն իրար հետ կազմելով՝ շինում են գրքեր. այ, մեր տէր Վահանի այն բարակ ու հաստ գրքերի նման։

—Ուրեմն գրաշարներն են այդ բոլորն հնարում։

—Ո՛չ, գրաշարների ինչ բանն է. ուսումնական մարդիկ, գիտնականներ, բանաստեղծներ, մի խօսքով հեղինակներ են այդ գրում և տալիս են ապարանին. այնտեղ գրաշարը նրանց գրածին նայելով՝ տառերն իրար մօտ շարում է, չորս կողմից երկաթէ ձողերով սեղմելով՝ տպելու մեքենայի տակ է դնում, այնտեղ սև մուր քսելով՝ տպում է թղթի վրայ. յետոյ կազմարարը կազմում է. սիրուն մեծ ու փոքր գրքերն ուղարկում են աշխարհի ամեն կողմերը և գիրք վաճառողները ծախում են։ Աշակերտները, խելացի և գրագէտ մարդիկ առնում, կարդում են և ամեն ինչ այդ գրքերից սովորում են։

Ճիշտ է, ճիշտ է, այդ գրքերի մէջ շատ բաներ կան գրած, ասացին ամենքը. մարդիկ նրանց սիրում են և ամենքը սիրով կարդում, սովորում և ուրախանում են։

Լոյան արդէն բացուել էր. արեգակի ճառագայթները հէնց որ սենեակ մտան, ամեն ինչ լուսաց։

—Ո՞րչափ նոր բաներ սովորեցի, ասաց Վահանը ինքն իրան։

1) Դիտեցէք այս պատկերը- 2) Ինչպէս են մանուկներն իրենց շնիկին բերել բժշկի մօտ- 3) Պատմեցէք ձեր դիտածը- 4) Վերնագիր դրէք և գրեցէք։

Ամբի՛ն մեր գորգուրանքը
Քաղա՛ ունի՛ նապտանի,
Գի՛մ գրայ նապտար թուանի.
Էր պազարի՛մ իմ բաթա,
Էր գորգուրի՛մ գառնուկիս։
Ղէ՛ մի՛ ծայրի, իմ խաղրիկ,

Զանիս նարի՛ր, անուշիկ
Քո նոր խանդաժ օգտերին
Ինչուկ դարձիր, իմ անգին.
Ղէ՛, թուղա՛, թուղա՛,
խնդա՛, որդի՛ս, խաղ արա՛,
Նը մի՛ ժանաս, էր վատ է,
Հանգաժ ծրագս, իմ քաղէ։

Դիտեցէք, պատմեցէք և գրեցէք։

55. Կոյր մանուկներ

—Ճշմարիտ է, պարոն վարժապետ, որ դուք կոյրերին ուսուցիչ էք։

—Այո, պատասխանեց ուսուցիչը։

—Պատմեցէք մեզ մի բան նրանց մասին, ասացին աշակերտներն ամեն կողմից։

—Կոյր, ինչ զժբաղդ բառ է, ասաց վարժապետը։ Ոչ երկինք տեսնել, ոչ արև, ոչ հօր, ոչ մօր և ոչ մի բան. մի խօսքով յաւիտենական խաւար։ Փորձեցէք աչքերդ խփել և երևակայեցէք, որ միշտ այդպէս պիտի մնաք. զարհուրելի բան կը թւի, այնպէս չէ՞... Սակայն երբ մտնում էք կոյրերի ուսումնարանը, երբ լսում էք նրանց ջուխտակ ածելը, սրինգ հնչեցնելը, բարձր խօսակցութիւնը, ծիծաղելը, ատենդուզքների վրայ, միջանցքում, ննջարանում ապատ ման գալը՝ մարդու մտքովն էլ չի անցնիլ, թէ նրանք զժբաղդ են։

—Ինչո՞ւց է, որ նրանք կոյր են, հարցրեց մէկը։

—Նրանցից ոմանք գրկւել են աչքի լոյսից մի քանի օրում, ուրիշները տանջւել են ամբողջ տարիներ, շատերն էլ կուրացել են վիրահատութեան պատճառով. վերջապէս կան և այնպիսիները, որոնք կոյր են ծնւել։

—Արդեօք ուղի՞ղ է, որ ասում են կոյրերի շօշափելիքն աւելի նուրբ է։

—Ուղիղ է, պատասխանեց վարժապետը։ Կոյրերի միւս զգայարաններն էլ աւելի լաւ զարգացած են և դա նրանից է առաջ գալիս, որովհետև շարունակ այդ զգայարաններն են գործ դնում. մանաւանդ աւելի շատ գործ են ածում շօշափելիքը։ Այսպէս օրինակ, առաւօտեան նրանք ննջարանում մէկ մէկու հարցնում են.—Արդեօք արև կայ.., Շուտ հագնողը դուրս է վազում, ձեռքը մեկնում է արևի ջերմութիւնը փորձելու. վերադառնում է՝ ասելով. «Արև է, արև»։ Կոյրերը

մարդու ձայնին ականջ դնելով, գաղափար են կազմում նրա հասակի բարձրութեան վրայ։

Կոյրերը կարող են զանազանել ներկւած կերպասը չներկւածից։ Փողոցով անց կենալիս հոտառութեամբ ճանաչում են խանութները։ Հոլ թողնելիս բզզոցին ականջ դնելով իմանում են, թէ որտեղ ընկաւ և առանց սխալւելու վերցնում են։ Կոն (կէգլի) են խաղում, թռչկոտում են պարանի վրայից, կոդմներ են հիւսում, գունաւոր ծղնօտներից արկղիկներ են գործում։ Նրանց ամենամեծ զւարճութիւնն է շօշափելով իմանալ իրերի ձևը, նրբութիւնը, փափկութիւնը և այլն, և այլն. մի խօսքով շօշափելիքը նրանց տեսանելիքն է։

—Ճիշտ է, որ կոյրերն աչք ունեցողներից շուտ են համարում, ընդհատեց մէկը։

—Այո, ճիշտ է, նրանք սովորում են գրել-կարդալ և համարել։ Նրանց համար առանձին տպւած գրքեր կան, նրանք ուսուցիկ տառերով են։ Կոյրերն այդ տառերը շօշափելով են կարդում։ Գրում են առանց թանաքի հատ թղթի վրայ. նրանց գրիչն է մի բարակ երկաթ, որ սեղմելով թղթին, հետքեր են երևում թղթի հակառակ կողմը և կոյրերը շօշափելով որոշում և կարդում են։ Այսպէս էլ կարդում են ուրիշների գրած նամակները, շարադրութիւնները և այլն։ Կոյրերը մտաւոր հաշիւները կատարում են շատ արագ։ Նոյնպէս շատ սիրում են լսել ընթերցանութիւն։ Նրանք ուսուցչին ճանաչում են քայլելու ձևից, ձայնի հնչիւնից, որոշում են նրա տրամադրութիւնը՝ արդեօք նա առողջ է, թէ հիւանդ։ Սիրում են երբ վարժապետն իրենց գովելիս, քաջալերելիս ձեռքերը շոյում և շօշափում է, իրենք էլ շնորհակալութիւն յայտնելիս սեղմում են վարժապետի ձեռքը։

—Կոյրերը լաւ են նւագում, հարցրին աշակերտները։

—Նրանք երաժշտութեան ջերմ սիրահար են, պատասխանեց վարժապետը։

Երաժշտութիւնը նրանց ուրախութիւնն է, կեանքն է։ Մինչև անգամ երեխաները նւագածութիւն լսելիս ժամերով կանգնում են։ Կոյրերի խօսակցութեան սիրելի նիւթը երաժշտութիւնն է։ Երեկոյեան անկողնում, կամ օրւայ աշխատանքից յոգնած ժամանակ, հանդարտ խօսում են երա-

ժշտական գործիքների, երգերի, համերգների մասին։ Նրանց ամենամեծ պատիժն ընթերցանության կամ երաժշտության զատից զրկելն է։

Կոյրերի համար երաժշտությունն այն է, ինչ որ լույսը մեզ համար։

Ներկոյ

Ներկոյ փուշ իր թևերը մուր,
Անուշ Ներսեսին երկինք ու երկիր։
Ձայն ապրիներն ընկաւ աւազմուկ,
Անուշ Ներսեսիս ծով, անպատուլիս...
Կրծիս դիր դեմը քո գիսարապուկ,
Մոռացիր կեանքի գուռապանը մուր
Քու վիզը պատմիմ ոսկի կիթարներ,
Քու սիրուն մանուկ, քամ քնոյդ մանուկ...

Անուշ Ներսեսին ծով, անպատուլիս,
Նունգիսին անուշ երկինք ու երկիր։
Աղջիրդ փաղիր, ինչ քնոյդ գրկիր
Քու վիզ կը պատմիմ ոսկի կիթարներ։

57. ԱՂԱՍԻՆ ԻՆՉՊԷՍ Լ. ԱԶԱՏՈՒՄ ԹԱԳՈՒՀՈՒՆ

I.

Բուն բարեկենդանին էր։

Աբեգակն եկել երկինքի մէջտեղը բռնել էր, օրուան փուշը մի քիչ կոտրուել, տաքացել էր։ Սար ու ձոր արծաթի պէս պլպլում էին,

Սպասին քէֆն արել, պրծել, իր դասէն եւելից գցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորով՝ գեղի միջումն անց կացաւ, որ գնայ՝ իր հունարը նշանց տայ, ջիրիդ խաղայ։ Հենց իմանաս՝ մէկ թագաւորի որդի է գալիս։ Գեղացիք հէնց նրան տեսան թէ չէ՝ ծափ տին, պար եկան, ձէն ձէնի տուին ու սկսեցին նրա խաղն ասել, նրա գովքն անել։ «Ազասի ջան, գլխիդ զուրբան, էս թասը խմենք քու տարեսագաղին, արեւիդ մեռնիմ, մեր գլխիցը ոչ պակասիս, գնա, մենք էլ էս ա կը գանք,» ամեն կողմից ձէն տուին ու Ազասու թասը խմեցին։ Ագնիւ երիտասարդ էլ՝ ով որ իրան էգդէս պատիւ էր տալիս, դդակով էր անում, քաղցր երեսով գլուխ տալիս ու անց կենում։

Ձիու ականջը մտած՝ էնպէս էր քշում, կրակին տալիս, որ հէնց իմանաս թեւերը դուշ ելի։ Շատ անգամ ջրիդը հեռու տեղից շըպրտում, ձին չափ էր գցում ու գետնից ծուռ ելելիս ձիու վրիցը բռնում էր, էլ ետ գցում։ Շատ անգամ էլ հէնց էնպէս ուղիղ շըպրտում էր ու կրակի պէս եւելիցը հատնում, բռնում, էլ ետ շըպրտում։ Գետնին վէր ընկած տեղիցն էլ՝ էնպէս էր թամքի միջիցը կռանում, բարձրանում, որ ջիրիդն առաջին դոզում էր. ընդհերառանց վրայ էլ որ վախտ-վախտ ջիրիդ չէր գցում, էնպէս էր նշանում, որ դդակների ծէրին էր գիպչում, կամ դդակը հետը տանում, որ իմանան՝ թէ նրանց խնայում է։ Շատ անգամ թամքի մէջին ջուխտ ոտի վրայ կանգնում, էնպէս էր ձին չափ գցում։ Աչք պէտք է լինէր, ու նրա քաջութիւնը, ոգամարդութիւնը, հու-

նարը ու զարմանար։

—«Կեցցես դու, կեցցես, Աղասի, մէրդ մէկ հատ է քեզանից բերել, հազար տարի անց կենայ, քեզ նման էլ սչ մէկը չի ծնիլ» — ասում էին թամաշաւորներն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս։

II.

Յանկարծ էս քէֆի միջում՝ կարծես մի ամպ տրաքեց, երկիրը շարժուեց, կամ երկիրը փուլ եկաւ։

—«Տարան, տարան, ասաւածասէրք, մօտ եկէք, օգնեցէք, գըլուխս լացէք... տունս կոխեցին... օջախս քանդեցին... աչքիս լոյսը հանում են... սիրուս դուրս են ճոթոռում... աւ, մէկ հասէք, ինչ կրլի... Աստուած, երկինք, ծով, ցամաք... էս ինչ կրակ է... էս ինչ պատուհաս... վայ, օրս ու կեանքս խաւարի... էս ինչ եմ տեսնում...

«Թագուհի ջան, գլխիդ մատաղ, Թագուհի... տնունիդ մեռնիմ... երեսս ոտիդ տակը... Թագուհի ջան... էդ սիրուն աչքերիդ մատաղ ըլիմ, ազիզ ջան... աչքիս լոյսի պէս մնացիր, որ էդ տեղն ընկնես... թող ինձ սպանեն, էդ թուրը թող իմ սիրտը խրեն... Թող քո ոտիդ տակին հոգիս տամ, թող ես հոգ մտնեմ... էն վախտին ուր տանում են քեզ, թող տանեն... Թող քո նեղ օրը չտեսնեմ, որ գըժոխքն ուզում է, թող ինձ ներս տանի»...

Էս կսկծալի ձէնի հետ լաւ պարզ լսում էր, որ մէկ ողամարդ թուրքերէն ասում, սպառնում էր՝—«Չէնդ կարի... հէնց էս սրտութիւն փորդ վէր կածեմ... ջինգեանութիւն ինչ պէտք է, սարդարի հրամանն է, որ պէտք է ձեր աղջիկը քաշենք, տանենք. ինչ խօսք ունիք, ինչ կարողութիւն. սարդարի հրամանին սարը չի դիմանալ, դուք ինչ կարաք անել»...

Խալխի գլխին ջուր մաղուեց. Ամենքն էլ իմացան, թէ ինչ մարդիկ էին եկողները։ Սարդարի ֆառաշներն էին (ծառաներ), եկել էին, որ սիրուն Թագուհուն յափշտակեն իրենց տիրոջ համար. էլ ով ունէր իրաւունք ձէն-ծպտուն հանելու։

Բարեկենդանը սուգ դառաւ։ Երեխէքը լալով, զողալով տուն փախան։ Կնանիքը գնեերը կոդպեցին ու շիրախանի կարասների տակը մտան, կամ վերնատներումը թաղ կացան, կամ զարմանի ու խոտի խրձերի մէջ մտան։ Գեղը համարէ թէ ամրողջովին քանդուեց։ Տղամարդկանց որը վախկուտ էր, գլուխն առաւ՝ կրաւ, որը որ մի քիչ պինդ սիրտ ունէր, զարգանդելով, դողդոջալով մօտ եկաւ, չէ թէ օգնութիւն անի, չէ, այլ թէ տեսնի, ինչպէս մարդիկ են եկողները, ինչպէս են տանում խեղճ, ջրատար աղջկանը։

III.

Ֆառաշները՝ տեսնելով՝ որ մէր ու աղջիկ վշտի ձեռքից նստեցին ու էլ ձէն, շունչ չէին տալիս, լաւ համարեցին, որ էսպէս թուլացած վերցնեն, երկուսին էլ տանեն, որ էլ շատ չնեղանան, չշարչարուին։ Երկուսը ձիու վրայ նստել, տեղ էին բաց անում, որ մէկը մօրը խրատի, միւսը աղջկան տուաջն տանի. հէնց այդ բոպէին, երբ նրանք կարծում էին, թէ իրանց բանը լաւ գլուխ ընեին, յանկարծ մէկ թուր փայլատակեց կայծակի նման որոտալից ձայնի հետ... ֆառաշների մէկի գլուխը գետնի վրայ ընկաւ ու սկսեց գլորուիլ, ըլբըլացնել ու պար գալ։ Դեռ սա ձէնը չէր կրտրել, որ միւս ընկերի գլուխն էլ նրա մօտ գլորուեց...

—Դժոխքի որդիք, գոսաց քաջ Աղասին, ձեզ ով է ուզարկել էստեղ, ում վրայ էք էդպէս կատաղել... Ասենք թէ՝ Հայը լռել է, ձէն չի հանում, պէտք է նրան ողջ ողջ կուլ տաք։ Աչքներիդ լոյսը կը թոցնեմ էս բոպէիս, շուտ արէք, կորէք, թէ չէ՝ ամեն մէկդ ճուտի պէս տաջիս կը թրպրտայ։ Քանի որ էս կուտը վրէս է, դուք էստեղից թել չէք կարող դուրս տանել։

Էս ասելով՝ մէկի ուսը դուրս բերեց, միւսին միջից կիսեց, ճնացած վեց հոգին տեսան, որ հերթն իրենց պիտի հասնի, շտապով ձի նստեցին ու մինչև Երեւանի բերդը մի շնչում փախան...

Ամպ ու շորբնկած, մէկ լոր թիթ գամֆի,
Ցիրտիս ապիլով մնացել իմ նպրած.
Ձիրս ժողովա, գլուխս մէկ լիս խարի
Ամած լալիս իմ, օրս խաւարած:
Ամպիրս առազիս, ասրիրս. իրեկիս,
Քիչ մնեն գալով ամ իմ խաղրը մնաց.
Աղի արյունով էլուած, խորխուած
Էրեսդ ապիմ, մնամ խարտյած:

---

59. Գարուն

Գարունն եկաւ, ցանեց սերմեր Կանաչդաշտում, ծաղկի ծոցում
Արտ, արօտում ու հովտում. Բիւր մեղուներ խայտալով,
Ծրան, ծաղկան և վարդից վեր Անուշ, անուշ մեղր են ծծում
Ծաղիկ, գալար են պատում. Խոտ ու ծաղիկ օրնելով:

Հով ու զեփիւռ անուշ երգով Քեզի մատաղ, կանաչ գարուն,
Արտ, արօտում շրջում են, եկած ճամբիդ ես մեռնեմ,
Հով ու զեփիւռ անուշ երգով Քեզի մատաղ, ալվարդ գարուն,
Գարնան գալը յայտնում են: Կոխած հողիդ ես մեռնեմ:



Դիվեցք ի մեջ պատմեցեք և երգեք։

61. ՎԱՐ

I.

— Օրհնեալ է Աստուած, քշիր, քշիր... չարը խափան, բարին առաջ, լսում է մաճկալի ուժգին ձայնը։

— Քակեցէք, արհներիդ մատաղ, եղներ ջան, քաշեցէք. հշ, հա, հշ, հա — պատասխանում էին հոտաղները և ճիպոտները շարժում։

— Քշիր, ծուկ մի։ տղայ, քշիր, ուղիղ քշիր...

— Հա, հշ, հա, հշ...

— Ագա, սև եզան իշ արա, գայրանում է մաճկալը..

Երբ արզելքից խիստ խորը խրած զուլֆանի խոփն ազատում էին նրանք, մաճկալը վրայ ընկնելով մաճին, խոփն ու ձևիչը նորից խրում էր հողի մէջ ու կառնակների շարքերի նման լծերին թաղած հոտաղներով երգում էին ու վարում։ Արզելքից յետոյ, երբ ձգում էին հորիզն ու շղթան, մաճկալը, որպէս խմբապետ, երգում ու կանչում էր։

— Զարն անցաւ, վարն անցաւ, օրհնեալ է Աստուած։

— Հշ, հա, հշշ — և յանկարծ միահամուռ ձայնով իսկոյն սկսում էր բոլոր հոտաղների համերգը։

— Հշ, հշշ... հշ, Աստուած ջան, վարենք՝ կանաչի, հշ, հշ, հշ, վարենք՝ կանաչի, հշ, հշ, հշ. բարին գայ, չարը փախչի, հշ, հշ, հշ...

II.

Վերջապէս զուլֆանը կանգ առաւ, ճաշ թող արին և լծկանները արձակելուց յետոյ եկան կառնաչ ցորենի տակ կանաչ խոտերի վրայ ծալապատիկ շրջան կազմեցին. նրա մէջտեղը գրած էր սերն երեսին մածնի մի մեծ պղինձ և նոյնպիսի մի ամանով էլ իւղած ազգան, ապա աղ ու պանիր և թոնրից հանած նոր փափուկ հաց։ Հարսը կժի մօտ կանգնած օգնում էր, նրանց համար ջուր էր ածում։ Ազգանն ապտաւթեամբ սրբելուց յետոյ, զատարկուած ամանն ուսաղ քաշելով հաց բրդեցին, մածունն ամբողջապէս շուռ տուին մէջը, ջուր ածեցին վրան և գդալներն առնելով մաքրեցին մինչև յատակը։ Ապա պառկան հանգստանալու։

62 ԵՐԳԻ ՀՐԱՊՈՅՐԸ

Միջնից նապար-նապար գարի առուց,
չար ու չար կիռու կապույր Ժուլիրի միա
ատում կար մի ալիսարե: Ինչարդ Ժաղիկ-
ներ կայիս, նարիշում ու սիրուս Ժաղիկ-
ներ թիթեռների պես փռում Ժայռերի
ու գալարների վրայ և նրանց աստղ նուրով
լցվել էին այդ ալիսարի ապրանք ու շա-
ղերը: Ինչարդ աղբիւրներ կային, պայծառ
ու իջնում աղբիւրներ մասունների
պես՝ որոնք ոսկու ու վարդագույն թաղիքներ
էին խրվել իր, Ժաղիկները նարբուրելով:

Բայց այնտեղ մարդիկ չար էին և անգութ:

Մի խեղճ, մի սրբ ու ազնիւ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ. նա գիշերը տեղ չունէր գլուխը դնելու, հաց չունէր ուտելու և շոր՝ հագնելու:

Նա մենակ էր, ինչպէս մի թռչուն ամայի ժայռերի մէջ:

Եւ նա մեծացաւ բոլորի աչքի առաջ անտես ու անյայտ. կերակրւում էր դաշտի բոյսերով և պատսպարւում էր մնատների ու այրերի մէջ:

Բայց բոլոր մարդկանցից ծանօթ՝ իր մատներով նա շօշափում ու գնում էր մարդկանց սրտերը. և նա տեսնում էր, որ քարից էին այդ սրտերը, ժէռ քարից:

Եւ երբ բաւական մեծացաւ ու այդ աշխարհի բոլոր մարդկանց սրտերը գտնեց ու շօշափեց, վշտացած համոզուեց, որ բոլորի սրտերը քար են, իսկական քար...

Այդ ժամանակ նա թողեց այդ քարսիրտ աշխարհը և ճամբայ ընկաւ մի ուրիշ, լաւ աշխարհ գտնելու համար:

Շատ գնաց թէ քիչ, միայն նա հասաւ ծովափին, և երբ ափի աւազների վրայ շրջում էր, նա տեսաւ այնտեղ ընկած մի շատ սիրուն, մի շատ գեղեցիկ շողշողուն ձուկ:

Ձուկը նրան տեսաւ, դարձաւ՝ մարդու լեզուով ասաց.

—Բարի ապայ, ծովի ալիքն ինձ ձգեց աւազների վրայ. չեմ կարող գնալ ծովը քայրերիս մօտ. խղճա ինձ, վերցրու, ծովը ձգիր:

Մանուկը, որ բարի սիրտ ունէր, առանց վախենալու դրկեց ձուկը և ինքնութեամբ տարաւ, բաց թողեց ծովի մէջ:

Եւ երբ ձուկը փաթաթուեց առաջին ալիքին, դարձաւ՝ ասաց մանուկին.

—Ինչ որ սիրտդ կ'ուզի, ասա, ես կը կատարեմ քո արած լաւութեան փոխարէն: Մանուկը մի փոքր մտածեց և ասաց.

—Ինձ այնպիսի մի հնար տուր, որ մարդկանց կրծքի տակ քարն իսկական սիրտ դարձնեմ:

—Դու սէր ես ուզում, հրաշալի ապայ... Շատ լաւ: Կարիր ծովափի եղէգներից մէկը և նրանից մի սրինգ շինիր. գնա մարդկանց մէջ և՛ նուագիր և՛ երգիր: Եւ երբ կը տեսնես, որ նրանց աչքերն արցունքով լցուեցին, այն ժամանակ կ'իմանաս, որ քարը հալուեց, սիրտ դառաւ...

—Այսպէս խրատեց ձուկը մանուկին, իսկ ինքը փաթաթուելով

ալիքների հետ՝ սուզվեց ծովի խորքում։

— Մանուկն իսկոյն կարեց եղէգը, սրինգ շինեց և սուլեց։ Այնպէս քաղցր, այնպէս հոգեզրաւ ու անուշ դուրս հոսեցին հնչիւնները սրինգի միջից, որ բոլոր թռչունները կանգ առած՝ լռեցին լսելու համար։

Եւ մանուկն շտապեց մարգկանց մօտ, մտաւ մարգաշատ քաղաքը, կանգնեց հրապարակում և սրինգը նւագեց։

Ինքուշ ու զեղեցիկ, ուղղակի մանուկի սրտի խորքերից դուրս ցայտեցին երկնային, շքեղ երգեր։

Նա երգում էր արցունքով թրջուած հայն ագռաւների, յուրա, անտուն գիշերներն աշնան. նա երգում էր փակ դռներն ու քար սրտերը մարդկանց, անտէր անտէրունչ մենակութիւնը որբերի։

Եւ փուեցին նրա երգերը հրապարակի վրայ, մտան ամեն մի խրճիթ ու տուն, փշրեցին բոլոր սրտերի քարերը և ծորեցին սրտերի խորքերում։

Եւ ամեն մի սիրտ խայթում էր իր անգթութեամբ և լցում էր ծովի չափ սիրով, որ ծովի պէս յուզում էր ափերից և դուրս թռչում։

Եւ ամեն մի մարդ ուզում էր դուրս թռչել, վազել, սիրով ու կարօտով գրկել մի ուրիշ, անծանօթ մարդու, գրկել համբուրել նրան և մեռնել նրա համար։

Եւ ահա մարդիկ դուրս թռան տներից, վազեցին հրապարակ, շրջապատեցին մանուկին, առաջին անգամ նկատեցին, որ աղքատ է ու մենակ, գրկեցին ու համբուրեցին նրան, և իրենց կեանքում առաջին անգամ արտասուեցին ու վշտահար հեկեկացին։

Իսկ մանուկը նւագում էր աւելի քաղցր, աւելի զգայուն և սրտառուչ, իսկ մարդիկ՝ ամէնքը, ամենքը լսում էին հոգեպաց և լալիս էին ու լալիս։

Ահա այդ օրւանից աշխարհ եկաւ երգը. երգի միջոցով հալեցին քար սրտեր, և այդ օրւանից սէրը վշտի հետ անբաժան բուն դրաւ մարդկանց սրտերի մէջ։

63. ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդը մի շատ ուրախ կիրակի է, մանաւանդ երեխաների համար։ Նրանով է սկսւում զարնանային մեծ տօնների մի շարք. նա բերում է փոքրիկներիս համար շատ թանկագին զարմանքներ։ Դեռ շաբաթ երեկոյեան ես անհամբեր սպասում էի հօրս տուն գալուն։ Նա պիտի բերէր ինձ համար նոր կօշիկներ՝ վաղ-առաւօտեան եկեղեցի գնալու համար, և բացի դրանից մի բան, որ ամենից շատ էր հետաքրքրում ինձ։ Ամբողջ օրը ես նախանձելով տեսել էի, թէ ինչպէս իմ ընկերներն ուրախ ուրախ վազվզելով՝ ճռճռացնում էին փոքրիկ ճռռաններր։ Կարծես՝ նրաք խօսք էին տուել, որ այդ օրը ինձ լաւ տանջեն։ Հէնց որ մօտենում էի մէկին, խնդրելով ցոյց տալ ճռռանը, որպէսզի գոնէ տեսնեմ նրա բարակ լեզուակը, տատմուտոր թօփը, նա քթիս առաջ պտոյտ էր տալիս այդ աղմկաշատ գործիքը և իսկոյն յետ փախչում, հեռու կանգնում և ուշադրութիւնով սկսում էր զննել ճռռանի բոլոր մասերը։ Ես մնում էի գլխակոր կանգնած, քիչ էր մնում, որ լաց լինէի։ Մանում էի տուն, բայց չէի կարողանում մի ժամ հանգիստ նստել. հէնց որ ականջիս էր հասնում իմբովին ճռռացը, մոռանում էի ամեն ինչ։ Դուրս էի վազում և էլի նոյն կերպով հեռից մտիկ էի տալիս ընկերներիս։

Մի կերպ այդ օրը մթնեցրի։ Հօրս գալու ժամանակն էր. նրան սպասում էի մեր տան դռների մօտ։ Վերջապէս լսեցի նրա քայլերի ձայնը, վազեցի, գնացի առջեր և սկսեցի հետաքրքրութիւնով անտղել, թէ ինչ ունի ձեռքին։ Բայց նա ոչինչ չէր ասում, նայում էր ինձ ու ժպտում։ Որքան սառնասիրտ էր հայրս. միթէ չգիտէր, թէ ինչպէս էի օրը մթնացրել։ Հարցնում եմ, թէ բերել ես ճռռանս. հարցնում եմ, երկու անգամ, երեք անգամ, բայց նա շա-

բռնակ ժպտում է։ Նա մտնում է տուն, նստում է օթեակի վրայ. ոչինչ, ոչինչ չի բերել...կատարեալ յուսահատութիւն։ Ես կանգնած եմ մի անկիւնում և յօնքերս կիտած՝ աչքիս տակով շարունակ նայում եմ նրան. սիրտս ես է գալիս. ես փնտրել եմ երկար լաց լինել, եթէ նրա բերանից «չէ» դուրս գայ։ Տէր Աստուած, երբ տիտի խօսէ...

Մայրս որ ամբողջ օրը յուսադրել էր ինձ, հասկանում էր ցաւս. նա յայտնեց հօրս, որ այլևս չնեղացնէ, եթէ մի բան բերել է, դուրս հանէ։— Բոլոր տոմարի համբերող լինել, ասաց նա վերջապէս և ձեռքը տարաւ դէպի գրպանը։ Սիրելի հայրիկս դուրս հանեց ճառանը և ծիծաղելով մեկնեց դէպի ինձ։ Մի ակնթարթում դուրս թռաց մթին անկիւնից, խլեցի սիրածս առարկան։

Ծաղկազարդի շաբաթ օրը կարծես նոր լուսացաւ ինձ համար։ Ձեռս առայ կոթը և սրքան ուժումս կար, սկսեցի պտտցնել։ Ձայնը լաւ էր, շատ լաւ. ախ, եթէ այդ բոպէին դուրս գային ընկերներս։ Բայց հայրս հրամայեց լռել. նոյնը կրկնեց և մայրս, ուխտելով թէ բունի մէջ հանգստացող հաւերը լսում են ձայնը, այլևս ձու չեն ածիլ։ Ես կատարեցի նրանց հրամանը. սկսեցի լուս անցցել ճառանիս ամեն կողմերը. բայց սրքան բարձր ձայն էր հնչում։ Այնքան գերել էր ինձ այդ խաղալիքը, որ մինչև անգամ չէի նկատել, թէ ինչ էր անում հայրս. իսկ նա վազուց հանել էր ոչ միայն նոր կօշիկներս, այլև իմ նոր արիայութիւնս, որ մի խայտաբղետ չիթ էր։ Երբ տեսայ և այդ իրերը, էլ ոչինչ ցանկութիւն չմնաց իմ մէջ, միայն թռչել այդ բոպէին ընկերներիս մօտ, ցոյց տալ իմ իրերը և տեսնել նրանցը։

Վերջապէս մենք քնեցինք. պէտք էր առաւօտը շուտ վեր կենալ եկեղեցի գնալու համար։ Բայց ինչպէս բաժանուեմ ճառանից։ Ես նրան գրի ծոցումս։ Երազումս էլ տեսայ նրան և բուսական ժամանակ ճառացրի։ Այդ քաղցր երազը դեռ չէր վերջացել, երբ մայրը զարթնեցրեց ինձ, ասելով թէ օրը բացուել է։

Եկեղեցու մէջ այրուում էին հարիւրաւոր ճրագներ. ես զօրով

ճանապարհ բաց արի մարդկանց միջով և մի անկիւնում կուչ եկայ։ Ձեռքս շարունակ պրպտում էր՝ ճառանիս լեզուակի վրայ։ Երբ «Փառք ի բարձունս» սկսեցին, իսկոյն դուրս հանեցինք և սկսեցինք ճառացնել. ես լաւ գիտէի, որ իմս ամենից լաւ էր ձայն հանում...»

---

04. ԶԱՏԻԿ

I

Աստուծոնան զարթնելուն պէս նայեցի պատուհանին. երկինքը բոլորովին պարզ էր. հեգասահ արեգակը բաւական բարձրացել էր։ Ուրախ-ուրախ վեր կացայ, հագնուեցի, որ դուրս գնամ։ Խոհանոցում մայրս աստակի զբաղուած էր. երբ մտայ այնտեղ, երկար տախտակի վրայ շարուած էին կարմիր ձուերը։

«Կարմիր ձու, կարմիր ձու», գոչեցի ես՝ համարեա պարելով։ Մայրս երկու հատ տուեց ինձ՝ պատուիրելով, որ պահեմ մինչև եկիր։

Ես վազեցի մեր տան մօտ գտնուող փողոցը. Զարմանքից ձեռքերս տարածեցի և մի քանի բոպէ մնացի սառած։ Աշխարհը, կարծես, ուրիշ տեսակ էր դառել. փողոցը բոլորովին սեացել էր մարդկանց խմբերը յետ ու առաջ էին գնում, խօսում էին, բարձրաձայն ծիծաղում էին. որը ձուին էր տանում, որը իւղ, որը թաշկինակի մէջ բրինձ կամ միրգ։ Երբեմն երբեմն երևում էր փոքրիկ դիօտակաւոր, խարտեաշ կապուտակ գառնուկներ. որքան փոքր էին. նրանք մայում էին անուշ մանկական ձայնով։ «Ջան, ջան» ասում էինք ամենքս և վազում. ձեռքներս գնում էինք նրանց փափուկ մէջքերին կամ բռնում էինք փոքրիկ գնչիկներից, իսկ նրանք «մա-մա» անելով՝ վազում էին իրանց աչքերի առջևից։ Ե՛ւ մարդկանց ձայները և գառների մայունը, երեխաների խաղերը, օդը, արևը, այդ ամենը ցոյց էր տալիս, որ մի ուրախութիւն կայ, մի մեծ տօն, որին երկար սպասել են ամենքը։

11.

Կէս օրից յետոյ մեր հարևան Ծաղիկ տատը կանչեց ինձ ու միքանի ընկերներիս և ցոյց տուեց իրենց համար գիւղից եկած թուխ դառը. յետոյ իւր թոռ Սարգսին էլ մեզ հետ դրեց և պատուիրեց, որ դառը զգուշութիւնով տանենք, արածացնենք։ Մեզանից հեռու չէր կանաչազարդ դաշտը. շուտով հասանք այնտեղ ոստոստելով, թռչկոտելով։ Մենք գտանք այնտեղ ուրիշ շատ գառնուկներ և երեխաներ։ Կանաչ խոտերի վրայ խաղ սկսեցինք. բաւական տանջեցինք փոքրիկ, հեզ կենդանիներին։ Այդպիսով չէինք նկատել, որ արեգամայր մտնելու վրայ է։ Ես վազեցի տուն. մայրս իսկոյն եկեաի զրկեց. ինքը շատ զբաղուած էր. ձուկն էր եփում, փլաւի բրինձն էր թրջում, իւղ էր հալում...

Եկեղեցի մտնել չկարողացայ, տեղ չկար բոլորովին. ես կանգնեցի շէմքի մօտ և բերանաբաց նայում էի ներս. կարծես եկեղեցում արև էր ծագել, այնքան շատ մոմեր էին վառել։ Ինչպէս անոյշ ձայն էին տալիս աշակերտները, ինչպէս ամենքն ուրախացան, երբ նոցանից մինը բարակ ձայնով «Քրիստոս յարեաւ» ասաց։ Հէնց որ մի քիչ նշխարք տուցայ, վազեցի տուն։ Կէս ժամից յետոյ սեղան նստեցինք. սկսեց ամենից մեծ, ամենից փառաւոր տօնը, սկսեց Հայոց Զատիկը։ Մութն սկսելուց յետոյ՝ այստեղից-այնտեղից սկսեցին հրացաններ արձակել։ Այդպիսի ճաքճաքիւն լսել էինք և բարեկենդանի վերջին կիւրակի երեկոյին. այդ ժամանակ ուտիան էին հալածում, իսկ այժմ պասը։ «Ամեն բան իւր ժամանակին», կարծես ասում էին այդ հրացանները պլպլուն աստղերի տակ։ Դեռ նոր է սկսել Զատիկը, բայց որքան ուրախ էին մարդիկ։ Դու տես վաղը և միւս օրը, թէ ինչեր պիտի անենք։

65. ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Արշալոյսը ոսկեզօծեց Մասիսի ձիւնապատ գագաթները։ Աշխարհն արթնցաւ հայր Արամազդի հետ։

Ազատ Մասիսը կեանք առաւ։ Արամազդն աչքերը բացաւ, նստեց իւր քարեայ գահի վրայ, աչքը յածեց քարեայ քնարանի չորս կողմը։ Ցաւերժական ծաղիկները շարիշար բարձրացրին իրենց չքնաղ գլուխները և ժպտացին ու ողջունեցին. «Բարի լոյս, մեծդ Արամազդ»։ Գեղամայ ծովակի ալիքները խնդալով, խոխոջելով, միմեանց հրհրելով ծառացան, գլուխ իջեցրին արի Արամազդին ու գոչեցին. «Քունդ անոյշ, աստուածների հայր»։ Բացօթեայ թրոչնիկները հանեցին իրենց փոքրիկ նաշխուն գլուխները թեների տակից. քնաթաթախ աչքերի մէկը բաց, մէկը փակ, բաց արին փոքրիկ մաքուր կոուցներն ու զեղգեղեցին բիւրաւոր դայլայլիկներ. «Բարի ծր, բարի սեսութիւն, հայր, ասացին ամենքը»։

Աստուածների հայրը զարթ դէմքով ողջունեց բովանդակ աշխարհին՝ շոյելով իր ոսկեփակաւոր երկայն միրուքը, աւետեց ուրախ օր։ Փափուկ մամուռը, որ թաւիշի պէս բռնել էր զանր, աւելի ևս բարձրացաւ, խտացաւ, փափկացաւ. կաթնորակ աղբիւրը, որ նազով, շնորհքով ծորում էր այրի աջ կողմից, նոր-նոր անուշիկ ձայներ հանեց. նրա մաքուր ակունքից դուրս եկաւ մի յաւերժահարս ու, լցնելով խեցեղէն փոքրիկ դոյլը արշալոյսի կարմրացած ջրով, մօտեցաւ Արամազդի սպասին։ Հայոց աշխարհի պաշտպանը լուացուեցաւ, սրբուեցաւ յաւերժահարսի մատներով ու նստեց։

Մինչ այս, մինչ այն, ադօթարանը բոցավառուեցաւ։ Երկինք և երկիր բռնուեցան ծննդական ցաւերով. Գեղամայ ծիրանի ծովն էլ տանջւում էր երկնքի և երկրի ցաւերով՝ նոյնպէս երկնում էր։ Սար ու ձոր, հովիտ ու անտառ պլշած նայում էին անեղ ծննդականներին։ Բայց երկար չէին նրանց ցաւերը։ Գեղամայ ծովի վրայ կարմիր եղէգնիկը սկսեց ծխախոտն բոց ծխել. բոցի միջից վազեց

խարտեաշ պատանեկիկ։ Նրա մազերը հրեղէն էին, մերուքը բոցաւոր, երկու աչքն երկու արեգակ։

Վանատն էր դա՝ հայը արամազդի սիրելի որդեակը։ Նա գինեվաճառ և խրոխտասլաց կարեց, անցաւ օդի տարածութիւնը, մըտաւ հայրենական այրը։

Հայր ու որդի փարաքշանքով գրկախառնուեցան։ Եւ ասաւածների օրհնակով Մասիսի լանջերում և ստորոտներում որքան եղնիկներ ու տարեակներ կային, բերան բերանի դրին, միմեանց համբուրեցին։

---

66. ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Երկնեց երկին և երկիր,
Երկնեց և ծով ծիրանի,
Եւ եղէգնիկը կարմիր
Երկնեց ծովում ծիրանի։
Ծուխ է դուրս գալիս եղէգան վոգից,
Բոց է դուրս գալիս եղէգան վոգից։
Բոցն է պատել կարմիր եղէգնիկ,
Բոց է դարձել և ծով ծիրանի։
Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,
Վահագն ահա—մանուկ զեղանի։
Բոց մօրուքով,
Հուր շրթունքով,
Հուր հեր գլխին—հրեղէն պսակ,
Եւ աչերն են զոյգ արեգակ։
Ալեծուփ ծովի ծիրանի ալիք
Գնում են գալիս, ձեծում են ափունք։
Անեզամռունչ գոռում է մանկիկ,
Թասում է ալեացն հրավառ շրթունք։

Վահագն ծնաւ, լաեցէք, ալիք։
Գոռ ծովահալած, գագար ուռ, մրրիկ։
Թեերն սկսեցին, հրատեր բաշով
Նժոյգը տակին՝ զարգաւ վերև.
Երեսգ ծածկեր հոմեռաս շղարշով,
Տես, ով է գալիս, և դու, հուր արև.
Գլխուդ ալեոր, քաջածին Մասիս,
Դու էլ խոնարհիր, Վահագն է գալիս։
Երկինք ու երկիր և ծիրանի ծով
Աւետում են քեզ, ցաւերի դու ծով՝
Ծնեան, բիւրվիշապ Հայաստան աշխարհ,
Փրկութեան արև Վահագնիդ աւետար։

---

67. ԳԻՒՂԱՅՈՒ ԿԵԱՆՔԸ

Գարուն է. լեռների ձիւներն սկսեցին հալուել. գաշտերը վարդագոյն ծաղկում էին զեղեցիկ կանաչով։

Օդը ազատուած անուշահոտ ջերմութեամբ կեանք է ափում ամեն կողմ։ Ապրիլ ամիսը բերել է իր հետ աւելի տաք ու պայծառ օրեր։ Լեռների վրայ կարմիր, գեղին ու սպիտակ շուշանները վազուց արդէն բացուել են, և հայ աղջիկները քաղելով վինջեր են կապում։ Մանեկը, բոխին (սարերում բոնող բանջար), ծնեբեկը, սիբեխը (ուտելու զոխ) և լեռնային զանազան բանջարեղէններ առատութեամբ աճում են։ Ձորերի միջից վազում են հարիւրաւոր ազմկալի վտակներ և օձապտոյտ ընթացքով տարածւում են հովտի մէջ։ Եարեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին դէպի գործ։ Ծերունի Մաչոի որդիքն արդէն սկսել են գաշտում իրենց վարը վարել։ Աշխատութիւնը սկսուել է ամեն տեղ։ Գիւղի մէջ մի անգործ մարդ չէ կարելի գտնել։ Ամեն ոք զբաղած է իր մշակութիւններով։

Առաւօտ է։ Ծերունու տան թոնրիկները վառում են. մէկի վրայ դրած են պինձէ անագին կթեսներ և խեցեղէն մեծ մեծ

պատկերներ ու կերակուր են եփում. միւսի մէջ հաց են թխում։ Հարսները, աղախիններին հաւաքած թոնիրների շուրջը՝ ընդհանուր շարժողութեան մէջ են։ Ցունը լցուել կերակուրների անուշահոտ շոգիով և ներկայացնում էր մի հսկայական խոհանոց, որի մէջ տեսնողը կը մտածէր, թէ ճաշ է պատրաստւում մի ամբողջ բանակ կերակրելու համար. և իրաւ, բացի ծերունու անտգին դերգաստանից՝ նրա սեղանից կերակրւում են բազմաթիւ հովիւներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում են նրա տանը։ Ամեն օր վառւում են նոյն թոնրիկները. ամեն օր պատրաստւում է կերակուրների նոյն քանակութիւնը։ Եւ ծերունու ժրաջան հարսները մի րոպէ հանգստութիւն չունին։ Պէտք էր ամենի մասին հոգ տանել, պէտք էր ամենին գոհացնել։

Բացի դրանից կային տնտեսական և ուրիշ շատ հոգսեր։ Ահա այստեղ, բակում, հարսներից մէկը կովերն ու ոչխարներն է կթում. միւսն օջախի վրայ կաթ է տաքացնում մածուն շինելու համար. երրորդը պանիր է մակարդում, չորրորդը հարում է խնոցին կարագ պատրաստելու համար։ Նրանց շուրջը վազվզում են բազմաթիւ երեխաներ և խաղում նորածին գառների և հորթերի հետ։ Բաղցը է նայել այդ գիւղական բախտաւորութեան վրայ։ Մանուկ և գառնուկ, երկուսն էլ աճում են միասին. դրանք այն երկու հարստութիւններն են, որոնցով ուրախանում, պարծենում է գիւղացին։

Բակի արևահայեաց կողմում, պատի տակ, մինը միւսի վրայ կարգով շարուած են մի քանի հարիւր մեղրի փեթակներ։ Ապրիլեան արեգակը թափում է այստեղ իր ջերմ ճառագայթները։ Մինչդեռ հարսները միւս կողմում զբաղուած են իրանց գործով, ծերունի Խաչօն այստեղ բաց է անում փեթակների դռնիկները։ Ճանճերն ուրախ ու զւարթ դուրս են թափւում ծակերից, սաւառնում են նրա ալեոր գլխի շուրջը, պզպզում, վժվժում, թռթռում, և օդը թնդում է միլիոնաւոր միջատների ձայնից։ Գտնւում են նրանց մէջ և այնպիսի չարաճճիներ, որ կծու համբիւրներ են մատուցանում ծերունու խորշոմած երեսին։ Բայց նա ամենևին ցաւ չէ զգում, միայն ձեռքով քշելով՝ ասում է. «Ա՛յ չար սատանայ. ինչ վատութիւն է արել քեզ Խաչօն։»

Ցառավերիս լոտրը ցիր ու ցան ապաշում էր
սիրուն Ժաղիկների, դալար խոտերի մէջ։
Ժովիւ ընկերներս կիսու էին ինչանից,
ղաստ կիսու..., բայց ես միանակ էի։
Մանրիկ մանուշակներն իրանց խաժուժ
աչքերով խլզում էին երեսս, սիրուն
սէգն ու սիւմբիւլ խոտը զորգի պէս
փռուել էր գետակ, նապա խնկաժաղիկը,
մի ժամի կնդրուկի պէս բոլորում էր։
Խոտերի մէջ խումբ խումբ ցցուած կա-
նաչներն էլ նորանարսի պէս, կապ կար-
միր փիղերը փռած, փռիռալով, լուռ
մրմնջում էին միմեանց կիսիւրի կիսը։
Ոիմ ու դիմս նակայի պէս, թիւնկը դը-
ուած լիրան լանջին, յոգնած ժիրուկը

պէս կոթնել, կղզին էր ընկել Կինաուրոյ ծայրը: Նրա կրծքից, իսոր արդեկ, լուռ խոխոջով հոսում էր պարզ ու վճիտ առուակը: Գլխին վիրև, ժայռի գլխին, առուակի մօտ, ամբն գլոր անուշ հոտողով ձկլում, թռչկոտում էին ծիրան ու արգու

, լորն ու սարիկը, մեղուն ու թիթեռն ու ծպուռը:

---

69. ԱՆԵՐԵՒՈՅԹ ԹՇՆԱՄԻ

—Պապի, սիբելի պապի, եկ՝ տես, ինչ է եղել քո ընծայած սիրուն խնձորենին, արտասուելով ասում էր Գուրգէնը:

—Շուտ, գնանք, պապի, հառաչելով կանչում էր Վարդգէսը: Անցեալ տարի նա այնչափ լաւ ծաղկեց, գեղեցիկ խնձորներ տուեց, իսկ այս տարի նրա մանրիկ տերևները թառամել են, քնքոյշ ծաղիկներն առանց բացուելու փչացել են:

Պապը թոռնիկների հետ մտաւ պարտէզ:

—Պապի, տես, մեր ծառի վրայ ոչ մի թրթուր չկայ, ասաց Գուրգէնը:

—Կեղևն էլ անվնաս է, ոչ մի տեղ չորացած չէ, վրայ բերեց Վարդգէսը:

—Պապի, ես կարծում եմ, էն անպիտան մրջիւնները են արել, մէջ մտաւ Գուրգէնը. անցեալ օրը նրանք մեր ծառի վրայ բարձրանում, իջնում էին, ես ուզեցի նրանց կոտորել, բայց պարտիզպանը չթողեց:

—Հանգիստ կացէք, ասաց պապը, մրջիւնները չեն փչացրել ձեր ծառը:

—Հապա ով է արել, ասացին մանուկները: Մենք խնձորենուն շատ լաւ ենք խնամել, քո ասածի համաձայն կեղևը միշտ մաքրել ենք, տերևները թրթուրներից ազատել ենք, հողը փափկացրել և ժամանակին ջրել ենք:

Դուք մեղաւոր չէք, սիրելիս, ասաց պապը. թշնամիները չեն երևում, նրանք հողի մէջ՝ արմատների մօտ են. այս բոպէին դուք կը տեսնէք նրանց:

Պապի կարգադրութեամբ պարտիզպանը փորեց խնձորենու շորս կողմը. քիչ յետոյ մանուկները տեսան խնձորենու արմատների մօտ մի քանի հատ մեծ մեծ թրթուրներ սպիտակ գոյնով, շականակագոյն գլուխներով:

—Ահա այս թրթուրներն են ձեր խնձորենին չորացրել, ասաց պապը:

—Ի՞նչ զզուելի են, ասացին մանուկները:

—Բայց ով է դրանց այստեղ դրել, հարցրեց Վարդգէսը:

—Ձեր սիրելի մայիսեան բզէզները, ասաց պապը. այն բզէզները, որ մայիսին շատ մանուկներ ծառերի վրայից հաւաքում, խաղում են: Ա՛յ, հէնց այդ բզէզների էգերը փափուկ հողի մէջ ածում են քորոցի գլխի չափ ձուեր, ձուերից դուրս են գալիս մանր թրթուրներ. սկզբում սրանք ագահաբար ուտում են բոյսերի մացորդները

և մեծանում են: Ձմրան ցրտերին խոր են գնում և միասին խմբուելով, թմրած մնում են: Գարունը տաքանալով, նորից արթնանում են. այս անգամ աւելի ագահ ուտում են ցորենի, գարու, ծաղիկների և առհասարակ մատաղ բոյսերի արմատները և նրանց չորացնում են. երբորդ տարին նրանք ուտում են փոքրիկ ծառերի արմատները, իրանք մեծանում են, իսկ ծառերին չորացնում են։

—Պապի, տես, այս մէկ թրթուրը պատեանի մէջ էր:

—Այո, սիրելիս, երբորդ տարում նրանք պատենաւորւում են, իսկ չորրորդում պատեանից դուրս են գալիս այն շականակագոյն բզէզները, որոնց դուք լաւ ծանօթ էք:

—Ուրեմն այդ թրթուրներն երեք տարի հողի մէջ ապրելով՝ միշտ արմատներ են ուտում:

—Այո, ասաց պապը։

—Պապի, մայիսեան բզէզներն էլ ծառերը փչացնում, չորացնում են:

—Ոչ, նրանք միայն կրծում են տերևները և մատաղ պտուկները: Որովհետև այս բզէզները փնտակար են, դրա համար որտեղ շատ են լինում, այնտեղ պարտիզպանները ծառերի վրայից թափ են տալիս և հաւաքելով՝ խոզերին կերակուր են անում։ Բարեբաղդաբար թռչուններն էլ նրանց կոտորում, ոչնչացնում են, եթէ ոչ՝ նրանք ծառերին շատ վնասներ կը տային:

Զրոյց.

Ցլգլպով կոպպ, կանգակ
գնա է գալիս ժիռ թարթ
կարկաշանոս վնթար ատուակ
ծպարար, շրունոր ապրիրն:
Թարոր կրծիկ գած թուլիս,
Ուրծար փրփորբս է խառնամ:

Ծպտոր կրծին փրրիս
գնալ, աղամաղ է դառնում:
Ու վարդարում կուրծիր վնթ,
կուրծիր նոր նակպր,
Անվիրգ իրգով գուվթ է ապում
թր գոյուրիս վկայր:

---

71. ՍԳԱՒՈՐ ԱՐԱԳԻԼԸ

Մեր պարտէզի բարձր բարդի ծառի ճիւղերի վրայ երկու աբագիլ իրենց բոյնն էին հիւսել. մի ամուր և մեծ բոյն, այնպէս որ արագիլներն իրենց ձագերով հանգիստ տեղաւորւում էին այնտեղ:

Վաղուց էր այդ բոյնը. աչքս բացած օրից ես տեսել եմ այդ մեր պարտէզի բարձր բարդու ճիւղերի վրայ։

Ամեն գարուն ձնծաղիկների երևալուն պէս գալիս էին արագիլները, այր ու կին, հսկայ թևերը գիւղի վրայ ծափ տալով և ուրախ-ուրախ լակ-լակ անելով՝ գալիս էին նրանք, կանգ առնում իրենց բնի վրայ, մի քիչ հանգստանում, յետոյ սկսում էին աշխատել։ փոխէ-փոխ թռչում էին, շիւղ, փետուր, խոտ գտնում, բերում և բոյնը կարկատում։

Անցնում էր մի ժամանակ, ու մի օր էլ մենք տեսնում էինք, երեք-չորս փոքրիկ ձագեր բնի միջից գլուխներն օրօրում էին:

Մեր՝ երեխաներիս, աչքը չէր հեռանում նրանցից. արագիլների

ամեն մի շարժումը դիտում էինք. մեկ տեսնում էինք, թէ ինչպէս ծնողները հերթով կերակրում էին ձագերին. մեկ տեսնում էինք, թէ ինչպէս հայրն ու մայրը ձագերին թևերի տակ առած՝ թացնել էին սովորեցնում, հետները տանում էին ճտիքը օրօր համար ու յետ բերում։

Ոբ երբ աշունը գալիս էր, մեր արագիլներն ամբողջ բնատանիքով մի երկու պատյտ էին անում մեր գիւղի վրայ և թռչում, գընում հեռու, հեռու...

II.

Մի տարի մեծ գժբախտութիւն պատահեց։

Հայը արագիլը նստել էր ընի վրայ, հսկում էր երեք նորածին ձագերին, իսկ մայրը արագիլը գնացել էր ճտիքը նախաճաշելու։

Քաղաքից եկել էին որսորդներ, այդ անգութները կրակեցին հրացանները և սպանեցին խեղճ մօրը։

Օրն եկաւ՝ ճաշ դարձաւ, մայրը չեկաւ. սպասեց հայր արագիլը, սպասեց, նորից չեկաւ։ Երեկոյեան մօտ գնաց ճտիքը փնտռելու մայր արագիլին։

Տեսնելու բան էր, թէ ինչպէս խեղճ թեւակոտոր կնոջ դիակի վրայ լակ-լակ անելով լացեց, վեր ու վար թռաւ, թևերով մեկ խփում էր երեսն գլխին, մեկ՝ գետնին...Տարն ինչ. մութը ոբ կոխեց, թևերը քաշ տալով՝ հասաւ տուն, որբ ձագերին ծուարեց թևերի տակ և լռեց։

Այնուհետև մենք չէինք լսում նրա ձայնը. առաւօտ վաղ թռչում էր ընին մօտիկ դաշտերը, աչքը միշտ որոնելով ընի վրայ, պարէն հաւաքում, բերում, ձագերին տալիս։

Ձագերն երբ թեւաւորեցին, այն ժամանակ հայրը վերցրեց նրանց մէկ-մէկ և թռչել էր սովորացնում. ձագերը թռչում էին, գընում դաշտը և ուրախ լակ-լակով դառնում էին, տխուր նոր շուրջը ծափ տալիս, նրան ուրախացնում։

Եկաւ աշունը և նրանք միասին գնացին։

III.

Գարնանը մեր արագիլն եկաւ մէն-մենակ։ Բոլոր դիտելուց յետոյ գնաց ճտիքը, իմանալով կնոջ կարիւած տեղի վրայ, կանգնեց, կանգնեց և նորից եկաւ բոլոր։

Եւ ամեն օր գնում էր նա աշնանել, մեկ տաքի վրայ ժամերով տխուր կանգնում էր, վերը ծռած՝ գլուխը թևերի տակը։

Ինչպէս մենք խղճում էինք նրան, խղճում ու շատ, շատ սիրում...

Տեսնում էինք յաճախ, թէ ինչպէս մի ուրիշ արագիլ, մի անծանօթ նորը, մօտենում էր նրա ընին, նրա հետ լակ-լակ խօսում ու հեռանում։

Երբեմն էլ այդ եկուոր արագիլները փորձում էին նստել ընի մէջ, նրա կողքին, կռուցները քնքշօրէն քաշում էին նրա պարանոցով փետուրների մէջ, բայց նա մերժում էր և ուժով ընից հեռացնում։

Մի անգամ մի արագիլ ուղիղ երեք օր մեր արագիլի դռանը բաշ եկաւ. քանի մերը վանում էր նրան, նա նորից գալիս էր, թևերը փռում մերինի վրայ, գլուխը կոխում մերինի թևերի տակ։

Բայց մեր արագիլի սիրտը կոտրւած էր, նոր սէր ու նոր կին չէր ուզում։

Լուսնեակ գիշերներին յաճախ տեսնում էինք նրան մենակ թափառելիս դաշտերում ու լսում էինք նրա տխուր լակ-լակը։

Այսպէս նա տխուր ու սգաւոր տարեց երեք թէ չորս տարի, տարեց մենակ ու կատարեալ այրի։

Ամեն գարուն գալիս էր ու ամեն աշուն գնում։

Մի աշուն էլ գնաց և գարունը բացուեց. նա չերևաց. սպասեցինք, սպասեցինք—չեկաւ ու չեկաւ։

Բուսնը ճաց, ճաց, ինքնիրեն քանդուեց։

Մի գիտէ, արդեօք ուր թաղեց իր վշտահար սիրտը մեր սրտաւոր, մեր մենաւոր արագիլը...



Դիտեցէք այս պատկերը. տարւայ որ ժամանակն է. որտեղ են կանգնած արագիլները, ինչ են անում. պատմեցէք ձեր դիտածը և գրեցէք

73. Խուլ ու համրը

—Կանչեցէք, խնդրում եմ, խնդրում եմ կանչեցէք իմ դուստր Արփիկին, ասաց հայրը խուլ ու համրերի դպրոցի ծառային։ Երեք տարի է, որ ես նրան չեմ տեսել. այս րոպէիս եմ օտարութիւնից վերադարձել։

—Այժմ դասամիջոց է, պատասխանեց ծառան. կ'երթամ վարժուհուն կ'ասեմ։

Քիչ յետոյ զուռը բացւեցաւ, Արփիկը վարժուհու հետ ներս մտաւ։

Հայրը վրայ պրծաւ, գրկեց, համբուրեց և ինքն իրան ասաց.

—Ա՜խ... ինչպէս մեծացել է, որչափ սիրունացել է իմ հոգեակս։ Յարգելի վարժուհի, խնդրում եմ՝ ասացէք աղջկաս, որ մի բան ասէ նշաններով, գուցէ հասկանամ։

Վարժուհին ծիծաղալով հարցրեց.

—Արփիկ, ո՞վ է քեզ մօտ եկել։

—Հայրս, պատասխանեց աղջիկը։

—Ինչ.. միթէ իմ Արփիկը խօսել գիտէ, միթէ նա լսում է. ոչ, ոչ, այդ անկարելի է.. ասա, աղջիկս, միթէ դու խօսում ես, ասա, շուտ...

—Յարգելի պարոն, մէջ մտաւ վարժուհին։ Արփիկը չի լսում ոչ ձեր ասածը և ոչ էլ իր խօսածը. զուք գիտէք, որ նա խուլ է, բայց նա նայելով ձեր շրթունքների շարժմունքներին, հասկանում է՝ թէ ի՞նչ էք խօսում և ձեզ կարող է պատասխանել։

Հայրը տարակուսանքի մէջ ընկաւ. նա մօտեցաւ և աղջկայ ականջից հարցրեց.—Ուրախ ես, որ հայրդ վերադարձել է։

Աղջիկը տրտում նայեց ու բան չասաց։ Հայրը զարմացաւ, իսկ վարժուհին ժպտաց և ասաց.

—Արփիկը չպատասխանեց, որովհետև չտեսաւ ձեր շրթունքների շարժմունքը. կրկնեցէք ձեր հարցն այնպէս, որ նա տեսնի ձեր բերանը։

Հայրը նայեց աղջկայ երեսին և ասաց.—Ուրախ ես, որ հայրդ վերադարձել է։

—Այո՛, այո՛, ուրախ եմ, պատասխանեց Արփիկը։

Աւելի լաւ համոզելու համար, նորից հարցրեց.

—Արփիկ, ի՞նչ է մօրդ անունը։

—Աննա։

—Քրոջդ։

—Հեղինէ։

—Այս ի՞նչ ուսումնարան է։

—Խուլ ու համրերի։

—Երկու անգամ տասը ի՞նչ կանէ։

—Քսան։

Հայրն ուրախութիւնից լաց եղաւ — Շնորհակալ եմ,

օրիորդ, հարիւր անգամ, հազար անգամ շնորհակալ եմ։ Նե-
րեցէք, որ չեմ կարող արտայայտել շնորհակալութիւնս։

—Ձեր աղջիկը գիտէ նաև գրել, կարդալ, համրել, հար-
կաւոր բաների անուններ, ասաց վարժուհին. մի երկու տա-
րուց յետոյ աւելի բան կը սովորի։ Մեր դպրոց աւարտող-
ները կեանքի մէջ իրենց համար զբաղմունք գտնում են,
ոմանք խանութներում լաւ ծառայում են։

Հայրը կարմանքից քարացել, մնացել էր. վերջապէս ա-
սաց.—Թոյլ տուէք տեսչին ևս շնորհակալութիւն յայտնել։

—Նա այստեղ չէ. դուք շնորհակալութիւն յայտնեցէք
նոյնպէս այն խուլ-համր աղջկան, որ Արփիկին մօր նման
նայում, խնամում է. նա Արփիկին կարի դաս է տալիս,
կարդ ու կանոնի է սովորեցնում, ամեն բանի մէջ օգնում
է և միշտ հետն է լինում։

—Կանչիր, Արփիկ ջան, կանչիր քեզ խնամք տանող
օրիորդին, ասաց հայրը։

Փիչ յետոյ Արփիկը նրա ձեռքը բռած բերեց հօր մօտ։

—Ահա, հայրիկ, ահա այն բարի աղջիկը, որ ինձ ամեն
բանի մէջ օգնում է, ասաց Արփիկը։

—Ա՜հ, պատուական օրիորդ, գոչեց հայրը.—Բարի աղջիկ,
ընդունիր իմ անկեղծ և խորին շնորհակալութիւնը, թող
Աստուած ինքը հատուցանէ ձեզ, ես լեզուով անկարող եմ ա-
սել այն, ինչ զգում եմ.

—Դուք ձեր աղջկան այսօր հիւր տարէք, ասաց վար-
ժուհին, թող նա մի քիչ ձեզ մօտ մնայ և կարօտն առնէ։

—Շատ շնորհակալ եմ, ասաց հայրը և յայտնեց Արփի-
կին, որ շտապեր հագնի։

Մի քանի րոպէից յետոյ Արփիկը հօր հետ դուրս եկաւ
դպրոցից.

—Ո՜հ, ինչ գեղեցիկ է արևը, ասաց Արփիկը և ուրախ
գնաց իր հայրիկի հետ։

Ամէն և ամբողջ բանի մէջ նրա
պէտք էր մի իրոք բաղդաւոր։ Զար-
մարդիկ կապել էին նրա ղդրայով և
չգել էին բաղդի մէջ։ Բաղդը խու-
նաւ, ցուրտ և մութն էր։ Անկողնու
պէս նրա գլուխ չդած էր դոր ժողոր.
նրա գլխին էին միայն նայ և գուր։
Ցաւոր գարիբիր նստած էր նա ալնպէս
գուսարան, Կիսաբաց և գիսուր։
Աչքը սակաւ էր լուսաւորում
բաղդի ամէն պայծառութիւն և բարի օր-
էրիկ չէր թափանցում նրա մէջ։
Օրիորդ նստած մնացած էր. ես իր սի-

[illegible] ագռավաձագերի, իր փոքրիկ մատակների մասիրա. մրանում էր թէ կարդալի է նրանց բոլորովին մոռացել են, արդէ միւսն [illegible] իրաւ: Ճանկարծ զարհուրելի ծարաւ աւելացաւ արծիւը: -Արծիւ, ա՛յ արծիւ, կաւդիս բաւդարկիալը, նարդիր լուսամուրիա ծար, պարդիր ինչ, թէ հալ է միտամ երկրի վրայ, երգիր հոգ իր երգդ:

—Ո՛չ, պատասխանեց արծիւը, քո պատուհանը շատ փոքր է, ինձ տեղ չկար նստելու։ Ես չգիտեմ, թէ ինչ է կատարւում երկրի վրայ, ես շատ սակաւ եմ ցած գալիս գետնի վրայ։

Ես շինում եմ իմ բունը ամենաբարձր քարափների և դարաւոր կաղնիների վրայ, հեռու չար մարդերից, որ նրանք չաւերեն իմ բունս։ Ես չեմ երգիլ, որովհետև ես երբէք չեմ երգում երկրի վրայ։ Ես բարձրանում եմ շատ բարձր և իմ

երգերը լսում է միայն յաւիտենական արևը...

Այս ասելով, թափ տուաւ արծիւն իր հզօր թևերն և հպարտութեամբ սլանալով դէպի երկինք, անհետացաւ կայանաւորի աչքերից։

—Կարապ, կարապ, պատմիր ինձ՝ ինչ է լինում երկրի վրայ, երգիր ինձ քո երգը։

—Ոչ, պատասխանեց կարապը; ես չեմ կարող պատմել քեզ, թէ ինչ է լինում երկրի վրայ. որովհետև լողում եմ միշտ ջրումը—ջինջ և զով ջրումը, կանաչ եղէգնուտի մէջ։ Առաւօտը՝ արշալոյսի ժամանակ, երբ ջուրը դառնում է վարդագոյն, ես բարձր կանչում եմ արշալոյսին. բարև քեզ, ես չեմ երգիլ քեզ երգս, ես երգում եմ միայն մեռնելու ժամանակ...

Եւ կարապը սլացաւ օդի մէջ՝ թափ տալով իր արծաթափայլ թևերը։

—Ճնճղուկներ, ճնճղուկներ, նստեցէք պատուհանիս մօտ և պատմեցէք, թէ ինչ է լինում երկրի վրայ, երգեցէք ինձ ձեր երգը։

—Ճր՛թ. ճր՛թ, ժամանակ չունինք, մենք թռչում ենք հատիկներ հաւաքելու, որ ջրաղացպանը պատահմամբ շաղ է տալ։

Բայց ահա յանկարծ թռաւ մի գորշ թռչնակ, սաւառնեց պատուհանի առաջ և նստեց երկաթեայ վանդակի վրայ։

—Բարև քեզ, սոխակ. շնորհակալ եմ, սիրելի թռչնակ, որ ինձ այցելեցիր. պատմիր ինձ, թէ ինչ է լինում երկրի վրայ, երգիր ինձ քո երգը։

—Ես կը պատմեմ քեզ՝ թէ ինչ է լինում երկրի վրայ, ես կ'երգեմ քեզ համար, և սոխակն սկսեց երգել այնքան քաղցր, որ խեղճ կայանաւորն ուրախութիւնից լաց եղաւ։ Յարդի վրայ ընկած՝ նա լալիս էր և ականջ էր դնում։

—Երէկ առաւօտ՝ արշալոյսի ժամանակ երգեց սոխակը.

օրը թարմ էր և զով։ Ես թռչում էի քո տան մօտով. նրա-տեղի դարար ընկուզենու վրայ. բայց պատուհանի առջև՝ և անդադար երգում էի ու երգում... Օրօրոցի մէջ պառկած էր քո փոքր որդիդ և հարցնում էր. «Ո՞ւր է հայրիկս», և ականջ էր դնում իմ երգերիս... Քո ազգականները լայ են լինում՝ քեզ յիշելով։ Նրանք քեզ շատ են սիրում և շատ են ուզում քեզ տեսնել։ Մի յուսահատութիւն. Աստուած տեսնում է, որ դու անմեղ ես. չար մարդիկ դարձեալ քեզ կ'արձակեն և դու ապատ գուրս կը գաս լոյս աշխարհ, մաքուր օդի մէջ. Քո մանուկները կը շոյեն, կը համբուրեն քեզ։ Ամառուայ հանդարտ երեկոյին, երբ երկայն ստուերները կ'ընկնին ծառերից և արեգակը կը շողշողայ պատուհանների ապակիների մէջ, պատշգամբի վրայ նստած՝ կը պատմես քո երեխաներին, թէ ինչպէս էիր չարչարւում դու հայրենիքի համար... Կը սովորեցնես նրանց, որ մեծանան, չթողնեն չար մարդկանց չար գործեր անելու, որ նրանք չնեղանան վատ մարդկանց վրայ, այլ խնդրեն Աստծուն, որ բոլոր մարդիկ մէկ մէկու սիրեն, որպէս հարազատ եղբայրներ.. Եւ քո երեխաները քեզ կը հնազանդեն։ Երբ նրանք կը մեծանան, կը դառնան բարի և ազնիւ, և դու կը տեսնես, թէ ինչպէս կ'օգնեն նրանք ազքատներին։ Դու շատ երկար, երկար կ'ապրես. դու կը դառնաս ալեւոր, բայց սիրտդ միշտ հրճւանքով կը գարկի։ Եւ երբ դու կը մեռնես, բոլորը լայ կը լինեն և կ'աղօթեն քեզ համար։ Մի պայծառ արև օր կը տանեն քեզ դարար հանդստարան։

—Քո գամբարանի վրայ կը անկեն վարդի թուփ և ամեն արշալոյսի ես կը գամ երգելու քո շիրմի վրայ։

Ջմեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն,
Ծամբայ բացաւ դարիբներուն.
Իմ զարիբէն խաբար չի գայ,
Աչքս ճամբան դադար չկայ։

Ղարիբ երկիր ամպ ու մշուշ,
Իմ զարիբի սիրտն է քնքուշ,
Ոտ կը փոխէ՝ քոյր ու փուշ...
Հերիք մնաս, դարձիր վաթան.
Իմ սիրտէր ջան, ապիզ հար ջան։

Ջուրն է պրծել, կուգայ սարէն,
Սարէն, ձորէն... իմ աչքերէն...
Մի նորոգիր սրտիս հարէն.
Դարձիր վաթան, հողն անուշ է,
Հողն անուշ է, ջուրն անուշ է։

---

76. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԸ

I.

Մեզանից շատ ու շատ առաջ, հին ժամանակներում մի բլրի վրայ, փրփրալի գետակի ափին՝ մէկ մութ այր էր երևում։ Այրի մօտ նստած էր մի ոգայ. նրա մարմինը մերկ էր, ուսին ձգած ունէր գազանի մորթի. այս էր նրա հագուստը։ Մանուկը թէև տասը տարեկան էր, բայց այսօր նրան յանձնած է մի շատ մեծ, շատ պատասխանատու գործ։ Այս այրի մէջ վառում էր նրանց համար ամենապէտքական, ամենաանհրաժեշտ սրբազան կրակը. կրակը, որն երբէք չպէտք է հանգչի։ Ի՞նչ կարող էին անել նրանք առանց կրակի։ Մանկան ծնողները, բարեկամները չգիտէին, թէ ինչպէս կարելի է կրակ ձեռք բերել. այն ժամանակ մարդիկ չգիտէին, թէ ինչ բան է լուցկին, ինչ է կայծաքարը։ Այս կրակն էլ նրանց պաղերը պատահմամբ ստացել էին կայծակից այրուող ծառից, դրա համար ամեն ժամանակ, գիշեր և ցերեկ, միշտ հսկում էին, հերթով պահում էին կրակը։ Այս կրակը ոչ միայն նրանց տաքացնում, կերակուր պատրաստելու միջոց էր տալիս, այլ և պաշտպանում էր նրանց

այրը առիւծներից, արջերից և ուրիշ պատատող գազաններից. որ-
բանք բոլորն էլ վախենում էին կրակից և այրը ներս չէին մըտ-
նում։ Վերջապէս կրակի պատճառով ամենքն էլ հաւաքւում էին
օջախի չորս կողմը և ամենքն էլ իրար հետ կապւում էին ընկերա-
կան կեանքով։ Մանուկը պէտք է այդ կրակը պահէր, նա պէտք է
հսկէր. միշտ պէտք է փայտեր նետէր, որ կրակը չհանգչէր։ Այն
այրն ունէր մի անցք, որտեղից մարդիկ ներս ու դուրս էին ա-
նում. այդ անցքից ներս էր ընկնում արևի ճառագայթները, այդ
տեղից դուրս էր գալիս կրակի ծուխը։ Կար ժամանակ, որ այրում
վայրի գազաններ էին ապրում. մարդիկ նրանց հետ քարէ կացին-
ներով, քարէ տեգերով, նետերով, սուր մահակներով այնչափ ժա-
մանակ կռիւ արին, զոհեր տուին, մինչև որ այդ այրը նրանց ձեռ-
քից խլեցին և իրենց բնակարան դարձրին։ Այս այրում ծնւել, մե-
ծացել էին երեխայի պապերն ու ծնողները, այս տեղն էր ծնւել և
ինքն երեխան։ Այսօր նա շատ զոհ և հպարտ է, որ կրակի պահա-
պան իրեն են նշանակել։ Կրակի ծուխը խիստ կծում էր նրա աչ-
քերը, բայց նա վարժուց սովոր է այդ բանին. մի բան միայն վատ
է. նա քաղցած է, շատ քաղցած։ Բոլոր տղամարդիկ անա չորս օր
է՝ որսի են գնացել և դեռ չեն վերադարձել. կանայք և երեխաները
մի քանի ժամ առաջ դուրս եկան անտառ կաղին ճարելու։

Տղան թէև քաղցած է, բայց սովորել է համբերել։ Այն ժա-
մանակ մարդիկ չգիտէին, թէ ինչ բան է երկրագործութիւնը, ինչ
է հացը, ալիւրը, ցորենը։ Նրանք ընտանի կենդանիներ չունէին,
չգիտէին, թէ ինչ է կաթը, մածունը և այլն։ Նրանք ուտում էին
որսի միս, ձուկ, մրգեր և բոյսեր. մի խօսքով՝ նրանք դեռ վայրե-
նիներ էին։

II.

Մանուկը նստած է կրակի մօտ և փայտ է աւելացնում։ Յան-
կարծ մի սարսափելի մռնչիւն լաւեց. քաջասիրտ տղան վերցրեց իր
քարէ կացինը, նետն ու աղեղը և շուտով դուրս վազեց, որ այրը

պաշտպանէ, թշնամուն ներս չթողնէ։ Նրա առաջ բացւեց մի սար-
սափելի տեսարան. նա տեսաւ երկու ահագին կենդանի, մէկը մա-
մոնգռն էր, որ երեք սաժէն երկա-
րութիւն ունէր, իսկ բարձրութիւ-
նը մեր այժմեան փղից շատ բարձր։
Այս վիթխարի գազանը կռւում էր
մի ուրիշ սարսափելի գազան
ոնգեղջիւրի հետ. սա թէև մեռած
ընկած էր, բայց իր եղջիւրով ծա-
կել էր մամոնգի փորը. վերջինը
սոսկալի մռնչիւն արձակելով՝ ըն-
կաւ։ Սրա մռնչիւնից դղրդաց ամ-
բողջ շրջակայքը։ Քաջասիրտ տղան դարմացած բաւական երկար
ժամանակ դրանց կռիւն էր նայում, վերջապէս ուշքի եկաւ և վե-

բաղաքաձաւ այրը։ —Օ՜, ինչ զժբախտութիւն, բղաւեց նա, կրակը հանգել է... Նա հասկացաւ, որ այլ ևս իրեն փրկութիւն չկայ, և իրեն մահուան կը դատապարտեն։ Այս միտքն այնչափ խիստ ազդեց նրան, որ նա սարսափից դուրս փախաւ այրից. նա փախչում էր անտառներով, սարերով և ձորերով. յանկարծ ծառի տակ տեսնում է իւրայիններին. տղան սարսափից քարացած կանգ առաւ. նա տեսնում է, որ իր ծնողներն ու ազգականներն իրենց որսած եղջերուները, խոզերը մի կողմ դրած, շրջան կազմած, քարէ դանակներով միսը կտրտում, ուտում էին, իւկ միւսները ծծում էին ոսկրի ծուծը և իրենց քաղցը յագեցնում։ Քաղցը մոռացրեց տղայի երկիւղը և նա մօտենալով իւրայիններին՝ կերակուր խնդրեց։

—Իսկ կրակը, կրակը, գոչեցին ամեն կողմից...

—Կրակը... հանգաւ, դողալով պատասխանեց տղան։

Մեռելային լռութիւն տիրեց... Կրակը հանգաւ... այժմ վայրի գազանները համարձակ կարող են ներս խուժել այրը և բոլորովին յօշոտել, առանց կրակի ցրտից պէտք է սառչին, առանց կրակի մութեան մէջ պէտք է մնան. ահա թէ ինչ էին մտածում...

—Մահ անհեռանդին, մահ, գոչեցին ամեն կողմից։

—Մի ապանէք տղային, մէջ մտաւ մի օտար ծերունի, որ միացել էր խմբին որսի ժամանակ. մի ապանէք, ես կարող եմ կրակ հարել, ես գիտեմ թէ ինչպէս պէտք է կրակ անել։

—Ինչպէս, ինչպէս, զարմացած հարցրին ամենքը. նրանք վեր կացան և կատաղելով առաջնորդեցին ծերունին դէպի այրը։ Ծերունին վերցրեց մի փոս ընկած կոճղ, խրեց նրա մէջ մի երկար փայտի կտոր և սկսեց ուժեղ ու արագ պտտացնել։ Սաստիկ շփումից փայտը տաքացաւ և կայծեր դուրս թափան։ Ուրախութեան ճիչը թնդացրեց օդը. ոչ ոք չէր սպասում, որ այդպէս հեշտ կերպով կարելի է կրակ ստանալ։

III.

Տղային ներեցին. նա կենդանի մնաց և սիրեց ծերունուն. ծերունին էլ նրան սիրեց և շատ բաներ սովորեցրեց։ Նրանք միասին ձուկ էին որսում, թրթուրներ և սողուններ էին որոնում և կաշէ տոպրակի մէջ նրանից կերակուր էին պատրաստում։ Այս կերպ կերակուր եփելը շատ զարմանալի է մեզ համար։ Նրանք փոքրիկ քարեր կրակի մէջ ձգելով՝ շիկացնում էին. ապա հանելով լցնում էին տոպրակը, որի մէջ լցրած էր ջուր և միս. քարերի տաքութիւնից ջուրը եռ էր գալիս և միսն էլ եփւում էր։ Իհարկէ, այս կերպ եփած կերակուրը մաքուր չէր կարող լինել, բայց մարդիկ մաքրութեան մասին շատ քիչ էին մտածում։ Նրանք իրենց երեսներն ու ձեռքերն անդամ չէին լուանում, մազերն երբէք չէին սանրում։

IV.

Դուք կարծում էք, թէ այս ամենը մի որևէ հեռաւոր, անմարդաբնակ, Ռոբինզոնի ապրած կղզու նման մի տեղում է եղել՝ ոչ. այս ամենը կատարւել է նաև մեր երկրներում, բայց դա շատ ու շատ հին ժամանակներումն է եղել, մի այնպիսի ժամանակում՝ երբ երկրի վրայ դեռ ևս գոյութիւն ունէին մամոնդներ, երբ ոչոք չգիտէր՝ ինչ է երկաթը, բրօնզը և ուրիշ մետաղներ, երբ բոլոր գէնքերն ու գործիքները շինում էին քարից, երբ գրել-կարդալու մասին ոչ մի գաղափար չունէին։ Այն ժամանակ մարդիկ երկրագործութեամբ չէին պարապում, ընտանի կենդանիներ չունէին, տուն շինել չգիտէին։ Այդ ժամանակն ահա կոչւում էր *նախապատմական* շրջան։

Այժմ հարց է առաջ գալիս. եթէ այն ժամանակ գիրք, գրականութիւն չկար, ապա այժմ մարդիկ ինչպէս կարողացել են իմանալ՝ թէ այն ժամանակ ինչպէս էին ապրում նախնական մարդիկ, ինչպէս էին հագնւում, ինչ էին ուտում, ինչ գործիքներ ունէին և այլն և այլն։

Երկրի զանազան կողմերում կան հին գերեզմաններ, դեռերի և ծովերի ափերին խոր այրեր։ Գիտնականները փորում, հետազօտում են այս տեղերը. մարդկանց ոսկրների հետ միասին գտնում

են նաև գործիքներ, ամաններ, հագուստի մասեր, կենդանիների և թռչունների ոսկորներ և այլն։ Այս ամենից նրանք իմանում են, թէ ինչ տեսակի և ինչ մեծութեան թռչուններ ու կենդանիներ կային այն ժամանակ։ Ոսկորների հետ գտնւել են քարէ նետեր, գործիքներ և այլն։ Այս տեսակ հետազօտութիւններից գիտնականները նոյնպէս դուրս են բերել երկրի կլիմայական փոփոխութիւնները այնտեղ, ուր այժմ ամառն էլ սառնամանիք է. մի ժամանակ այնքան տաք է եղել, որ այնտեղ ապրել են տաք գօտու կենդանիներ և բոյսեր։ Գիտնականները գտել են նաև բնակարանների ձեւերը — օրինակ, անտառում տեղերում ապրել են ծառերի վրայ, ինչպէս այժմ կապիկները։ Գետերի, լճերի և առնտառակ ճահճոտ տեղերում բնակարանները շինել են ցցերի վրայ։ Գտել են նոյնպէս քարեայ, ոսկրեայ զարդարանքներ։ Մինչև օրս էլ շատ վայրենի ցեղերը սրանցով են զարդարում իրենց մարմինը։ Նոյն տեղերում գտել են նաև նկարներ, որոնց վրայ կարելի է տեսնել նախնական մարդկանց հագուստները, զէնքերը, նրանց որսը, պատերազմը և այլն։ Այս շրջանն էլ կոչւում է քարէ դարաշրջան։ Այս ժամանակամիջոցը տեւել է մի քանի հարիւրաւոր տարիներ և ինչքէ նրա սկիզբը նման չէ եղել վերջինին։ Այն՝ ինչ եղել է քարեշրջանի սկզբներում, մեծ փոփոխութեան է ենթարկւել վերջերում։ Սկզբում մարդիկ նոյնիսկ կրակ չունէին և ամենաթշւառ արարածներն էին երկրի վրայ. նրանք պաշտպանութեան ոչ մի զէնք չունէին և հեռդհետէ կ'ոչնչանային երկրի երեսից, ինչպէս անհետացել են մամոնդները և այլ կենդանիները, եթէ նրանք չգտնէին կըրակը, զէնքեր ու գործիքներ չհնարէին։ Նրանք ընտելացրին շանը և դարձրին իրենց հաւատարիմ ընկերը. այս շունն է, որ շատ դէպքերում օգնում և ազատում է մարդուն վտանգներից։ Նախնական մարդը սանձահարեց վայրի ձիուն և հարկադրեց նրան աշխատել իր համար. վայրի կովը, խոզը, ոչխարը դարձան նրա ընտանիքին կերակրողներ։ Այսպէս մարդը հեռդհետէ դարձաւ աշխարհի տէրը. բոլոր կենդանիները, ձկները, թռչունները փոխանակ նրան վնասելու այժմ կամ հպատակւել են նրան և կամ վախենալով փախչում են նրանից։ Անցան հազարաւոր տարիներ. մարդիկ այժմ փոխանակ քարէ զէնքերի՝ բրոնզից շինեցին, դրա համար էլ այս շրջանը կոչւեց բրոնզի շրջան։

Անցան դարձեալ դարեր. մարդիկ սովորեցին երկաթէ զէնքեր և գործիքներ պատրաստել. հասաւ երկաթէ շրջանը, որը շարունակւում է մինչև մեր օրերը և ներկայումս էլ մենք ապրում ենք երկաթէ շրջանում։

Նախնական մարդն քնում էր այրերում կամ ծառերի վրայ, իսկ այժմ մարդիկ ամբողջ երկրագունդը ծածկել են քաղաքներով, բազմայարկ տներով ու գանազան գործարաններով։ Նա սկսեց վարել հողը. երկրագործութեամբ պարապեց և շինեց ջրատացներ, հողմաղացներ և շոգեաղացներ և այլն։ Մարդը հնարեց նաւեր, շոգենաւեր, շոգեկառքեր, տիրապետեց ծով ու ցամաքին և այլն։

Նախնական մարդը սարսափում էր կայծակից, իսկ այժմ մարդիկ խլում են նրա էլէքտրական այժը։ Էլէքտրական այժով մարդիկ հեռագիրներ են տալիս, հեռախօսներով խօսում, լուսաւորում և այլ շատ բաների համար գործածում։ Այս այժով մարդիկ անդին գընացքներ են շարժում և թռչունից էլ արագ սլանում։

Նախնական մարդը համարել չգիտէր, իսկ այժմ մարդիկ հաշւում են արեւի և աստղերի հեռաւորութիւնը։ Նախնական մարդը գրել-կարդալու մասին գաղափար չունէր, այժմ նա գտնում է երկրի ու երկնքի գաղտնիքները։ Տեսնելով թէ ինչպիսի ոչնչութիւնից մարդը դարձաւ աշխարհի տէր, մենք վստահ կարող ենք լինել, որ միշտ էլ նա առաջ կը գնայ և աւելի լաւ կեանք կըստեղծէ իրեն համար։ Իզուր չէ ասել բանաստեղծը. ,,Աշխարհում շատ մեծ այժեր կան, բայց մարդուց ուժեղ ոչինչ չկայ''.

77. Սպիտակ զգեստ

Անարդ, խայտառակ մահուան մատնուած,
Հունգարացի կոմսը շղթայակապ էր,
Նա օգնել ուզեց իր խեղճ հայրենեաց,
Հպարտութիւնը խիստ վիրաւորած էր։
Նա ստրուկների հոգով ստորացած՝
Վաղուց անողորմ թշնամի դարձաւ
Եւ միշտ կուելով ընդդէմ այդ չարեաց,
Կոմսը կախելու դատապարտուեցաւ։
Հազիւ նա եղաւ քսան տարեկան,
Բայց պիտի մեռնէր։ Մահը չարիք չէ,
Այլ սփոփիչ է վշտին հոգեկան։
Բայց մեռնել անարդ, խայտառակ մահով,
Կախաղան ելած, ծաղր ու ծանակով,
Դառնալ կերակուր սև ագռաւների՝
Ահա նախատինք, չարիք սոսկալի։
Առաւօտը նա մօրը գրկելով,
Ասում էր արտում. «Մայր, մնաս բարով,
Անաւասիկ ես միակ որդիդ եմ,
Մատաղ հասակիս դատապարտուած եմ
Կարճօրեայ կեանքիցս ես անջատուելուն.
Անհետ պիտ կորչին ինձ հետ իմ անունն
Եւ իմ պատիւս։ Մնդրում է որդիդ,
Մայր, որ դու փրկես քո խեղճ զաւակիդ։
Ո՛չ պատերազմի փոթորիկներում
Ան չեմ զգացել, ոչ ծրիում, հրում.
Բայց վաղուան օրը՝ ելած կախաղան,
Ես պիտի դողամ տերևի նման»։
Մայրն ասում էր մխիթարելով.
«Դէհ, չլվանենաս, սիրած զաւակս,
Ես պալատ կ'երթամ և, աղերսելով,
Արքունք կը թափեմ. ես իմ լացովը
Արքայի սիրտը, գութը կը շարժեմ.
Եւ առաւօտը, երբ կը տանեն քեզ
Դէպի կախաղան, պատշգամբի վրան
Թէ սև զգեստով կանգնած լինիմ ես,
Գիտցիր, զաւակս, անխուսափելի
Քեզ մահ կը լինի։
Ոչ ապաքէն դու, հրսկայի նման,
Յառաջ պիտ գընաս մահիդ յանդիման.
Հօ քո արիւնը հունգարական է։
Իսկ թէ սպիտակ շոր վրաս տեսնես,
Գիտցիր, որ մայրդ իր արցունքներով
Զաւակի կեանքը դարձրեց ապահով։
Թող դահիճներից դու բռնուած լինիս,
Բայց երբէք, որդեակ, չըդողաս—սարսիս»։

Կոմսն այն օրը Լանգիրպ է լինում,
Ու ամբողջ գիշեր մնում է ինած.
Իր էրապնիրում նա ծօրն է փրանում,
Պատշգամբի վերայ ապրպակ շոր նստած։
Ցուժկան կանգակի շայնն է ղողանջում.
Վազում են մարդիկ... Լանգիրպը լցվում.

Եւ զրգռապարուած պատնդանիներով,
Եղրայրած կոմսն առաջ է գնում։
Քանի՞- քանի ապէ պատգուռանիներից
Սիրոյնէ Իւ թափում կոմսի յիրենից.
Թնդիան շղում Իւ կանապի շեռիր
Ցիրգին բարի նորան ծաղիկներ.
Բայց կոմսը ոչինչ բան չէ նկատում,
Դէպի հրապարակ է ճիգն նայում
Սիլտի-ղ պատրաստում մայրն է կանգնած
Ժանգիաբ, անվրդով, սպիտակ շոր հագած։

Ո՜հ, կոմսի սիրտը թնդաց խիստ ուժգին.
Դէպի հրապարակ համարձակ քայլով
Ընթացաւ կոմսը՝ ժպիտն երեսին.
Անտրտում վերև բարձրացաւ փութով,
Զարթ և ուրախ գահիճի մօտ գնաց
Ու մինչև անգամ կախաղիս ժպտաց։

Բայց ինչու մայրը սպիտակ էր հագել,
Ո՜հ, խաբէութիւն։ Այսպէս կարող էր
Սուտ խօսել մի մայր, սոսկ բեկուած ահից,
Որ իր զաւակը չսարսէ մահից։

2. պատ.

1. պատ.

4. պատ.

3. պատ.

6. պատ.

5. պատ.

Դիտեցէք բոլոր պատկերները. տարբայ ծը ժամանակ 1.պատկերի նման ծառերը մերկ են լինում. երբ են ծառերի պտուղները ուռչում, ծաղկում և մանր պտուղներ տալիս՝ ինչպէս 2. 3. և 4. պատկերների վրայ երևում են։ Ե՞րբ են պտուղները հասնում և երբ են ծառերը տերևաթափ լինում՝ ինչպէս 5. և 6-րդ պատկերների վրայ տեսնում ենք։ Պատմեցէք ձեր դիտածը և գրեցէք։

79. ՄԱՐԳԱՐԻՏ

Ծովը մարդուն շատ թանկագին նվերներ է տալիս. բայց մարդը ոչ մի բան այնքան թանգ չէ գնահատում, որքան մարգարիտը։ Դեռ շատ հին ժամանակներում մարգարիտը կանանց ամենալավ զարդարանքն էր կազմում. Ներկայումս էլ բոլոր ազգերը շատ յարգում են մարգարիտը և գմայլում են նրա գեղեցկութեամբ։ Հարուստները մեծ գումարներ են ծախսում հազվագիւտ մարգարիտները գտնելու համար, իսկ խեղճ մարդիկ իրանց կեանքը վտանգի են ենթարկում, որպէսզի հարուստների համար մարգարիտ ճարեն։

Ծովի յատակին, ոչ խոր տեղերում, ապրում են լորձաթաղանթների տեսակին պատկանող ոգորմելի արարածներ։ Նրանց մարմինը պատած է երկու-փեղկանի խեցիներով։ Խեցին կանաչաւուն ցեխագոյն է և տեսքով շատ անդուրեկան։ Ամենից մեծը հազիւ կերակուրի ափսէի չափ լինի։ Ահա այս լորձաթաղանթն է, որ պատրաստում է այն հռչակաւոր մարգարիտը։ Այս պատճառով էլ լորձաթաղանթը կոչւում է մարգարտենի։

Բայց լսենք, թէ ինչ է ասում հին աւանդութիւնը մարգարտի մասին։

«Մարգարիտն — արտասունք է, նա հոսել է աստուածուհեան աչքերից, այս պատճառով էլ նա երկնային գեղեցկութիւն ունի։ Այս արտասունքները իբրև վճիտ ցող թափւում են յամաքի և ծովի վրայ։ Բայց ծովում նրանք չեն կորչում. հազարաւոր մարգարիտներ բարձրանում են ծովի մակերևոյթի վրայ, բաց են անում իրենց խեցիների փեղկերը և նրանց մէջ են ընդունում ցողի կաթիլները։ Ցողը այդ խեցիների մէջ պնդանում, սառչում և դառնում է մարգարտի հատիկ։ Եթէ ցողի կաթիլը, ինչպէս որ մաքուր է եղել երկնքից իջնելիս, այնպէս էլ մաքուր ընկել է խեցիի մէջ, ապա մարգարիտն էլ մաքուր կը լինի և արեգակի ճառագայթների տակ կը ցոլայ ծիրանի գոտու բոլոր գոյներով։ Իսկ եթէ ցողը ճանապարհին մթագնել է փոշուց. ապա մարգարիտն էլ կ'ստացի անմաքուր մութ գոյնի։

«Երբեմն պատահում է, որ մարգարտենին խեցիները բաց ա-բած աշխատում է ցողը բռնել, այդ միջոցին երկինքն ամպամած է լինում և որոտում ու կայծակ է ուղարկում երկրի վրայ, այն ժամանակ ահ ու սարսափ է պատում մարգարտենուն և նա շտապով բռնելով ընկած արտասուքը՝ կուչ եկած փախչում է ծովի յատակը։ Նրա երկիւղն ապրում է արտասուքի վրայ. սա էլ է կուչ գալիս, և այս կերպով ստացւում են մոնր, զժգոյն, մեծ մասամբ ծուռ ու մուռ մարգարիտներ»։

Ահա այսպէս պարզամիտ կերպով էին բացատրում հին ժամանակ մարգարտի ծագումը։ Բայց այժմ Արդէն ամենքը գիտեն, որ մարգարիտը ոչ թէ ուռած ցող է, այլ մի բշտիկ, որ երբեմն իբրև հիւանդութիւն առաջ է գալիս մարգարտենու խեցու ներքին երեսին։

II.

Բայց տեսնենք, ինչպէս է նա կազմւում։ Մարգարտենու խեցիները ներսի կողմից ծածկւած են սատափի շերտով։ Եթէ պատահաբար մի աւազի հատիկ է ընկնում լորձաթաղանթի մարմնի և խեցու մէջ, շուտով նա չորս կողմից պատւում է սատափի պինդ շերտով և այն ժամանակ...այն ժամանակ մենք կ'ունենանք մի մարգարիտ, այսինքն հիւանդագին մի բշտիկ, որ կազմւել է աւազի շուրջը։

Զինացիք վաղուց գիտէին, թէ ինչպէս է կազմւում մարգարիտը, և հիմա էլ նրանք կարող են այնպէս անել, որ մարգարտենին իրենց համար մարգարիտ պատրաստէ։ Նրանք բռնում են լորձաթաղանթը, բաց են անում նրա խեցու փեղկերը, մէջը դնում մի փոքրիկ տաշեղ կամ քար կամ սրանց նման մի ուրիշ բան։ Ձեռոյ

այս լորձաթաղանթը բաց են թողնում շրջափակված ծովային ջրի աւազանի մէջ։ Ժամանակ անցնելուց յետոյ նրանք նորից բռնում են լորձաթաղանթը և նրա խեցու միջից հանում են մարգարիտը։ Այս կերպով ստացած մարգարիտն այնքան էլ լաւ տեսակի չի լինում, բայց այնու ամենայնիւ իսկական մարգարիտ է, և ոչ ուրիշ բան։

Մարգարտենի որսն առանձին արհեստ է դարձել։ Որսն իսկսւում է ապրիլ ամսին և վերջանում է մայիսին։ Որսորդութեամբ զբաղւում են խեղճ մարդիկ, իսկ նրանց որսացածը բաժանում են իրենց մէջ հարուստ վաճառականները, որոնք շատ հնչին գնով վարձում են մարգարիտ որսացողների ամբողջ խմբեր։

Ամեն մի ջրասոյզ մէջքին կապած ունի մի գամբիւղ և մի սուր դանակ, որպէսզի պաշտպանուել կարողանայ շնաձուկից, եթէ այդ վտանգաւոր թշնամուն պատահի։

Հրամանատարի նշան տալուն պէս՝ բոլոր ջրասոյզները ընկղմում են ջրի մէջ 5—10 սաժէն խորութեամբ։ Այստեղ ժայռերի վրայ կպած են լինում մարգարտենիների խեցիները։ Անցնում է մի բոպէ, բոպէ ու կէս, երբեմն երկու բոպէ, և ահա ջրասոյզները դուրս են գալիս ջրից։ Ամեն մէկի գամբիւղի մէջ լինում են մի քանի խեցիներ, որ նրանք շտապով պոկել են ժայռի վրայից ու ձգել են իրենց գամբիւղի մէջ։

Բայց տարն այնքան էլ հեշտ ձեռք չբերուեց։ Ջրասոյզների երեսները ծամածուել են։ մի քանիսի քթից ու բերանից արիւն է հոսում, որովհետև երկար ժամանակ ջրի տակ են մնացել առանց օդի։ Բայց ոմն է նրանց ուշք գարձնում։ Ուստի հաղիւ մի փոքր շունչ առնելով՝ ջրասոյզները նորից սուզւում են ջրի մէջ և նորից ծովի յատակից դուրս են բերում մի քանի տասնեակ մարգարտենի։

Մարգարիտ որսալու համար պէտք է երկար վարժութիւն։ Բաւական չէ միայն սուզել գիտնալը։ պէտք է վարժուել՝ երկար ժամանակ ջրի տակ մնալ, իսկ սա հեշտ բան չէ։ Խեղճերի սրդիները փոքր ժամանակից վարժեցնում են այս արհեստին։ Դանն արհեստ։

Ահա այսպիսի տանջանքներով են ձեռք բերում մարգարիտնե-

ը։ Նրանց կոչում են ասուաածուքեան արտասուք։ Բայց աւելի ճիշտ չէր լինի, եթէ նրանց կոչէին արտասուք այն խեղճ ու կրակ երեխաների, որոնց խարազանով ու դաւազանով սովորեցնում են ջրասոյզի արհեստը։

Լոնդոնում 1851 թուին ցուցանանդէսում մի ոսկեզարդ ցոյց է տուել մի անգին մարգարիտ, որ ունեցել է երկու դիւյմ երկարութիւն և մօտ հինգ դիւյմ շրջագիծ։ Այս մարգարիտը, որից աւելի մեծը տեսնուած չէ, արժէ մինչև կէս միլիոն բուբլի։

Բացի մարգարտենիներից ուրիշ տեսակի լորձաթաղանթներ էլ կան, որոնք մարգարիտ են պատրաստում։ Նոյնիսկ Ռուսաստանում հնուց ի վեր որսում են առանձին տեսակի խեցգետիններ, որոնք մարգարիտ են պարունակում։ Դեռ 1488 թուին Մոսկուայի մեծ իշխան Յոհան Հանգարիայի թագաւորին ընծայ է ուղարկել մի սև ամուրենի, զարդարուած բոլոր խոշոր մարգարիտներով, որոնք հանուած էին Նովգորոդ քաղաքի մօտ։ Մարգարտաբեր խեցգետիններ է պարունակում գլխաւորապէս Սիբիրմա գետակը, որը թափւում է Սառուցեալ օվկիանոսի մէջ։ ապա Սումա գետակը, որ հոսում է դէպի Ճերմակ ծովը։ վերջապէս և Նէմեն գետակը, որ թափւում է Օնեգայի լիճը։ Այս գետերից ստացուող մարգարիտները խոշոր չեն և էժան են։ ամենախոշորներն արժեն ոչ աւելի քան 100 բուբլի։

---

80. ԱՆՁՐԵՒԻ ԿԷՍԻԼ

Փայլուն կաթիլը գարնան անձրեւի
Մի օր հարց տուաւ իր ընկերներին.
—Այստեղ երկրագործ մշակն է ապրում,
—Ինչու մենք այս հին, ագքաա խրճթի
Լրատամուտն այսպէս բաղխում ենք
Կաթիլներն իսկոյն աւին պատասխան։
—Այստեղ երկրագործ մշակն է ապրում,
Որ նրա արտը ծլում է ծաղկում,
ուժգին։

Փոքրիկ

Մի փոքր նուշդարուցդ [illegible]
տամ։ Էլիզ Իր նուագարքը շալակեց, ելաւ
կամարէն, որ տանիքը տանում էր դէպ ի
վերայ։

—Ինչպէս պիտի ուրախ, նիւրիկս ասուածոյ
կարծում էս որ կանչելու է, նարդիս էս։

—Էս փոքրիկս իմ վարձեմում, պրպտուրուց
Ամբրոսիոյ ձմերը կիրթում։ Ես չէի նուա-
գում նրա զուգակցութեամբ, գրանիկն գր-
ոցիկ նկատ դէռ չէր գտնում, այդ պատ-
ճառով զայր չանհանգստացայ։ Մինչ նիրհում
էիր ես յարմանալի դուագարքդ։։
Ժայռ ամպում խառնիր ամա և տեսա նիւ-
վերք տիրք տիրում գրէի և խանա Կր Դրաբ
գրէ ազ ոչ բարբ ամենքին խոշոր նարդիկ։

Ինչ նշան է, որ փոքրիկը կուռ չէ ասաց
Ամբրոսիոն և ինքս գնացի, իր պատիւ-
նամբ Էլզ։ Ես էլ իմ խելքի վերայիս
նստաց։ —Երգուանց իս իր և նոյն փոքրիկ,
նարդիս ինչ Ամբրոսիոն։

—Թերեւ չէ պատրաստում չի՞ ապրում, ասաց։
Բայց մի Էլզ չի՞ ասում, այլ ապրում, կամ
լուսաւ գրաց։ Ինչ, գրարանիմ էր։
—Էհ, լաւ, կրնամ կը գրաբ և կը Դաբարանա
ի՞նչ։ Իր խոշոր գրիչը։
—Օրէ կամաց կանգաց ինչպէս գրիչ, անգրիչ
ասարկեցաւ և ի կարդալ խոսի շատ գաղտնի
յանդգնած ամենուրեք Էլզ պանդիտ ասաց-
նելու, որ Վիրգիլ Դանդը ապրա-
գրից ինչպէս գրարանի։

Կռունկները շարան—շարան
Ո՞ւր որ, ի՞նչ կանչեցին ու եկան.
Գարունն եկաւ, գարունն եկաւ
Անուշ կանչին ու եկան...

Ջան, ջան, մեռնեմ ձեր ձկնիկին,
Այ կռունկներ, նշխուններ,
Ետաք տեսանք իմ բալիկին,
Ետաք խաբար չէք բերեր։

Բալիս կապին, բանդը դրին,
Տարին եկաւ, քոլորուաւ,
Ապաքաւ չանեմ, գազար չանեմ,
Աչքս ճամբին ծով կտրաւ։

Գարունն եկաւ, արև Երկս,
Եղան ծիլ ու ծաղիկներ.
Ա՜խ հարաք Էրբ աղիզ բալէս
Կնկնի բանդէն, կռունկներ...

Կռունկները շարան—շարան
Ո՞ւր որ, ի՞նչ կանչին ու եկան.
Գարունն եկաւ, գարունն եկաւ...
Անուշ կանչին ու անցան...

---

83. ԱՂԱՄԻՆ ԱՆԻԱՑ ԱՀԵՐԱԿՆԵՐՈՒՆ

Ամբողջ աշխարհս մէկ. լուսաւորուած տեղ է բայց ամենքդ, մէկ մէջ գալը, դրա կողքը սարերով պարուած, ազ՝ու ջուր անելու չես, ու հաւ գոնամ է մարդ-, ամպ ու մառախուղ իջնում, պարկնում է եւ եկեղ իմա նում ես, թէ աշխարհը մէկ էլէս իրաղուք է բայնում, որ նայար-նայար կիրուղ ունի ինքնիզմը։ Մարդ-չկայ ծարդ-որ նարդնի, գիր չես կարդայի, որ իմանաս։ Ծրմեր



կիր բեկած, գիւղերը երաշի կարծիքով, կամ աշխարհարքերը, որ յանկարծ գլուխ-չես բարձրանում, ամբ, սիրելի նայողներ, զաւեր դող է ընկնում, կոնքդ բուլանում։

Կեղ իմանում ես, թէ մէկ վիրաց, կամ երբեմն կեղ է անարբ ծրմեր, ու բոլոր կինոներբը կամ կոզ գրեր, կամ ուրբ խաղեր, կամ գիրի արեր. ուզում ես, որ աշխ-

խրիս, իր դառուսա...

Ահա, դէ՛, դէ՛, իր մի դառուսար. Ժուխն էս-
գրեդիս նապար գայրի աղ է, որ կորեդէ
կամ, մի վախիբար, ազուզ խարիրը ու
էկեդիցիր Մարդակիր չին։ Աղիդ բաց
արա, սիրդդ էլ նաւաղիր, ու գլխիդ
վաց գուր։ Էս սրբասրաղ գրուծարքիրը



էս անագին բերդը, էս քարերը քեզ կ'ասեն՝ թէ սա է գոռոզ Անին, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ էնքան էր իր հարստութիւնով, իր փառքովը փարթամացել, ճոխացել, մեծացել էր։

«Ցդէք, չար սատանի թուրը գլխներիս խաղում է» — ձէն տուաւ պինդ սրտով քաջ Ագասին. «Ցզամարդութիւնն էսպէս տեղ կ'երեւայ, գէնք ու զրահ պատրաստեցէք, ձիանը հանգստացրէք, որ թէ Աստուած տայ, մինչև առաւօտը գլխներս վրանները լինի, տեսնենք, թէ որ անդառնալի ճամբէն ենք ընկել։ Ձիանքերին ջուր տուէք, քաշեցէք մի պատի տակ, իսկ ես շունս կ'առնեմ, կամաց-կամաց մէկ աչք ածեմ, տեսնեմ, թէ տեղերս ապահով է արդեօք, թէ էլի սրով ու արիւնով պէտք է կամ գլուխ պահենք, կամ գլուխ կտրենք»։

Ընկերները շատ խնդրեցին, որ չանի, ականջ չարաւ, հրացանն ուսին գրաւ, ատրճանակները պատրաստեց ու քայլերը շարժեց։

Հէնց մի քիչ հեռացան թէ չէ՝ մէկ եկեղեցու զանգից կրակի լոյս ընկաւ Ագասու աչքը։ Արիւնն աչքն առած՝ էլ միտք չարաւ, թէ էսպէս տեղը բացի գողից ու աւազակից՝ ուրիշ ոչ ոք չի լինիլ, ուղղակի կրակի վրայ գնաց։

Աստուած հեռու տանի, ինչ նա տեսաւ։ Տասը քիւրդ եկեղեցու մէջտեղը կրակ էին արել, չորս կողմը նստել, խորոված էին ուտում, շամփուրներով բերանները քաշում, ուտում ու խնդում։

Աւազակը՝ ինչքան էլ զգոն ըլի, իր շտաբից էլ կը մոխենայ։ Մինչև նրանք կրակի մօտից ձեռները աչքերին կը դնէին ու մի բան կը նշմարէին, Ագասին կամաց-կամաց ներս մտաւ, ծանր դէմքով, առանց բարև տալու՝ կրակին մօտեցաւ ու ձեռը մեկնեց, որ մէկ խորոված ի շամփուր էլ ինքը քաշի։ Նրա դեղնած, մեռելի գոյները, նրա անտամ շարժմունքն ու էնպէս անժամանակ ներս գալը որ չտեսան քրդերը, հէնց խմացան, թէ նա էն աշխարհքիցն է եկել, լեզուները չորացան, ձեռները թուլացան։ Ի՞նչ կը կարծէին թէ էն ժամանակին մահիանացուն մէն մենակ սիրտ կ'անէր՝ էն աւազականոցը մտնէր, ուր ցերեկն էլ հարիւր մարդ զարգանդում էին՝ մօտովը անց կենան, ուր հազար տարուց աւելի էր, ինչ որ

մարդ։ սիրտ չէր անում, որ գայ էն չինած պատքաստ աներաւմը կենայ։ Կարծես մարդիկ չլինէին առաջին աչքը խոժոռած, մէկ դէս գցեց, մէկ դէն, քրդերէն չգիտէին, որ մէկ բան ասէր, բայց էս էր, որ Նրան պրծացրեց, որովհետև եթէ խօսէր, կ'իմանային, որ մարդ է, գև չէ, իսկոյն կտոր կտոր կ'անէին։



Մի շամփուր խորոված ից որը կերաւ, որն էլ էս կրակը գցեց։ Ճաճարի հիանալի շինուածքին ու գեղեցկութեանը մարիկ արաւ ու գլուխը ժամ աւաւ։ Քրդերը փէսացած՝ մնացել էին նստած։ Աչքը որ յանկարծ Նրանց վրայ չխոժոռեց։ ամեն մէկը տեղն ու տեղը ուզեցաւ, որ հալչի։ Էնքան էղպէս Նրանց աչքը մութիր ածեց, որ ընկերների ոտի շրշիւնը իմացաւ ու շունն ուրախ-ուրախ ներս ընկաւ, ոտներովը փաթաթուեց։ Աւազակները հէնց շանը տեսան թէ չէ՝ ամեն մարդ թրի վրայ վազեց, որ Նրան միջից կիսի։ Առաջի թուրը վրայ բերողի գլուխը կէս էլաւ, ասրճանակների երկուսն էլ իրենց որսը ճարեցին, ու դամէն ձեռն առած որ գոռաց ոչ. «Ցղէք։ Ձեր արևին զուրբան, Աստուած մեր կողմն է. գուսը կորեցէք, որ սրանց մատաղն էս գիշեր անենք։..

Հոյի լեզուն, որ բաց չէլաւ, հատարեա թէ պատերը լեզու առան. «Ամեն ձեր եկած հողին զուրբան, հար ունիք, տեսէք, մեզ ազատեցէք, տանով-տեղով ձեզ գերի կը դառնանք»։ Տասը տանը-հինգ քրդստանցի հայ էլ՝ որ էս կողմից, էն կողմից գլուխ չբարձրացրին ու քրդերի մեացած թրերն ու նիզակները ձեռք տան, քրդերի առաջը թեքուեց. ութը կատարուել էին, երկուսը մեացել վիրաւոր-ընկած. սրանց էլ կապեցին։

Աղջիկ ասես, տղայ, հարս, երեխայ ծծկեր՝ հազար չանով կապած տուն էին տրել, Ղարսի գեղերից գերի բերել որ տանեն կամ տարդարին ընծայ անեն, կամ Աբդլիա ծախեն։ Մ'ում էապէս վիճակում մարդ կեանք տայ, որ Նրա առաջը ծունր չդնեն, երկրպագութիւն չանեն։ Բայց հակայ Աղասին ինքն էր ընկնում ծերանց ճառվը, ինքն Նրանց կապերն արձակում, ինքն երեխին ջուկ, մորը ջուկ գուբգարում, մխիթարում, որ «Աստծուն փառք տան, թէ չէ՝ էս իր հանդարը չէր։ Ոչ մի գիշեր էն լոյսը, էն կիանքը չի տեսնէ, չի քաշել, ինչպէս էս։ Ազատողները թէ ազատողները իրար տեսնելիս՝ հէնց իմանում էին, թէ երկնքումն են և ոչ երկրումը։

Փոքր ինչ որ հանգստացան, աչքդ բարին տեսնի, քրդերի խուրջինները որ բաց չարին, հազար արիւնի գին կար մէջերումը, ամեն մէկի վրայ հազար մանէթի դարդ, արծաթ ու ոսկի, թող զուտ փողը և իրանց զէնք ու զրահը։ Աղասին ոչ մէկին էլ չհայեց, ուղարկեց՝ ձիանը բերել տաւ, նստաւ քաշեց ու քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամտացնեն, թէ էն գիշեր կարող են էնտեղ ապահով մնալ, թէ ոչ։

— Թէ մեզ կը խարցնես, մենք խէյրաթի կը տեսնենք, որ մեր կէսը պառկի, կէսը զարաուլ քաշի։ Էս ձորերը խանա լիքն են։

Հէնց էս զրուցումն էին, մէկ էլ տեսան, որ ձիաւորի ոտի ձէն է գալիս. արիասիրտ Աղասին միտք արաւ, որ սրանք Նրանց ընկերները պէտք է լինին. մի վայրկեանում երեխայ, մեծ ու փոքր մի կողմ քաշեց, խստիւ պատուիրեց, որ ձէն չհանեն, երկու քրդի էլ բերան, ձեռք, ոտք աւելի պինդ կապեց ու մէկ քաջ քրդստանցու թուրը

հանած վրանները կանգնեցրեց, միւս քրդաստանցոցը կրակի չորս կողմը նստեցրեց, որ կասկած չառնեն, ու ինքն իր քաջ ընկերներովը եկեղեցու աջ ու ձախ կողմը կարեցին, Թուրքերը հանած պատրանքուրս ցցեցին ու Թշնամուն ճամպա ուին։ Լոլո ձէն տալով՝ քանից աւելի ձիաւոր ժամի դռանը վէր եկան...Հէնց խանուած ու ապտուելով որ ներս չեկան, էլ չիմացան, Թէ մարդ է, որ իրանց գլուխը կտրում է, Թէ դեռ են կամ սրբեր. էլ Թրի, նիզակի կամ ճահանի ժամանակ չէր։ Քրդստանցի հայերը ժամանակ չուին պարսկաստանցի հայերին. շատերին հէնց կրակի շամփուրներն ու Թրերն էին բերանը կոխում...

Էլի Աղասին էր, որ հայերի կատաղութեանը չափ դրաւ, սպանածներին դուրս ածել տուաւ, ու որը վիրաւոր էր, նրանց վերքերը փաթաթելու հոգ տարաւ, իսկ ողջ մնացածներին Թոյլ չտուաւ սպանելու, այլ միայն կապերով՝ մի կողմը տարաւ։

Առաւօտը որ լուսացաւ, Աղասու աչքը մնացել էր սառած, չէր իմանում՝ աչքին հաւատայ Թէ ոչ։ Եկեղեցիք, պարիսպ, բերդ, միտարէք՝ էնքան նոր, էնքան պայծառաշէն ու անբնակ։ Գառամութիւն չգիտէր, որ իմանար, էս ինչ քաղաք պէտք է լինի. տէրտէրին որ չկանչեց ու պատմութիւնը իմացաւ, խելքը գլխից Թռաւ...

—Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ Թագաւորների գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքն ազատենք գողի, աւազակի ոտքից։ Հարիւրից տասնի ենք հիմա. ինչ ձեռք ենք գցել՝ ձեզ լինի։ Մնանք էստեղ. կամ մենք էլ մեր արիւնը մեր սուրբ Թագաւորների հողի վրայ Թափենք,կամ քիչ-քիչ նրանց քաղաքը կրկին պայծառացնենք։ Տներ կան, ջուրն առատ, հանդը, դաշտը՝ մեծ, մէկի տեղ հինգ զարմանալի եկեղեցիք, քարի տակից էլ որ լինի՝ մնունդ հանենք, ձեզ կը պահեմ...

Բայց Թէ քարին ասած, Թէ մեր քրդստանցի հայերին։ Կռուումը ճշմարիտ է, ամեն մէկը մի ազգանայ է, բայց ինչ որ գրուած գրած է, նրա հակառակ չի գնալ երբէք,գրա համար նրանք չհամաձայնեցին մնալ։

Հինգ ու կապուտակ գիշերվրայ մէջ էր.
Երկինքը կարդացուած էր աստեղաց ապրելով,
Լուսինը միայն լուսատուում էր։ Եռուզը
Իջնում էր ապրիլ, գիշերը թաս ան-
գրաւեր, ազատ առուակ, ցորեան վէրջս գիսակ-
Եւ այս բոլորը կարդացուածներն լուսի պայծառ
ղողիով։ Ցիրտակն ու Էրակն լուանին ու ապր-
ղիրը Նպիրս Նմա իրաց մէջ ստաց պրպրում,
պլպլում էր արշալոյս։ Զորանոցի առջև
դգոց էր արշալում, սրիակը ինչպէս գիշեր-
ղում։ Մի գիշեր, Կիրակի Լուսաւոր կրակն էր
Եկ իսրիրդաւոր դրուագաց մէջ դնում,
մի ուրիշ գիշեր Հովի արնի շայլը կմայլ-
կնում։ Զիգիրոր ղղիով գիրն ու
Ծաղիկ, ասուլ բուրմունքով լցնում էր
ապր ու շոր, իսկ ծղն ալիքաց ծափերը,
ալիքաց յուրակ էր, որ ինչպէս ծարդաց
կուրծքն ասողգալնում, պոդպարս էր դարձ-
նում։

85. ԱՆԻՒ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎՐՍՔ

Օ՜, անցած փառքի վերջին քեկորներ... Այն եռուն կեանքի ուրախ աղմուկից
Նորից զարթեցնում էք զուր իմ հոգում Այսօր մեզ համար էլ ոչինչ չմնաց.
Անդարձ օրերի անդին պաչակերներ Բլուրների տակ ծածկված աչքերից՝
Եւ խորին ցաւով իմ սիրտը լցնում, Ամէն բան թաղուած, ամէն բան լռած։

Ամէն մի բուռն հող և ամէն մի քար Բայց լուռ չէ միայն հէգ Ախուրեանը
Վկայ է այստեղ դարաւոր փառքին. Եւ դիշեր ցերեկ նա ողբ է ասում.
Այստեղ բոլորն էլ սուրբ է ինձ համար, Նա դեռ յիշում է իր հին օրրանը
Ինչ որ ընկած է աչքիս առաջին։ Եւ յուսահատուած ափերին դարնւում։

Եւ այս ահաւոր բարեպաշտութեան Զարնւում ափերին և համբոյր տալով,
Եւ ճոխ արուեստի անիծս վկաներ, Կոծով վազում է հարազատ վայրից,
Եւ այս արքունիք թաղաւորական, Նրման խեղճ այն մօր որ հեկեկալով,
Եւ այս կիսաւեր, խարխուլ պարիսպներ։ Դառնում է միակ որդու շիրիմից։

---

86. ԼԻՎԻՆԳՍՏՈՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԱՖՐԻԿԱՅԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ

I.

Մի ժամանակ մարդիկ հաւատացած էին, որ կենդրոնական Աֆրիկան անպտուղ, անմարդաբնակ անապատ է, որ շնչաւոր մարդը չի կարող դլուխն ուսերին ողջ դնել։ Բայց գտնուեցան մարդիկ, որոնք ճանապարհ բնկան, մտան այդ մութ աշխարհը, ծայրէ ծայր մտան նկան, տեսան ամէն բան։

Այդ հերոս մարդկանցից մէկն էր անդլիացի Լիվինգստոնը։

Ինչ տեսաւ նա Աֆրիկայի խորքերում։ Նա հիացաւ սքանչացաւ։ Այդ մի կախարդիչ, մի հարուստ աշխարհ էր։ Չիային աւազան, անմարդաբնակ չոր անապատներ։ Այնտեղ բնութիւնը հրաշալի ծառաստաններ։ անուշահոտ ծաղկաստաններ էր տնկել։ Այնտեղ ապրում էին անթիւ և անհամար մարդիկ։

Նա ճանապարհորդում էր ոտով, ցուպը ձեռին և նրա ընկերներն էին մի քանի արաբներ։ Ամէն մի ճանապարհորդութիւնը տարի-

ներ էր տևում։ Ճանապարհ չկար, սայլ, ձի չկար։ Եւ նա շատ էր չարչարւում, տանջւում, հիւանդանում, ուշաթափ վայր ընկնում, բայց ոչ մի դժուարութիւն, ոչ մի չարչարանք նրան չէր յոգնում։

Մի ինչ Աֆրիկայի ժողովուրդը նեգրերի ազգից էր։ Նեգրը սև կլոշի ունի, ատամակ քիթ, հաստ շրթունքներ, ձիւնի պէս սպիտակ ատամներ։ Նա շրջում է տակլոր, ոտաբոբիկ, գլխաբաց, նրա կերակուրն է անտառի պտուղը, կենդանիների միսը։ Նա այն երկրում վայրենի է, ապրում է փոքրիկ գիւղերում, ճիւղերից շինած խրճիթների մէջ. իսկ մի քանի տեղ՝ կապիկի պէս նա ծառերի վրայ է ապրում իր կնոջ և երեխաների հետ։ Նա կռուել շատ է սիրում և արիւն է թափում իր նետով, պաշտպանւում է վահանով։ Իր կարճիկ, սև, գանգուր մազերը զարդարում է թռչունների փետուրներով, իր մարմնի կաշին ներկում է, մաշկած տեղն այրում. գոնդան անճոռնի նախշեր է շինում կրծքի, թշերի վրայ, որից շատ տգեղ ու զարհուրելի մի բան է դառնում։

II.

Լիվինգստոնը Աֆրիկայի ծոցը մտնելուց առաջ տեսել էր գերիների հրապարակը։ Այդտեղ ծախում էին կենդանի մարդիկ։ Ուստիպ խումբ կանգնած էին տիամարթները՝ տղամարդիկ, կնիկ, երեխայ։ Վաճառականը մօտենում է այդ կենդանի ապրանքին և ծախողը գովում էր ապրանքը. բայց էր անում ծախուցի բերանը, ցոյց էր տալիս նրա առամները, ինչպէս ցոյց են տալիս ծախու էշի կամ ձիու առամները, որպէսզի տանողն իմանայ թէ անասունը ջանիլ է, թէ ոչ։ Մարդիկ ծախւում էին անբեղու անասունների պէս, գօրով բաժանում էին իրենց երեխաներից և ընկնում էին աշխարհի անկիւնները, ուր այդ թշուառները սարսուռ էին դառնում։ Սարսուռ... Նրան ծեծում են շան պէս, նրան բանեցնում են էշի կամ ջորու տեղ, քշում են ճիպոտներով, մի կաթ հաց են տալիս և այդ հացն արիւնի պէս թափում էին նրա քթից։

Այդքան խեղճ, այդքան թշուառ էր նեգր ժողովուրդը։ Թէև վայրենի էր նա, ապրում էր գազանների նման, բայց այնուամե-

նայնիւ ծանր էր նրա համար սարկութիւնը, ծանր էր շղթայակապ գերի գնալը։ Լիվինգստոնը պատմում էր, որ հայրենիքից դուրս գալիս գերիները դատարկ էին երևում և միայն զանգատվում էին, որ որսորդներն են գալիս։ Նրանք իրենց ձեռքերը դնում էին այնտեղ, ուր սիրտն է գտնվում և ասում էին, որ շատ խիստ են գալիս այդ տեղերը։ Բայց հէնց որ իրանց հոգերի սահմաններն էին անցնում, իսկոյն հիւանդանում և մի մի կոտորվում էին ճանապարհին։ Հայրենիքի կաքաւութիւնն էր այդ մահաբեր ցաւը պատճառում, կորցրած ազատութիւնն էր նրանց առնում։ Լիվինգստոնը ճանապարհին շատ էր տեսնում ծառերին կապած մեռած նեգրերին։ Մի անգամ Լիվինգստոնն ընկաւ մարդակեր վայրենիների մէջ։ Այնտեղ մարդն իր կնոջ հետ կռուում էր, սպանում էր նրան, հանում էր նրա սիրտը և ուտում։ Յոսիսի մի սովորութիւն էլ կար նրանց մէջ. մէկը վայր էր դցում թութակի կարմիր փետուրը և կանչում էր, թէ ով նրան կը վերցնէ. ով որ վերցնէր, պարտաւոր էր մի մարդ սպանել, ինարկէ, միսն ուտելու համար։ Մի օր ամբոխ խումբ մարդիկ վազեցին, որ ուտեն մի մարդու, որին մեղադրում էին, թէ մի ուրիշին սպանել է։ բայց դատապարտածը փախել էր և խումբը ցրուեց շատ նեղացած, որ չի կարողացել նրա միսն ուտել։

III.

Լիվինգստոնը բաց աչք ճանապարհ և նրա հետքերով եւրոպացիք գնացին դէպի Աֆրիկայի խորքերը։ Եւրոպացիք Լիվինգստոնի և ուրիշների գրածից իմացան, թէ ինչ է գերեվաճառութիւնը և արգելեցին այդ վատ, ամօթալի արհեստը։ Բայց այդ բաւական չէր. սեամորթները պէտք է ազատէին սարկութիւնից իրենց սեպհական այժով։ Քաջութիւն նրանք վաղուց ունէին. կռուել, արիւն թափել, թշնամու միսն ուտել նրանց մշտական գործն էր, բայց և այնպէս նրանք գերի, սարսուռ էին։ Ինչ էր ուրեմն պակաս։

Պակաս էր այն, որ սեամորթները չգիտէին, թէ ո՞րն է մարդու իրաւունքը։

Ամենից առաջ այդ իրաւունքը ճանաչեցին վաճառուած թշուառականների այն անապին բազմութիւնը, որ վիստում էր Ամերիկայի զանազան մասերում։ Այդտեղ նրանք հասկացան այն՝ ինչ որ Լիվինգստոնը սիրով քարոզում էր նրանց բարբարոս եղբայրներին և հասկանալուց յետոյ անհնարին էր, որ վաճառուած անասունների դրութեան մէջ մնային։ Նրանք միացան մարդասէրների հետ, ձեռք բերին ազատութիւն և այժմ Ամերիկայի ազատ ժողովրդներից մէկն են։

Նեգրերն անասուններից մարդ դառան, իրանք իրանց ճանաչելով իմացան, որ մարդ են։ Մարդը սարսուռ չպիտի լինի. այս յաւիտենական սուրբ ճշմարտութիւն է։

---

87. Ս. Մեսրոպի շիրիմի առաջ

Գիշերային խաւարը պատել էր Արարատեան դաշտը։ Օշական գիւղում, Ս. Մեսրոպի վանքում ոչ մի լոյս չէր երևում։ Ամեն արարած խոր քնի մէջ էր։ Մատուռի մէջ դրած էր մի շիրիմ. կանթեղի լոյսն ուղիղ թափւում էր նրա վրայ։ Շիրիմի մօտ, յատակի վրայ ծունր էր իջած մի մարդ. նրա գլուխը հանգչում էր տապանաքարի վրայ. երկայն թաւամազ մազերը ծածկել էին նրա սև մակերևոյթը։

Ոչ մի մրմունջ, ոչ մի հառաչանք չէր ազմկում տխուր լռութիւնը. միայն կիսախուփ աչքերից արտասուքի վտակները հոսում էին սառը քարի վրայ։ Այսպէս գնդատարած, լուռ ողբում էր նա, մինչև վանքի զանգակատունից յոթի եղաւ կոչնակի ձայնը։ Նա գլուխը բարձրացրեց և սոսկումով նայեց իր շուրջը։ Լուսանում էր. կարծես նա փախնում էր, որ իրան կը տեսնեն։ Ոտի կանգնեց...

—Խաղաղութիւն քո սուրբ ոսկորներիդ, ով երանելի հայր, բացականչեց նա։ Երկար ճանապարհորդութիւնից յետոյ, քո դժբախտ աշակերտը վերադառնալով հայրենիք, մեծ յոյս ունէր՝ քո գրկի մէջ մխիթարութիւն գտնել և մխի-

թարելքեզ։ Բայց նա չարժանացաւ քո քաղցր տեսութիւնը, ան չլսեց քո բարի շրթունքներից վերջին օրհնութիւնը։ Քո պատուիրանի համեմատ գնացի, անցայ երկրներ, քաղաքից քաղաք, այցելեցի բոլոր դիտութեան տաճարները և լի հրմտութիւնով վերադարձայ իմ հայրենիքը։ Բայց ով այսուհետև դին կը դնէ այն մատաղ մթերքին, որ բերել եմ օտար աշխարհներից։ Դու և քո վեհափառ գործակից Ս. Սահակն միայն հասկանում էինք, թէ ինչ է ճշմարիտ լոյսը։ Անգութ մահը միաժամանակ խաւարեցրեց այդ երկու արեգակները և մութը տիրեց հայոց երկրին։ Լաւերը գնացին, այժմ նրանց փոխարինում են վատերը։ Տգէտ, խաւարամիտ և կեղծաւոր կղերը հալածում են մեզ, մեր գրաւոր աշխատանքները համարում են վնասակար, մեր ուսումը համարում են մոլորեցուցիչ։ Նրանք ատելութիւնով գրգռում են միամիտ ժողովրդին մեր դէմ և արգելք են դնում մեր գործունէութեանը։ Մենք աշխատում ենք, որ հայը հայոց լեզուով խօսի իր տան մէջ, հայոց լեզուով աղօթէ. մենք աշխատում ենք ամեն ինչ հայացնել, ամեն բանին ազգային գոյն տալ. մենք քո ստեղծած տառերով թարգմանեցինք բոլոր սուրբ գրքերը և աշխատում էինք մացնել գործածութեան մէջ։ Մենք այժմ հալածւում ենք մերոնցից։

—Նայիր, ով ս. հայր, տես իմ ցաւալի վիճակը։ Այս ճանապարհորդական ցուպը ձեռքս, այս պարկը ուսիս, այս հնոտի հագուստը հագիս, մի ոտրմելի մուրացկանի նման, եկել հասել եմ այստեղ։ Մեր վանքերը, որոնց մէջ ամեն օտարական օթևան և սնունդ է գտնում, ինձ գիշերելու մի անկիւն անգամ չէին տալիս։ Շատ օրեր բաղցած եմ մնացել, շատ անգամ ստիպւած եմ եղել գիւղացիներից մի կտոր հաց խնդրել։ Քաղցրել եմ իմ ով լինելս և այն մարդը, որ Բիւզանդիոնում Մարկիանոս կայսրին զարմացնում էր իր իմաստութիւնով և նրա հիւրասիրութիւնն էր վայելում,

այժմ այդ թշւառն իր հայրենիքում գլուխը ցոյց տալու համարձակութիւն չունի։

—Այդ բոլոր հալածանքները չեն կարող վհատեցնել ինձ, չեն յուսահատի իմ ընկերները։ Մենք, որպէս անձնազոհ զինուորներ, ուխտել ենք պատերազմել խաւարի և տգիտութեան դէմ։

Օտարականը կրկին համբուրեց գերեզմանը և վերջին անգամ ախուր հայեացք ձգելով սև տապանաքարի վրայ, վերցրեց ճանապարհորդական ցուպը և զգուշութիւնով դուրս եկաւ մատուռից։

Վանքի ծերունի ժամկոչը նստած էր եկեղեցու դռան մօտ. ապաստաւորներից մէկն աւելում էր բակը։ Ժամկոչը հեռուից տեսաւ օտարականին և կանչեց ապաստաւորին ու հարցրեց.

—Տեսար այն մուրացկանին։

—Տեսայ, պատասխանեց ապաստաւորը. նա դուրս եկաւ Ս. Մեսրոպի մատուռից։

—Ս. Մեսրոպի մատուռից, կրկնեց ժամկոչը զարմանալով. այնտեղ ինչ էր շինում։

—Ի՞նչ պիտի շինէր, մտել էր իր վարժապետի գերեզմանի վրայ ,,հոգոց'' կարդալու։

—Ո՞վ էր նա. ասենք հարիւրաւոր մուրացկաններ են գալիս այստեղ, որ մէկին կարող ես ճանաչել։

—Նա մուրացկան չէր։

—Հապա ո՞վ էր։

—Մովսէսը։

—Ի՞նչ Մովսէս։

—Խորենացին։

Ժամկոչը մնացել էր շւարած։

—Աչքովդ տեսաք, ճանաչեցիք, խօսեցիք նրա հետ։

—Ես նրան ճանաչում էի այն ժամանակից, երբ այսքան տղայ էր։

—Մեր հայրսուրբները նրան որոնում էին...

—Նրան ինքը սատանան չի գտնի։

—Ինչու։

Դու չգիտես իմանում, որ հռոմտանից նոր եկած վարդապետները բոլորն էլ կախարդ են...

---

1. պատ.

2. պատ.

3. պատ.

4. պատ.

5. պատ.

6. պատ.

Դիտեցէք բոլոր պատկերները. ինչ էք տեսնում առաջին պատկերի վրայ. ինչ են առաջ եկել մանրիկ ձուիկներից 2-րդ պատկերի վրայ. ինչ էք նկատում 3 և 4 պատկերների վրայ. ինչ են դուրս եկել պատեանների. դիտեցէք 5 և 6 պատկերները։ Պատմեցէք ձեր բոլոր դիտածը և գրեցէք

89. Աշուղ

Ասի՝ աշուղ, ա՛ռ չունգուրդ, մեզ բան ասա սրտալի.
Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա սրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի մեր հոգին.
Ա՛ռ չունգուրդ, դարգաս աշուղ, մի բան ասա սրտալի։

Գիտենք, որ դու միշտ ասնջւում ես հազար ու մի ցաւերով
Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով.
Ա՛ռ չունգուրդ, տուր լարերին, կրակ վառիր մեր սրտում.
Մեզ ամենից նոր շունչ աւող մի բան ասա սրտալի։

---

90. ԿՕԿՕՍ-ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Մի ճանապարհորդ անցնում էր անապատով. շոգ էր, սաստիկ շոգ. ոչ միայն արևն էր այրում, այլ և անապատի ատաքացած աւազը նրան խարոյկի պէս քրանացնում էր, իսկ չոր օդը խեղդում։ Շշմած ճանապարհորդը հազիւ հազ էր քաշ գալիս. մի կաթիլ ջուրն անգամ նրա պապակած բերանը կը գովացնէր. ինչ անէր... ճանապարհորդը թէև խիստ թուլացած էր, բայց էլի գնում էր. քիչ յետոյ հեռուում մի քանի ծառեր տեսաւ. ճանապարհորդն շտապեց, մի կերպ շնչասպառ այնտեղ հասաւ և խրճիթի առաջ նստած մարդուց ջուր խնդրեց։ Տանտէրը նրան նստեցրեց կօկօս-ընկուզենու հովանու տակ և գովացրեց նրան սառը, համեղ խմիչքով։ Ճաշի ժամանակ հիւրասիրեց նրան օղիով, գինիով, վերջն էլ քաղցր մուրաբայով։

Հանգստանալուց յետոյ ճանապարհորդն իր հետաքրքրութիւնը բաւականութիւն տալու համար հարցրեց.— Սիրելի բարեկամ, այս անապատում ո՞րտեղից էք ձեռք բերել գինի, օղի, մուրաբա. չէ՞ որ այստեղ պտղաւու ծառեր, բոյսեր, հացաբոյսեր չկան. ինչպէս էք այդ ամենը ձեռք բերել։

—Տեսնում էք այս կոկոսի ծառերը, ասաց ատնտակը. այս ծառերն են ամեն բան տալիս և այս ծառերն են ինձ պահում։ Սքրանք ոչ միայն խմիչք, ուտելիք են տալիս այլ և հագնելիք։

—Ինչպէս, զարմացած հարցրեց ճանապարհորդը։

—Շատ հասարակ կերպով, պատասխանեց ատնտակը. կոկոսի վրայի այն մեծ մեծ, երեխաների գլխի չափ ընկոյզները սեխի նման համեղ են և իւղալի միս ունին։ Նրանց մէջ լցուած է ջրալի հիւթով, որը գուք խմելով՝ շատ հիանալի գտաք։ Երբ կոկոսը հասնում է, այդ հիւթը թանձրանում է և դառնում է կաթնանման հեղուկ. այդ կաթով ես ձեզ ճաշի հիւրասիրեցի։ Այն համեղ սալատը, որ դուք շատ հաւանեցիք և մեծ ախորժակով կերաք, կոկոսի մատաղ, թարմ տերևներից են

պատրաստուած։ Երբեմն կոկոսի ծառի կեղեւը կտրում եմ, այնտեղից գուրս է գալիս առատ, ջրալի հիւթ, որանից էլ պատրաստուած ձեր խմած գինին և օղին։ Երբ այդ հեղուկը զովացնում եմ, ստանում եմ շաքար։ Այս շաքարից և կոկոսի մսալից մասերից էլ պատրաստել եմ այն համեղ մուրաբան։ Երբ կոկոսի մսալից մասերը հանում են, նրանց ծանրութեան տակ գնելով՝ իւղ է գուրս գալիս. այդ իւղով էի ձաշ պատրաստել. այդ իւղից պատրաստում եմ սապոն և նոյն այն իւղը վառելով՝ իմ խրճիթը լուսաւորում եմ։ Տեսէք,

իմ տան մէջ գտնուած բոլոր ամանները կոկոս-ընկոյզի կեղեւից են շինուած, իսկ իմ բնակարանը ծածկուած է կոկոսի մեծ մեծ տերևներով. տեսնում էք, նրանք երեք ստժէնի չափ երկարութիւն ունին, բաւական հաստ և դիմացկուն են։ Այդ տերևների մէջ կան բարակ թելեր, որանից հիւսում եմ կտորներ և ինձ համար շոր ու պարան եմ պատրաստում։ Այս ամենից յետոյ մի թէ իրաւունք չունեմ ասելու որ կոկոսն է ինձ պահում։

---

91. ՁԿՆՈՐՍԸ

Ցեխի էլեմի փոքրիկ գնալում՝
Էս ուղ գիշերը լոյս է իջնում,
Ժիրուկ ձկնորսը յարալի վրայ
Ուռկաւսը է լցնում։ դրսի պիր գնայ։
Ձայրիկ, մի գնա, վատ է էս գիշեր.
Ամպ, խաղալիս յուզում, փրփրում ին ցրիր
Դու մի՛ նաւարար լռանիսկի լուսին
Ցորշուք կը բերի կապրաղի խաղեր։

---

92. ԵՂՆԻԿԸ

—«Մի անգամ իմ բարեկամ մի սրսկան մեր հանդի անտառում սարերից մի եղնիկ նէէր բերեց երեխաներիս համար...»։

Այսպէս սկսեց ընկերս, աշնանային մի երեկոյ, երբ նստած

միասին նրա պատշգամբում, հիացած նայում էինք հէքեաթական վերջալույսով վառվռուն սարերին, որոնց վրայ մակադած հուռերի նման հանդչում էին մեղմօրօր ոսկեգեղմ անտառները։

—«Այդ մի նազելի, մատղաշ ու խարտեաշ եղնիկ էր, վախկոտ, արագավազ, խորունկ և սև ու ջինջ աչքերով, որ ծածկւում էին երկայն, մեռաքսէ նուրբ թարթիչների տակ։

Երբ բռնում էին նրան,քնքոյշ մարմինը կուչ էր գալիս գրկիս մէջ և սիրտը վախից արագ-արագ թրթռում էր թռչնի պէս։

Բայց նա կամաց-կամաց սովորեց մեզ վրայ.էլ չէր փախչում, չէր վախենում մեզանից, մանաւանդ շատ մտերմացել էր երեխաներիս հետ. նրանց հետ միասին վազվզում էր պարտիզում, նրանց հետ ճաշում էր և նրանց հետ քնում էր ուղիղ նրանց ծոցում։ Երեխաները նրա պարանոցով մի կարմիր ժապաւէն էին կապել, ինչպէս սովորաբար անում են երեխաները։

Մի քան ինձ շատ էր զարմացնում. եղնիկը թէև ինչքան ընտանեցել էր մեզ հետ, սովորել էր մեր ասնը ու գոռնը... բայց մէկ-մէկ, մեզնից թաքուն, բարձրանում էր այս պատշգամբը և ուշադրաւ, յաթկ նայում էր հեռու, անտառներով փաթաթուած սարերին, ականջները լարած խորասոյզ լսում էր անտառների խուլ, առոյշ, հազիւ լսելի շառաչին, որ բերում էր մեզմ հովը...

Նա նայում էր այնպէս անթարթ և լսում էր այնպէս ինքնամոռաց, որ երբ պատահում էր՝ բարձրանում էի պատշգամբը, նա ինձ բաւական միջոց չէր նկատում և երբ յանկարծ ուշքի էր գալիս, նեսի պէս ծլկում էր մօտիցս։

Առհասարակ մեր աչքերի առաջ նա չէր գիտում. թէ ինչ էր մտածում, այդ էլ ինքը գիտէր... բայց հէնց որ մենակ էր մնում խեղճ եղնիկս կամ մենք չտեսնել էինք ձևանում, իսկոյն թռչում էր պատշգամբը և սարերին նայում ու նայում...

Արդեօք նա գիտէր, որ ինքը այդ զօրանջուն անտառների երեխան է, որ իր մայրն այնտեղ է կաթ տուել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջիւրները խփում կաղնիներին, արդեօք նա գիտէր, որ

այդ խուլ շառաչիւնը անուշ-անուշ օրօրել է իրեն առաջին անգամ և երազներ է բերել իրեն արշալոյսների, առաւօտների շքեղ, սիրուն երազները...

Խեղճ եղնիկ .. ես շատ էի ցաւում նրա վրայ. կարօտ՝ իր սիրած գուրգուրող անտառներից ու զանգակ աղբիւրներից, իր խարտեաշ մօրից և շնչշնկան հովերի հետ վազող ընկերներից՝ հիմա տանջւում, տառապում է մեզ մօտ... այնպէս սրտանց ցաւակցում էի նրան. չէ՞ որ նա էլ մեզ պէս մտածող և զգայուն հոգի ունի...

Ես շատ էի յարգում նրան, երբ նա բարձրանում էր պատշգամբը, ես հեռացնում էի երեխաներիս և թողնում էինք նրան մենակ իր նուիրական յուշերի հետ։

Կարծես հասկանում էր նա մեր դէպի իրեն ցոյց տուած յարգանքը. նայում էր մի փոքր ժամանակ և ապա իր կամքով, մեղմ հովի նման հեզիկ ոտտիկներով իջնում էր ներքև և ամեն ինչ մոռացած՝ խաղում էր երեխաներիս հետ։

Երբեմն՝ երբ գրկում էի նրան և նայում էի լեռնային ապրիւրների պէս զուլալ ու վճիտ աչքերի մէջ՝ ես տեսնում էի այնտեղ մի թախծալի երազուն կարօտ։

Մի գիշեր, մի քամի գիշեր էր. անտառապատ սարերից անսանձ փչում էր քամին, գուռն ու լուսամուտները ծեծում ու ծեծկում. պարզ լսւում էր, որ այնտեղ, անտառում, զարհուր կաղնիներն ու լորենիները կռւում էին իրար հետ, աղմկում, ու գոռում։ Եւ քամին բերում էր անընդհատ անտառի այդ ուժեղ և լիակուրծք խշշոցն ու մռունչը. քամին այնպէս պարզ ու որոշ էր հաւաքել, բերել այդ ամեն ձայները, որ թւում էր, թէ հէնց մեր դռան առաջն է աղմկայոյզ, հողմածեծ անտառը։

Երեխաները վախից կուչ էին եկել, այն ինչ եղնիկը հեռաքրքիր և խելացի աչքերով նայում էր դէպի լուսամուտը և ամբողջովին լսելիք դարձած՝ ականջ էր դնում անտառի ահեղ շառաչին, որ երբեմն՝ խօսում էր նրա հետ մայրենի հարազատ լեզուով...

Մի փոքր յետոյ աւելի սաստկացաւ քամին. աղմուկով բացւե-

ցին լուսամուտի փեղկերը... և անտառի մի հուժկու և անագին շառաչ մթանգամից ներս խուժեց։ Այդ միջոցին եղնիկը յանկարծակի մի ոստիւնով ցատկեց լուսամուտի գոգը՝ աչքերը սուզեց շառաչուն խաւարի մէջ և ականջները յոփշտակուած լարեց...

«Անտառը նրան կանչեց», մտածեցի ես և իսկոյն վրայ վազեցի բռնելու, սակայն նա մի ակնթարթի մէջ թռաւ լուսամուտից պարտէզը, ծածկուեց խաւարի մէջ...

Ամենքս զարմացած և տխուր իրար երես նայեցինք. երեխաներս սկսեցին լաց լինել, բայց ես հանգստացրի նրանց ասելով թէ՝ գիւղի մէջ կամ պարտէզներում պահ մտած կը լինի, վաղը առաւօտ կը գտնենք։

Միւս օր առաւօտ վաղ երեխաներս ծառայի հետ ընկան գիւղը հարց ու փորձի։ Անցաւ մի քանի ժամ, երեխաներս տխրադէմ վերադարձան։ Նրանք ման էին եկել գիւղի պարտէզները, գնացել էին հանդը, որոնել էին, որոնել էին և չէին գտել եղնիկին.. դէհ, հիմա գնա գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում...

---

93. ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Առաւօտ սեղանատրիս մէջ դեռ պառկած էի, երբ ներս մտաւ հօրեղբայրս և յայտնեց, որ մեր սպիտակ մատակ ձին գիշերս քուռակ է բերել։

Ուրախութիւնից խելքս կորցրած՝ վազեցի նրան դրկելու, համբուրելու։

Մայրը կամացուկ խրխնջաց, հոտոտեց ձագուկին, դունչը տարաւ դէպի նրա գլուխը և կարծես ականջին ասաց. «Մի վախիր, դա մեր քարեկամն է», և ինձ թոյլ տուեց մօտենալու։

Ես ձեռս տարայ սիւսկի գլխին, բաշին. նա այնպէս նուրբ էր՝ ինչպէս թաւիշ, այնպէս փափուկ՝ ինչպէս մեւաքս. շոշափեցի նրա մէջքը, սաքերը, փարեցի վզովը, համբուրեցի դունչն ու երեսը և մի անհուն ուրախութեամբ լցուած՝ դուրս եկայ ընկերներիս հաղորդելու իմ բաղդաւորութեան մասին։

Եղանակն արդէն գարուն էր. բնութեան բնութեան կապանքներից ազատուած՝ իրենց գլուխները համարձակ դուրս էին հանել ծաղիկն ու խոտը, ծառն ու մացառը։

Իմ քուռակը կայտառում էր դաշտում. նա շարունակ պտոյտներ էր գործում մօր շուրջը, վազում-վազվզում, էլի մօտենում մօրը, մի երկու ումպ համեղ կաթից ծծում ու դարձեալ շարունակում կայտառել։

Իլխին երբ երեկոները արօտից գալիս էր գիւղ, ես գնում էի քուռակիս իր մօր հետ տուն բերելու։

Մի օր էլ բան սովորականին երբ դարձեալ գնացի նրանց տուն բերելու՝ քուռակս չգտայ իլխու մէջ, ոչ էլ նրա մօրը։ Մի անբացատրելի վշտով լցուած՝ եկայ տուն և եղելութիւնը յայտնեցի հօրեղբօրս։ Հօրեղբայրս գլուխը կախեց, քիչ մտորեց, ապա ձի նստեց, գնաց փնտռելու։

Ուշ, շատ ուշ գիշեր էր, երբ նա վերադարձաւ տուն և յայտնեց, որ ոչ մի տեղ չէ գտել, վաղն առաւօտ հարկաւոր է աւելի հեռուները որոնել։

Վերջապէս լուսացաւ, և մենք մի քանի հոգով գնացինք պրարտելու։

Ես գնացի դէպի հարաւ, անցկացայ մի ձորակ, բարձրացայ մեր գիւղի սարի գլուխը, մի ձորի մէջ ես նկատեցի մի սպիտակ փողփողող կէտ, ճանաչեցի այն. դա մեր ձին էր. նա գլուխը կախած անշարժ կանգնած էր։ Հառայ։ Նա ինձ տեսնելուն պէս մի վշտալի վրնջ արձակեց և գլուխը նորից կախեց ներքև։ Ես աւելի մօտեցայ նրան և տեսայ նրա առաջ մի թարմ կմախք. սարսափ ելաւ վրաս և մի ցնցող սարսուռ անցաւ մարմնիս վրայով. իմ քուռակիս ոսկորներն էին։ Նրա սև սմբակներից ճանաչեցի։

Ծանր վշտով լցուած՝ նայեցի մօրը և տեսայ, թէ ինչպէս անխօս կենդանին այդ ժամանակ հոտոտում էր իր զաւակի մարմնի մնացորդները և աչքերից արտասուք թափում։

Այդ տեսարանի առջև անկարող եղայ ինքս ինձ պահելու իր խորին ակնածութիւն զգացի դէպի այդ անկեղծ, բայց շատ բան ասող մայրը, ես էլ նրա վշտով լցուեցի։

Արդէն ուշ էր. ուզեցայ նրա բաշից բռնել, տանել տուն, սակայն նա դժգոհ կերպով շարժեց գլուխը, խլեց բաշը ձեռքից, ֆուկաց և նորից սկսեց իր զաւակի ճտացորդները հոտոտել, լիզել ու արտասուել։

---

94. ՕԴԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

I.

Ցամաքի ու ջրի վրայ ազատ ճանապարհորդել սովորելուց յետոյ մարդն սկսեց նախանձել երկնքի թռչուններին։

Բայց թևեր չունէր։

Իսկ օդում թռչել ուզում էր, այնտեղ լաւ էր. ոչ խճուղի էր պէտք ոչ երկաթագծեր, ոչ առագաստ, ճանապարհը հարթ է, ընդարձակ, գեղեցիկ։

Մարդը սկսեց սովորել ու մտածել։

Շինեց օդապարիկ, նրանից նաւակ կապեց ու թռաւ, սլացաւ անտառներից, արտից, ամպից բարձր. . բարձր...

Բայց... այնտեղ էլ, ինչպէս ջրի վրայ, քամին խանգարեց, մարդուն տանում էր այնտեղ, ուր ինքն էր ուզում։

Անցան տարիներ, բայց մարդը չէր թողնում քամուն յաղթահարելու միտքը։ Մտածեց, մտածեց, փոխ առաւ արագաթռիչ արծուի ուժեղ, հսկայական թևերը, շղենաւի անիւները, միացրեց իրար և քամուն յաղթահարելով այժմ թռչում է անծայր սարերի, խոր անդունդների, լայն լայն գետերի, լճերի, անեզր ծովերի ու ովկիանոսների վրայով և հեռու չէ այն ժամանակը, երբ երկաթուղին պէտք կը գայ մեզ նոյնքան, որքան կառքն ու սայլը։

II.

1862 թւի սեպտեմբերի 5-ին երկու անգլիացի բարձրացան



օդապարիկով։ Օդապարիկն արագութեամբ սկսեց վեր թռչել և քանի վեր էր գնում, այնքան աւելի ու աւելի ցուրտ էին զգում բարձրացողները։ Երեք վերստից յետոյ ամպերին հասան. օդապարիկն ամպի միջով էր անցնում. երկու ճանապարհորդները զողում էին ցրտից և խոնաւութիւնից։ Երբ օդապարիկն ամպերից վեր բարձրացաւ, կրկին լուսացաւ, էլի կապոյտ երկինք ու արև երևացին։

Բարձրից նայելիս ամպերը սպիտակ, խորդ ու բորդ ձիւնապատ դաշտի էին նմանում։ Ամպերի ճեղքերից տեղ տեղ երևում էր երկիրը՝ գիւղեր, անտառներ, քաղաքներ, ծովեր և նաւեր։

Ամպերից բարձր ցուրտն աւելի սաստկացաւ։ Զորա հետ վերստ բարձրութեան վրայ ջուրը սառեց։ Շունչ քաշելը դժուարացաւ, ականջները խշխշալ սկսեցին և արտերը արագ թրթռալ։ Բաջ անդիացիներն առանց վնասելու համբերում էին և կրկին վեր բարձրանում։ Ութ վերստ բարձրութեան վրայ նրանցից մէկը այնքան թուլացաւ, որ չէր կարողանում ոչ ձեռք բարձրացնել և ոչ մարմինը շարժել. վերջապէս նա ուշաթափուեց և ընկաւ քթոցի մէջ։ Իսկ օդապարիկը բարձրանում էր ու բարձրանում։

Երկու քաջերին էլ մահ էր սպառնում։ Երկիրը տասը վերստ ցած էր գտնւում նրանցից։ Միւս ընկերը նոյնպէս սառել էր և հազիւ հազ շունչ քաշում։ Նա իր վերջին ոյժերը հաւաքելով՝ ուզեց ձեռքը բարձրացնել օդապարիկի ծակը բանալ, որ միջի գազը դուրս

գալով օդապարիկը ցած գայ, բայց ձեռքը փայտի նման կախ էր ընկել և չկարողացաւ։ Այն ժամանակ նա ատամներով բռնեց այն թոկը, որով կապուած էր այդ ծակը, քաշեց և բանալով թողեց, որ օդապարիկի գազը քիչ քիչ դուրս գայ։ Օդապարիկն էլ սկսեց կամաց կամաց ցած գալ։

Նրանք բարձրացել էին տասը վերստից քիչ աւելի և այդ բարձրութեան վրայ քսան և չորս աստիճան ցուրտ էր. մինչդեռ ներքեւում այն ժամանակ ամառ էր։

III.

Մի ուրիշ օդաչուից էլ այսպէս է պատմում։

— Անգլին բազմութիւն էր հաւաքել թռիչքս տեսնելու։

Օդապարիկը պատրաստ էր։

Ես հրաժեշտ տուի մերձաւորներիս, նստեցի նաւակում, ստուգեցի պաշարեղէնն ու գործիքները և ձայնեցի՝ «բաց թող»։

Թոկերը բաց թողին և օդապարիկը վերև բարձրացաւ նախ հանդարտ, ինչպէս կապը կտրած ձի, ապա բոլոր թափով։ Ներքևից թափահարում էին թաշկինակներ ու գլխարկներ և ծափահարում։

Ես արդէն այնքան բարձր էի, որ դժուարութեամբ էի կարողանում նշմարել մարդկանց։ Սկզբում եղկիւղ էի կրում, բայց յանկարծ ուրախութիւն զգացի ու վախը մոռացայ։

Հազիւ լսելի էր մարդկանց ձայնը, որ մեղուների դժվոցի էր նման։ Երկրի մակերևոյթը պատկերի նման էր, որի վրայ կարծես նկարուած էին փողոցներ, տներ, դեռեր, այգիներ։ Զափաղանց ուրախ էի։ Թուում էր որ ես մարդկանց արքան եմ։

Քաղաքի պատկերը հեռագնեակ փոքրանում էր ու հեռանում։ Երկիրը կարծես մեծանում էր ու լայնանում և յանկարծ ես նկատեցի, որի յատակում քաղաքն էր։

Ես աւելի ու աւելի էի ուրախանում, ուրախութիւնից սկսեցի երգել, բայց ձայնս այնքան թոյլ էր, որ ես զարմացայ ու վախեցայ իմ ձայնից։

Արեգակը պայծառ փայլում էր, բայց յանկարծ ծածկուեց ամպերով։

Ես նորից ափրեցի և ցանկանալով մի բանով զբաղուել, նանեցի ծանրաչափը և իմացայ, որ գտնուում եմ չորս վերստ բարձրութեան վրայ։

Երբ գործիքը տեղն էի դնում, մի բան թպրտաց. նկատեցի ապաւնուն և յիշեցի, որ վերցրել եմ հետս ներքև նամակ ուղարկելու համար։ Մի կտոր թղթի վրայ գրեցի, թէ ասողջ եմ և գտնուում եմ չորս վերստ բարձրութեան վրայ "ու թուղթը կապեցի ապաւնու վզին։ Նա նստած էր նաւակի ափին և նայում ինձ իր կարմրագոյն աչքերով։ Ինձ թուաց թէ նա խնդրում է, որ իրեն չանհանգստացնեմ։

Երկիրը չէր երևում. ամպը պատել էր։ Բայց նամակ պիտի ուղարկէի։ Ապաւնին դողում էր ամբողջ մարմնով։ Ես բաց թողի նրան, նա թեւերը շտապ թափահարելով ծուեց մի կողմի վրայ և ինչպէս քար ներքև գլորուեց։

Ես նայեցի ծանրաչափին, հիմա գտնուում էի երկրից հինգ վերստի վրայ. զգում էի, որ օդը քիչ է և յաճախ էի շունչ առնում։

Ես ցանկացայ իջնել։ Թոկը ձգեցի, որ գազը բաց թողնեմ, բայց թուացել էի արդեօք, թէ օդապարիկի որևէ մասն էր փչացել — չգիտեմ, միայն փականը չբացուեց։

Երկուղից սառայ։ Բարձրանալս չէի զգում։ Ենչառութիւնս հեռագնեակ ծանրանում էր։

«Եթէ գազը բաց թողնել չկարողանամ, օդապարիկս կը պայթի և ես կորած եմ» — մտածեցի ես։

Իմանալու համար կանգնած եմ մի տեղում, թէ բարձրանում եմ՝ զցեցի թղթի կտորներ։ Նրանք քարի նման արագ ցած ընկան, ուրեմն ես բարձրանում էի։

Բոլոր ուժով ձգեցի թոկը, — փառք Աստուծոյ — փականը բացուեց։ Ես նորից մի կտոր թուղթ զցեցի, այս անգամ թուղթը վերև թռաւ. նշանակում է իջնում էի։

Դեռ երկիրը չէր երևում. իջնում էի՝ ամպերի միջով։ Սկսեց

քամի փչել։

Շուտով երևաց արևը, ապա թառաձև երկիրը։

Մեր քաղաքը չկար. երևում էին անտառ և երկու գետ։

Ես կրկին ուրախացայ և չէի ուզում իջնել։

Յանկարծ ինչ որ բան ձայն հանեց. մի արծիւ էր։

Նա օդում կանգ առած, ապշած նայում էր ինձ։

Ես նեռի արագութեամբ իջնում էի։

Շուտով սկսեցին երևալ դաշտեր, անտառ, նրա մօտ գիւղ, գիւղի մօտ՝ ոչխարի հօտ։ Ինձ նկատեցին։

Ես ձայն տի և թոկերը ցած գցեցի։ Գիւղացիք վազեցին. մի երեխայ առաջինը բռնեց թոկը։ Ուրիշներն էլ բռնեցին, փաթաթեցին մի ծառի և ես դուրս եկայ։

Ես ճանապարհորդել էի երեք ժամ և իմ իջած տեղը գտնում էր մեր քաղաքից 250 վերստ հեռաւորութեան վրայ։

---

95. ԲՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԻՑ

1804 թ-ին Իսպանիայի մի քաղաքում, մրրիկից անմիջապէս յետոյ, երկնքից սկսեց ցորենի անձրև թափել։ Այս տարօրինակ անձրևը սաստիկ վախեցրեց ժողովրդին ու թէև ցորենը հաւաքեցին, բայց արտասովոր անձրևի պատճառը հասկանալ չկարողացան։

Երկու տարի յետոյ գերմանիայում պատահեց աւելի արտասովոր դէպք. անձրևի հետ երկնքից սկսեց թափել ծովային խեցգետիններ և այդ անձրևը շարունակուեց կէս ժամից աւելի։

1814 թ-ի օգոստոս ամսին ֆրանսիական մի քաղաքում սաստիկ քամի էր. շինութիւնները դողդողում էին, ինչպէս երկրաշարժի ժամանակ։ փողոցներում գտնուած մարդիկ շտապում էին պատըսպարուել տներում։ Յանկարծ փողոցում գտնուողներից ոմանք ճչացին զարմանքից, որովհետև անձրևի հետ իրենց գլխին գորտեր էին թափում։ Այս գորտանձրևը բաւական երկար տևեց։

Եթէ գորտանձրևը բացի անախորժութիւնից ոչինչ չուեց մարդկանց, տառեխների անձրևը, որ մի քանի անգամ տեղաց Շոտլանդիայում (Հիւսիսային Անգլիա), բնակիչներին մեծ բաւականութիւն պատճառեց։ Նրանք իհարկէ շատ զարմացան, բայց դա չխանգարեց օգտուելու տառեխներից՝ թէ վաճառելու և թէ իրենց գործածութեան համար։

Աշխարհի մէջ, տեղ տեղ պատահել են նոյնպէս ձիճուների, միջատների և մինչև անգամ օձերի անձրևներ։

Հարկաւոր է արդեօք ասել, որ այս արտասովոր անձրևների պատճառը ծովային մրրիկներն ու թաթառներն են։ Մրրիկը գետնի երեսից վեր է հանում միջատներ, ճանճերից և լճերից ջրախառն հազարաւոր գորտեր, խեցգետիններ, ծովերից միլիոնաւոր տառեխներ, քշում է հեռու, շատ հեռու, մինչև որ քամին հանդարտում է, նրանք վար են թափում անձրևի ձևով։

Դ. ՏԱՐԻԱՅ ՑԱՆԿ

		Երես
1	Աշակերտի յիշատակարանից, ըստ Ամիչիսի — —	5
2	Անգրագէտ, ոտան. ձեռագիր (կէտեր, առոգանութ. նշանները) թարգ. Յովհ. Յովհաննիսեան	6
3	Թռչունների աշնանային տեղափոխութիւնը ըստ պրոֆ. Բոդդանովի — —	8
4	Սիրելի Արամ, ձեռագիր նամակ (դիմորոշ յօդ.եր) Ս. Դ.	12
5	Աշնան երգերից, ոտան. Հ. Մաղմանեան — —	13
6	Խելացի ագռաւը, շարադրական պատկեր — —	15
7	Փոքրիկ լրահաս ըստ Ամիչիսի	16
8	Ա՜խ, մեր սիրտը, ոտան. ձեռագիր (բացառական հոլով, կէտադր.) — —	19
9	Երիտասարդ թագաժառանգը Ѳ. Ուսէլդից, փոխ Զ. Զիլինկ.	20
10	Հեզիկ կարկաչով, ոտան. Յ. Յովհաննիսեան —	29
11	Փոքրիկ ջաղացաւորը, Գր. ք. Գորդեան — —	30
12	Շարադրական պատկեր, խընձորենին և մանուկները	32
13	Ինչ էին երգում լարերը, Մ. Թաւաքալեան — —	33
14	Հրաժեշտը, Ա. Ծատուրեանց	34
15	Ճնճղուկ, (նա, նրա, ից, անց. կատ. անկատ.) Տուրգենևից, Ա. Ծատ.	35
16	Էյ ջան հայրենիք, ոտան.	36
17	Շարադրական պատկեր —	37
18	Սիրելի ընկեր Վանան, ձեռագիր նամակ (որդ մասնիկ, երրորդ, չորրորդ)—	38
19	Մեր պատմահայրը ըստ Բաֆֆու — — —	40
20	Երաշխիք, ոտան. Շիլլերի, թարգ. Հ. Մաղմաննան —	45
21	Գնա, իմ որդեակ, ոտան. ձեռագիր (հրամայական ա, իր, ով). Գ-Քաթիպա — —	51
22	Շարադրական պատկեր, մանուկները բժշկի մօտ —	52
23	Վրէնելմ Տէլլ — —	53
24	Յոյս, Գամառ-Քաթիպա —	66
25	Շարադրական պատկեր —	66
26	Կալում, ձեռագիր (կէտադրութիւն), Մուրացան —	67
27	Քարածուխ — —	68
28	Մայրիկ ջան, ձեռագիր նամակ, (անց. կատ. «տ». «դժ», ուէի, դուխա, ապ, ան) —	70
29	Քաջ պտտանի, ըստ Ամիչիսի	72
30	Զմեռն անցաւ, ոտանաւոր	74
31	Ցուրտ էր, ձեռագիր. (համառօտ նախադ. անցեալ անկատար, անցեալ կատ.), Զաւախեցի — — —	74
32	Շարադրական պատկեր —	77
33	Ռօբինզօնի ուրախութիւնը, ըստ Փ. Վարդանեանի —	78
34	Զմեռ, Գ. Գուշեան —	85
35	Զմեռ, ոտան. Մեսեան —	86
36	Զմեռ, Խ. Աբովեան —	87
37	Շարադրական պատկեր, բարաղէի որսը — —	88
38	Աշակերաը, ըստ Ամիչիսի	88
39	Աւետիս, Նարդոս —	90
40	Շարադրական պատկեր —	92
41	Աղջիկն ու լուցկիները, Անդերսէնից, Ա. Ծատուրեան	93
42	Գարդկայ գիշեր, ոտան. —	96
43	Խայը, Աւ. ասարոնեան	97
44	Դարբնի երգ, Յ. Յակոբեան	106
45	Շարադրական պատկեր, շներ ու կատուն —	106
46	Ես եմ. Բալեան	107
47	Շարան, շարան ամպերն եկան, ոտան. —	111
48	Շարադրական պատկեր, Աղջիկն ու ծիտը —	112
49	Հէյ, պարոնները, ձեռագիր (հրամայական, տերկ. մանակ). Յովհ. Թումանեան	113
50	Շների մասին — —	114
51	Ինչ է խօսում սենեակը, ըստ Աւետարանի —	118
52	Շարադրական պատկեր —	128
53	Այրի մօր Գուլբեարան[illegible]քը, ձեռագ. ոտան. («կ ը» և հրա[illegible]յական), Յ. Յակոբեան — —	129
54	Շարադրական պատկ[illegible]ր —	129
[illegible]	Կոյր մ[illegible]ներ, ըստ Ամիչիսի — — —	130
56	Երեկոյ, ոտան. ձեռագիր (անց. կատ. հրամայական) Տէրեան	132
57	Աղասին ինչպէս [illegible] Թաղուհուն, Խ. [illegible]սգատում [illegible]բովեան	133
58	Մար ու ձոր ընկա[illegible], ոտան. ձեռագիր (ընդա[illegible]ձակ նախադաս.), Խ. Աբով[illegible]եան —	136
59	Գարուն ոտան, [illegible] Զարբդ.	137
60	Շարադրական պ[illegible]ատ. մայրիկ օգնիր — —	138
61	Վա[illegible] [illegible]քան.	139
62	Երգի հրապարը[illegible]մի մասը ձեռագիր (ներ[illegible]եր և կէտադրութիւն) — —	140
63	[illegible] — —	143
64	[illegible] — —	145
65	[illegible]դը, Լէօ	147
66	[illegible]դը, ոտան. Յովհ. Յովհաննիսեան	148
67	Գլուղացու կեանքը, Բաֆֆի	149
68	Գառներիս հօտը ցիր ու ցան. ձեռ. (անց, անկատ. «եր», «ներ»), Զաւախեցի	151
69	Աներևոյթ թշնամի —	152
70	Զրվէժ, ոտան. ձեռ. (կէտադրութիւն), Մեսեան —	154
71	Սպաւոր արագիլը —	155
72	Շարադրական պատկեր, արագիլների ճիրը —	158
73	Խուլ ու հաժրը — —	158
74	Սոխակի երգը, մի մասը ձեռագիր (նախադաս. տեսակ. և կէտադր. Անդերսէնի —	161
75	Զմեռն անցաւ, ոտան. —	165
76	Նախնական մարդը	165
77	Սպիտակ գլեսա, մի մասը ձեռ. (ներկայ ժամանակ, թարգ. Ս. Թանգեան	172
78	Շարադրական պատկեր, պտղատու ծառերի փոփոխութ. — —	175
79	Մարգարիտ	176
80	Անձրևի կաթիլը, ոտան.	179
81	Փոքրիկ, ձեռագիր (կէտադր. ընդարձակ նախադաս, Մուրացան	180
82	Կռունկ. շարան-շարան, ոտ.	182
83	Աղասին Անուայ աւերակներում, մի մասը ձեռագիր (ներկ. դերբայ), Աբովեան	182
84	Զինջ ու կապուտակ գիշերներից մէկն էր. ձեռագիր, (պարզ նախադ.), Ճուղուրեան	189
85	Անիի աւերակների վրայ, Լ. Մանուէլեան —	190
89	Լիվինգստոնի ճանապարհորդութիւնը, Լէօ — —	190
87	Ս. Մեսրոպի շերիմի առաջ, Բաֆֆի — —	193
	Շարադրական պատկեր, թի-	

		Էջեր
	Թեոբ Ձեռքի գարգանալը.	
88	Աշուղ, Յ. Յովհաննիսեան.	196
90	Կոկոս ընկուզենին	— 197
91	Զկնորս, ձեռագիր, (կէտադրապատ. Ժաման.),	— —
92	[illegible]	— —
93	[illegible]	— —
94	[illegible]	— —
95	[illegible] հրաշքներից	

2013
4162
<< Ազգային գրադարան
NL0060816

Ա. Ֆ

Գին 20 կոп.

Գանգրաստ և, գուսով ապարդյունեան կը գանեմ
Գաղթական Ա և Ֆ ապրք

Քիրմ Օրիշ — Դեր գրամխանանդին
Գրեան Ցաղանա Ճոմանիսի ու գրախանանդին
Գարմերգեր Գրեան Գալիանան դրդաց

Գանգրաստ գնդանիկն կ՝ մնայ գնդ